



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

1(113)2024






ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ
1(113)2024



Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈԽՅԱՆ,
Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ, Յ. ՆԱԶԱՐՅԱՆ, Է.
ՇԱԹԻՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ, Ա. ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝

Ի.Գ.Ք., դոցենտ Ա. Փխրիկյան

Տեղեկագրում տպագրվող գիտական հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և չեն նույնանում Մահմանադրական դատարանի սլաշտոնական դիրքորոշումների հետ: Մահմանադրական դատարանը սլաշտասխանատվություն չի կրում հոդվածների հեղինակների արտահայտած կարծիքների համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ - **Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ, Գ. ԵՆԳԻՐԱՐՅԱՆ**.....9
- ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱԿԱԻՐԱՎԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ ԵՎ ԴՐԱ ԸՆԿԱԼՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ - **Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ, Զ. ՍՄՐԱՏՅԱՆ**19
- ԻՐԱՎՈՒՆՔԻ և ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՅՈՒԹՅԱՆ ՈՒ ՓՈԽԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ - **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**39
- THE SPECIFICS OF THE INSTITUTE OF IMMUNITY OF STATE OFFICIALS IN THE LIGHT OF ARMENIAN CONSTITUTIONAL ORDER - **A. TADEVOSYAN, F. AGHABEKYAN** (ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԱՆՁԵՌՆՄԻԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ - **Ա. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ, Ֆ. ԱԴԱԲԵԿՅԱՆ**).....49
- ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒՂԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ - **Գ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ**72

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄՔԻՈՆ

- ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՏԵՂԸ ԳԱՂՏՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՀԵՏ - **Լ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**86

- ПРОБЛЕМЫ ОПРЕДЕЛЕНИЯ ПРАВОВОЙ ПРИРОДЫ СОАВТОРСТВА В КИНЕМАТОГРАФИЧЕСКОМ ПРОИЗВЕДЕНИИ – **А. КИРАКОСЯН** (ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱՅԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՄԱՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ – **Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**)103
- ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՍԵՓԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅԱՄԲ ՎԵՐԱԴԱՍ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ՝ ՎԱՏԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ – **Մ. ՀԱՅՐԱՊԵՏՈՎԱ**122
- ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏ – **Մ. ՂԱԶԱՐՅԱՆ**.....136
- ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ – **Շ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**.....148
- ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ «ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ» ՊԱՀԱՆՋՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ – **Լ. ՔՈՍՅԱՆ**.....162

II. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1709-1716)

- ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 145-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1709, 17 հունվարի 2024 թվականի)180

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....201

- 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ՃՅՈՒՂԵՐՈՒՄ ՀԱՄԱՏԵՂ ԿՈՊՊԵՐԱՑԻՈՆ ՆԱԽԱԳԾԵՐ
ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՍ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍՈՎ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ» 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1710, 23 հունվարի 2024 թվականի)227

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....232

- 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՊԵՏԱԿԱՆ
(ՄՈՒՆԻՑԻՊԱԼ) ԳՆՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ
ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ
(ՍԴՈ – 1711, 23 հունվարի 2024 թվականի)240

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....245

- ԴԱՎԻԹ ՓՈԼԱԴՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ 1998 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 35-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ
ՄԱՍԻ 10-ՐԴ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1712, 23 հունվարի 2024 թվականի)253


- 2023 թվականի ՕԳՈՍՏՈՍԻ 16-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2022 թվականի ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1713, 6 փետրվարի 2024 թվականի)276
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....280
- 2023 թվականի ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՍԵՅՍՄԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ (ԼՐԱՅՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ)» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1714, 13 փետրվարի 2024 թվականի)288
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....300
- 2023 թվականի ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ (ՀԵՄԱ) ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1715, 20 փետրվարի 2024 թվականի)308

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....314
- ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 7-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 7-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ - 1716, 27 փետրվարի 2024 թվականի)322

III. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

- ՍԴ ԴԱՏԱՎՈՐ ԱՐԱԻԿ ԹՈՒՆՅԱՆՆ ԸՆՏՐՎԵԼ Է ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ.....348
- ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻՆ ԱԶԱԿՑՈՂ ԴՈՆՈՐ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ350
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 28-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ.....352
- ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2023 Թ. ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ.....355
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ Է ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԲՈՒՆԴԵՍԹԱԳԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....356



ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է «ՖԻԼԻՊ ԶԵՍԱՓԻ ԱՆՎԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ» ԴԱՏԱԽԱՂ-ՄՐՑՈՒՅԹԻ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՒԼԸ.....357
- ՀՀ-ՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԿԱՅԱՑԵԼ Է ԲՐԱՈՒՆ ՄՈՍԹԵՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՒԼԸ.....359

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

- ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ԷԹԻԿԱՅԻ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ.....361

DOI: 10.59560/18291155-2024.1-9

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

ԳՈՌ ԵՆԳԻՐԱՐՅԱՆ

Իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Ամփոփագիր

Հոդվածում քննարկվում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության իրավական ապահովման հիմնախնդիրը սահմանադրական կարգավորումների համատեքստում: Հեղինակը ներկայացնում է որոշ հիմնական օրենքներ, որոնք մտնում են ազգային անվտանգության ոլորտում ձևավորված օրենսդրական համակարգի մեջ՝ ընդգծելով Սահմանադրության դերն այդ համակարգում և ներկայացնելով այն որպես գլխավոր իրավական փաստաթուղթ երկրի անվտանգությունն ապահովող իրավական ակտերի աստիճանակարգային (հիերարխիկ) սանդղակում:

Հեղինակի դիտարկումներով անձի, հասարակության և պետության համար վտանգներն ու սպառնալիքներն առկա են մշտապես, ուստի նրանց համար անվտանգությունը վտանգներից մշտապես պաշտպանվածության վիճակն է: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ դա ոչ թե պասիվ, այլ ակտիվ վիճակ է: Այսինքն՝ վիճակ, որը բնութագրվում է այնպիսի ակտիվ գործողություններով, որոնք ապահովում են անձի, հասարակության և պետության առաջընթաց զարգացումը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Արդյունքում՝ ազգային անվտանգության համակարգը ձեռք է բերում բարդ կառուցվածք, որում կարելի է առանձնացնել բաղկացուցիչ մասեր, ենթահամակարգեր: Վերջիններիս

1(113)2024

◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

շարքում հեղինակն առանձնացրել է իրավական ապահովման (անվտանգության) համակարգը և եզրակացրել, որ չնայած ոլորտում կատարված ծավալուն աշխատանքին, ազգային անվտանգության սահմանադրաիրավական դաշտն ունի առավել ամբողջական և համակարգված դարձնելու անհրաժեշտություն, ինչին մեծապես կնպաստի «Հայաստանի Հանրապետության անվտանգության մասին» օրենքի ընդունումը:

Հիմնաբառեր. անվտանգություն, ազգային անվտանգություն, Սահմանադրություն, իրավական անվտանգություն, վտանգ, սպառնալիք:

Հասարակության մեջ «անվտանգությունն» ընկալվում է որպես ապահովություն, անվնասություն, անվտանգավորություն, կարճ ասած՝ վտանգի բացակայություն, և կիրառվում է ինչպես բնական (աղետներ, երկրաշարժեր և այլն), այնպես էլ սոցիալական (հակամարտություն, արտադրություն, ճանապարհային երթևեկություն և այլն) իրողությունների և գործընթացների նկատմամբ:

Կա նաև «անվտանգություն» հասկացության բովանդակային առումով համընկնող այլ ըմբռնում: Դա այն է, որ անվտանգությունն ունի սոցիալական ծագման ցանկացած օբյեկտի գոյության և կայուն զարգացման հուսալիության նշանակություն, որն ի հայտ է բերվում և գնահատվում սոցիալական սուբյեկտների կողմից¹: Այստեղից՝ այն հետևությունը, որ անվտանգության մակարդակը մեծ չափով պայմանավորված է այդ սուբյեկտների (անձի, հասարակության, պետության) զարգացման, նրանց կողմից արտաքին և ներքին սպառնալիքների, վտանգ պարունակող հանգամանքների, իրողությունների գիտակցման աստիճանով:

Անվտանգությունը, եթե ելնելու լինենք բառի բուն իմաստից, նշանակում է վիճակ (կացություն), որի ժամանակ վտանգ չի սպառնում: Լայն առումով, սակայն, մարդկանց, հասարակության և պետության համար անվտանգությունը չի նշանակում վտանգի բացակայություն, քանզի հայտնի է, որ կյանքն առհասարակ լի է վտանգներով: Այդպես է եղել բոլոր ժամանակներում, այդպես է նաև այսօր: Եթե չկա ուղղակի վտանգ, ապա դա բնավ չի նշանակում, թե չկա վտանգի սպառնալիք: Ահա դրա գիտակցումն է, որ համախմբում է մարդկանց, պետություններին, միջազգային հանրությանը՝ պատրաստ լինել դիմակայելու ցանկացած սպառնալիքի: Օրինակ՝ առկա է մոլորակի գլոբալ տաքացման վտանգի սպառնալիքը, և միջազգային հանրությունն ի դեմս ՄԱԿ-ի միջոցներ է

¹ Стел Государственная тайна и ее защита в Российской Федерации / Под общ. ред. Вуса М.А. и Федорова А.В. - СПб, 2007, էջ 44:

որոնում այն չեզոքացնելու համար: Նույնը վերաբերում է մոլորակը շրջափակող օզոնային շերտի քայքայման կանխարգելմանն ուղղված քայլերին: Մարդկությանն այսօրվանից մտահոգում է հեռանկարում խմելու ջրի և կենսապահովման այլ միջոցների պաշարների սպառման վտանգը, ինչն ուղղակիորեն շոշափում է ցանկացած ազգի, հասարակության և պետության ամենամանրագույն շահերը:

Ասվածն ուղղակիորեն վերաբերում է նաև հայ իրականությանը, ինչը, ըստ էության, ամրագրված է 2007 թ. փետրվարի 7-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության» մեջ (գլուխ 4-րդ), որտեղ ներգրավվածությունը միջազգային գործընթացներին, մասնակցությունը համընդհանուր համաշխարհային ծրագրերին դիտվում են որպես ՀՀ անվտանգության կարևորագույն գործոններ: Հայաստանի միջազգային ներգրավվածությանն է նվիրված նաև 2020 թ. ընդունված «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության» 5-րդ գլուխը՝ «Խաղաղությունը և միջազգային փոխգործակցության ամրապնդումը»:

Անվտանգությունը մարդկանց, սոցիալական համակարգերի, այդ թվում պետությունների համար ավելի շուտ ոչ թե վտանգի բացակայության վիճակն է, այլ վտանգներից պաշտպանվածության վիճակը: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ դա ոչ թե պասիվ, այլ ակտիվ վիճակ է: Այսինքն՝ վիճակ, որը բնութագրվում է այնպիսի ակտիվ գործողություններով, որոնք ապահովում են անձի, հասարակության և պետության առաջընթաց զարգացումը: Անվտանգությունն այդ զարգացման կարևորագույն խթաններից մեկն է: Անվտանգության ոլորտի ռուս գիտնական Լ.Ի. Շերշնևն իր հոդվածում գրում է. «Անվտանգությունը ինքնանպատակ չէ, այն ծառայում է անվտանգ զարգացման հեռահար հեռանկարներին՝ ուղղված պետության կառուցողական ձգտումներին»¹:

Այստեղից էլ՝ «անվտանգություն» հասկացության բազմաբովանդակ էությունը, որը որպես բաղկացուցիչներ ներառում է ամենատարբեր ոլորտներ՝ սոցիալական, տնտեսական, հասարակական, ռազմական և այլն: Ազգային անվտանգության հուսալիությունն այդ ոլորտների հուսալիության երաշխավորն է:

Ազգային անվտանգությունը անձի, հասարակության և պետության փոխկապակցված շահերի ամբողջությունն է: Հնարավոր չէ պատկերացնել անձի անվտանգությունն առանց պետական և հասարակական անվտան-

¹ См. у Шершнева Л.И. Об основах концепции национальной безопасности России // Информационный сборник "Безопасность", 1996, N 1-2:

գույթան: Եվ չի կարող անվտանգ լինել այն պետությունը, որտեղ վտանգված են անձը, նրա իրավունքներն ու ազատությունները: Այսինքն, միանգամայն արդարացի կլինի պնդելու այն թեզը, ըստ որի՝ առանց ազգային անվտանգության հիմնախնդիրների ապահովման հնարավոր չէ խոսել մարդու իրավունքներից և ընդհանրապես ժողովրդավարության զարգացումից:

Մյուս կողմից՝ անձի, հասարակության և պետության անվտանգության աստիճանը մեծապես կախված է պետական և հասարակական բոլոր կառույցների (տնտեսական, քաղաքական, սոցիալական, իրավական, տեղեկատվական և այլն) գործունեությունից: Արդյունքում ազգային անվտանգության համակարգը ձեռք է բերում բարդ կառուցվածք, որում կարելի է առանձնացնել բաղկացուցիչ մասեր, ենթահամակարգեր: Լայն ընդգրկման շնորհիվ դրանք նույնպես հաճախ դիտվում են որպես առանձին համակարգեր: Անդրադառնանք դրանցից մեկին՝ իրավական անվտանգությանը և դրա հիմնարար մասին՝ սահմանադրաիրավական կարգավորումներին:

«Սահմանադրության մեջ թեև «ազգային անվտանգություն» եզրույթը չի օգտագործվում, այնուամենայնիվ, հենց Սահմանադրությունը պետք է համարել հիմնարար փաստաթուղթը երկրի ազգային անվտանգությունն ապահովող իրավական ակտերի աստիճանակարգային (հիերարխիկ) սանդղակում, քանի որ սահմանադրական կարգավորումների համակարգային բովանդակությունից է բխում հետևյալը՝

- ա) այն կոչված է արտացոլելու անհատի, հասարակության և պետության փոխհարաբերությունների իրավական հատկանիշները,
- բ) կարող է դիտարկվել որպես այդ փոխհարաբերությունների կարգավորման և անհատի, հասարակության ու պետության անվտանգության ապահովման նորմատիվային-իրավական հիմք,
- գ) կարող է հավասարակշռել հասարակության բոլոր խմբերի օրինական շահերի պաշտպանությունը և առանձնահատուկ նշանող հանդիսանալ իշխանության ու մարդու իրավունքների և ազատությունների միջև, որի դեպքում միայն հնարավոր է անհատի, հասարակության և պետության սահմանադրորեն երաշխավորված անվտանգությունը,
- դ) որպես պետության հիմնական օրենք և բարձրագույն իրավաբանական ուժով օժտված ակտ, այն կոչված է հաղթահարելու հասարակության սոցիալական հակասությունները, քաղաքական ուժերի շահերի հակադրությունները իրավական գործիքակազմով:

Դժվար չէ նկատել Սահմանադրության առանցքային դերն ու նշանակությունը անհատի, հասարակության և պետության անվտանգության

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1(113)2024

ապահովման իրավական միջոցների համակարգում: Այստեղ է, որ անվտանգությունը ձեռք է բերում սահմանադրականության հատկանիշներ և վերածվում սահմանադրական իրավունքի կարգավորման առարկայի: Այս հանգամանքով պայմանավորված՝ մարդու և քաղաքացու իրավունքները մղվում են առաջին պլան և դառնում սահմանադրական իրավունքի կարևորագույն գործոն: Պատահական չէ Սահմանադրության 3-րդ հոդվածի հռչակագրային դրույթը, ըստ որի. «Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

Միաժամանակ, հատկանշական է, որ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը մարդու իրավունքների գերակայության, քաղաքացիների անվտանգության և բարեկեցիկ կյանքի ապահովումը հռչակում է որպես ազգային շահ (մաս 3-րդ, «ՀՀ ազգային շահերը»):

ՀՀ Սահմանադրությունը դարձել է անվտանգության սուբյեկտների միջև ծագող սահմանադրաիրավական և այլ հարաբերությունների յուրօրինակ հայելի: «Անվտանգության սուբյեկտներ» եզրույթի բովանդակության ներքո անհրաժեշտ է ընկալել հետևյալ սուբյեկտների կազմը՝ անձ, հասարակություն և պետություն: Մասնագիտական գրականության մեջ միասնական պատկերացում կա հետևյալի մասին, որ Սահմանադրության հիմնական դրույթներն ամբողջության մեջ բավարար կարող են դիտվել եռամիասնության այդ կողմերի՝ անձի, հասարակության և պետության անվտանգության իրավական ապահովման խնդիրները լուծելու համար: Հենց դրանով էլ պայմանավորված՝ ՀՀ ազգային անվտանգության ոլորտում ձևավորվել են օրենսդրական և իրավական այլ համակարգեր:

Ազգային անվտանգության ոլորտում ձևավորված օրենսդրական համակարգի կարևորագույն օրենքներից են՝ «Պետական գաղտնիքի մասին», «Պաշտպանության մասին», «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին», «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին», «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Ազգային անվտանգության մարմինների մասին», «Քաղաքացիական պաշտպանության զորքերի մասին» օրենքները և այլն:

Կարծում ենք՝ օրենքների անվանումներն արդեն իսկ վկայում են իրենց սահմանադրական ծագումնաբանության մասին: Մասնավորապես, «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, օրինակ, անմիջականորեն բխում է Սահմանադրության «Զինված ուժերը և պաշտպանությունը» 14-րդ հոդվածի բովանդակությունից, որով սահմանվում է, որ՝ «Հայաստանի

Հանրապետության զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը»:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի սահմանադրական հիմքը նույն հոդվածի 3-րդ կետն է, ըստ որի՝ «Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը»:

Նույնը վերաբերում է «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքին, որն ավելի հստակ է սահմանում ռազմական դրության ժամանակ շահագրգիռ կողմերի իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ բխում է Սահմանադրության 119-րդ հոդվածի 4-րդ մասի նորմի պահանջներից, այն է՝ «Ռազմական դրության իրավական ռեժիմը սահմանվում է օրենքով, որն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ»:

Կամ, «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքով սահմանվում է արտակարգ դրության իրավական ռեժիմը, որը դարձյալ բխում է, մասնավորապես՝ Սահմանադրության 120-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորման բովանդակությունից, համաձայն որի՝ «Արտակարգ դրության իրավական ռեժիմը սահմանվում է օրենքով, որն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ»:

Նման անդրադարձները անվտանգության համակարգին վերաբերող սահմանադրական դրույթներին և դրանցից բխող օրենքներին կարելի է շարունակել, սակայն անհրաժեշտ է կարևորել Հայաստանի Հանրապետության անվտանգության ոլորտում միասնականացված օրենսդրական ակտի ոչ միայն ընդունման անհրաժեշտությունը, այլև՝ դրա իրավական իմաստի և հնարավոր կիրառական նշանակությունը: Անհրաժեշտ է նկատել, որ նման օրենք դեռևս չի ընդունվել, մինչդեռ, կարծում ենք, որ այդ օրենքը հիմք կծառայեր ազգային անվտանգության վերաբերյալ ճյուղային մյուս օրենքների և ենթաօրենսդրական ակտերի ընդունման համար: Դրա անհրաժեշտությունն առավել քան ակնհայտ է. դիտարկելով օրենքների վերոնշյալ ցանկը՝ դժվար չէ նկատել, որ դրանք գերակշիռ մասով, եթե ոչ ամբողջությամբ, վերաբերում են ազգային անվտանգության ապահովման ռազմական բաղադրիչներին, մինչդեռ կան անվտանգության բազմաթիվ և բազմաբնույթ տեսակներ, որոնք կարիք ունեն կարգավորվելու օրենսդրորեն, այլ կերպ ասած՝ «զինվելու» օրենքի ուժով և այդպիսով լրացնելու ազգային անվտանգության ապահովման սահմանադրաիրավական միջոցների համակարգը: «ՀՀ անվտանգության

ՍԱՀՄԱՆԱԿՐՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱԿ 1(113)2024

մասին» օրենքը կարող էր դառնալ հիմնարար նշանակություն ունեցող այն օրենքներից մեկը, որը նոր որակ ու բովանդակություն կհաղորդեր «Սահմանադրություն-օրենք-ենթաօրենսդրական ակտ» եռամիասնական շղթային: Դրա համար Սահմանադրությունը տալիս է բոլոր հիմքերը և՛ տեսական, և՛ գործնական առումով:

Անշուշտ, այստեղ չի կարելի թերագնահատել այնպիսի կարևոր փաստաթղթերի նշանակությունը, ինչպիսին են «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը», «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը», «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության ապահովման և տեղեկատվական քաղաքականության հայեցակարգը» և այլն:

Այնուամենայնիվ, եթե Ազգային անվտանգության ռազմավարությունը (2020թ.), օրինակ, որպես իր գլխավոր նպատակ հռչակում է Հայաստանի և ՀՀ քաղաքացիների անվտանգ և առաջանցիկ զարգացման ու բարեկեցության ապահովման համար ուղենիշների սահմանումը, ապա Ռազմական դոկտրինը նախանշում է ՀՀ զինված ուժերի բարեփոխումների ու արդիականացման ուղղությունները հասարակական կյանքի առանձին ոլորտների զարգացմանը համընթաց: Տեղեկատվական անվտանգության ապահովման և տեղեկատվական քաղաքականության հայեցակարգը նպատակ ունի ապահովել ոլորտում առկա սպառնալիքներին ու մարտահրավերներին դիմակայելու, դրանք կանխարգելելու կառուցակարգերը, այն հիմք է տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում պետական քաղաքականության հիմնական ուղղությունների, գերակայությունների մշակման ու իրականացման համար և այլն: Բոլոր այս փաստաթղթերի իրավական հիմքը կազմում են Սահմանադրությունն ու համապատասխան օրենքները և էապես ընդլայնում են հասարակության իրավաընկալման և իրավագիտակցության սահմանները: Այնուամենայնիվ, դրանք պետք է համարել ուղեցուցային, իրավաքաղաքական հիմնարար բնույթի փաստաթղթեր:

Վերոգրյալն ամփոփելով՝ անհրաժեշտ է նկատել, որ **Հայաստանի Հանրապետությունը աշխարհաքաղաքական իրադարձությունների կիզակետերից մեկն է, նրան նետված են մարտահրավերներ, որոնց դիմակայման համար անհրաժեշտ է ունենալ ինքնիշխան պետության և ազգային հիմնարար արժեքների պաշտպանությանը միտված անվտանգային ամուր համակարգ:** Այդ համակարգը չի կարող արդյունավետորեն գործել առանց սահմանադրաիրավական, այդ թվում՝ օրենսդրական ապահովման, որոնք պետք է գործեն ի շահ անձի, հասարակության և պետության: Իսկ դա նշանակում է, որ ազգային

անվտանգության սահմանադրաիրավական դաշտն ունի առավել ամբողջական և համակարգված դարձնելու անհրաժեշտություն, ինչին մեծապես կնպաստի «Հայաստանի Հանրապետության անվտանգության մասին» օրենքի ընդունումը:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143723>
2. Հայաստանի Հանրապետության օրենքը «Ազգային անվտանգության մարմինների մասին», <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=189460>
3. Ազգային անվտանգության ռազմավարություն՝ ընդունված 2020 թ., https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf
4. Ազգային անվտանգության ռազմավարություն՝ ընդունված 2007 թ., <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31189>
5. **Աթոյան Վ.**, «Ազգային անվտանգության հիմնախնդիրներ»: Երևան, «Տնտեսագետ» հրատ., 2014:
6. **Սեդրակյան Ա.**, «Իրավունք և անվտանգություն» (տեսական հիմնախնդիրներ): Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015:
7. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 2007, № 237:
8. «Ռազմավարության և անվտանգության հարցեր», խմբ. Ա. Այվազյան: Երևան, Լուսակն, 2007:
9. **Шершнеv Л.И.** Об основах концепции национальной безопасности России // Информационный сборник “Безопасность”, 1996, № 1-2.
10. Государственная тайна и ее защита в Российской Федерации / Под общ. ред. Вуса М.А. и Федорова А.В. - СПб, 2007.
11. **Овчинников А.И., Мамычев А.Ю., Кравченко А.Г.** Основы теории национальной безопасности. - М.: РИОР, 2014, [file:///C:/Users/USER/Downloads/%D0%9D%D0%B0%D1%86%D0%B1%D0%B5%D0%B7%D0%BE%D0%BF%D0%B0%D1%81%D0%BD%D0%BE%D1%81%D1%82%D1%8C%20\(4\).pdf](file:///C:/Users/USER/Downloads/%D0%9D%D0%B0%D1%86%D0%B1%D0%B5%D0%B7%D0%BE%D0%BF%D0%B0%D1%81%D0%BD%D0%BE%D1%81%D1%82%D1%8C%20(4).pdf)

12. **Кикоть-Глуходедова Т.В.** Теоретические проблемы обеспечения национальной безопасности современного демократического государства. - М.: Юнити-Дана, 2015.

НАЦИОНАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИОННЫХ НОРМ

Аннотация

В статье рассматривается вопрос правового обеспечения национальной безопасности Республики Армения в контексте конституционного регулирования. Автор представляет некоторые основные законы, входящие в формируемую в сфере национальной безопасности законодательную систему, подчеркивая роль Конституции в этой системе, представляя ее как основной правовой документ в иерархической шкале правовых актов, обеспечивающих безопасность страны.

По наблюдениям автора, для личности, общества и государства угрозы всегда присутствуют, поэтому для них безопасность – это состояние постоянной защищенности от опасностей. При этом следует отметить, что это не пассивное, а активное состояние. То есть состояние, которое характеризуется такими активными действиями, которые обеспечивают прогрессивное развитие личности, общества и государства во всех сферах общественной жизни. В результате система национальной безопасности приобретает сложную структуру, в которой можно выделить составные части и подсистемы. Среди последних автор выделил систему правового обеспечения (правовой безопасности) и пришел к выводу, что, несмотря на проделанную в этой области большую работу, необходимо конституционно-правовую базу национальной безопасности страны сделать более полной и системной, чему во многом будет способствовать принятие Закона «О безопасности Республики Армения».

Ключевые слова: безопасность, национальная безопасность, Конституция, правовая безопасность, опасность, угроза.

NATIONAL SECURITY OF THE REPUBLIC OF ARMENIA IN THE CONTEXT OF CONSTITUTIONAL REGULATIONS

Annotation

The article discusses the issue of legal provision of national security of the Republic of Armenia in the context of constitutional regulations. The author presents some basic laws that are included in the legislative system formed in the field of national security, emphasizing the role of the Constitution in that system, presenting it as the main legal document in the hierarchical scale of legal acts ensuring the country's security.

According to the author's observations, dangers and threats are always present for people, society and the state, so for them, the security is a state of constant protection from dangers. At the same time, it should be noted that it is not a passive, but an active state. That is, a state characterized by such active actions that ensure the progressive development of the person, society and the state in all spheres of public life. As a result, the national security system acquires a complex structure, in which component parts and subsystems can be distinguished. Among the latter, the author singled out the system of legal support and concluded that despite the extensive work done in the field, the constitutional and legal framework of national security needs to be made more complete and systematic, which will be greatly facilitated by the adoption of the Law on Security of the Republic of Armenia.

Keywords: security, national security, Constitution, legal security, danger, threat.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 28.02.2024 թ., տրվել է գրախոսության 01.03.2024 թ., ընդունվել է տպագրության 11.03.2024 թ.:

DOI: 10.59560/18291155-2024.1-19

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

ԶԱՎԵՆ ՍՄԲԱՏՅԱՆ

Հայաստանի եվրոպական համալսարանի հայցորդ,
Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի
իրավաբանական վարչության վարչական
իրավախախտումների վերաբերյալ
գործերի քննության բաժնի պետ

**ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱԿԱԻՐԱՎԱԿԱՆ
ՎԱՐՔԱԳԾԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ ԵՎ ԴՐԱ
ԸՆԿԱԼՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ամփոփագիր

Հոդվածում քննարկվում են վարչական իրավախախտման՝ որպես հակաիրավական վարքագծի դրսևորման արդյունքի և դրա ընկալման հիմնախնդիրները:

Վերոգրյալի հաշվառմամբ հետազոտության շրջանակներում ուսումնասիրության առարկա են հանդիսանում հետազոտության բովանդակությանն առնչվող տարբեր երկրների իրավական ակտերը, իրավական դոկտրինան և դրանց կիրառման դատական պրակտիկան:

Սույն հոդվածի նպատակն իրավական հետազոտության հիման վրա, վարչական պատասխանատվության ոլորտում անմեղության կանխավարկածի ինստիտուտի, վարչական իրավախախտման հասկացության, վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի, վարչական իրավախախտման և վարչական պատասխանատվության ինստիտուտների շղթայական կապի վերաբերյալ միասնական դատողությունների ամրագրումն է, ինչպես նաև տեսական և գործնական փորձի հիման վրա առավել արդյունավետ և հատկանշական կարգավորումների խարսխումը Հայաստանի Հանրապետության օրենսդրական կարգավորումների համակարգում:

19 ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 1(113)2024

Հոդվածում քննարկվում են այնպիսի հարցեր, որոնք այս կամ այն չափով արտացոլում են ստացել տարբեր հեղինակների աշխատություններում, սակայն թեմայի բովանդակությունը կազմող ինստիտուտի շուրջ ծառայող հիմնախնդիրներն առանձին համալիր գիտական քննարկման ու իրավական վերլուծության առարկա չեն եղել, ինչն արվել է սույն աշխատանքում:

Սույն աշխատանքը հանդիսանում է վարչական իրավախախտման ոլորտում առկա կանոնակարգումների համակարգային և տարածական հետազոտություն, որով առավել մանրամասն և ամբողջական հետազոտվում է վարչական իրավախախտման ինստիտուտը, դրա հարաբերակցությունը հանցանքի հետ, հանցանքի և զանցանքի սահմանային հարաբերակցությունը, վարչական պատասխանատվությունը որպես վարչական իրավախախտման հետևանք և դրանց շղթայական կապը, վարչական ակտի իրավաչափության կանխավարկածը՝ որպես շարունակվող իրավախախտման համար վարչական պատասխանատվության կիրառման նախապայման:

Հիմնաբառեր. վարչական իրավախախտում, վարչական պատասխանատվություն, զանցանք, անմեղության կանխավարկած, հանցանք, անօրինականություն, նորմ:

Ներածություն

Հակաիրավական վարքագծի դրսևորման դեպքերին արագ և արդյունավետ հակազդելը հանդիսանում է օրինականության և իրավունքի գերակայության սահմանադրական սկզբունքների երաշխավորման կարևորագույն պայմաններից մեկը, որի միջոցով կանոնակարգվում է նաև համակեցության կանոնները պահպանելու բարձր նպատակը:

Վարչական իրավախախտումը և վարչական պատասխանատվությունը միմյանց սերտ կապված ինստիտուտներ են, որոնք հանդիսանում են մեկ միասնական համակարգի հաջորդական օղակները՝ դրսևորվելով հետևանքի կամ պատճառի ձևով: Այսպես, վարչական իրավախախտումը՝ որպես հանրային վտանգավոր արարք, թեև ունի առավել նվազ վտանգավորության մակարդակ, քան հանցանքն է, այնուամենայնիվ, իր ծավալով ավելի շատ հասարակական հարաբերություններ է ընդգրկում և շոշափում: Իսկ վարչական պատասխանատվության սահմանման խնդիրներն արդիական են բոլոր պետությունների համար, քանի որ դրանք դիտարկվում են որպես պետական կառավարման արդյունավետ լծակ:

Սույն աշխատանքի նպատակն իրավական հետազոտության հիման վրա, վարչական պատասխանատվության ոլորտում անմեղության կան-

ՍԱՀՄԱՆԱՂՈՒՄԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ 1(113)2024

խավարկածի ինստիտուտի, վարչական իրավախախտման հասկացության, վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի, վարչական իրավախախտման և վարչական պատասխանատվության ինստիտուտների փոխկապվածության վերաբերյալ միասնական դատողությունների ամրագրումն է, ինչպես նաև տեսական և գործնական փորձի հիման վրա առավել արդյունավետ և հատկանշական կարգավորումների խարսխումը ՀՀ գործող օրենսդրական դաշտում: Ընդ որում, վարչական իրավախախտման ինստիտուտին նվիրված հիմնախնդիրների հետազոտությունը պատկերացումներ է տալիս հանրային իշխանության գործունեության բարելավման վերաբերյալ՝ բացահայտելով լավագույն փորձն ու կիրառական նշանակությունը. քաղաքականությունը մշակողները կարող են նպատակաուղղված միջամտություններ իրականացնել՝ բարձրացնելու վարչական պատասխանատվության արդյունավետությունը: Նշվածով պայմանավորված՝ աշխատանքով առաջադրված նպատակներն ու խնդիրներն ունեն խիստ արդի և հրատապ կարևորություն:

Դեռևս Խորհրդային շրջանից քաղաքացու իրավական առօրյայում անհամեմատ մեծ գործնական նշանակություն ուներ վարչական իրավախախտումների համար պատասխանատվության միջոցի կիրառման ընթացակարգը: Ընդ որում, ուշադրությունն այնքան էր սևեռված դրա վրա, որ «վարչական իրավունք» հասկացությունն ընդհանրապես նույնացվել էր «վարչական իրավախախտում» հասկացության հետ: Դա մեծ թյուրիմացություն էր, քանի որ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությունը և վարչական վարույթը կարգավորման բոլորովին տարբեր առարկաներ ունեն և ըստ այդմ էլ՝ բոլորովին տարբեր գործառույթներ են կատարում: Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը կարգավորում է այն դեպքերը, երբ խախտված են լինում վարչական օրենսդրության ինչ-ինչ դրույթներ, և հատուկ վարույթում խախտողները պետական մարմինների կողմից ենթարկվում են սանկցիաների, որոնք սահմանված են համապատասխան իրավական ակտում: Հետևաբար, վարչական իրավախախտումների վերաբերյալ իրավունքն իր էությամբ մոտենում է քրեական իրավունքին: Այս երկու ոլորտներում էլ պետությունը սանկցիաներ է կիրառում¹:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 9-րդ հոդվածը վարչական իրավախախտման հասկացությունը սահմանում է որպես պետական կամ հասարակական կարգի, պետության անվտանգության

¹ Տե՛ս Թովմայան Հ., Լուխթերհանդթ Օ., Մուրադյան Գ., Պողոսյան Վ., Ռայմերս Վ., Ռուբել Ռ., ՀՀ ընդհանուր վարչական իրավունք: Երևան, «Բավիդ», 2011 թ., էջեր 36-37:

ապահովման, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողություն կամ անգործություն, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության «Վարչական իրավախախտումների մասին» օրենքի (ընդունվել է 1968 թվականի մայիսի 24-ին) 1-ին հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը հակաիրավական արարք է, որի կատարման մեջ կան օրենքով նախատեսված հիմքեր, որը թույլ է տալիս տուգանքի տեսքով պատիժ սահմանել: Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ արարքը կարող է պատժվել որպես վարչական իրավախախտում միայն այն դեպքում, երբ պատժի հնարավորությունը սահմանված է օրենքով և մինչև արարքի կատարումը:

Ռուսաստանի Դաշնության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 2.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումը ֆիզիկական կամ իրավաբանական անձի ապօրինի, մեղավոր գործողությունն է (անգործությունը), որի համար վարչական պատասխանատվություն է սահմանված նույն օրենսգրքով կամ Ռուսաստանի Դաշնության օրենքով սահմանված սուբյեկտների կողմից ընդունված իրավական ակտերով:

Ըստ տեսաբան Կուտաֆինի՝ վարչական իրավախախտումը բնութագրվում է հետևյալ հատկանիշներով՝ սոցիալական վտանգ (վնասակարություն), անօրինականություն, մեղավորություն, պատժելիություն¹:

Մեկնաբանելով վերոգրյալ հասկացությունները՝ առանձնացնենք արարքը որպես վարչական իրավախախտում որակելու ընդհանրական հատկանիշները:

Վարչական իրավախախտման առաջին հատկանիշն արարքի **անօրինականությունն** է: Անօրինական արարքը կարող է արտահայտվել ինչպես գործողության (ակտիվ վարք), այնպես էլ անգործության (պասիվ վարք) տեսքով: Առաջին դեպքում անձը կատարում է համապատասխան նորմատիվ իրավական ակտով նախատեսված արգելված գործողություն, իսկ երկրորդում անձը չի կատարում օրենքով կամ այլ կարգավորող իրավական ակտերով սահմանված պարտադիր գործողություններ: Հիշյալ նշանը մի կողմից նշանակում է, որ ֆիզիկական կամ իրավաբանական անձը կատարում է այնպիսի գործողություններ, որոնք խախտում են

¹ Ст'ю Административная ответственность: Учебное пособие. – Оренбург: Оренбургский институт (филиал) Университета имени О.Е. Кутафина (МГЮА), 2018, էջ 13:

վարչական կամ իրավունքի այլ ճյուղերի նորմերը, օրինակ, սահմանադրական, քաղաքացիական, աշխատանքային, բնապահպանական, հարկային, բանկային, բյուջետային, մաքսային և այլն, իսկ մյուս կողմից՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձը չի կատարում վարչական և իրավունքի այլ ճյուղերի նորմերով սահմանված գործողությունները:

Վարչական իրավախախտումների առանձնահատկությունը կայանում է նաև նրանում, որ այդ բնույթի իրավախախտումների կազմը կարգավորող վարչական և իրավական նորմերի դիսպոզիցիաների մեծ մասը ընդհանրական է և չի պարունակում արարքի ողջ էությունը: Օրինակ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 41-րդ հոդվածի կարգավորումների համատեքստում՝ աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների խախտման դեպքում վարչաիրավական այդ արարքի էությունը կարող է բացահայտվել նույն աշխատանքային օրենսդրությամբ սահմանված որոշակի պահանջների կատարման տեսանկյունից: Այսինքն՝ վարչական և իրավական արգելքները կարող են ամրագրվել օրենքներում և դրանց համապատասխան ընդունված նորմատիվ իրավական ակտերում, իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում իրավախախտումների կազմերի անունները ձևակերպվում են որպես օրենսդրության, պահանջների, կանոնների, ստանդարտների, նորմերի, պայմանների, կարգի խախտում:

Անհարժեշտ է կարևորել, որ վարչական իրավախախտումների ցանկը սահմանվում է միայն օրենքով. դրանք բնութագրվում են որպես ապօրինի գործողություններ, ինչպես նաև ցույց են տալիս վարչական պատասխանատվության ենթարկվելիս օրենքի և իրավունքի անալոգիայի կիրառման անթույլատրելիությունը: Ֆիզիկական կամ իրավաբանական անձը վարչական պատիժ կրի, եթե ապացուցվի, որ նրանց գործողությունը կամ անգործությունն առաջացրել է օրենսդիր կամ գործադիր իշխանության իրավասու մարմնի կողմից սահմանված կարգի խախտում, որը երաշխավորված է վարչական պատասխանատվության միջոցներով:

Վարչական իրավախախտման հաջորդ հատկանիշը **պատժելիությունն է**, որի էական առանձնահատկությունը պայմանավորված է վարչական պատժի կիրառման անխուսափելիությամբ: Այսինքն, իրավասու պաշտոնատար անձի կողմից իրավախախտողի նկատմամբ վարչական պատիժ կիրառվում է վերջինիս կողմից որոշակի գործողության (անգործության) համար, որը Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ ճանաչվում է որպես վարչական իրավա-

խախտում և որի կատարման համար նույն օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Վարչական իրավախախտման մյուս հատկանիշը **մեղավորությունն** է: Այն հանդիսանում է վարչական պատասխանատվության առաջացման նախապայման: Վարչական իրավախախտում կարող է որակվել միայն մեղավոր արարքը (կամ անգործությունը), երբ մեղքի բացակայությունը բացառում է արարքը վարչական իրավախախտում ճանաչելը, անգամ դրա ձևական անօրինականության դեպքում: Այդ դեպքում բացառվում է նաև դրա կատարման համար վարչական պատասխանատվությունը:

Ազգային իրավական համակարգում, հատկապես նրա իրավունքի այն ճյուղերում, որոնք ամրագրում են պատժիչ մեխանիզմներ, գործում է անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ իր կիրառելիության առանձնահատկություններով: Ի տարբերություն քրեական պատասխանատվության գործընթացի՝ վարչական իրավախախտումների համար պատասխանատվություն նախատեսող իրավական ակտերում բացակայում է անմեղության կանխավարկածի սկզբունքի ուղղակի սահմանումը:

ՀՀ Սահմանադրության «Անմեղության կանխավարկածը» վերտառությամբ 66-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ անմեղության կանխավարկածը դիտարկվում է հանցագործության մեջ մեղադրվող անձի իրավունքների պաշտպանության երաշխիք, և որևէ ձևով խոսք չի գնում վարչական զանցանքի կատարման վիճակում նույնաբովանդակ դրսևորման մասին:

Համաձայնվելով հայ իրավագետների այն մոտեցման հետ, որ անմեղության կանխավարկածը հանդիսանում է իրավական ու ժողովրդավարական պետության իրավական համակարգի կարևորագույն որակական ցուցանիշներից մեկը և գործում է հանրային պատասխանատվության ոլորտում¹, անհրաժեշտ է կարևորել վարչական պատասխանատվության ոլորտում անմեղության կանխավարկածի կիրառելիությունն ու դրա նշանակությունը: Այսպես, ՀՀ Սահմանադրական դատարանը, անդրադառնալով այս հիմնախնդրին, արձանագրել է, որ. «անմեղության կանխավարկածի սկզբունքը կիրառելի է ոչ միայն ներպետական օրենսդրությանը համապատասխան որպես քրեական հանցանք որակված արարքների առնչությամբ հարուցված վարույթների նկատմամբ, այլև, պայմանավորված տվյալ արարքի բնույթով և նախատեսված պատասխանատվության տեսակներով ու խստությամբ՝

¹ Տե՛ս Պետության և իրավունքի տեսություն: Հեղ. խումբ: Գիտ. խմբ՝ **Ղամբարյան Ա, Մուրադյան Մ.**: Երևան, «Լուսաբաց» հրատարակչություն, 2014, էջ 605:

կարող են կիրառվել նաև վարչական և կարգապահական պատասխանատվության վարույթների նկատմամբ»¹:

Վերոգրյալի տրամաբանության ներքո մեկնաբանելով վարչական պատասխանատվության ոլորտում առկա իրավակարգավորումները՝ կարելի է արձանագրել, որ թեև անմեղության կանխավարկածի սկզբունքն ուղղակի նախատեսված չէ այս ոլորտում, սակայն այն ունի իր իրավական ազդեցությունն այլ իրավական նորմերի և դրանց համակարգային մեկնաբանման վրա: Ասվածի համատեքստում, օրինակ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածով սահմանված այն դրույթը, ըստ որի՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում, կամ, օրինակ, ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածով սահմանված այն դրույթը, ըստ որի՝ վիճարկման հայցով ապացուցման բեռը կրում է վարչական մարմինը, որն ընդունել է միջամտող վարչական ակտը՝ դրա համար հիմք ծառայած փաստերի մասով: Նշվածից բխում է այն դատողությունը, ըստ որի՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացնող մարմինը (պաշտոնատար անձը) պետք է ապացուցի անձի մեղքը: Նշենք միայն, որ Վարչական դատավարության օրենսգիրքը թույլ է տալիս բացառություններ անմեղության կանխավարկածի սկզբունքից՝ սահմանելով պատասխանատվության միջոցի կիրառում կոնկրետ իրավունքով պայմանավորված, օրինակ, տրանսպորտային միջոցների սեփականատերերի նկատմամբ:

Կարևոր է արձանագրել, որ թեպետ իրավանորմերի մեկնաբանումը հանգում է այն դատողությանը, ըստ որի՝ նախքան վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտի կայացումը և դրա ուժի մեջ մտնելն անձը համարվում է վարչական պատասխանատվության չենթարկված, սակայն այն հղի է իրավական երկակիությանը և կարող է հանգեցնել տարաբնույթ մեկնաբանության, որպիսի պայմաններում և այդ խնդրի հաղթահարման համար գործող օրենսդրությամբ անհրաժեշտ է սահմանել վարչական պատասխանատվության պարագայում անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ ընդգծելով դրա կիրառման շրջանակը:

Հատկապես կարևոր է այն նախապայմանը, թե մինչև երբ է անձը համարվում վարչական պատասխանատվության չենթարկված:

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 22.09.2009 թվականի թիվ ՍԴԴ-832 որոշումը:

Վերոգրյալից ելնելով՝ անհրաժեշտ է հարցը քննարկել նաև վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի լույսի ներքո, ըստ որի՝ վարչական ակտն իրավաչափ է, քանի դեռ օրենքով սահմանված կարգով չի ճանաչվել ոչ իրավաչափ կամ անվավեր¹:

Իրավագիտությունը որպես վարչական իրավունքի սկզբունք ճանաչում է վարչական ակտի օրինականության կանխավարկածը²:

Վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից դառնում է իրավական կարգի մաս և պարտադիր է դառնում ինչպես պաշտոնատար անձանց, այնպես էլ վարչակազմի համար:

Ինչպես շատ իրավական սկզբունքներ, դրա արմատները գալիս են Լատինական արտահայտությունից «omnia praesumuntur rite et solemniter esse acta, donec probetur in contrarium», որը նշանակում է. «Ենթադրվում է, որ բոլոր գործողությունները ճիշտ են կատարվել, քանի դեռ հակառակն ապացուցված չէ»:

Օրինակ, Իսպանիայի Թագավորության «Պետական կառավարման մարմինների ընդհանուր վարչական վարույթների մասին» օրենքը սահմանում է՝ վարչական ակտն ունի լեգիտիմության կանխավարկած՝ որպես վարչական իրավունքի սկզբունք³:

Չնայած այն հանգամանքին, որ նման բովանդակության կամ նշանակության նորմեր ՀՀ գործող օրենսդրության մեջ բացակայում են, այդուհանդերձ, օրենսդրական կարգավորումների առկա կառուցակարգերի բովանդակությունից կարելի է եզրահանգել վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի մասին:

Այսպես, ներկայացվածի հաշվառմամբ և առաջնորդվելով այն կանխավարկածով, որ վարչական ակտն իրավաչափ է այնքան ժամանակ, քանի դեռ ունի իրավական ուժ և ոչ իրավաչափ ճանաչված չէ՝ հարկ է արձանագրել, որ վարչական պատասխանատվության շրջանակում անմեղության կանխավարկածի ինստիտուտն անհրաժեշտ է կապել ոչ թե պատիժ սահմանող վարչական ակտի անբողոքարկելիության հետ, այլ վարչական ակտի իրավաբանական ուժ ստանալու հետ:

Նման իրավիճակում կարելի է բանաձևել, որ վարչական պատասխանատվության ոլորտում անձը համարվում է անմեղ, քանի դեռ վերջի-

¹ Տե՛ս **Սմբատյան Զ.** Վարչական ակտի արդյունավետության գնահատման տեսական և գործնական վերլուծություն: Եր., 2023, էջ 105:
² Տե՛ս Augusto Durán Martínez La presunción de legitimidad del acto administrativo. Un mito innecesario y pernicioso universidad católica 2007, 121 էջ:
³ Տե՛ս Art. 37 (2), 47 The Common Administrative Procedure of the Public Administrations: Law 39. 2015, October 1. URL: <https://afyonluoglu.org/PublicWebFiles/Reports/PDP/2015%20Spain-Law%2039-2015%20Common%20Administrative%20Procedure%20of%20PA.pdf>

նիս մեղքը չի հաստատվել ուժի մեջ մտած «վարչական տույժ նշանակելու մասին» վարչական ակտով:

Եթե հիշյալ սկզբունքը կապվի ոչ թե վարչական ակտի ուժի մեջ մտնելու ինստիտուտի, այլ անբողոքարկելիության ինստիտուտի հետ, կխաթարվի վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի սկզբունքի բուն էությունը և գործնականում կհանգեցնի իրավական լուրջ խնդիրների: Նման իրավիճակում այն իրավախախտումների դեպքում, որոնց շարունակությունը նախատեսված է, որպես առավել խիստ պատժի ենթակա արարք չի կարող կիրառվել, քանի որ առաջին վարչական ակտը բողոքարկելով՝ անձը դեռևս չի համարվի վարչական պատասխանատվության ենթարկված, ինչը կխանգարի իրավախախտումներին արագ հակազդելուն:

Օրինակ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասը վարչական պատասխանատվություն է նախատեսում, ըստ էության, ինքնակամ շինարարական աշխատանքներ իրականացնելու համար, իսկ նույն հոդվածի 4-րդ մասը վարչական պատասխանատվություն է նախատեսում նույն արարքը 1-ին մասով վարչական տույժ նշանակելու օրվանից հետո շարունակելու համար: Նման իրավիճակում, եթե անմեղության կանխավարկածը կապենք ոչ թե վարչական ակտի ուժի մեջ մտնելու, այլ վարչական ակտի անբողոքարկելիության հետ, ապա կստացվի, որ անձը դատական կարգով առաջին վարչական ակտը բողոքարկելու դեպքում կխուսափի իրավախախտումը շարունակելու համար առաջ եկող բացասական հետևանքներից, քանի որ եթե վերջինս առաջին վարչական ակտով դեռևս չի համարվում վարչական պատասխանատվության ենթարկված, ապա բացակայում է 4-րդ մասով սահմանված առավել խիստ պատժամիջոցի կիրառման հիմքը, ինչը և հակասում է թե՛ իրավական տրամաբանությանը, թե՛ վարչական պատասխանատվության բուն նպատակին:

Վարչական իրավախախտման հաջորդ հատկանիշն արարքի **հանրային վտանգավորությունն է**: Նշված հատկանիշը նյութական է և թույլ է տալիս տարբերակել վարչական իրավախախտումները հանցագործություններից:

Ըստ էության, վարչական իրավախախտումը հասարակության համար վնասակար (վտանգավոր) արարք է: Վարչական իրավախախտումը հասարակության համար անցանկալի երևույթ է, քանի որ խախտում է հասարակության համար հաճելի, շահավետ և իրավունքի նորմերով պահպանվող հասարակական հարաբերությունները: Վարչական իրավախախտումների անցանկալի բնույթը հասարակության համար և դրանց

վնասակարությունը ճանաչվում են բոլոր գիտնականների կողմից, ովքեր այս կամ այն կերպ անդրադարձել են զանցանքի սոցիալական բնույթը որոշելու խնդրին:

Այնուամենայնիվ, այն հարցին, թե որն է այս անցանկալի երևույթի էությունը, տարբեր իրավագետներ տարբեր կերպ են պատասխանում: Վարչական իրավախախտման սոցիալ-իրավական էության վերաբերյալ տեսական մոտեցումները կարող են ընդհանրացվել երկու հիմնական տեսակետների առկայությամբ: Դրանցից առաջինի համաձայն՝ վարչական իրավախախտումը հասարակության համար անցանկալի է այն պատճառով, որ դա սոցիալապես վտանգավոր արարք է, որը ոտնձգություն է կատարում իրավունքի նորմերով պաշտպանված հասարակական հարաբերությունների վրա:

Երկրորդ տեսակետի ներկայացուցիչները չեն ճանաչում վարչական զանցանքները որպես սոցիալապես վտանգավոր արարքներ: Նրանց կարծիքով՝ իրավական պայքարը նրանց դեմ է, քանի որ զանցանքները պարունակում են հասարակության շահերին վնաս հասցնելու պոտենցիալ հնարավորություն: Վարչական իրավախախտմանը բնորոշ է բոլոր իրավախախտումների համար ընդհանուր օբյեկտիվ որակը՝ «անօրինականությունը», քանի որ այն արտահայտվում է գործողության կամ անգործության մեջ, որը հակասում է պետության կողմից սահմանված ընդհանուր պարտադիր վարչական և իրավական այլ նորմերի պահանջներին՝ պետական կառավարման գործընթացում հարաբերությունները կարգավորելու համար: Վարչական իրավախախտումը բնութագրվում է այն փաստով, որ վարչական իրավախախտումը, որպես կանոն, տեղի է ունենում այն ժամանակ, երբ պետական կառուցակարգերն առավել նվազ պաշտպանվածության մակարդակ ունեն: Վարչական իրավախախտման անօրինականությունը դրա վնասակարության իրավական արտահայտությունն է: Այս երկու հատկանիշներն էլ բնութագրում են վարչական իրավախախտման նյութական էությունը: Լինելով հակասոցիալական արարք՝ վարչական իրավախախտումը զուրկ է հասարակական բնույթից, ինչը որակապես տարբերակում է այն հանցագործությունից:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության զարգացման միտումը ցույց է տալիս, որ վարչական իրավախախտումների համար պատժամիջոցները խստացվում են, ինչը նպաստում է վարչական իրավախախտումների և քրեական հանցագործությունների համար հասարակական վտանգի ընկալման սահմանների քայքայմանը, ինչպես նաև այն այսպես կոչված «նվազ քրեական իրավունք» ստեղծելու

ՍԱՀՄԱՆԱՂՈՒՄՆԵՐԻ ՂԱՏԱՐՈՒՄ 1(113)2024

անհրաժեշտության վերաբերյալ տեսակետների առաջացմանը, երբ հանցագործություններին նման վարչական իրավախախտումները կդիտարկվեն որպես քրեական հանցագործություններ, որոնք չեն ենթադրում քրեական պատասխանատվություն: Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության զարգացման միտումը ցույց է տալիս, որ եվրոպական երկրներում վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությունը ոչ պակաս պատվավոր տեղ է գրավում, թեև դրա նկատմամբ մոտեցումը նկատելիորեն տարբերվում է: Այնպիսի պետություններում, ինչպիսիք են Գերմանիան, Իտալիան, վարչական իրավախախտումների մասին օրենքները համարվում են ոչ թե որպես անկախ ազդեցություն ունեցող (ինչպես Ռուսաստանում կամ Հայաստանում), այլ որպես քրեական օրենսդրության բաղկացուցիչ մաս: Գերմանիայում հասարակական կարգի իրավախախտումը համարվում է «փոքր քրեական իրավունք» և վերաբերում է ընդհանուր դատարանների իրավասությանը¹: Դա հիմնականում պայմանավորված է պատմական գործոններով: XX դարում բոլոր տեսակի իրավախախտումները եվրոպական պետություններում դիտարկվում էին բացառապես քրեական իրավունքի շրջանակներում, և միայն վերջերս, տնտեսության զարգացման, իրավական համակարգի պատճառով, դրանց համար պատասխանատվությունը սկսեց նշանակվել ոչ թե դատական մարմինների, այլ վարչական մարմինների կողմից: Հետևաբար գոյություն ունեն տարբերություններ «վարչական իրավախախտում» տերմինի ընկալման մեջ: Հարկ է արձանագրել, որ քրեական հանցագործությունների հետ ընդհանուր առարկա ունեցող վարչական իրավախախտումների կազմերի վերանայումը թույլ կտա դրանք վերանայել և վերագրել քրեական իրավունքին՝ որպես հանցագործություն, որը չի առաջացնում խիստ պատասխանատվություն: Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում անհրաժեշտ է ամրագրել հենց այն վարչական իրավախախտումները, որոնք ոտնձգություն են կատարում կառավարման սահմանված կարգի վրա: Դիտարկված հատկանիշները վարչական իրավախախտումը բնութագրում են որպես սոցիալապես վնասակար արարք, իրականության երևույթ: Վարչական իրավախախտումը բնութագրվում է նրանով, որ այս կատեգորիան կոնկրետացվում է վարչական իրավախախտումների մասին օրենսդրության մեջ՝ իրավախախտումների հատուկ կազմերի տեսքով:

¹ Ст'ю Пуделька Йорг. Сравнительный анализ гражданско-процессуального и административно-процессуального права // Ежегодник публичного права – 2014. Административное право: сравнительно-правовые подходы. - М., 2014, էջ 340:

Ավանդաբար, վարչական իրավունքի տեսության մեջ վարչական իրավախախտման իրավական կազմը հասկացվում է որպես օրենքով սահմանված տարրերի պարտադիր շարք և արարքը բնութագրում է որպես վարչական իրավախախտում: Զանցանքի իրավական կազմն ունի որոշակի համակարգ և դրա բոլոր տարրերը փոխկապակցված են: Կազմի բոլոր տարրերի առկայությունը պարտադիր է որոշակի արարքը որպես վարչական իրավախախտում որակելու համար: Եթե նրանցից առնվազն մեկը բացակայում է, կամ ինչպես շեշտում է պրոֆեսոր Ի.Ա. Գալազան՝ չի համապատասխանում այն հատկություններին, որոնք նախատեսված են օրենքի համապատասխան նորմով, ապա նշված արարքն ընդհանրապես վարչական իրավախախտում չէ, կամ այդ արարքում կա մեկ այլ իրավախախտման կազմ, որը նախատեսված է օրենքի մեկ այլ նորմով: Այսպիսով՝ վարչական իրավախախտման կազմի ըմբռնումը կարևոր է վարչական պատասխանատվություն կիրառելիս օրինականություն ապահովելու, վարչական իրավախախտումները հանցագործություններից և կարգապահական իրավախախտումներից սահմանազատելու համար:

Օրենսդիրը չի ստեղծում զանցանքների նշաններ, այլ միայն ընտրում է էական տարբերակիչ հատկություններ: Վարչական իրավախախտումների մասին օրենսդրությունը չունի «վարչական իրավախախտման կազմ» հասկացությունը, սակայն առկա է իրավանորմ, ըստ որի՝ վարչական իրավախախտման կազմի բացակայությունը հիմք է հանդիսանում վարչական իրավախախտման գործի վարույթը կարճելու համար: Վարչական և իրավական գրականության մեջ առանձնանում են չորս տարրեր, որոնք ներկայացնում են վարչական իրավախախտման իրավական կազմը՝ օբյեկտ, օբյեկտիվ կողմ, սուբյեկտ, սուբյեկտիվ կողմ: Այս տարրերը կառուցված են իրավախախտման համար և բնութագրում են ֆիզիկական կամ իրավաբանական անձի գործողության կամ անգործության իրավական որակավորման գործընթացը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վարչական իրավախախտման զանցակազմի տարրերին, արձանագրել է, որ «վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի շրջանակներում վարչական մարմինը պարտավոր է պարզել տվյալ վարչական զանցակազմի չորս բաղկացուցիչ մասերի (տարրերի)՝ վարչական զանցանքի (հակաիրավական վարք) օբյեկտի, վարչական զանցանքի օբյեկտիվ կողմի (զանցանքի բովանդակություն), վարչական զանցանքի սուբյեկտի (ֆիզիկական անձ, իրավաբանական անձ, պաշտոնատար անձ) և վարչական զանցանքի սուբյեկտիվ կողմի (իրավահարաբերության սուբյեկտի հոգեկան զգացական կարգավիճակ) միաժամանակյա առկա-

ՍԱՀՄԱՆԱՂՈՒՄԻ ՆԱԿԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1(113)2024

յությունը, քանի որ նշված տարրերից որևէ մեկի բացակայությունը բացառում է վարչական զանցակազմի գոյությունը»¹:

Միաժամանակ, կարևոր է արձանագրել, որ գործող օրենսդրությունը վարչական իրավախախտում չի դիտում միայն այն արարքը, որն առաջացնում է քրեական պատասխանատվություն, սակայն վարչական իրավախախտում չի կարելի որակել նաև այն արարքները, որոնք իրենց էությամբ կարող են առաջացնել նաև ֆինանսական կամ կարգապահական պատասխանատվություն:

Վարչական իրավախախտումը վարչական պատասխանատվության հիմքն է²:

Ֆինանսական պատասխանատվությունն էության մեջ կարելի է քննարկել հարկային կամ մաքսային ոլորտում առկա պատասխանատվության միջոցները:

Անդրադառնալով կարգապահական պատասխանատվության հետ կապված հարցադրմանը՝ հարկ է արձանագրել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 15-րդ հոդվածն ուղղակի կերպով նախատեսում է, որ կոնկրետ սուբյեկտների կողմից վարչական պատասխանատվություն նախատեսող արարք կատարելու համար վերջիններիս նկատմամբ կիրառվում է կարգապահական պատասխանատվություն: Նման իրավանորմի առկայությունն ու դրա բովանդակությունն ինքնին վկայում են այն մասին, որ վարչական իրավախախտում չի կարող որակվել նաև այն արարքը, որի համար նույն օրենսգրքով նախատեսված է կարգապահական պատասխանատվության կիրառում:

Վերոգրյալ դիտարկումների համատեքստում հարկ է նշել, որ վարչական իրավախախտմանը բնորոշ են հետևյալ ընդհանրական հատկանիշները.

ա) արարքը, որը կարող է որակվել որպես վարչական իրավախախտում, պետք է ունենա ոտնձգության տարր, և այն պետք է ուղղված լինի հասարակական և պետական կարգի, հասարակական և պետական անվտանգության, մարդու իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ,

բ) արարքը, որով դրսևորվում է ոտնձգությունը, պետք է լինի հակաօրինական, այսինքն՝ պետք է առկա լինի անօրինականության

¹ Տե՛ս թիվ ՎԴ/6382/03/20 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.12.2023 թվականի որոշումը:

² Տե՛ս ՀՀ վարչական իրավունք: Ոստմնական ձեռնարկ, ընդհանուր խմբագրությամբ՝ **Գ. Դանիելյանի**: Երևանի պետական համալսարան, 2012, 467 էջ:

հատկանիշը՝ արարք կամ անգործություն, որն արգելված է կամ պարտադիր կատարման ենթակա է օրենքով,

գ) արարքը վարչական իրավախախտում որակելու համար պետք է կատարված լինի մեղավորությամբ, այսինքն՝ պետք է առկա լինի մեղավորությամբ դրսևորված դիտավորյալ կամ անզգույշ հակաիրավական վարքագիծ,

դ) արարքը կարող է որակվել որպես վարչական իրավախախտում միայն այն դեպքում, երբ որպես իրավախախտում նախատեսված է համապատասխան իրավական ակտում, ընդ որում՝ վարչական պատասխանատվություն սահմանող նորմը չի կարող սահմանվել ենթաօրենսդրական ակտով,

ե) արարքը պետք է ունենա հանրային վտանգավորություն,

զ) վարչական իրավախախտումը պետական հարկադրանքի տրամաբանության ներքո ենթակա է կանխարգելման կամ պատժման,

է) իր էությամբ չի առաջացնում այլ տեսակի պատասխանատվություն, մասնավորապես՝ քրեական, ֆինանսական (հարկային կամ մաքսային) կամ վարչական պատասխանատվություն նախատեսող իրավական ակտով սահմանված դեպքերում կարգապահական պատասխանատվություն:

Ամփոփելով՝ անհրաժեշտ է արձանագրել, որ վարչական իրավախախտման հետևանքը վարչական պատասխանատվությունն է, հետևաբար յուրաքանչյուր իրավախախտում կատարած անձ, որը կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության, պարտավոր է գիտակցել, որ իր օբյեկտիվ իրականությունում դրսևորած որոշակի կոնկրետ վարքագծի համար իր իրավունքներն այս կամ այն կերպ կարող են սահմանափակվել կամ իր վրա կարող է դրվել որոշակի պարտականություն, անկախ այն հանգամանքից, թե դրսևորված հակաիրավական վարքագիծն ինչ բնույթի հասարակական հարաբերություններ է խաթարել և արդյոք վնասել է այլ անձանց:

Եզրակացություն

Ջանքանքը՝ որպես հանրային վտանգավոր արարք, թեև ունի առավել նվազ վտանգավորության մակարդակ, քան հանցանքն է, սակայն իր ծավալով առավել ընդգրկուն է և շոշափում է ավելի շատ հասարակական հարաբերություններ: Ընդ որում, վարչական պատասխանատվություն կիրառելու վերաբերյալ վարչական ակտերը հանդիսանում են միջամտող վարչական ակտերը, որպիսի հանգամանքով պայմանավորված՝ այդ իրավահարաբերությունների շրջանակներում անձանց իրավունքների

պաշտպանության երաշխավորման, օրինականության սկզբունքի կիրառելիության, իրավունքի գերակայության ապահովման տեսանկյունից անհրաժեշտ է հնարավորինս որոշակի (որոշակիության սկզբունքի պահպանմամբ) իրավական կանոնակարգումների ստեղծումը, որով կբացառվի իրավական չհիմնավորված երկակիությունը և անձանց մոտ կձևավորի վստահություն օրենքի նկատմամբ:

Հենց այս դիտարկման լույսի ներքո անհրաժեշտ է կատարել հետևյալ եզրահանգումները.

1) Թեև ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածն անմեղության կանխավարկածի սկզբունքն ուղղակիորեն կապում է հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձի հետ, սակայն անմեղության կանխավարկածը գործում է հանրային պատասխանատվության ոլորտում և պայմանավորված տվյալ արարքի բնույթով, նախատեսված պատասխանատվության տեսակներով ու խստությամբ՝ կարող է կիրառվել նաև վարչական պատասխանատվության վարույթների նկատմամբ:

2) Վարչական պատասխանատվության ոլորտում անմեղության կանխավարկածի ինստիտուտն անհրաժեշտ է կապել ոչ թե վարչական պատասխանատվություն կիրառելու վերաբերյալ վարչական ակտի անբողոքարկելի դառնալու հետ, այլ վարչական ակտի իրավաբանական ուժ ստանալու հետ: Նման իրավիճակում, վարչական պատասխանատվության ոլորտում անձը համարվում է անմեղ, քանի դեռ «Վարչական տույժ նշանակելու մասին» վարչական ակտը չի մտել ուժի մեջ:

3) Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության զարգացման միտումը ցույց է տալիս, որ վարչական իրավախախտումների համար պատժամիջոցները խստացվում են, ինչը նպաստում է վարչական իրավախախտումների և քրեական հանցագործությունների համար հասարակական վտանգի ընկալման սահմանների քայքայմանը:

4) Վերոգրյալ հատկանիշների և դատողությունների տրամաբանության ներքո ամփոփելով ամբողջ վերոգրյալ տեսակետները, իրավական դատողությունները, բացահայտելով վարչական իրավախախտման հասկացության էությունը, ինչպես նաև առաջնորդվելով Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի անդամ երկրների լավ կառավարման վերաբերյալ այն առաջարկությամբ, ըստ որի՝ արդյունավետ վարչարարությունը պետք է ապահովվի օրենսդրության որակով, որը պետք է լինի պատշաճ և հետևողական, պարզ, հեշտ հասկանալի և մատչելի՝ սույն աշխատանքով հիմնավորվում է վարչական իրավախախտման այն հեղինակային հասկացությունը, ըստ որի՝ վարչական իրավախախտումը հակաօրինական, մեղավոր, հանրային վտանգավոր, կանխարգելման

կամ պատժման ենթակա այնպիսի ոտնձգություն է, որը որպես վարչական իրավախախտում նախատեսված է համապատասխան օրենսդրական ակտում և որի համար նախատեսված չէ քրեական, ֆինանսական, ինչպես նաև վարչական պատասխանատվություն նախատեսող իրավական ակտով սահմանված դեպքերում՝ նաև կարգապահական պատասխանատվություն:

5) Այն իրավախախտումների պարագայում, որոնց համար գործող օրենսդրությունը նախատեսում է առավել խիստ պատասխանատվության միջոց առաջին անգամ վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո նույն արարքը շարունակելու համար, վարչական մարմինը կրկնակի պատասխանատվության միջոցը պետք է կապի առաջին վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի, այլ ոչ վարչական ակտի անբողոքարկելիության հետ, քանի դեռ այն օրենքով սահմանված կարգով վերացված կամ ոչ իրավաչափ ճանաչված չէ, իսկ վարչական ակտն իրավաչափ է, քանի դեռ օրենքով սահմանված կարգով անվավեր կամ ոչ իրավաչափ ճանաչված չէ:

6) Վարչական իրավախախտումը պետության և հասարակության կողմից անցանկալի որակվող վարքագիծն է, իսկ վարչական պատասխանատվությունը՝ պետության արձագանքն իր համար անցանկալի վարքագծին, որպիսի պայմաններում քննարկված երկու ինստիտուտներն ունեն շղթայական կապ և ուղղակի կապի մեջ են միմյանց հետ:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն՝ ընդունված 05.07.1995 թ. (2015 թվականի փոփոխություններով):
2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 18.02.2004 թվականին:
3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք՝ ընդունված 06.12.1985 թվականին:
4. «Վարչական վարույթի մասին» Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենք (Verwaltungsverfahrensgesets)՝ ընդունված 25.05.1976 թվականին:
5. «Վարչական իրավախախտումների մասին» Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենք՝ ընդունված 24.05.1968 թվականին:

6. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսգիրք՝ ընդունված 20.12.2001 թվականին:

7. «Քրեական համակարգում փոփոխությունների մասին» Իտալիայի Հանրապետության օրենք՝ ընդունված 24.11.1981 թվականին, https://www.bosettiegatti.eu/info/norme/statali/1981_0689.htm

8. «Պետական կառավարման մարմինների ընդհանուր վարչական վարույթների մասին» Իսպանիայի Թագավորության օրենք՝ ընդունված 01.10.2015 թվականին: Art. 37 (2), 47 The Common Administrative Procedure of the Public Administrations: Law 39. 2015, October 1. URL: <https://afyonluoglu.org/PublicWebFiles/Reports/PDP/2015%20Spain-Law%2039-2015%20Common%20Administrative%20Procedure%20of%20PA.pdf>

9. ՀՀ Սահմանադրական դատարանի 22.09.2009 թվականի թիվ ՍԴՈ-832 որոշում:

10. ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական գործով 22.12.2023 թվականի թիվ ՎԴ/6382/03/20 որոշում:

11. **Թովմասյան Հ., Լուխթերհանդթ Օ., Մուրադյան Գ., Պողոսյան Վ., Ռիսայաներս Վ., Ռուբել Ռ.**, ՀՀ ընդհանուր վարչական իրավունք: Երևան. «Բավիդ», 2011, 421 էջ:

12. ՀՀ վարչական իրավունք: Ուսումնական ձեռնարկ, ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Դանիելյանի: Երևանի պետական համալսարան, 2012, 704 էջ:

13. Պետության և իրավունքի տեսություն: Հեղ. խումբ, գիտ. խմբ՝ **Ա Ղամբարյան, Մ. Մուրադյան:** Երևան. «Լուսաբաց» հրատարակչություն, 2014, 692 էջ:

14. **Սմբատյան Ջ.** Վարչական իրավախախտման, վարչական պատասխանատվության և վարչական պատժի ինստիտուտների հարաբերակցության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Երևան. «Լիմուշ», 2024, 78 էջ:

15. **Սմբատյան Ջ.** Վարչական ակտի արդյունավետության գնահատման տեսական և գործնական վերլուծություն: Երևան, 2023, 168 էջ:

16. **Augusto Durán Martínez**, La presunción de legitimidad del acto administrativo. Un mito innecesario y pernicioso universidad católica. 2007, էջեր 119-151,

<https://revistas.ucu.edu.uy/index.php/revistadederecho/article/view/848/851>

17. Административная ответственность: Учебное пособие. – Оренбург: Оренбургский институт (филиал) Университета имени О.Е. Кутафина (МГЮА), 2018. – 134 с.

18. Пуделька Йорг. Сравнительный анализ гражданско-процессуального и административно-процессуального права // Ежегодник публичного права – 2014. Административное право: сравнительно-правовые подходы. - М., 2014. - С. 453.

19. Recommendation CM/Rec(2007)7 of the Committee of Ministers to member states on good administration.

АДМИНИСТРАТИВНОЕ ПРАВОНАРУШЕНИЕ КАК РЕЗУЛЬТАТ ПРОЯВЛЕНИЯ ПРОТИВОПРАВНОГО ПОВЕДЕНИЯ И ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ЕГО ВОСПРИЯТИЯ

Аннотация

В статье рассматривается административное правонарушение как результат проявления противоправного поведения и основные проблемы его восприятия.

С учетом вышеизложенного, предметом исследования в рамках статьи являются правовая доктрина, правовые акты разных стран относительно содержания исследования и судебная практика их применения.

Целью настоящей статьи является закрепление на основании правового исследования единых суждений об институте презумпции невиновности в сфере административной ответственности, понятия административного правонарушения, презумпции правомерности административного акта, о цепной связи институтов административного правонарушения и административной ответственности, а также на основе теоретического и практического опыта внедрение наиболее эффективных и характерных регулирований в систему законодательных регулирований Республики Армения.

В статье рассматриваются вопросы, которые в той или иной мере нашли отражение в работах различных авторов, однако проблемы, встающие перед рассматриваемым в статье институтом, не были предметом отдельного комплексного научного исследования и правового анализа, что и было сделано в настоящей работе.

Данная работа представляет собой системное и расширенное исследование действующих регулирований в сфере административных

правонарушений, в котором наиболее детально и полно рассматривается институт административного правонарушения, его соотношение с преступлением, разграничение преступления и проступка, административная ответственность как следствие административного правонарушения и их цепная связь, презумпция правомерности административного акта как условие применения административной ответственности за продолжающееся правонарушение.

Ключевые слова: административное правонарушение, административная ответственность, проступок, презумпция невиновности, преступление, противоправность, норма.

ADMINISTRATIVE OFFENSE AS THE RESULT OF THE MANIFESTATION OF ILLEGAL BEHAVIOR AND THE MAIN PROBLEMS OF ITS PERCEPTION

Annotation

The article discusses the administrative offense as the result of the manifestation of illegal behavior and the main problems of its perception. In view of the above, the legal doctrine and the legal acts of different countries related to the content of the study, as well as the judicial practice of their application are the subject of the study within the framework of this research.

The purpose of this article is to establish, on the basis of legal research, unified judgments in the field of administrative responsibility about the institution of the presumption of innocence, the concept of the administrative offense, the presumption of legality of the administrative act, the chain connection between the institutions of administrative offense and administrative responsibility, as well as on the basis of theoretical and practical experience to fix the most effective and characteristic norms in the current legislative field of the Republic of Armenia.

The article considers issues that have been reflected to a greater or lesser extent in the works of various authors, but have not been the subject of a separate comprehensive scientific discussion and legal analysis regarding the

problems facing the institution that constitutes the content of the topic, which was done in this paper.

This work is a systematic and spatial research of the existing regulations in the field of administrative offense, through which the institution of administrative offense, its correlation with crime, the boundary of the relationship between crime and misdemeanor, administrative responsibility as a consequence of an administrative offense and their chain connection, the presumption of the legality of an administrative act as a condition for the application of administrative responsibility for a continuing offense are examined in more detail and fully.

Keywords: administrative offense, administrative responsibility, misdemeanor, presumption of innocence, crime, illegality, norm.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 13.03.2024 թ., տրվել է գրախոսության 14.03.2024 թ., ընդունվել է տպագրության 24.03.2024 թ.:



DOI: 10.59560/18291155-2024.1-39



ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*ՀՀ Սահմանադրական դատարանի
նախագահի խորհրդական,
Հայ-ռուսական համալսարանի դոցենտ,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
քաղաքական գիտությունների թեկնածու,
դոցենտ*

**ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒ ՓՈՒՏՊՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ¹**

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է իրավունքի և քաղաքականության փոխգործակցության և հարաբերակցության հիմնահարցերի վերլուծությանը: Ուսումնասիրելով քաղաքականության և իրավունքի փոխգործակցության առանձնահատկությունները՝ փաստվում է, որ այս կարևորագույն երևույթները չեն կարող գործել բացարձակ մեկուսի, բայց միևնույն ժամանակ, յուրաքանչյուրը գործում է իրեն հատուկ գործիքակազմով: Հետազոտության ընթացքում առանձին ուշադրություն է դարձվել քաղաքականության և իրավունքի մի շարք նմանություններին և տարբերություններին, որոնց վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ և՛ իրավունքի, և՛ քաղաքականության գործունեությունն ուղղված է պետության ֆունկցիոնալության ապահովմանը:

Հիմնաբառեր. իրավունք, քաղաքականություն, պետություն, փոխգործակցություն:

1. Ներածություն

Իրավունքի և քաղաքականության՝ որպես երկու կարևորագույն հասարակական կարգավորիչների, հարաբերակցության, փոխգործակցության և դրանց առաջնահերթությունների հիմնախնդիրները դարեր ի վեր

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ (Թեմայի ծածկագիր՝ 22YR-5E006):

1(113)2024
◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
◆ ՍՄՅՄՍՍԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
39

գտնվում են մի շարք մասնագետների և գիտնականների հետազոտությունների կիզակետում: Ընդ որում, քաղաքականության և իրավունքի հարաբերակցության խնդիրը գիտական հետաքրքրություն է ներկայացնում ինչպես իրավական (հատկապես՝ հանրային իրավունքի շրջանակներում), այնպես էլ՝ քաղաքական հետազոտությունների համատեքստում:

Դարեր շարունակ մի շարք ականավոր մասնագետներ փորձում են մշտապես մրցակցության մեջ գտնվող այս երևույթների ակունքներն ու գործառույթները ուսումնասիրելու միջոցով պարզել, թե ի վերջո այս երկու կարգավորիչներից ո՞րն է մյուսով պայմանավորված, ո՞րն է դոմինանտը և ինչպե՞ս է դրսևորվում դրանց հարաբերակցությունն ու փոխգործակցությունը: Գիտնականների մի մասը համարում է, որ քաղաքականությունն է գերակա, մյուսը՝ հակառակը, երրորդ մասն ընդհանրապես համարում է, որ իրավունքն «աքաղաքականացված» երևույթ է, կամ, համենայն դեպս, պետք է այդպիսին լինի, քանզի այն կոչված է ծառայելու ավելի բարձր նպատակների, քան քաղաքականության նպատակներն են: Մեկ այլ խումբ գիտնականներ կարծում են, որ իրավունքում մշտապես և անխուսափելիորեն առկա է քաղաքական բաղադրիչը:

2. Իրավունքի և քաղաքականության գործունեությունը

Ընդհանուր առմամբ, և՛ իրավունքը, և՛ քաղաքականությունը հասարակական կյանքի որոշակի ոլորտներում սոցիալական կարգի կանխորոշման միջոցով կանոնակարգում են հասարակության յուրաքանչյուր անդամի վարքագիծը: Միևնույն ժամանակ, իրավունքի և քաղաքականության գործունեությունն ուղղված է պետության ֆունկցիոնալության ապահովմանը: Այսինքն՝ այս երկու բարդ, բազմաշերտ և բազմաբովանդակ երևույթների սերտ փոխգործակցության արդյունքում է հնարավոր դառնում պետության լիազորությունների ու պարտականությունների անցնցում իրականացումը, քանի որ պետության կողմից իրականացվող գործառույթներն իրականացվում են քաղաքական որոշումների և իրավական կարգավորումների օգնությամբ:

Եթե իրավունքի և քաղաքականության առաջացումը դիտարկենք պատմական հարթության վրա, ապա եզրակացությունն այն է, որ իրավունքը, բնականաբար, ավելի վաղ է առաջացել քան քաղաքականությունն ու քաղաքական երևույթները: Սակայն, ինչպես արադարացիորեն նշում է Ա.Ն. Շաշկովան, նախապետական հասարակությունում մարդու՝ կյանքի, ազատության և սեփականության իրավունքներն իրացվել են բնագդային մակարդակում, ինչն անհատի զարգացման արդյունքում է միայն անգիտակցական մակարդակից անցում կատարել գիտակցական

1(113)2024
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ ՍԱՀՄԱՆԱՎՈՐՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ
40

մակարդակ¹: Ներկայացված մոտեցումը փաստում է, որ նախապետական հասարակությունում անգամ բնական և անօտարելի իրավունքները մարդու կողմից իրացվել են կամայականորեն, ճիշտ այնպես, ինչպես հասարակության յուրաքանչյուր անդամ ընկալել է իր իրավունքներն ու դրանց իրացման ճանապարհները: Անհատի, հասարակության զարգացմանը զուգահեռ և հասարակական հարաբերությունների կանոնակարգման, սոցիալական կարգի հաստատման արդյունքում հնարավոր է դարձել ընդհանուր վարքագծի կանոնների սահմանումն ու հասարակության անդամների հարաբերությունների կանոնակարգումը: Այս առումով դժվար է թերագնահատել թե՛ քաղաքական նորմերի դերը, որոնց միջոցով վարքագծի ընդհանուր կանոններ են սահմանվում քաղաքական գործընթացների, հարաբերությունների և, առհասարակ, պետության կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր սուբյեկտի համար, թե՛ իրավական նորմերի, որոնց միջոցով վարքագծի համընդհանուր կանոններ են սահմանվում հասարակության յուրաքանչյուր անդամի համար: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ իրավունքը և քաղաքականությունը, հանդիսանալով հասարակական հարաբերությունների կարգավորիչներ, որոնք չեն կարող գործել բացարձակ մեկուսի, այդուհանդերձ, հանդես են գալիս ոչ թե որպես մեկ միասնական կարգավորիչ համակարգ, այլ յուրաքանչյուրն իր կարգավորման մեխանիզմներն են ու առանձնահատուկ գործիքակազմն ունի: Այս առումով տեղին է առանձնացնել հոլանդացի ականավոր իրավաբան-քաղաքագետ Հ. Հրոցիուսի այն միտքը, որ՝ «եթե իրավագիտության առարկան իրավունքի և արդարության հարցերն են, ապա քաղաքագիտության առարկան՝ նպատակահարմարությունը և օգուտը²»:

3. Իրավունքի և քաղաքականության հարաբերակցությունը

Իրավունքը և քաղաքականությունը սերտորեն փոխկապակցված ոլորտներ են, որոնց փոխկապակցվածությունն երկկողմանի բնույթ է կրում: Մի կողմից պետությունը, քաղաքական կամք դրսևորելով, ձևավորում է իրավունքի համակարգը՝ դարձնելով այն հանրային, համապարտադիր և պաշտպանում է այն պետական հարկադրանքով, մյուս կողմից՝ պետության կողմից ձևավորված իրավունքի համակարգը ապահովում է

¹ **Шашкова А.В.** Проблемы взаимодействия права и политики / Шашкова А.В. // Социально-политические науки. – N 5, 2018. – С. 12.

² История политических и правовых учений: Учебник для вузов / Под общей редакцией академика РАН, доктора юридических наук, профессора **Нерсисянца В.С.** – Москва: Издательство НОРМА, 2004. – С. 298.

պետության անցնում գործունեությունը: Պետության կողմից իրականացվող ներքին և արտաքին քաղաքականությունն ամբողջապես հիմնված է իրավունքի վրա¹: Ինչպես արդարացիորեն նշում է Չերդյանցը՝ պետության կողմից իրականացվող գործառույթներն իրականացվում են իրավունքի օգնությամբ², իսկ պետության գործառույթները, ցանկացած պարագայում, քաղաքական բնույթ են կրում:

Քաղաքականության և իրավունքի հարաբերակցությունը վերլուծելիս քաղաքագետները (երբեմն նաև քաղաքական գործիչները), որպես կանոն, հիմնական դերը տալիս են քաղաքականությանը, իսկ իրավունքի դերը, քաղաքականության դերի հետ համեմատության մեջ, ներկայացվում է որպես երկրորդական և աննշան: Իրավունքը չի ընկալվում որպես քաղաքականությունը իրավական դաշտ մղող ուժ, այլ դիտարկվում է որպես քաղաքականության կցորդ: Նմանօրինակ մոտեցման կողմնակիցն է մարքսիստական տեսությունը, համաձայն որի՝ «ցանկացած իրավական իր հիմքում քաղաքական բնույթ է կրում³»: Մարքսիստական գաղափարախոսության կրող Վ.Ի. Լենինը համարում էր, որ «օրենքը քաղաքական միջոց է, օրենքը քաղաքականություն է⁴»: Իսկ ահա ԽՍՀՄ ականավոր իրավաբան (խորհրդային իրավունքի մշակող) և պետական գործիչ Պաշուկանիսը նշում էր. «մենք նրա կողմնակիցն ենք, որ իրավունքում առաջին տեղը զբաղեցնի քաղաքականությունը, որպեսզի քաղաքականությունն իշխի իրավունքին⁵»:

Իրավաբանները, ի տարբերություն քաղաքագետների, օրենքը և իրավական նորմերը դիտարկում են որպես երաշխիք կամայականությունից, որն ընկած է ինչպես անհատի պատվի, արժանապատվության, անձեռնմխելիության պաշտպանության ապահովման, այնպես էլ պետական քաղաքականության իրականացման հիմքում: Անվանի անգլիացի իրավաբան Ֆ. Պոլոքը, նախապատվությունը տալով իրավունքին, նշում է, որ «օրենքը քաղաքական ինստիտուտների համար ճիշտ նույն նշանակությունն ունի, ինչ ողնաշարը՝ մարմնի⁶»: Հետաքրքրական է նաև

¹ Պետության և իրավունքի տեսություն. (խմբագրությամբ՝ Ա. Ղամբարյանի և Մ. Մուրադյանի): Երևան, «Լուսարաց» հրատարակչություն, 2016 թ., էջ 268:

² Чердынецев А.Ф. Теория государства и права: Учебник для вузов / А.Ф. Чердынецев – М.: Юрайт-М, 2002. – С. 185.

³ Энгельс Ф., Маркс К. Соч. Том 1. - С. 635.

⁴ Ленин В.И. Полное собрание сочинений (5-ое издание). Т. 30 (Июль 1916 – февраль 1917). - М.: Издательство политической литературы, 1973. - С. 562.

⁵ Пашуканис Е.Б. Положение на теоретическом правовом фронте // Советское государство и революция права. 1930. №11/12. - С. 8.

⁶ Pollock F. Essays in jurisprudence and ethics. – L., 1882, p. 132.

Ֆրանսիացի իրավաբան-գիտնական Պ. Սանդեվուարի մոտեցումը, համաձայն որի՝ նրբանկատության պատճառով իրավունքի և քաղաքականության միջև փոխհարաբերությունների խնդիրը շատերի կողմից թերագնահատվում է: Հարցի վերաբերյալ երկու տեսությունն առանձնացնելով՝ վերջինը նշում է, որ համաձայն առաջին տեսության, քաղաքականությունը ենթակա է կամ պետք է ենթարկվի օրենքին, մինչդեռ երկրորդ տեսությունը հակառակն է պնդում: Չվիճարկելով իրավունքի և քաղաքականության փոխհարաբերություններում վերջինիս գերիշխանությունը՝ Սանդեվուարը նշում է, որ իրավունքը հանդես է գալիս ոչ այլ կերպ, քան քաղաքականության իրականացման գործիք: Բայց, միևնույն ժամանակ, փաստում է, որ իրավունքի նկատմամբ քաղաքականության գերակայությունն ունի իր սահմանները և որոշակի պայմաններում քաղաքականությունը կարող է և պետք է ճնշվի իրավունքով կամ գոնե ենթարկվի իրավունքին, կախված լինի դրանից: Բոլոր այն դեպքերում, երբ քաղաքական ղեկավարները քայլեր են ձեռնարկում օրենքին հակառակ, իրավունքը սահմանապակում է նրանց գործողությունների ազատությունը, կանխում ինքնիրավչությունը՝ բացահայտելով նրանց իրական մտադրությունները: Քաղաքականությունն է ձևավորում իրավունքը, բայց վերջինը, իր հերթին, արձագանքում է քաղաքականությանը՝ դրանում մտցնելով կարգապահական տարրեր և ստիպելով քաղաքական գործիչներին գործել բաց, արդար և պատասխանատու¹:

Քաղաքագետների և իրավաբանների մոտեցումները փաստում են, որ իրավունքի և քաղաքականության միջև չի եղել և չի կարող լիակատար ներդաշնակություն լինել, բայց դա չի նշանակում, որ դրանք մշտական առճակատման մեջ են: Իրավունքի և քաղաքականության փոխազդեցությունը կարող է բավականին արդյունավետ լինել, դրա համար հարկավոր է ամեն անգամ կարողանալ գտնել նրանց միջև ողջամիտ հավասարակշռություն²: Այս առումով տեղին է նշել ռուսագրի իրավաբան-գիտնական Կոզլիխինին, որը պնդում է, թե «իրավունքը պետք է հայտնի հեռավորություն պահի ինչպես իշխանությունից, այնպես էլ՝ և քաղաքականությունից³»:

4. Իրավունքի և քաղաքականության ընդհանրություններն ու տարբերությունները

¹ Сандевуар П. Введение в право. Пер. с франц. - М., 1994. - С. 61–64.

² Матузов Н.И. Право и политика: антиподы или союзники? // Право и политика. 5 (173), 2014. - С. 580.

³ Козлихин И.Ю. Право и политика. - СПб., 1996. - С. 10.

Բացի այդ, իրավունքն ու քաղաքականությունն ունեն մի շարք ընդհանուր հատկություններ և նպատակներ՝ կարգավորող և ուղղորդող ազդեցություն սոցիալական կյանքի, դրանում տեղի ունեցող գործընթացների վրա. հիմնականում ունեն նաև գործողությունների և նպատակների միասնական դաշտ: Պարադոքսը հենց այն է, որ, մի կողմից, իրավունքն ու քաղաքականությունը մշտական մրցակցության մեջ են, իսկ մյուս կողմից՝ նրանք բնական դաշնակիցներ են և չեն կարող հաջողությամբ գործել առանց միմյանց:

Ընդհանրությունների հետ մեկտեղ, իրավունքն ու քաղաքականությունն ունեն նաև մի շարք տարբերություններ: Մասնավորապես, քաղաքականության և իրավունքի միջև տարբերությունն այն է, որ իրավունքի նորմերը բավականին կայուն են, մինչդեռ քաղաքականությունն ավելի փոփոխական ու անկայուն է: Մարդկանց տարբեր խմբերի մոտ կան տարբեր, փոփոխվող քաղաքական արժեքներ, հայացքներ և սկզբունքներ, որոնք նաև տարբեր կերպ են ընկալվում: Քաղաքականությունը մարդկանց փոխգործակցության ավելի ճկուն և հակասական ոլորտ է, քան իրավունքը: Քաղաքականության և իրավունքի միջև մեկ այլ տարբերությունն այն է, որ քաղաքականությունն ավելի լայն երևույթ է, քան իրավունքն ու պետությունը: Այն կարող է իր ազդեցության դաշտը տարածել հասարակական կյանքի ցանկացած ոլորտի վրա: Քաղաքականությունը սովորաբար այնտեղ է, որտեղ կա իրավունք, բայց իրավունքը միշտ չէ, որ առկա է քաղաքական որոշումների, հարաբերությունների և գործընթացների մեջ: Քաղաքականությունը կարող է շատ արագ փոփոխվել, մինչդեռ իրավունքը փոխվում է ավելի դանդաղ և սովորաբար պաշտոնական նորմավորման միջոցով:

Քաղաքականության և իրավունքի ոլորտային և գործառույթային հստակ տարանջատումը էական նշանակություն ունի հասարակության զարգացման գործում:

Ընդհանուր առմամբ, բազմամյա քննարկումների և հետազոտությունների արդյունքում և հիմնվելով վերոշարադրյալի վրա՝ կարելի է առանձնացնել իրավունքի և քաղաքականության փոխգործակցության երեք հիմնական ուղղություն.

- իրավունքը ենթարկվում է քաղաքականությանը և պայմանավորված է քաղաքականությամբ,
- քաղաքականությունը ենթարկվում է իրավունքին և պայմանավորված է իրավունքով,
- իրավունքը և քաղաքականությունը գտնվում են ողջամիտ և միմյանց հավասարակշռող փոխգործակցության մեջ:

1(113)2024

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱՂՈՒՄԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ

5. Իրավունքի և քաղաքականության փոխգործակցությունը

Իրավունքի և քաղաքականության հարմոնիկ և հավասարակշռված փոխգործակցությունը բարենպաստ պայմաններ է ստեղծում ոչ միայն հասարակության ու պետության զարգացման համար, այլև յուրօրինակ երաշխիք է հանդիսանում հասարակության յուրաքանչյուր անդամի իրավունքների պաշտպանության հարցում: Պատահական չէ, որ դեռևս անտիկ աշխարհում, մեծանուն հույն գիտնական և մտածող Պլատոնը համարում էր, որ «սխալ են բոլոր այն օրենքները, որոնք չեն հաստատվել ամբողջ պետության ընդհանուր բարօրության համար: Մենք ընդունում ենք, որ այնտեղ, որտեղ օրենքները հաստատվում են մի քանի մարդու շահերից ելնելով, խոսքը ոչ թե պետական կառուցվածքի, այլ ներքին կոիվների մասին է, և այն, ինչ այնտեղ համարվում է արդարություն, իզուր է կրում այդ անունը¹», իսկ ահա նրա աշակերտ և «քաղաքականության» հիմնադիր Արիստոտելը պնդում էր. «...այնտեղ, որտեղ բացակայում է օրենքի իշխանությունը, խոսք չի կարող լինել պետական կարգի որևէ ձևի մասին: Օրենքը պետք է իշխի բոլորի վրա²»: Հարկ է նշել նաև, հատկապես արդի աշխարհի իրողությունները հաշվի առնելով, որ իրավունքը միայն այն դեպքում է արդար և մարդասիրական, երբ այն հավասարապես պարտադիր է, երբ իրավունքներն ու պարտականությունները հավասար են բոլոր քաղաքացիների համար (այդ թվում՝ պետական պաշտոնյաների, պատգամավորների և պետության ղեկավարների համար): Անհատի ցանկացած գործողություն, անկախ կարգավիճակից և զվաղեցրած պաշտոնից, պետք է հիմնված լինի իրավունքի վրա, քանզի իրավունքը պետք է կամայականություններից զերծ պահի ոչ միայն քաղաքացիներին, այլ, առաջնահերթ, պետական պաշտոնյաներին ու քաղաքական գործիչներին: Քաղաքականության և պետության նկատմամբ իրավունքի գերակայության ճանաչումը խոսում է տվյալ հասարակության բարձր իրավական մշակույթի մասին: Այս առումով, բարձր իրավական և քաղաքական մշակույթով օժտված ժամանակակից քաղաքակիրթ հասարակությունն ուղղակի դատապարտված է ճանաչելու իրավունքի գերակայությունը քաղաքականության նկատմամբ: Այս համատեքստում տեղին է առանձնացնել նաև ռուս իրավագետ, փիլիսոփա Ե.Ն. Տրուբեցկոյի այն միտքը, համաձայն որի՝ «Պետությունն ինքնին իրավական կազմակերպություն է»³: Այս միտքը, թերևս, ընկած է գրեթե բոլոր ժամանակակից պետությունների իրավական և քաղաքական համա-

¹ Платон. Законы. – М., 1999. – С. 14 (715 с.).

² Аристотель. Политика. – М.: Издательство М. и С. Сабашниковых, 1911. – С. 165 (476 с.).

³ Трубецкой Е.Н. Энциклопедия права. – СПб., 1998. – С. 17.

կարգերի հիմքում և «իրավական պետություն» եզրույթը լավագույնս է արտահայտում այս մտքի ողջ փիլիսոփայությունը: Պատահական չէ, որ մի շարք ժամանակակից իրավաբաններ ու քաղաքագետ գիտնականներ գոնե արժեքանական տեսանկյունից իրավական և քաղաքական արժեքներն իրենց սերտ միասնության և փոխգործակցության մեջ դիտարկում են որպես հավասարազոր սուբյեկտներ¹:

Իրավունքի և քաղաքականության հարմոնիկ և հավասարակշռված փոխգործակցության դասական արդյունք են նաև ժամանակակից պետությունների սահմանադրությունները, որոնք հանդիսանում են պետական քաղաքականության արտահայտման գլխավոր նորմատիվ հիմքն ու որոնցով ամրագրվում են պետական քաղաքականության գլխավոր սկզբունքները, ուղղությունները, նպատակները: Ամրագրվում և իրավունքի ուժով երաշխավորում են քաղաքացիների քաղաքական իրավունքներն և ազատությունները: Բոլորովին պատահական չէ, որ Սահմանադրությունները համարվում են իրավաքաղաքական փաստաթղթեր: Այն հավասարապես քաղաքական և իրավական կարգավորումներ պարունակող, բարձր իրավաբանական ուժ ունեցող և պետության համար ելակետային նշանակություն ունեցող փաստաթուղթ է, որի միջոցով քաղաքական նորմերը սահմանադրաիրավական ամրագրում ստանալու միջոցով ձեռք են բերում նաև իրավական նորմի բնութագիր:

Այս առումով, իրավունքն ու քաղաքականությունն ամրապնդում են միմյանց: Իրավունքը լեգիտիմացնում է քաղաքականությունը և քաղաքականության արտահայտման և իրականացման միջոց է հանդիսանում, իսկ քաղաքականությունը իշխանության և ընդունված օրենքների միջոցով երաշխավորում է անհատի իրավունքներն ու ազատությունները, պատասխանատվության մեխանիզմներ ու չափ է սահմանում:

6. Եզրակացություն

Ամփոփելով՝ գալիս ենք այն եզրակացության, որ քաղաքականությունն ու իրավունքը միևնույն նպատակին՝ պետության ֆունկցիոնալության ապահովմանը ծառայող, սերտորեն փոխկապակցված երևույթներ են, որոնցից յուրաքանչյուրի գոյությունը պայմանավորված է մյուսով: Միևնույն ժամանակ, հարկ է փաստել, որ իրավունքի և քաղաքականության փոխգործակցությունը պետք է լինի խիստ հավասարակշռված: Պետական կառավարման արդունավետությունը պահանջում է քաղաքականության նկատմամբ իրավունքի գերակայության անհրա-

¹ Политико-правовые ценности: история и современность / Под ред. Нерсисянца В.С. - М., 2000.

ժեշտությունը: Այսինքն՝ քաղաքականությունը պետք է հենվի բացառապես իրավունքի վրա, լինի իրավական, քանի որ միայն իրավունքի վրա հիմնված քաղաքականությունն է ունակ ստանձնել հասարակությունը կայունացնողի և միավորողի իր առաքելությունը: Մյուս կողմից, իրավունքը պետք է արդյունավետ կերպով նպաստի բնակչության մեծամասնության շահերից ելնելով ողջամիտ պետական քաղաքականության իրականացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Аристотель.** Политика. - М.: Издательство М. и С. Сабашниковых, 1911. - С. 165 (476 с.).
2. История политических и правовых учений: Учебник для вузов / Под общей редакцией академика РАН, доктора юридических наук, профессора **Нерсесянца В.С.** – Москва: Издательство НОРМА, 2004. - С. 298.
3. **Козлихин И.Ю.** Право и политика. - СПб., 1996. - С. 10.
4. **Ленин В.И.** Полное собрание сочинений (5-ое издание). Т. 30 (Июль 1916 – февраль 1917). - М: Издательство политической литературы, 1973. - С. 562.
5. **Матузов Н.И.** Право и политика: антиподы или союзники? // Право и политика. 5(173)2014. - С. 580.
6. **Платон.** Законы. – М., 1999. - С. 14 (715 с.).
7. Политико-правовые ценности: история и современность / Под ред. В.С. Нерсесянца - М., 2000.
8. **Пашуканис Е.Б.** Положение на теоретическом правовом фронте // Советское государство и революция права. 1930. №11/12. - С. 8.
9. **Сандевуар П.** Введение в право. Пер. с франц. - М., 1994. - С. 61–64.
10. **Трубецкой Е.Н.** Энциклопедия права. - СПб., 1998. - С. 17.
11. **Чердынецев А.Ф.** Теория государства и права: Учебник для вузов / А.Ф. Чердынецев. – М.: Юрайт-М, 2002. – С. 185.
12. **Энгельс Ф. Маркс К.** Соч. Том 1. - С. 635.
13. **Шашкова А.В.** Проблемы взаимодействия права и политики / А. В. Шашкова // Социально-политические науки. N 5, 2018. – С. 12.
14. Պետության և իրավունքի տեսություն (խմբագրությամբ՝ **Ա. Ղամբարյանի և Մ. Մուրադյանի**): Երևան, «Լուսաբաց» հրատարակչություն, 2016 թ., էջ 268:
15. **Pollock F.** Essays in jurisprudence and ethics. – L., 1882, p. 132.

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СООТНОШЕНИЯ И ВЗАИМОДЕЙСТВИЯ ПРАВА И ПОЛИТИКИ

Аннотация

Статья посвящена анализу проблем взаимодействия и соотношения права и политики. Исследуя особенности взаимодействия политики и права, констатируется, что эти важнейшие явления не могут действовать абсолютно изолированно, но в то же время каждое из них функционирует с помощью специфического для него инструментария. Отдельное внимание в ходе исследования было уделено ряду сходств и различий между политикой и правом, анализ которых показал, что деятельность и права, и политики направлена на обеспечение функциональности государства.

Ключевые слова: право, политика, государство, взаимодействие.

SOME ISSUES OF CORRELATION AND INTERACTION OF LAW AND POLITICS

Annotation

The article is devoted to the analysis of the problems of interaction and the relationship between law and politics. Examining the peculiarities of the interaction of politics and law, it is stated that these most important phenomena cannot act in absolute isolation, but at the same time, each of them functions with the help of specific tools for it. Special attention in the course of the study was paid to a number of similarities and differences between politics and law, the analysis of which showed that the activity of both the law and politics is aimed at ensuring the functionality of the state.

Keywords: law, politics, state, interaction, correlation.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 27.02.2024 թ., փրվել է գրախոսության 01.03.2024 թ., ընդունվել է փպագրության 07.03.2024 թ.:



DOI: 10.59560/18291155-2024.1-50

AIDA TADEVOSYAN

*Head of the Expertise-Analytic Division
of the Legal-Advisory Department
of the Constitutional Court of Armenia,
Candidate of Legal Sciences*



FENYA AGHABEKYAN

*Leading Specialist of the Expertise-Analytic Division
of the Legal-Advisory Department
of the Constitutional Court of Armenia;
1st year Master's student of the program
"International Public Law, European Law"
in Russian-Armenian University*

**THE SPECIFICS OF THE INSTITUTE OF STATE
OFFICIALS' IMMUNITY IN THE LIGHT OF
ARMENIAN CONSTITUTIONAL ORDER**

Annotation

The article discusses the nature of the institution of immunity as a political and legal concept in international and national law. The authors present the main approaches to the understanding of this concept, its classification, as well as the historical preconditions for its formation as a legal institute. The authors proceed from the understanding that the comprehension of the institution of immunity should take place exclusively in the context of the political traditions of a particular state, the specifics of a particular legal order, the prevailing understanding of law, legal culture, as well as the specifics of the political and legal, socio-economic, historical and cultural development of a particular society and state.

The authors believe that the institution of immunity is determined only by the official position that a person occupies and the purpose of the proposed protection is to ensure favorable conditions for the effective performance of the official duties of the person, and in this sense, the institution of immunity cannot act as a personal privilege associated with the person of the official.

The authors find that the institution of immunity does not act as an absolute legal category and, in the presence of appropriate grounds, is subject to restriction and strictly narrow interpretation, which is also important for a democratic society. The authors believe that, in particular, on issues of disclosure and prevention of crimes against humanity, the immunity of officials should be subject to strict restrictions.

The authors present the main constitutional foundations for the regulation of the immunity of President and parliamentarians within the framework of the constitutional order of the Republic of Armenia, specifically concluding that all international and national legal provisions governing the issue of granting immunity to officials should not be interpreted and applied in a manner that contradicts paragraph 11 of the Declaration of Independence of Armenia and the state-forming values, principles and aims, establishes in the Preamble of the Constitution of the Republic of Armenia.

Keywords: immunity, *ratione personae*, *ratione materiae*, president, parliamentarians, the declaration of independence of Armenia, the will of Constituent.

1. THE CHARACTERIZATION OF THE INSTITUTE OF IMMUNITY IN INTERNATIONAL LAW

Inviolability represents a political and legal privilege intrinsically linked to the state officials and individuals occupying specific positions and exercising corresponding functions. This privilege fundamentally entails the impossibility of subjecting such officials to legal accountability or prosecution. The institution of immunity, as an integral facet of an official's legal status, bestows additional guarantees of protection, a configuration dictated by the political and legal attributes characterizing their status and the structure of powers.

It is crucial to emphasize, however, that immunity does not constitute an absolute legal category. Instead, its application is contingent upon the particular legal framework and the political and legal traditions inherent in a given political-legal system. Almost invariably, immunity is subject to specific

◆ 1(113)2024

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱՂՐԱՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ

limitations and constraints dictated by the prevailing legal order and the established political and legal norms of a society.

In essence, the nuanced nature of immunity underscores its contextual variability, as its scope and constraints are intricately tied to the specific legal and political landscape in which it operates. The recognition of the concept of immunity is accompanied by an awareness of the necessity to balance the protection afforded to officials with the imperatives of accountability and justice within the confines of legal and societal norms.

Within the intricate tapestry of continental European constitutional law, the institution of immunity stands as a distinct feature, its contours and intricacies molded by the unique value framework, legal traditions, and public legal consciousness of each nation. This paper delves into the multifaceted nature of immunity, exploring its rationale and the factors that shape its specific applications across diverse continental legal systems.

As a general principle, immunity is typically bestowed upon high-ranking state officials, including presidents, prime ministers, legislators, judges, and human rights defenders. These individuals hold positions entrusted with profound public interest, justifying the provision of exceptional legal safeguards and enhanced means of state protection.

The cornerstone of granting immunity lies in the fundamental notion of shielding these officials from politically motivated prosecution while they diligently discharge their lawful duties. This protection aims to guarantee the unimpeded exercise of their legal powers, fostering an environment conducive to the fulfillment of their critical public functions. However, the precise content and specific characteristics of immunity vary considerably across various national systems. Each nation's unique historical heritage, cultural values, and evolving legal landscape imprint distinct features upon this institutional framework. Therefore, a comprehensive understanding of continental European immunity necessitates delving into the individual legal systems of each nation. Examining the specific constitutional provisions, judicial interpretations, and historical precedents can illuminate the nuanced variations in application and rationale that differentiate immunity across the continent. Analyzing the rationale behind immunity in various legal-political systems may reveal potential tensions between maintaining a vibrant democracy and safeguarding essential official functions. Examining these tensions critically can contribute to informed discussions about balancing individual rights, public interests, and the effective functioning of state

organs. The rationale for granting immunity to these officials is the idea of the need to protect them from persecution for political reasons in connection with their lawful activities in the exercise of legal powers.

In individual countries, the circle of officials endowed with immunity, the methods of legal regulation of this institution, and, in particular, the legal mechanisms for overcoming it, may differ, based on the corresponding features of a specific national legal system.

Thus, in some countries, the legal regulation of the institution of immunity may take place at different levels of the hierarchy of legal acts: from the constitution to laws, depending on the approaches of a particular state.

However, taking into account the importance of public relations that are the subject of the studied institution, as usual, some fundamental provisions are established, first of all, by the constitution itself, on the basis of which further concretization of legal regulation takes place by the current legislation.

The immunity granted to specific officials directly stems from the nature and scope of their official functions, rather than their individual characteristics. Notably, although the core objectives of immunity remain consistent across official categories, nuances in individual roles and power structures necessitate distinct legal treatment in terms of both substantive and procedural aspects.

International law recognizes two primary forms of immunity: *ratione personae* (personal) and *ratione materiae* (functional). These immunities are inherently linked to the legal status of the beneficiary official. Personal immunity shields individuals from prosecution for actions unrelated to their official duties, while functional immunity affords protection for lawful actions undertaken within the scope of their functions and powers.

Depending on the specific official position, the applicable immunity may have distinct justifications, protection mechanisms, and limitations on its waiver. This necessitates classifying the institution of immunity based on:

- **Protected legal relationships:** Functional vs. Personal
- **Waiver mechanisms:** Surmountable (absolute) vs. Insurmountable

Personal immunity safeguards private aspects of an official's life, not related to their public duties. It typically bars criminal prosecution, and potentially other forms of legal liability.

Personal immunity, despite extending privileged protection to areas of an official's life not directly related to their official duties, is, like functional

immunity, rooted in the political and legal characteristics of the position held, which objectively necessitate special protection. This entails the existence of appropriate legal mechanisms to safeguard officials from politically motivated persecution that could impede the effective exercise of their duties.

Personal immunity, being contingent upon an individual holding a specific position, is generally not absolute and may be subject to certain restrictions, especially after the expiration of the term of office. In contrast, functional immunity is often insurmountable.

According to Joanne Foakes, beyond the personal immunity of state officials, there is a huge historical backstage, connected with the view, that high state officials, and especially monarch, the Sovereign, were understood as personification of statehood, which was and is seen as inviolable value¹. So, due to this understanding, the state officials were identified with the state itself, which resulted not only in constructing special political image of them, but also in providing special legal-mechanisms of extra protection.

Functional immunity is intricately linked to the exercise of official powers and their underlying functions. It signifies the protection from legal prosecution for the legitimate realisation of authorized powers.

The Court of Appeal of England stated (*Zoernsch v Waldock* (24 March 1964)) that in contrast with personal immunity, functional immunity, which extends to individuals holding both current and former official positions of any hierarchical level, is underpinned by a pragmatic rationale. This viewpoint asserts that an individual official should not be held accountable for actions that essentially represent the actions of the state. Additionally, functional immunity acts as a preventive measure against attempts to bypass State immunity through legal proceedings directed at an official acting on behalf of the State. This approach acknowledges the practical challenges associated with distinguishing individual actions from state actions and aims to shield officials from unwarranted personal liability in the course of executing their official duties².

The concept of immunity, encompassing both personal and functional aspects, is recognized in both constitutional law and international law. The legal principles and standards established within these two systems should be

¹ **Joanne Foakes.** "Immunity for International Crimes? Developments in the Law on Prosecuting Heads of State in Foreign Courts". International Law Programme, November 2011, IL BP 2011/02.

² See 1.

interpreted and understood bearing in mind their mutual influence and interconnected nature.

¹ Ст' u մանրամասն **Королева В.** Коррупция в сфере провooхранительной деятельности (Коррупция и борьба с ней). - М., 2021, էջ 65:

Օպերատիվ-հետախուզական տեղեկատվություն հասկացության համար մեծ նշանակություն ունի սոցիալական տեղեկատվության այնպիսի առանձնահատկությունը, որը բնութագրում է տեղեկատվության վերաբերյալ նոր տեղեկությունների ձեռք բերումը: Այս առանձնահատկությունը կապված է նրա հետ, որ մարդը կարող է ճանաչել ինքն ինքն, այդ թվում իր ճանաչողական, տեղեկատվական ունակությունները և դրանց արդյունքները, կազմակերպել, կանոնակարգել տեղեկատվական գործընթացները:

Կիրառելի կապի գիտության ոլորտում տեղեկատվության արտադրությունն իրենից ներկայացնում է բազմազանությունից մեկ կամ մի քանի հնարավորությունների վերաճումը իրականության: Տեղեկատվության «առաջացման» սկզբունքային սխեման կիրառելի է օպերատիվ-հետախուզական տեղեկատվության տեսության համար: Այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել այնպիսի կարևոր կատեգորիաներ, ինչպիսիք են «հավաստիությունը», «սխալը», «ապատեղեկատվությունը»: Դրանք արտացոլում են կարևորագույն սուբյեկտիվ գործընթացները՝ ընկալման առանձնահատկությունները, տեղեկատվության փոխանցման նպատակները: Այդ պատճառով անորոշությունների վերացումը օպերատիվ և հետախուզական պրակտիկայում ոչ միշտ է համընկնում բազմազանության սահմանափակման ակտի հետ¹: Բազմազանության սահմանափակումը դառնում է միայն անորոշության վերացման մի փուլ և կրկնվում է նոր տեղեկատվության հիմքի վրա: Այս տեսանկյունից ՕՀԳ և քրեական գործերի հարուցման պրակտիկայում անորոշության վիճակը պահպանվում է նրա բոլոր փուլերում, նույնիսկ մինչև դատարանի որոշման կամ դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Ցանկացած կառավարվող համակարգ արձագանքում է ոչ բոլոր տեղեկատվությանը, ոչ բոլոր ազդանշաններին, այլ միայն նրանց, որոնք անհրաժեշտ են կոնկրետ պայմաններում կառավարման համար: Այս առումով ՕՀՄ բացառություն չէ: Պայմանականորեն կարելի է պատկերացնել այն ազդանշանների հավաքածուն, որոնք իրավախախտումների արդյունք են և դրանց իրավապաշտպան համակարգն արձագանքում է: Այդպիսի պատկերացումը իսկապես կլինի պայմանական, քանի որ անհնար է նախապես կանխատեսել և սահմանափակել այն իրադարձությունները, որոնք կարող են օգտակար լինել կոռուպցիոն հանցագործության բացահայտման կամ հանցագործների հետախուզման համար: Դրանք կարելի է միայն տիպավորել ըստ տեղեկատվության ազդանշանային ձևի:

¹ Տե՛ս մանրամասն Противодайствие коррупции (учебное пособие). - М.: «Дашкова-К**», 2021, էջ 152:

Այսպիսով, եթե բազմազանության սահմանափակումը ընտրության միջոցով իրենից ներկայացնում է այն շեմը, որտեղ առաջանում է տեղեկատվությունը, ապա կոնկրետ օպերատիվ գործողությունները դրանց արձագանքման ակտն են:

Գործնականում օպերատիվ-հետախուզական տեղեկատվությունն ունի իր աղբյուրները: Տեղեկատվության որոնման գործընթացներում նախաձեռնությունը տեղեկատվության ստացողինն ու օգտագործողինն է: Տեղեկատվության ստացումն ու օգտագործումը որպես կանոն համընկնում են: Օպերատիվ-հետախուզական տեղեկատվության տիպային ստացողը գործակալն է: Բայց, միաժամանակ, նաև տեղեկատվության սպառողն է: Եթե ելնենք նրանից, որ սպառողը նա է, ով օգտագործում է տեղեկատվությունն իր նպատակների համար, ապա գործակալի համար այդ հատկանիշը բնութագրական է:

Կոռուպցիոն հանցագործների վարքագծի յուրահատկությունը պահանջում է տեղեկատվության ակտիվ ստացողների տեղաբաշխում, ինչը հնարավոր է կազմակերպական և տակտիկական ճիշտ ընտրության շնորհիվ: Սակայն այդ միջոցառումները չեն բացառում նրա պասիվ աղբյուրների առաջացումը, օրինակ, իրազեկ քաղաքացիներ, որոնք մոռացվել են, որևէ տեղ պահվող կարևոր փաստեր պարունակող փաստաթղթեր, առարկաներ:

Վերջապես, մարդու ակտիվությունն ու պասիվությունը՝ որպես տեղեկատվության աղբյուր, կապված է տեղեկատվության փոխանցման նախաձեռնության հետ: Եթե նախաձեռնությունը քաղաքացունն է, նշանակում է, որ նա տեղեկատվության ակտիվ աղբյուր է, եթե նա նպատակադրված չի փոխանցել տեղեկատվությունը, այնուհանդերձ փոխանցում է այն ուրիշի նախաձեռնությամբ, նա պասիվ աղբյուր է: Դրանից հետևում է, որ ցանկացած քաղաքացի, ով սեփական նախաձեռնությամբ փոխանցում է տեղեկատվությունը, որը ստանում է օպերատիվ-հետախուզական տեղեկատվության նշանակություն, դառնում է տեղեկատվության ակտիվ աղբյուր: Այսպիսով, աղբյուրների տեսանկյունից ևս օպերատիվ հետախուզական տեղեկատվությունը, ըստ էության, սահմանափակումներ չունի: Վերլուծությունների հիման վրա կարելի է ասել, որ օպերատիվ-հետախուզական տեղեկատվությունը սոցիալական տեղեկատվության տարատեսակ է, որն ունի ձեռք բերման յուրահատուկ նպատակ, օգտագործման ռեժիմ, ապահովում է աղբյուրների հուսալի վերծանում, հաղորդվող փաստերի ստուգման հնարավորություն և կիրառվում է միայն շահագրգիռ աշխատակիցների կողմից:

Կոռուպցիոն դրսևորումների բացահայտման գործընթացում օպե-

ՍԱՀՄԱՆԱՂՈՎՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1(113)2024

րատիվ-հետախուզական տեղեկատվությանը ներկայացվում են որոշ պահանջներ, որոնք գործնականում ուղղվում են օպերատիվ-հետախուզական խնդիրների արդյունավետ լուծմանը: Լիարժեք ՕՀԳ-ի հասնել կարելի է միայն կանոնակարգված, համալիր տեղեկատվության հիման վրա, որը ներառում է տարբեր փաստեր՝ ստացված տարբեր աղբյուրներից և տրամաբանորեն փոխկապված: Անդրադառնալով ՕՀ տեղեկատվությանը ներկայացվող պահանջներին՝ պետք է նկատել, որ.

1. Օպերատիվ-հետախուզական տեղեկատվության ձեռք բերման մակարդակը պետք է համապատասխանի օպերատիվ խմբի աշխատակիցների իրավասությանը: Այս պահանջը ենթադրում է տեղեկատվության կենտրոնացում: Կանոնակարգված, իմաստավորված և օգտագործման ենթակա կենտրոնացված տեղեկատվությունը նպաստում է օպերատիվ-տակտիկական և պրոֆիլակտիկ խնդիրների լուծմանը: Որքան բարձր են տեղեկատվության ձեռք բերման տարածաշրջանային աղբյուրները, այնքան մեծանում են ներքին օղակների կողմից այն օգտագործելու հնարավորությունները: Գոյություն ունի նաև հետադարձ կապ. որքան շատ նոր ՕՀՄ մուտք գործեն օգտակար տեղեկատվության տարածաշրջանային համակարգ, այնքան ակտիվ կլինի նրա ազդեցությունը հանցագործության դեմ պայքարի արդյունավետության վրա:

2. Օպերատիվ-հետախուզական տեղեկատվության պարտադիր պահանջ է օպտիմալությունը, ամբողջականությունը: Դրա ապահովման բարդությունն այն է, որ ՕՀԳ պրակտիկայում մի շարք հարցերով մշակված չեն ամբողջականության մասնական չափանիշներ, որոնք վերաբերում են ՕՀ մարմինների իրավասությանը:

3. Հաջորդ պահանջը կոռուպցիոն դրսևորման տեղեկատվության ստույգությունն է: Այն բնութագրում է նրա մանրամասնության աստիճանը: Ստույգությունն անխզելիորեն կապված է հավաստիության, իրադարձությունների, երևույթների, օբյեկտի վիճակի, նրա շրջակա միջավայրի օբյեկտիվորեն ստույգ արտացոլման հետ: Մանրամասնումը, հավաստիությունն ու ամբողջականությունը փոխկապված են:

Տեղեկատվության ամբողջականության և օպերատիվության միջև գոյություն ունի օբյեկտիվ հակադրություն: Որքան ամբողջական է տեղեկատվությունը, այնքան շատ ջանքեր և ժամանակ է ծախսվում դրա ստացման, վերամշակման, վերլուծության համար, ինչը նվազեցնում է նրա օպերատիվության աստիճանը:

Անհրաժեշտ է նկատել, որ կոռուպցիոն դրսևորման տեղեկատվության ավելցուկն ունի ինչպես բացասական, այնպես էլ դրական կողմեր: Ավելցուկը նվազեցնում է ամբողջականության և հավաստիության աստիճանը:

Այդ դեպքում այն անօգտակար է: Բայց ավելցուկը կարող է օգտագործվել նաև տեղեկատվական համակարգի համալրման, ապագա աշխատանքների, ինչպես նաև սխալների շտկման համար: Այս տեսանկյունից այն օգտակար է: Գործնականում հանդպում են ավելցուկի և՛ առաջին, և՛ երկրորդ կողմերը:

4. Կոռուպցիոն դրսևորումների բացահայտման օպերատիվ-հետախուզական տեղեկատվությանը ներկայացնող կարևոր պահանջ կարելի է համարել հաղորդագրությունների լակոնիկությունը առավելագույն ծանրաբեռնվածության դեպքում: Լակոնիկությունը բարձրացնում է հագեցվածությունը, կրճատում է տեղեկատվության փոխանցման և ընկալման ժամանակը: Սակայն լակոնիկությունը չպետք է ձեռք բերվի ի վնաս ամբողջականության, հավաստիության և մանրամասնության: Այս թերության վերացման հեռանկարային ուղղություն է բավականաչափ ամբողջական, հավաստի և մանրամասն տեղեկատվության ընտրության արտացոլման **խորագրերի գիտական մշակումը հասկանալի տերմիններով**, որոնք կրում են առավելագույն իմաստային ծանրաբեռնվածություն:

5. Շարադրման տրամաբանությունը պարտադիր պայման է տեքստային տեղեկատվության ընկալման համար: Այն ենթադրում է հաջորդականություն, ապացույց, համոզումներ, անպիտան մանրամասների բացակայություն, նպատակի հստակություն, որին հասնելուն կոչված է ծառայել օպերատիվ-հետախուզական տեղեկատվությունը: Տրամաբանությունը ենթադրում է տեղեկատվության միանշանակություն: Այսինքն՝ իրավապաշտպան մարմինների համակարգում տեղեկատվությունը պետք է պահպանի իր բովանդակությունը, իմաստը, արտահայտման ձևերը, որպեսզի այն բոլորի կողմից ընկալվի միանման: Այդ պատճառով անհրաժեշտ է տարբեր հասկացությունների և տերմինների հստակեցում՝ բացառելով բազմիմաստ ընթերցումները:

6. Կոռուպցիոն դրսևորումների բացահայտման ժամանակակից պահանջներից մեկն օպերատիվ-հետախուզական տեղեկատվության արժեքավորությունն է: Տեղեկատվական ազդանշանների գոյություն ունեցող բոլոր համակարգերի բազմազանությունից օպերատիվ-հետախուզական համակարգն ընտրում է արժեքավոր, օգտակար տեղեկատվությունը, որը, վերացնելով անորոշությունը, տանում է հակակոռուպցիոն պայքարի նպատակների իրականացմանը: Ժամանակակից գիտության մի շարք ոլորտներում, այդ թվում կիբեռնետիկ հետազոտություններում, առկա են տեղեկատվության արժեքի չափման մի քանի մոտեցումներ: Այսպես, դրանցից մեկը այն է, որ տեղեկատվության արժեքի մեծությունը

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 1(113)2024

արտահայտվում է տեղեկատվության ստացումից առաջ և հետո նպատակին հասնելու հավանականության մեծացման միջոցով: Համաձայն այս հայեցակարգի՝ տեղեկատվության արժեքն ու օգտակարությունը որոշվում են այս կամ այն տեղեկատվական համակարգի վարքագծի վրա այդ հաղորդագրության ազդեցության տեսանկյունից՝ նախապես չիմանալով տեղեկատվության կարիքը ունեցողին: Տեղեկատվության արժեքավորությունը, ըստ էության, չափվում է նրա քանակության միջոցով, այսինքն միայն այդպիսի հաղորդագրությունն է կրում տեղեկատվություն, որը նվազեցնում, վերացնում է գոյություն ունեցող անորոշությունը: Օպերատիվ-հետախուզական գիտության ոլորտում այսօր շրջանառվում են «օգտակար» և «վնասակար» տեղեկատվություն հասկացությունները: Արժեքային մոտեցումը արտահայտվում է երևույթների և իրադարձությունների ճանաչման ժամանակ տեղեկատվության օգտագործման աստիճանի միջոցով՝ հաստատելով, որ հավաստի տվյալները միշտ օգտակար են, իսկ կեղծ տվյալները, չլինելով որպես այդպիսին բացահայտված, անպայման վնասակար: Սակայն այդ նույն կեղծ տվյալները ճիշտ գնահատման և դրանց ապատեղեկատվական բնույթի սահմանման դեպքում դառնում են օգտակար:

Օպերատիվ-հետախուզական տեղեկատվության օգտակարությունը պրակտիկայում գնահատվում է՝ ելնելով կոնկրետ իրավիճակից: Հաղորդագրության արժեքավորությունը հակադարձ համեմատական է այդօրինակ հաղորդագրության քանակությանը՝ համասեռ տեղեկատվության ընդհանուր համախմբում¹: Այլ խոսքերով՝ որքան հազվադեպ է հաղորդագրության հոսքի մեջ հայտնաբերվում այս կամ այն դատողությունը, այնքան ավելի արժեքավոր է համարվում նրա գործնական նշանակությունը:

Կոռուպցիա ծնող, դրանց ուղեկցող և բնութագրող երևույթների մասին տեղեկատվության ստացումը կարելի է ուսումնասիրել որպես անհայտի մասին գիտելիքների ձեռքբերում՝ յուրահատուկ միջոցներով և մեթոդներով: Օպերատիվ-հետախուզական տեղեկատվության օգնությամբ ճանաչվում են ինչպես փաստերն ու երևույթները, որոնք տարբերվում են ծայրահեղության բարձր աստիճանով, այնպես էլ՝ չափազանց փոքր ծայրահեղությամբ երևույթները, եթե այն համեմատենք կոռուպցիա հասկացության հետ, քրեական ակտիվություն, միջանձնային հարաբերություններ, փոխադարձ ազդեցություններ, հանդիպումներ, կապեր և այլ

¹ Տե՛ս մանրամասն Տեղեկատվական իրավունք (ուսումնական ձեռնարկ), Տեղեկատվական իրավունքի ինստիտուտ, Ամերիկյան իրավաբանների ընկերություն, Կ.Ա. Անդրեասյան: Ե., 2004, էջ 153:

իրադարձություններ, որոնք տարբեր համադրումներով օգնում են բազմաթիվ օրինաչափությունների պարզաբանմանը, փաստերի, արարքների և դրանց հետևանքների միջև կապերի հայտնաբերմանը:

Կոռուպցիոն դրսևորումների օպերատիվ-հետախուզական տեղեկատվության նշանակությունն այն է, որ ճանաչի հանցագործի վարքագծի գաղտնի մեխանիզմները, հետևաբար, տեղեկատվության բովանդակությունը պետք է դուրս գա ակնհայտ փաստերի շրջանակից՝ խորանալով մինչև զգուշորեն քողարկվող արարքների, վարքագծի, շփումների, հայացքների, մտադրությունների ճանաչումը:

«Սոցիալական միջավայր - անհատականություն» համակարգում էական դեր է խաղում դիտարկումը՝ որպես օպերատիվ-հետախուզական տեղեկատվության ձեռք բերման լիարժեք միջոց, որը թույլ է տալիս բացահայտել, թե կոռուպցիայի գործունեության մեջ ինչպես է սոցիալական միջավայրն ազդում անհատականության վրա, ձևավորում նրան, և ընդհակառակը՝ ինչ ձևով, ինչ ճանապարհով, ինչպիսի հանգամանքներում է ստեղծվում «արհեստական միջավայր»:

Հարաբերություններն ու փոխադարձ բացասական ազդեցությունը, խմբակային հակահասարակական արարքներն ու հանցավոր մտադրությունները, այս ամենը ճանաչվում է ոչ թե բնութագրերի մեկանգամյա ստացման արդյունքում, այլ բարդ տեղեկատվական գործընթացներում, տարբեր աղբյուրների միջոցով:

Կոռուպցիոն հանցագործությունների գործերով օպերատիվ-հետախուզական տեղեկատվությունն ապահովում է կատարված հանցագործության հանգամանքների բացահայտումը և ապացույցների մասին տվյալների ստացումը: Քրեական դատավարությունը ստեղծել է հայեցակարգ քրեական գործերի օբյեկտիվ իսկության ճանաչողության մասին: Բայց ապացույցի ճանաչողական գործառույթի կապակցությամբ պահպանվում է մեկ այլ խնդիր: Գիտության ոլորտում բազմաթիվ հետազոտողների հետաքրքրում են հավաստիության ձեռք բերման երաշխիքները: Օպերատիվ-հետախուզական տեղեկատվությունը դառնում է կարևորագույն երաշխիք կոռուպցիոն բնույթի քրեական գործերի հարուցման հիմնավորվածությունն ապացուցելու համար: Իրավաբանական գիտելիքները մշակվում են ՕՀԳ իրականացման ընթացքում, որոնք թույլ են տալիս տեղեկատվական ապացույցները կիրառել քրեական դատավարության շրջանակներում:

Եթե կոռուպցիոն տարբեր դրսևորումներում ուսումնասիրենք ուղղակի, անմիջական կամ միջնորդավորված ապացույցների էությունը, ապա օպերատիվ-հետախուզական տեղեկատվությունը, որը ձևավորվել է

բազմազան տեղեկությունների ընտրության ճանապարհով, առաջին հերթին որսում է այն փաստերը, որոնք առնչվում են հանցագործությանը, երկրորդ հերթին արձանագրում է այդ փաստերի կապերը միմյանց և աղբյուրների հետ: Այսպիսով առաջանում է փաստերի և դրանց աղբյուրների միջև օպերատիվ-մարտավարական մոդել, որը սահմանում է նախաքննության ուղղությունը, նախաքննվում այն գործողությունների հաջորդականությունն ու բովանդակությունը, որոնք անհրաժեշտ են ապացույցների ստացման համար:

Օպերատիվ-հետախուզական տեղեկատվությունը ներառում է իրավական գիտելիքներ այն երևույթների մասին, որոնք վկայում են կոնկրետ անձանց հանցավոր գործունեության մասին և բացահայտում են ոչ միայն հանցագործությունների մեխանիզմը, այլ նաև դրանց մասին տեղեկատվության առաջացման մեխանիզմները: Լինելով հանցագործության իրական արտացոլանքը՝ օպերատիվ-հետախուզական տեղեկատվությունը, հետագա օգտագործման դեպքում, ինչպես նաև ապացուցման գործընթացում չի փոխում իր բովանդակությունը: Այդպիսի տեղեկատվությունը ձեռք է բերում որոշակի նոր որակ՝ ստանալով դատավարական ձևակերպում, հետագայում կարգավորվում է ինչպես ՕՀ մասին օրենսդրությամբ, այնպես էլ քրեադատավարական իրավանորմերով: Իրավական կարգավորումը ՕՀ ճանապարհով ձեռք բերված հանցագործության հանգամանքների դատական ճանաչողության իրավական հիմքն է, որն ապահովում է դատավարական որոշումների կայացումը: Գնահատման են ենթարկվում տեղեկատվության բոլոր աղբյուրները և դրանց միջոցով հաղորդվող փաստերը¹:

Հետախուզական նպատակներով տեղեկատվության ստացման յուրահատկությունն այլ է. առաջանում է անհրաժեշտություն կրկնակի կամ մի քանի անգամ դիմելու տեղեկատվության աղբյուրին, որոնք արդեն օգտագործվել են հանցագործության բացահայտման ժամանակ: Դժվար չէ նկատել, որ հետախուզության համար անհրաժեշտ տեղեկատվության առանձնահատկություն են կոռուպցիոն բազմաբնույթ հանգամանքներով հագեցվածության աստիճանները, որոք բազմակողմանիորեն բնութագրում են չբացահայտված հանցագործությունների անհատականությունը, որոնք միշտ էլ գիտության համար հետաքրքրություն են ներկայացնում:

Օպերատիվ-հետախուզական տեղեկատվության օգնությամբ ճանաչվում են կոռուպցիոն դրսևորումների ինչպես անցյալի, այնպես էլ ներկայի

¹ Տե՛ս մանրամասն Մուքիասյան Գ.Ա., Օպերատիվ-հետախուզական գործունեության կազմակերպումը ՀՀ-ում: Ե., 2012:

հայտնաբերումը հիմնականում ունի քրեական տեսանկյուն: Որքան մեծ են տեխնիկական միջոցների ընտրության հնարավորությունները, այնքան շատ փաստեր է հաջողվում հայտնաբերել դրանց օգնությամբ: Ժամանակակից միջոցները թույլ են տալիս, մասնավորապես, գործել այն տեղեկատվությամբ, որն ստացվում է միկրոհետքերի ուսումնասիրությունից:

Հետևաբար, կոռուպցիոն դրսևորումների տեղեկատվության խմբավորումը (կատեգորիզացիան) այսօր ՕՀԳ ծրագրերի մշակման առանցքն է:

Ակնհայտ է, որ օպերատիվ խմբի անդամների գիտակցության մեջ անհրաժեշտ տեղեկատվության ձևավորումը պետք է նպաստի կոռուպցիոն առանձին հասկացությունների, փաստերի հավաքման իրավական ամրագրմանը: Փաստերի, իրադարձությունների, մարդկանց վարքագծի մասին գիտելիքները ձևավորվում են առանձին արտահայտությունների կամ փոխկապակցված համակարգերի, համեմատությունների, տարբեր դատողությունների միավորման, տրամաբանական եզրակացությունների կառուցման արդյունքում: Մարդու գիտակցությունը (տվյալ դեպքում օպերատիվ-հետախուզական տեղեկատվության առավել զանգվածային աղբյուրները) գործում է որպես տարբեր գործընթացների բարդ փոխհարաբերություն, որոնք կապված են անհատական առանձնահատկությունների, փորձի յուրացման, հասարակական գիտակցության ազդեցության հետ: Մարդն իր կյանքի ընթացքում յուրացնում է նախորդ սերունդների փորձը, և դա տեղի է ունենում հասարակության կողմից մշակված գիտելիքների համակարգի, բարոյական նորմերի տիրապետման ձևով: Մտավորականը ստացած տեղեկությունների հիման վրա իր գիտելիքները ձևավորում է ոչ թե մեխանիկական եղանակով, այլ դրանց տալիս է որոշակի երանգ, որոնք ծնվում են հասարակական դիրքից, անհատական ճանաչողության մակարդակից, իրավագիտակցությունից, անձնական ակտիվությունից և հետաքրքրվածությունից:

Ուսումնասիրությունները վկայում են, որ այսօր կոռուպցիոն դրսևորումների դեմ պայքարի կազմակերպման գործում օպերատիվ-տեղեկատվության հարստացումը գործնականում ուղեկցվում է ժամանակակից բոլոր գիտությունների հարուստ նվաճումների հիման վրա, որոնք դյուրին են դարձնում ոչ միայն իրավապահ մարմինների կողմից ստացած տեղեկատվության մշակումը, այլև հարստացնում են ՕՀԳ ուսումնասիրության առարկան՝ բարձրացնելով դրա ճանաչողական նշանակությունը կոռուպցիոն դրսևորումների դեմ համաշխարհային միասնական պայքարի ճանապարհով հանցագործությունների բացահայտման և պայքարի կազմակերպման գործում:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Бурмистров И.А.** Коррупция: ее сущность и меры предупреждения (Коррупция: политические, экономические, организационные и правовые проблемы). - М., 2022.
2. **Королева В.** Коррупция в сфере правоохранительной деятельности (Коррупция и борьба с ней). - М., 2021.
3. Противодействие коррупции (учебное пособие). - М.: “Дашкова-К”, 2021.
4. **Սուրիաշյան Գ.Ա.**, Օպերատիվ-հետախուզական գործունեության կազմակերպումը ՀՀ-ում: Ե., 2012:
5. Տեղեկատվական իրավունք (ուսումնական ձեռնարկ), Տեղեկատվական իրավունքի ինստիտուտ, Ամերիկյան Իրավաբանների ընկերություն, Կ.Ա. Անդրեասյան: Ե., 2004:

ПРАВОВЫЕ МЕТОДЫ ОПЕРАТИВНО-СЛЕДСТВЕННОГО ОБНАРУЖЕНИЯ ИНФОРМАЦИИ О ПРОЯВЛЕНИЯХ КОРРУПЦИИ

Аннотация

Суть статьи - формирование нового законодательства для организации единой глобальной борьбы с коррупцией на основе базовых вопросов правительственных Стратегических программ по борьбе с проявлениями коррупции в соответствии с основными положениями правовых актов, принятых международными организациями (ООН, СЕ, ЕС).

Учитывая сложность проявлений коррупции и их неопределенность, трудность их раскрытия, впервые в статье сделана попытка исследовать эффективность применения «открытых» и «закрытых» оперативно-розыскных методов получения информации в предупреждении и раскрытии коррупции, а также при решении вопросов применения юридической ответственности.

Изложенное в настоящей статье является результатом профессионального опыта автора. Ответы на многие вопросы основаны на результатах практической деятельности.

Ключевые слова: оперативный розыск, оперативно-розыскная деятельность, оперативные методы, информация, коррупция, проявление

коррупции, коррупционные преступления, правовой метод, открыто-закрытые методы.

LEGAL METHODS OF OPERATIVE-INVESTIGATIVE DISCOVERY OF INFORMATION ON CORRUPTION MANIFESTATIONS

Annotation

The core of the article is the formation of new legislation for the organization of a global unified fight against corruption based on the main issues of the Government's "Strategic Programs for Combating Corruption Manifestations", in accordance with the basic provisions of the legal acts adopted by international organizations (UN, CE, and EU).

Based on the complexity of corruption manifestations, the uncertainty and the difficulties of revealing such manifestations in practice, for the first time in the article, as an effective method of legal struggle, an attempt was made with jurisprudential findings to reveal the effectiveness of the latter in the prevention and detection of corruption manifestations using operational-investigative "open" and "closed" methods of information components of corruption manifestations, as well as in solving the problems of application of legal responsibility.

The contents contained in the article are based on the professional experience of the author. Many questions are answered based on practical results.

Keywords: operative-intelligence, operative-intelligence activities, operative methods, involvement, corruption, corruption manifestations, corruption crimes, legal method, open-closed methods.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 11.01.2024 թ., փրվել է գրախոսության 13.01.2024 թ., ընդունվել է փապագրության 23.01.2024 թ.:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄՔԻՈՆ

DOI: 10.59560/18291155-2024.1-89



ԼԻԱՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հայաստանի եվրոպական
համալսարանի Գյումրու
մասնաճյուղի իրավագիտության
ամբիոնի դասախոս,
ՀԵՀ, իրավագիտության ամբիոն,
հայցորդ

ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՏԵՂԸ ԳԱՂՏՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՀԵՏ

Ամփոփագիր

Գաղտնի տեղեկատվության համակարգը, որն ամրագրում է գաղտնի տեղեկատվության իրավական ռեժիմները, ներկայումս գտնվում է ձևավորման փուլում, և մի շարք կարևոր հարցեր բավարար չափով չեն կարգավորվել օրենսդրի կողմից:

Պրակտիկայում հաճախ հանդիպող գաղտնի տեղեկատվության իրավական ռեժիմներից մեկը *բանկային գաղտնիքի իրավական ռեժիմն է*: Բանկը հանդիսանում է տնտեսության բոլոր սուբյեկտների ֆինանսական գործունեության կենտրոնը. վերջինս կենտրոնացնում է տեղեկատվությունը նրանց կատարած բոլոր գործառնությունների վերաբերյալ: Այս տեղեկատվության չափազանց հեշտ հասանելիությունը բացասաբար կանդորադառնար շուկայական հարաբերությունների զարգացման վրա, ինչպես նաև կնվազեցներ հաճախորդների վստահությունը ինչպես ուղղակիորեն բանկի, այնպես էլ ընդհանուր առմամբ բանկային համակարգի նկատմամբ:

1(113)2024

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ

Ներպետական իրավաբանական գիտության մեջ չկա միասնական տեսակետ, սահմանափակ մուտքով տեղեկատվության այլ տեսակների հետ բանկային գաղտնիքի հարաբերակցության վերաբերյալ: Չնայած օրենսդրության մեջ գաղտնիության տարբեր իրավական ռեժիմների համախմբմանը որոշակի տեղեկատվության հետ կապված, չկան կոնկրետ նորմեր, որոնք որոշում են նման իրավական ռեժիմների կառուցման ընդհանուր սկզբունքները: Եվ սա հանգեցրել է նրան, որ հնարավոր չէ համակարգված կերպով որոշել բանկային գաղտնիքի տեղը գաղտնիքների հիերարխիայում և բացահայտել դրա հարաբերակցությունը գաղտնի տեղեկատվության այլ տեսակների հետ:

Հոդվածում ուսումնասիրվում է բանկային գաղտնիքի տեղը գաղտնի տեղեկատվության համակարգում, վերջինիս փոխազդեցությունը գաղտնի տեղեկատվության այլ տեսակների հետ, մասնավորապես՝ առևտրային, հարկային գաղտնիքի հետ, քանի որ իրավական գաղտնիքների միասնական դասակարգման հայեցակարգի բացակայությունը թույլ չի տալիս պատշաճ կերպով դասակարգել տեղեկատվական հարաբերությունները, որոնց առարկան տարբեր տեսակի գաղտնի տեղեկատվությունն է:

Հիմնաբառեր. գաղտնիք, բանկային գաղտնիք, տեղեկատվության մատչելիության սահմանափակում, գաղտնի տեղեկատվություն, առևտրային գաղտնիք, հարկային գաղտնիք, տեղեկատվության իրավական ռեժիմ:

Բանկային գաղտնիքը, որպես ցանկացած այլ տեսակի գաղտնի տեղեկատվության պատկանելիության վերաբերյալ կարծիքների միասնություն չկա: Բանկային գաղտնիքը երբեմն համարվում է առևտրային գաղտնիքի ենթատեսակ կամ դիտարկվում տեղեկատվության ավելի լայն տեսակի՝ մասնագիտական գաղտնիքի համատեքստում:

Գաղտնի տեղեկատվության իրավական կարգավորման մասնատվածությունը, ինչպես նաև բանկային գաղտնիքի՝ որպես գաղտնի տեղեկատվության տեսակի, գաղտնի տեղեկատվության այլ տեսակների հետ հարաբերակցության ներպետական ուսումնասիրության բացակայությունն ընդգծում է թեմայի արդիականությունը: Հոդվածի շրջանակներում առաջին անգամ փորձ է արվում դիտարկել բանկային գաղտնիքի ինստիտուտը գաղտնի տեղեկատվության համակարգի համատեքստում, մասնավորապես՝ հարկային և առևտրային գաղտնիքների հետ փոխազդեցություններում, և իրավական դիրքորոշում ներկայացնել քննարկվող ոլորտում առկա հակասական և իրարամերժ տեսակետների

վերաբերյալ՝ կապված բանկային գաղտնիքի ինքնուրույն և անկախ գաղտնի տեղեկատվության տեսակ լինելու, թե՛ տեղեկատվության մատչելիությամբ սահմանափակված այլ տեսակների ենթատեսակ լինելու վերաբերյալ:

Հոդվածի նպատակն է վերլուծել բանկային գաղտնիքի առանձնահատկությունները տեղեկատվության մատչելիության սահմանափակմամբ ապահովված գաղտնի տեղեկությունների այլ տեսակների, մասնավորապես՝ առևտրային և հարկային գաղտնիքների համատեքստում: Նշված նպատակին հասնելու համար հոդվածի առջև դրված են հետևյալ խնդիրները. ուսումնասիրել «գաղտնիք» հայեցակարգի կառուցվածքային տարրերի իրավական առանձնահատկությունները, բացահայտել բանկային գաղտնիքի իրավական բովանդակությունը և բանկային գաղտնիքի ինստիտուտի տեղի ու առանձնահատկությունների ուսումնասիրության հիմքում դնելով վերջինիս և գաղտնի տեղեկատվության այլ տեսակների, մասնավորապես՝ առևտրային և հարկային գաղտնիքի հարաբերակցության հիմնախնդիրը՝ վերլուծել վերջիններիս իրավական էությունը և առաջարկել իրավական սահմանումներ, որոնք ըստ էության կապահովեն քննարկվող գաղտնի տեղեկատվության տեսակների միջև հարաբերման հնարավոր հիմնախնդիրների լուծումներ:

Նախ՝ խոսելով բանկային գաղտնիքի իրավաբանական բովանդակության մասին՝ կարող ենք ասել, որ գաղտնի տեղեկատվության ընդհանուր ինստիտուտը միավորում է բովանդակության և բնույթի բավականին տարասեռ տեղեկատվություն: Եվ վերջինիս իրավական բովանդակության և կառուցվածքային տարրերի բնորոշման վերաբերյալ առկա են իրարամերժ տեսակետներ: Մասնագիտական գրականության մեջ կարծիք է արտահայտված, որ գաղտնիք համարվող տեղեկատվության շրջանակն այնքան լայն է, որ վերջինիս հնարավոր չէ տալ բառացիորեն մեկնաբանվող մեկ սահմանում: Անգամ իրավաբանական գաղտնիքի տարբեր ասպեկտներին վերաբերող վերջին աշխատություններում նշվում է, որ գաղտնիության խնդիրը՝ որպես անբաժանելի իրավական երևույթ, գործնականում չի ուսումնասիրվել¹:

Այսպես՝ Ա.Ա. Ֆատյանովը գաղտնիքը սահմանում է որպես օբյեկտիվ իրականության ոլորտ, որը թաքնված է մեր ընկալումից կամ ըմբռնումից: Ավելին, նա կարծում է, որ անձնական գաղտնիքները զբաղեցնում են

¹ Авдеева М.В., Пиджаков А.Ю. "Тайна" как правовое понятие // Ленинградский юридический журнал. 2012. №4. - С. 139.

ամենաբարձր առաջնահերթությունը և հաճախ որոշիչ ազդեցություն են թողնում բոլոր տեսակի գաղտնիքների վրա՝ ընտանեկան, կորպորատիվ, առևտրային և նույնիսկ պետական: Բացի այդ, նա նշում է, որ բոլոր գաղտնիքներն ունեն ընդհանուր հատկանիշ՝ վնասը, որը կարող է առաջանալ նման տեղեկատվության տարածումից: Վնասը կարող է արտահայտվել արժեքային առումով, կարող է լինել նաև քաղաքական կամ բարոյական¹:

Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ «գաղտնիք» հասկացության իրավական հայեցակարգն այնքան էլ չի համընկնում գաղտնի տեղեկատվության հայեցակարգի հետ, քանի որ գաղտնիքը նշանակում է նաև տեղեկատվության իրավական ռեժիմ:

Կարծում ենք՝ «գաղտնիք» եզրույթի իրավական նշանակությունն առավել համալիր բնորոշմամբ ներկայացրել է Դ.Ա. Լովցովը, որը գաղտնիքը բնորոշում է որպես արտոնյալ տեղեկատվության հատուկ իրավական ռեժիմ (սահմանափակ մուտքի տեղեկատվություն, տարածում և այլն) որպես փոխադարձ արգելքների, թույլտվությունների, պարտավորությունների, իրավասությունների, խթանների (արտոնությունների) և պատժամիջոցների համադրություն բնութագրող իրավական միջոցների համալիր, այսինքն՝ արտոնյալ տեղեկատվության թաքցնելու և (կամ) իրավական պաշտպանության իրավական ռեժիմ²:

Այսպիսով, գաղտնիքը՝ որպես իրավական երևույթ, տեղեկատվության հասանելիության, չարտոնված ստացման, ինչպես նաև դրանց բացահայտման կամ այլ օգտագործման օրինական արգելք է, որը կարող է հանգեցնել վնասի:

«Գաղտնիք» հասկացության կառուցվածքային տարր է կազմում վերջինիս առարկան (բովանդակությունը). դա այն տեղեկատվությունն է, որին մուտքն արգելված կամ բացառված է այս կամ այն անձի կողմից: Միևնույն ժամանակ, գաղտնիքի թեման կարող է ներառել ոչ միայն դրա անմիջական բովանդակությունը, այլև նման գաղտնիքի առկայության կամ բացակայության մասին տեղեկությունը:

Գաղտնիության իրավունքի սուբյեկտներն են ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, պետությունը, ինչպես նաև այլ անձինք: Նրանք կարող են ոչ միայն ունենալ իրենց անձնական գաղտնիքները, այլև մուտք գործել այլ սուբյեկտների գաղտնիքներ, պայմանագրի կամ օրենքի ուժով

¹ **Фатьянов А.А.** Тайна и право (основные системы ограничения права на доступ к информации в российском праве): Монография. - М.: МИФИ, 1999. - С. 5.

² **Ловцов Д.А.** Системология информационных правоотношений. - М.: Рос. акад. правосудия, 2008. - С. 57.

ձեռք բերել որոշակի իրավասություններ կամ պարտականություններ ուրիշի գաղտնի տեղեկատվությունն օգտագործելու համար: Այս առումով պետք է տարբերակել գաղտնիության հիմնական և ածանցյալ սուբյեկտները: Եթե կա միայն հիմնական սուբյեկտ, ապա դրա վերաբերյալ իրավահարաբերություն կարող է առաջանալ միայն այն դեպքում, եթե գաղտնի տեղեկատվությունը հասանելի է դառնում այլ սուբյեկտների կամ առկա է գաղտնիության ռեժիմի խախտման կամ փոփոխության կամ ածանցյալ սուբյեկտների առաջացման հավանականություն:

Գաղտնիքի հետ կապված իրավահարաբերության *օբյեկտը* շահերն են, որոնք կարող են վնասվել գաղտնի տեղեկատվության չարտոնված հրապարակման կամ օգտագործման հետևանքով: Դրանք կարող են լինել ինչպես հիմնական, այնպես էլ ածանցյալ սուբյեկտների շահերը¹:

Տեղեկատվության մատչելիության սահմանափակումը ժողովրդավարական հասարակության կարևոր տարր է, որը կոչված է պաշտպանելու ինչպես քաղաքացիների սահմանադրական իրավունքները տեղեկատվության հասանելիության, այնպես էլ տարբեր սուբյեկտների սահմանադրական իրավունքները՝ այդ հասանելիությունը սահմանափակելու համար: Նշված սահմանափակումները պետք է լինեն օրինական և համաչափ՝ ապահովելով սուբյեկտների շահերի հավասարակշռությունը տեղեկատվության հասանելիության և հասանելիության սահմանափակման դեպքերում²:

Օրինակ՝ Վ. Տալոնպոյկայի և Վ. Շաբալինի առաջարկած բոլոր գոյություն ունեցող գաղտնիքների երեք խմբերի պայմանական բաժանման համաձայն՝ բանկային գաղտնիքը, ընտանեկան, փաստաբանական, նոտարական և որդեգրման գաղտնիքների հետ միասին դասակարգվում են որպես *մասնավոր գաղտնիք*³:

Վ.Վ. Կոնյուկովն առաջարկում է առանձնացնել գաղտնիքների տեսակները կախված այն սուբյեկտներից, որոնց պատկանում է գաղտնի տեղեկատվությունը՝ *պետություն, անհատ, կազմակերպություն*: Ըստ հեղինակի՝ բանկային գաղտնիքը, ծառայողական գաղտնիքը և

¹ Авдеева М.В., Пиджаков А.Ю. "Тайна" как правовое понятие // Ленинградский юридический журнал. 2012. №4. - С. 141.

² Волчинская Е.К. Коммерческая тайна в системе конфиденциальной информации // Информационное право. 2005. № 3. - С. 17.

³ Таланпойка В., Шабалин В. Право на тайну // Гражданская защита. 1999. № 4. - С. 33.

առևտրային գաղտնիքը կազմում են իրավաբանական անձանց գաղտնի տեղեկատվության բլոկ¹:

Որոշ գիտնականներ առաջարկում են գաղտնի տեղեկատվությունը դասակարգել ըստ իր բնույթի և նպատակի հինգ հիմնական տեսակների՝ առևտրային գաղտնիք, ծառայողական գաղտնիք, մասնագիտական գաղտնիք, բանկային գաղտնիք և անձնական տվյալներ²:

Բանկային գաղտնիքի ինստիտուտն ունի բարդ իրավական բնույթ և կապված է սահմանադրական, վարչական, քաղաքացիական և քրեական իրավունքի հետ:

«Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ *բանկային գաղտնիք են համարվում* ա) բանկի հաճախորդին սպասարկելու կապակցությամբ տվյալ բանկին հայտնի դարձած հաճախորդի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները, բ) հաճախորդի հանձնարարությամբ կամ հոգուտ հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, գ) ինչպես նաև նրա առևտրային գաղտնիքը, դ) գործունեության ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուտի, արդյունաբերական նմուշի մասին տեղեկությունների և ե) ցանկացած այլ տեղեկություններ, որը հաճախորդը մտադիր է եղել գաղտնի պահել, և բանկը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ³:

Բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության բաղադրատարրերն են՝

1) տեղեկատվություն վարկային կազմակերպություններում պահվող հաշիվների և ավանդների մասին, որոնց սեփականատերերը հանդիսանում են նրանց հաճախորդները (թղթակիցները)։

2) հաճախորդի (թղթակցի) հաշիվների և ավանդների հետ կապված գործարքների մասին տեղեկատվություն։

3) տեղեկատվություն վարկային հաստատության հաճախորդի (թղթակցի) մասին⁴:

Ինչպես բխում է ներպետական օրենսդրական կարգավորման մեկնաբանությունից, վերջինս սահմանում է բանկային գաղտնիք պարունակող տեղեկատվության շրջանակը, իսկ բանկային գաղտնիքի

¹ Крылов В. Информационные преступления - новый криминалистический объект // Российская юстиция. 1997. № 4. - С. 25.

² Лопатин В.П. Информационная безопасность России. Человек. Общество. Государство. - СПб., 2000. - С. 12.

³ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 07.10.1996 թ.:

⁴ Петрович И.К., Макеева И.А. Банковская тайна: коллизийные вопросы правового регулирования // Ленинградский юридический журнал. 2013. №1. - С. 11.

համապարփակ ներպետական իրավական սահմանումը բացակայում է: Այս նպատակով առաջարկում ենք «բանկային գաղտնիք» եզրույթի հետևյալ սահմանումը. «*Բանկային գաղտնիքը տեղեկատվության գաղտնիությունն ապահովող իրավական ինստիտուտ է, օրենսդրությամբ պաշտպանված գաղտնի (սահմանափակ մուտքի) տեղեկատվություն բանկի հաճախորդի կամ այլ անձի մասին, որը հայտնի է դարձել օրենքով նշված լիազորված անձանց (վարկային կազմակերպություն, այլ մարմիններ և (կամ) պաշտոնատար անձինք)*՝ իրենց պարտականությունների կատարման և բանկային օրենսդրությամբ սահմանված իրավունքների իրականացման ընթացքում»:

Գաղտնի տեղեկատվության համակարգում բանկային գաղտնիքի ինստիտուտի տեղի ու առանձնահատկությունների ուսումնասիրության հիմքում կարող ենք դնել վերջինիս և գաղտնի տեղեկատվության այլ տեսակների, մասնավորապես առևտրային և հարկային գաղտնիքի հարաբերակցության վերլուծությունը:

Բանկային և առևտրային գաղտնիքի հարաբերակցությունը:

Ակնհայտ է, որ տնտեսական գործունեության հաջողությունն անքակտելիորեն կապված է առևտրային և բանկային գաղտնիքների ինստիտուտի հետ:

«Քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածի համաձայն՝ «Տեղեկատվությունը ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք է, եթե այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն և տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար»¹:

«Առևտրային գաղտնիք» հասկացության զարգացմանը զուգընթաց առաջանում են նաև բանկային գաղտնիքի հետ դրա հարաբերակցության խնդիրները: Ակնհայտ է, որ բանկերի՝ որպես առևտրային կազմակերպությունների, կոմերցիոն արժեքավոր տեղեկատվությունը չպետք է խառնվի բանկային գաղտնիքի հետ: Կան և՛ գործնականորեն նման տեսակետներ, և՛ տրամագծորեն հակառակ: Իրավաբանական գրականության մեջ համաձայնություն չկա այն մասին, թե արդյոք բանկային գաղտնիքը առևտրային տեղեկատվության հատուկ տեսակ է, թե դրանք համեմատաբար անկախ իրավական ինստիտուտներ են:

¹ «Քաղաքացիական օրենսգրք, ընդունվել է 05.05.1998 թ.:

Քննարկենք դրանցից մի քանիսը, օրինակ՝ Լ.Ի. Ջանտեմիրովը բանկային գաղտնիքը դիտարկում է որպես անկախ իրավական ինստիտուտ¹:

Ի հակադրություն այս տեսակետի, ըստ Մ. Գվիրցմանի՝ բանկային գաղտնիքը առևտրային գաղտնիքի հատուկ տեսակ է և ձևավորվում է, նախ բանկի՝ որպես անկախ տնտեսական հարաբերությունների սուբյեկտի գաղտնիքից, և երկրորդ՝ հաճախորդների առևտրային գաղտնիքների ամբողջությունից²:

Ա. Լուկաշովը ևս կարծում է, որ հաշվի առնելով բանկի, որպես առևտրային կազմակերպության կարգավիճակը, կարելի է բանկային գաղտնիքը ճանաչել առևտրային գաղտնիքի տեսակ, որն ունի առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են այն սուբյեկտով, որին այն պատկանում է³:

Միևնույն ժամանակ, մի շարք հեղինակներ դասակարգում են բանկային գաղտնիքի և առևտրային գաղտնիքի հարաբերակցության առանձնահատկությունները: Վ. Խիլյուտան առանձնացրեց հետևյալ տարբերությունները.

➤ *Առևտրային գաղտնիք է համարվում ցանկացած տեղեկություն, բացառությամբ այն տեղեկությունների, որոնք արգելվում է վերագրել առևտրային գաղտնիքներին, որոնք սահմանված են որպես այդպիսին հենց սուբյեկտի կողմից, մինչդեռ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների շրջանակը սահմանված է օրենքով և նույնն է ցանկացած բանկերի, նրանց հաճախորդների և թղթակիցների համար:*

➤ *Առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունների ծավալը տարբեր է (տեղեկատվության սեփականատերն ինքն է որոշում այդ տեղեկությունների ցանկը) և ենթադրում է հատուկ ձևակերպում տեղական ակտերի մակարդակով, մինչդեռ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների շրջանակն ամրագրված է օրենքով, և այդ տեղեկությունների հրապարակման համար սահմանվում է բանկի պատասխանատվությունը՝ անկախ դրա պահպանման պարտավորության իրավական ձևակերպումից:*

➤ Առևտրային գաղտնիքի համար կարևոր է դրա էության պաշտպանությունը, բանկային գաղտնիքի համար՝ ոչ միայն դրա

¹ **Джантемиров Л.И.** Охрана сведений, составляющих коммерческую, налоговую или банковскую тайну: уголовно-правовой и криминологический аспекты: дисс. ... канд. юр. наук. - Ростов-на-Дону, 2004. - С. 20.

² **Гвирцман М.В.** Правовое регулирование банковской тайны / М.В. Гвирцман // Деньги и кредит. - 2004. - № 6. - С. 57.

³ **Жуков В.В.** Научно-практический комментарий к Банковскому кодексу Республики Беларусь. В 2-х кн., кн. 1 [и др.]. - Мн.: Дикта, 2002. - С. 515.

առկայության փաստի, այլև՝ բանկի և հաճախորդի հարաբերությունների փաստի պաշտպանություն¹:

Իսկ Ա. Սելիվանովսկին մեջբերում է բանկային գաղտնիքի և առևտրային գաղտնիքի հետևյալ տարբերությունները՝

- *Բանկային գաղտնիքը ծագում է օրենքի ուժով՝* անկախ դրա պաշտպանության վերաբերյալ հարաբերությունների սուբյեկտների կամքից: Ի հակադրություն, տեղեկատվությունը ձեռք է բերում առևտրային գաղտնիքի կարգավիճակ այն բանից հետո, երբ այն միակողմանի հայտարարվում է որպես առևտրային գաղտնիք:

- *Բանկային գաղտնիքի պահպանման պարտականությունը հարաբերական է.* մեկ իրավասու անձի (հաճախորդին) հակադրվում է մեկ պարտականություն (բանկ): Առևտրային գաղտնիքի պահպանության հարաբերությունները բացարձակ են. մեկ իրավասու անձի (տեղեկատվություն տնօրինողին) հակադրվում է անձանց անորոշ շրջանակ, որոնք պարտավոր են զերծ մնալ այդ տեղեկատվության նկատմամբ ոտնձգությունից:

- *Առևտրային գաղտնիքը կարող է լինել գործարքների առարկա* (օրինակ, այդպիսի տեղեկատվությունը կարող է փոխանցվել այլ անձի՝ դրա դիմաց գումար ստանալով), իսկ բանկային գաղտնիքը չի կարող փոխանցվել դրա պահպանությունն իրականացնող անձի կողմից երրորդ անձանց հետ գործարքներով²:

Այսպիսով, դիտարկված մոտեցումների հիման վրա կարելի է եզրակացնել, որ բանկային և առևտրային գաղտնիքների հասկացությունների տարբերակումը միանգամայն տրամաբանական է, քանի որ դրանցից յուրաքանչյուրը պաշտպանում է տարբեր քանակությամբ տեղեկատվություն: Առևտրային գաղտնիքի ռեժիմը պահպանում է տնտեսվարող սուբյեկտների տնտեսական անվտանգության վերաբերյալ տեղեկատվությունը, մինչդեռ բանկային գաղտնիքը պաշտպանում է ոչ թե բանկի, որպես առևտրային կազմակերպության շահերը, այլ հաճախորդների շահերը, ներառյալ ֆիզիկական անձինք, ովքեր չեն իրականացնում ձեռնարկատիրական գործունեություն: Հետևաբար, միանշանակ կարելի է պնդել, որ բանկային գաղտնիքը անկախ իրավական ինստիտուտ է:

Բանկային և առևտրային գաղտնիքի իրավական բնույթի ընկալման և վերջիններիս հարաբերակցության շրջանակների ներպետական

¹ **Хилота В.** Банковская тайна: проблемы правового регулирования / Банкаўскі веснік. - 2003. - № 7, 14.

² **Селивановский А.С.** Банковская тайна: состояние и проблемы / А.С. Селивановский // Бухгалтерия и банки. - 2006. - № 8. - С. 32.

հիմնախնդրի կարգավորման նպատակով, կարծում ենք անհրաժեշտ է հիմք ընդունելով առևտրային գաղտնիքի ինստիտուտի հիմնական առանձնահատկությունները՝ որոնք հիմք են հանդիսանում բանկային գաղտնիքից վերջինս տարբերակելու համար, սահմանել առևտրային գաղտնիք հասկացության ներպետական հետևյալ օրենսդրական ձևակերպումը. առևտրային գաղտնիքը *ցանկացած բնույթի տեղեկություններ են (արտադրական, տեխնիկական, տնտեսական, կազմակերպչական և այլ), ինչպես նաև մասնագիտական գործունեության իրականացման եղանակների մասին տեղեկությունները, որոնք ունեն իրական կամ պոտենցիալ առևտրային արժեք՝ երրորդ անձանց անհայտ լինելու պատճառով, որոնց նկատմամբ երրորդ անձինք օրինական հիմունքներով ազատ մուտք չունեն և որոնց նկատմամբ այդպիսի տեղեկությունների իրավատերը սահմանել է առևտրային գաղտնիքի ռեժիմ»:*

Կարծում ենք՝ առևտրային գաղտնիքի օրենսդրական սահմանման մեջ «ցանկացած բնույթի տեղեկություն» եզրույթի և «առևտրային գաղտնիքի ռեժիմի» սահմանումը, որպես տեղեկությունների իրավատիրոջ բացառիկ լիազորություն, նպաստում է վերջինիս և բանկային գաղտնիքի միջև իրավական սահմանազատման հիմնախնդիրների լուծմանը:

Բանկային գաղտնիքի և հարկային գաղտնիքի հարաբերակցությունը: ՀՀ հարկային օրենսգրքի 4-ր հոդվածի 63-րդ կետը սահմանում է *հարկային գաղտնիքը* որպես հարկ վճարողի, հարկ վճարողի գործունեության վերաբերյալ հարկային մարմնի կամ հարկային ծառայողի ստացած ցանկացած տեղեկություն, բացառությամբ՝ հարկ վճարողի կողմից կամ նրա համաձայնությամբ հրապարակված տեղեկությունների, հարկ վճարողի հաշվառման համարի վերաբերյալ տեղեկության, հարկ վճարողի կանոնադրության մեջ ներառվող տեղեկությունների, հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման և կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ տեղեկությունների, հարկ վճարողի կամ հարկ վճարողի գործունեության վերաբերյալ միջազգային կամ միջգերատեսչական պայմանագրերի (համաձայնագրերի) հիման վրա այլ պետությունների հարկային կամ մաքսային մարմիններին ներկայացվող տեղեկությունների¹:

Շատ գիտնականներ իրենց աշխատություններում նշում են, որ հարկային մարմնին տրամադրված տեղեկատվության պահպանման, մշակման և երրորդ անձանց փոխանցման հետ կապված հարաբե-

¹ ՀՀ հարկային օրենսգրքի, ընդունվել է 04.10.2016 թ:

րություններն ավանդաբար համարվում են հարկային գաղտնիքի ինստիտուտի իրավական կարգավորման սահմաններում¹: Հանրային հարաբերությունները, որոնք առաջանում են մեկ լիազոր մարմնից մյուսին տեղեկատվություն փոխանցելիս, պահանջում են հիմնավորել վերջինիս ինստիտուցիոնալ պատկանելությունը: Օրինակ, վարկային կազմակերպությունների կողմից հաճախորդների մասին տեղեկությունները հարկային մարմինների օգտին տրամադրելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ինչպես բանկային գաղտնիքի, այնպես էլ հարկային մարմինների կողմից: «Բանկային գաղտնիքի» մասին ՀՀ օրենքի համաձայն, բանկն իր հաճախորդների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրում է Հայաստանի Հանրապետության հարկային մարմիններին օրենքով սահմանված կարգով և դեպքերում²: Այսպիսով՝ օրինակ, բանկերի կողմից հարկային մարմնին տրամադրվող տեղեկատվությունը հնարավորություն է տալիս բացահայտել հարկերից խուսափող անձանց կողմից փաստացիից շատ ավելի քիչ եկամուտներ հայտարարագրելու դեպքերը:

Օրենսդրական այս կարգավորումն ընդգծում է բանկային և հարկային գաղտնիքի հարաբերակցության էության առաջին հատկանիշը, որն արտահայտվում է նրանում, որ հարկային գաղտնիքի օբյեկտը կախված է բանկային գործունեության օբյեկտից. քանի դեռ բանկերը համապատասխան տեղեկատվություն չեն տրամադրել հարկային մարմնին, այդ տեղեկատվությունը բանկային գաղտնիք կլինի: Այսպիսով, տեղի է ունենում գաղտնիքների ռեժիմի փոփոխություն, այսինքն՝ բանկայինից դեպի հարկային, մինչդեռ *տեղեկատվության բովանդակությունը չի փոխվում, փոխվում են միայն այդ տեղեկատվությունից օգտվող սուբյեկտները*³:

Ինչպես իրավացիորեն նշում է Մ. Սահակյանը, երբ հարկային և բանկային գաղտնիքների ռեժիմները փոխազդում են, տեղի է ունենում հարաբերակցություն անհավասար սուբյեկտների միջև, որոնք տվյալ իրավահարաբերություններում տարբերվում են իրենց իրավասուբյեկտությամբ⁴: Քանի որ բանկային գաղտնիքի ռեժիմը տարածվում է վարկային կազմակերպությունների (բանկերի) վրա, որոնք այդ իրավահարա-

¹ Мясников А.О. Как защитить налоговую тайну / А.О. Мясников // Налоговые споры. - 2006. - №9. - С. 34.
² «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 07.10.1996 թ.:
³ Архиреева А.С, Белоусов Ю.А. Соотношение гражданского и налогового права // Эпомен. 2018. №21. - С. 10.
⁴ Саакян М.А., Архиреева А.С. Налоговая тайна и особенности ее реализации // Гуманитарные, социально-экономические и общественные науки. 2019. №2. - С. 117.

բերություններում հանդիսանում են պարտավոր սուբյեկտ, իսկ հարկային գաղտնիքի ռեժիմը տարածվում է նաև հարկային մարմնի վրա, մասնավորապես՝ օրենքի անունից հանդես եկող քաղաքացիական ծառայողների վրա, և վերջիններս ունեն օրենքով սահմանված լիազորություններ: Այսինքն՝ կարելի է ընդգծել, որ այս իրավահարաբերություններում գաղտնիքների վերոնշյալ ռեժիմները տարածվում են *բոլորովին տարբեր* սուբյեկտների վրա¹:

Կարծում ենք՝ հարկային և բանկային գաղտնիքների հարաբերակցության ներպետական հիմնախնդիրները կարող են առաջանալ նաև հարկային գաղտնիքի ներպետական օրենսդրական սահմանման տարամեկնությունից: Վերլուծության արդյունքում կարող ենք ուշադրություն դարձնել այն փաստին, որ, ըստ էության, քննարկվող սահմանումը չի թվարկում *կոնկրետ տեղեկատվություն*, որը հարկային գաղտնիք կլինի, այլ ավելի շուտ բացառում է տեղեկությունների շրջանակ: «Ստացած ցանկացած տեղեկատվություն» եզրույթը չափազանց անորոշ է և չունի կոնկրետ, սպառիչ իրավական շրջանակներ:

Այլ կերպ ասած՝ հարկային գաղտնիք կազմող տեղեկությունների ցանկը կառուցված է «ցանկացած տեղեկություն, բացառությամբ» սկզբունքի վրա, որը շատ գիտնականներ ևս համարվում են անհաջող, քանի որ, ըստ էության, դա բացառությունների ցանկ է: Սա հարկային գաղտնիքի սահմանման հիմնական թերությունն է և պրակտիկայում կարող է առաջացնել վերջինիս և հարակից իրավական գաղտնիքների, այս թվում՝ բանկային գաղտնիքի հետ հարաբերակցության և տարանջատման հիմնախնդիրներ:

Այս նպատակով առաջարկվում է սահմանել հարկային գաղտնիքը որպես *հարկային օրենսդրությամբ սահմանված և պաշտպանված, սահմանափակ հասանելիությամբ տեղեկություն հարկ վճարողի կամ այլ անձի մասին, որը հայտնի է դարձել հարկային մարմնի կամ ծառայողի իրավունքների և պարտականությունների կատարման արդյունքում*:

Այսպիսով՝ բանկային գաղտնիքը այլ տեսակի գաղտնիքների հետ փոխկապակցելու անհնարինությունը թույլ է տալիս բանկային գաղտնիքը դիտարկել որպես **գաղտնի տեղեկատվության անկախ տեսակ**:

Այսպես՝ օրինակ, ինչպես առևտրային, այնպես էլ բանկային գաղտնիքներին բնորոշ են իրենց առանձնահատկությունները, որոնք թույլ

¹ Крутова Я.А., Очаковский В.А., Коротина Т.Е. Налоговая тайна и ее обеспечение // Вестник Краснодарского университета МВД России. 2018. №3 (41). - С. 122.

են տալիս տարանջատել այս երկու ինստիտուտները և չդիտարկել դրանք որպես ընդհանուրի և մասնավորի հարաբերակցություն: Առևտրային գաղտնիքների և բանկային գաղտնիքների միջև հիմնական տարբերությունն այն է, որ առևտրային գաղտնիքի իրավունքն առաջացնում է հարաբերական բնույթի իրավահարաբերություններ, մինչդեռ բանկային գաղտնիքների առաջացման փաստով առաջացած իրավահարաբերությունները միշտ բացարձակ են: Առևտրային գաղտնիքի պաշտպանությունը բացառապես դրա սեփականատիրոջ մտահոգությունն է, ինչը թույլ է տալիս նրան մեծացնել եկամուտները, խուսափել չարդարացված ծախսերից, պահպանել դիրքը շուկայում և այլն: Բանկային գաղտնիքը պահպանվում է բանկի կողմից, և այդ գործողությունները կատարում է այդ սուբյեկտը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ նրա այս պարտականությունը նախատեսված է օրենքով¹: Կարելի է ասել, որ բանկային գաղտնիքն անկախ ինստիտուտ է և չպետք է դիտարկվի որպես առևտրային գաղտնիքի տեսակ:

Իսկ բանկային և հարկային գաղտնիք հարաբերակցության համատեքստում տարբերությունը կայանում է գաղտնի տեղեկատվության շրջանակի որոշման մեջ: Այսպիսով, եթե հարկային գաղտնիք կազմող տեղեկությունների ցանկը կառուցված է «*ցանկացած տեղեկություն, բացառությամբ*» սկզբունքի վրա, որը շատ գիտնականներ և համարվում են անհաջող, քանի որ, ըստ էության, դա բացառությունների ցանկ է, ապա ի հակադրություն դրա՝ օրենքով սահմանվում է *բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների սպառիչ ցանկը*:

Եվ հաշվի առնելով այն, որ գաղտնի տեղեկատվության համակարգում ընդգրկված տեղեկությունների հարաբերակցության հարցը սահմանված չէ և հաճախ առաջացնում է տարակարծություններ, առաջարկեցինք բանկային, առևտրային և հարկային գաղտնիքների իրավական սահմանումներ, որոնք, կարծում ենք, կապահովեն դրանցից յուրաքանչյուրի՝ որպես գաղտնի տեղեկատվության անկախ տեսակի իրավական նշանակությունը: Միևնույն ժամանակ առաջարկում ենք տարբեր տեսակի գաղտնիքների միջև հարաբերությունների հարցը լուծելու համար մշակել «Գաղտնի տեղեկատվության մասին» օրենք, որը կպարունակի գաղտնի տեղեկատվության հայեցակարգը, տեղեկատվությունը որպես գաղտնի տեղեկատվություն դասակարգելու չափանիշները, կորոշի գաղտնիության հայեցակարգը և կսահմանի պաշտպանության հիմնական սկզբունքները

¹ Скобликов П. Коммерческая и банковская тайна: проблемы правового регулирования // Рос. юстиция. 1997. № 11. - С. 17.

բոլոր տեսակի գաղտնիքների համար: Նմանատիպ նորմատիվ ակտի ընդունումը կբացառի գաղտնի տեղեկատվության իրավական կարգավորման մասնատվածությունը և, ըստ էության, կնպաստի նաև բանկային գաղտնիքի՝ որպես ֆինանսաիրավական հարաբերություններում գաղտնի տեղեկատվության պաշտպանության երաշխավորի և գաղտնի տեղեկատվության անկախ տեսակի իրավական էության կատարելագործմանը և հստակ տարանջատմանը գաղտնի տեղեկատվության այլ տեսակներից:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունվել է 05.05.1998 թ.:
2. ՀՀ Հարկային օրենսգիրք, ընդունվել է 04.10.2016 թ.:
3. «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 07.10.1996 թ.:
4. **Архиреева А.С., Белоусов Ю.А.** Соотношение гражданского и налогового права // Эпомен. 2018. №21. – С. 10-17.
5. **Волчинская Е.К.** Коммерческая тайна в системе конфиденциальной информации // Информационное право. 2005. № 3. - 148 с.
6. **Гвирцман М.В.** Правовое регулирование банковской тайны / М.В. Гвирцман // Деньги и кредит. 2004. № 6. - С. 57-65.
7. **Джантемиров Л.И.** Охрана сведений, составляющих коммерческую, налоговую или банковскую тайну: уголовно-правовой и криминологический аспекты: дисс. ... канд. юр. наук. - Ростов-на-Дону, 2004. - 182 с.
8. **Жуков В.В.** Научно-практический комментарий к Банковскому кодексу Республики Беларусь. В 2-х кн., кн. 1 [и др.]. - Мн.: Дикта, 2002. - 592 с.
9. **Крылов В.** Информационные преступления - новый криминалистический объект // Российская юстиция. 1997. № 4. - 69 с.
10. **Крутова Я.А., Очаковский В.А., Корытина Т.Е.** Налоговая тайна и ее обеспечение // Вестник Краснодарского университета МВД России. 2018. №3 (41). - 140 с.
11. **Лопатин В.П.** Информационная безопасность России. Человек. Общество. Государство. - СПб., 2000. - 483 с.
Ինչ վերաբերում է իրավաչափ վարչական ակտերի բեկանմանը՝ տարբերությունը անբարենպաստ և բարենպաստ վարչական ակտերի բեկանման մեջ է, այսինքն՝ ինչպիսի իրավական հետևանքներ է տվյալ վարչական ակտն առաջացնում անձի համար՝ անբարենպաստ, թե բարենպաստ, որով և պայմանավորված է, թե ինչ չափով լիազորված վարչական մարմնի կողմից բեկանման հնարավորությունը կլինի սահմանափակված վստահության պաշտպանության ասպեկտներով:

Վստահության պաշտպանության ասպեկտները նշանակություն կարող են ունենալ երրորդ անձանց վերաբերելի անբարենպաստ իրավաչափ վարչական ակտի բեկանման դեպքում, եթե անգամ երրորդ անձը չունի և չունեի իրավունք՝ պահանջելու այդ վարչական ակտի ընդունումը. նրա շահը կարող է նշանակություն ունենալ այդ վարչական ակտի գոյության պահպանման համար: Այնպես որ, վարչական մարմինը, իր հայեցողությամբ որոշում կայացնելիս, պետք է մանրակրկտորեն դիտարկի այս ասպեկտները: Շահագրգիռ երրորդ անձը կարող է նաև պաշտպանվել բեկանման դեմ անգամ նաև դատական կարգով:

Ինչ վերաբերում է իրավաչափ վարչական ակտերին, ապա դրանք չեն կարող ետ կանչվել, քանի որ շահառուն կարող է, հիմնականում, վստահել դրա բովանդակությանը: Այս դեպքերում օրենսդիրը ուշադրություն է դարձնում վստահության պաշտպանությանը և օրենքում հստակ ամրագրել է, որ միայն բացառիկ դեպքերում է հնարավոր իրավաչափ վարչական ակտերի հետ կանչումը:

Վարչական ակտերի բեկանման դրույթներով Գերմանիայի օրենսդիրը ցուցադրեց տարբերակված և բազմաստիճան կարգավորման համակարգը, մի կողմից՝ հանրային շահի, որպեսզի վերացնի վարչական ակտը, և, մյուս կողմից՝ մասնավոր շահի միջև, որպեսզի հասնի վարչական ակտի գործողության շարունակմանը /մասնավորապես՝ վստահության պաշտպանության ասպեկտում/: Այսպես, գերմանական իշխանական մարմիններին տրվել է գործողության կաևոր ուղեցույց յուրաքանչյուր դեպքի համար¹:

Վստահության պաշտպանության իրավունքը Ռուսաստանի Դաշնությունում վարչական իրավունքի գիտության մեջ բավականաչափ ուսումնասիրված չէ, որը ընդհանուր վարչարարության օրենքի բացակայության արդյունք է: Պետության և հասարակության փոխադարձ վստահությանը անդրադարձ է կատարվել ՌԴ Սահմանադրության 2020 թ. փոփոխություններով 75.1 հոդվածում²: Վստահության պաշտպանության իրավունքը արտացոլվում և զարգանում է դատական պրակտիկայում կիրառման շնորհիվ, հատկապես՝ ՌԴ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներում, որոնցում ձևավորվել և գործում է *օրենքի և պետության գործողությունների հանդեպ քաղաքացիների վստահության պահպանության չամրագրված սահմանադրական սկզբունքը*: Հետևաբար

¹ Ежегодник публичного права 2016: Административный акт. - М.: Инфотропик Медиа, 2015. - 572 с. -ISBN978-8-9998-0258-3. - С. 196-205.

²https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_346019/3d0cac60971a511280cbba229d9b6329c07731f7

և, ՌԴ Սահմանադրական դատարանի պրակտիկայի միջոցով տեղի է ունենում վստահության պաշտպանության սկզբունքի նորմատիվ-մեկնաբանական սահմանադրականացումը ներպետական իրավական համակարգում¹:

ՀՀ վարչական օրենսդրությունում՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում (այսուհետ՝ Օրենք), թեև վստահության պաշտպանության սկզբունքը՝ որպես վարչարարության հիմնարար սկզբունք, ամրագրված չէ, սակայն դա արգելք չէ օրենսդրությամբ չամրագրված այդպիսի սկզբունքի կիրառելիության համար: Այդպիսի կարգավորում սահմանում է Օրենքի 12-րդ հոդվածը²:

Ինչ վերաբերում է վարչական մարմինների վերադաս վարչական մարնի (պաշտոնատար անձի) կողմից վերահսկողության կարգով սեփական նախաձեռնությամբ վարչական ակտի վերանայման լիազորությանը, ապա այդպիսի կարգավորում նախատեսում է Օրենքի 67-րդ հոդվածը, համաձայն որի՝ «Վարչական մարմնի ընդունած վարչական ակտի վերաբերյալ բողոքի բացակայության դեպքում այդպիսի ակտ ընդունած վարչական մարմնի վերադաս վարչական մարմինը (պաշտոնատար անձը), վերահսկողության կարգով և իր նախաձեռնությամբ, իրավունք ունի վերանայել ստորադաս վարչական մարմնի ընդունած վարչական ակտը»³:

Այսինքն, սույն կարգավորման համաձայն, երբ բողոքարկման վարույթ նախաձեռնված չէ այն անձի կողմից, ով հանդիսանում է ընդունված վարչական ակտի շահառուն, Օրենսդիրը լիազորել է այդ վարչական ակտն ընդունած վերադաս վարչական մարմնին (պաշտոնատար անձին) իր իսկ նախաձեռնությամբ վերահսկողության կարգով վերանայել ստորադաս վարչական մարմնի կողմից ընդունած վարչական ակտը: Օրենսդրի կողմից վերադաս վարչական մարմնին վարչական ակտի վերահսկողության նման իրավունքի ընձեռնման պարագայում առաջանում են հետևյալ հարցերը.

- արդյո՞ք նման կարգավորման արդյունքում չի խախտվում մարդու պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի իրացման

¹ **Курцов С.С.** Принцип защиты доверия: формирование доктрины и практики правоприменения в России // Вестник Воронежского государственного университета. Серия: Право. 2023. № 2 (53). - С. 53–61. DOI: <https://doi.org/10.17308/law/1995-5502/2023/2/53-61>

² «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ «Այլ սկզբունքներ կիրառելը» վերտառությամբ 12-րդ հոդված:

³ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ «Վարչական ակտը վերանայելը վերադասության կարգով» վերտառությամբ 67-րդ հոդված:

գործուն երաշխիք՝ վստահության պաշտպանության իրավունքը՝ վարչական ակտի գոյության մասով,

- արդյո՞ք դրույթում օգտագործված «վարչական ակտ» եզրույթի ներքո Օրենսդիրն ի նկատի է ունեցել Օրենքի 53-րդ հոդվածով՝ սահմանված՝ բարենպաստ, միջամտող և զուգորդվող վարչական ակտերի բոլոր տեսակները,

- ինչ վտանգներ է իրենից ներկայացնում վերադաս վարչական մարմնին նման լիազորության տրամադրումը՝ անձի վստահության պաշտպանության իրավունքի ապահովման տեսանկյունից:

Վերը արդեն իսկ արձանագրվել է վարչական օրենսդրությունում վստահության պաշտպանության սկզբունքի ամրագրման բացակայությունը, սակայն պետք է արձանագրել, որ ՀՀ վարչական օրենսդրությունում առկա է վարչական ակտի նկատմամբ վստահություն ունենալու վերաբերյալ օրենսդրական կարգավորում: Օրենքի՝ «Ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելը» վերտառությամբ 63-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը սահմանում են, որ «ոչ իրավաչափ վարչական ակտը չի կարող անվավեր ճանաչվել, եթե ակտի հասցեատերն իրավունք ունի վստահելու վարչական ակտի գոյությանը, և վերջինիս գործողության մեջ գտնվելը չի կարող վնաս պատճառել որևէ անձի իրավունքներին, Հայաստանի Հանրապետությանը կամ որևէ համայնքի: Վարչական ակտի հասցեատերը վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունք ունի, եթե վարչական ակտի հիման վրա ստացածն արդեն իսկ օգտագործել կամ տնօրինել է, ինչպես նաև, եթե ակտի հիման վրա ստացածի հետ վերադարձնելը վնաս կպատճառի վարչական ակտի հասցեատիրոջը:

Վարչական ակտի հասցեատերը վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունք չունի, եթե նա՝ ա) համապատասխան վարչական ակտի ընդունմանը հասել է կաշառքի, սպառնալիքի կամ վարչական մարմնի պաշտոնատար անձին դիտավորյալ մոլորության մեջ գցելու միջոցով. բ) համապատասխան վարչական ակտի ընդունմանը հասել է կեղծ կամ ոչ լրիվ փաստաթղթեր ներկայացնելու միջոցով. գ) նախապես իմացել է վարչական ակտի ոչ իրավաչափ լինելու մասին կամ այդ մասին պարտավոր էր իմանալ՝ իր համար մատչելի տեղեկությունների հիման վրա»²:

¹ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ «Վարչական ակտի հասկացությունը և տեսակները» վերտառությամբ 53-րդ հոդված:

² «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդված:

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 1(113)2024

Վերոնշյալ իրավակարգավորումը վերաբերելի է միայն ոչ իրավաչափ վարչական ակտերի նկատմամբ վստահությանը: Ինչ վերաբերում է իրավաչափ բարենպաստ վարչական ակտի պարագայում վարչական մարմնի գործողությունների, մասնավորապես, վերահսկողության կարգով դրանց վերանայման հանդեպ վստահելիությանը, ապա, կարծում ենք, որ Օրենքի 67-րդ հոդվածով ամրագրված իրավադրույթն ունի որոշակիության խնդիր, քանզի օրենսդիրը, օգտագործելով «վարչական ակտ» ձևակերպումը՝ առանց հստակեցնելու, թե որ տեսակի վարչական ակտը նկատի ունի, ներկայիս ձևակերպման համաձայն ստեղծվում է մի իրավիճակ, երբ բողոքի բացակայության պայմաններում վարչական ակտն ընդունած վարչական մարմնի վերադաս վարչական մարմինն իր նախաձեռնությամբ ամեն պահի կարող է վերանայել բարենպաստ վարչական ակտերը՝ կայացնելով նույն Օրենքի 76-րդ հոդվածով սահմանված որոշումներից որևէ մեկը, որպիսի լիազորությունը, կարծում ենք, չի բխում վստահության պաշտպանության հիմնարար սկզբունքից և առկա է վտանգ՝ գործնականում այդպիսի լիազորության գործադրմամբ վստահության պաշտպանության սկզբունքի խաթարման համար, հետևապես պետք է արձանագրել, որ օրենսդրական նման կարգավորմամբ Օրենսդիրը ցանկացել է հստակ ամրագրել վստահության պաշտպանության իրավունքի սկզբունքի ապահովման գործուն գործիքակազմ՝ օրենսդրական մակարդակում հստակ իրավակարգավորման ենթարկելով բարենպաստ վարչական ակտերի՝ սեփական նախաձեռնությամբ վերահսկողության կարգով վերադաս վարչական մարմնի կողմից վերանայման դեպքերը և կարգը՝ ապահովելով **բարենպաստ վարչական ակտերի պաշտպանությունը**, դրանց նկատմամբ վարչական վարույթի բարեխիղճ մասնակցի վստահությունը, ով իրավունք ունի ակնկալել բարենպաստ իրավական հետևանքներ, որոնք ենթակա են պաշտպանության, որոնց բեկանումը հնարավոր է միայն վարչական կամ դատական կարգով բողոքարկման դեպքում, և ոչ մի պարագայում բողոքի բացակայության դեպքում վարչական մարմնի/պաշտոնատար անձի հայեցողությամբ, կամ նախկինում կայացված որոշման հանկարծակի փոփոխմամբ: Իրավական որոշակիության սկզբունքը, լինելով սահմանադրորեն ամրագրված և իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է, որ օրենքում ամրագրված իրավադրույթները պետք է համապատասխանեն որակական այնպիսի հատկանիշների, ինչպիսիք են՝ հստակությունը, մատչելիությունը և կանխատեսելիությունը, որոնք անձի համար հասանելի են դարձնում իր իրավաչափ ակնկալիքները, որպեսզի իրավահարաբերությունների

մասնակիցները համապատասխան պատկերացում կարողանան կազմել իրենց վարքագծի հնարավոր հետևանքների մասին:

Հետևաբար և, իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով, կարող ենք մատնանշել սույն դրույթում փոփոխություն կատարելու անհրաժեշտության մասին, որի արդյունքում կկարողանանք փաստել, որ ներպետական օրենսդրական կարգավորումներով բարենպաստ վարչական ակտի բեկանման հնարավորությունը (Օրենքի 77-րդ հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում) բացառապես վարչական կամ դատական կարգով սահմանելով, կամ բացառիկ հստակ դեպքեր սահմանելով՝ հնարավորինս կապահովվի մարդու պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի իրացման երաշխիք՝ վստահության պաշտպանության սկզբունքի՝ գործողությունը²:

Անհրաժեշտ է նշել, որ ուսումնասիրված ներպետական և օտարերկրյա վարչական օրենսդրությունների համապատասխան իրավակարգավորումների համաձայն՝ ոչ իրավաչափ անբարենպաստ վարչական ակտը ենթակա է բեկանման ամեն պահի՝ առանց որևէ պայմանի կամ խնդրի, քանի որ սույնի դեպքում վստահության պաշտպանության իրավունքը որևէ դերակատարում չունի: Անբարենպաստ վարչական ակտի նկատմամբ անձը չունի վստահության խնդիր, քանզի այն առաջացնում է նրա համար անբարենպաստ հետևանքներ, ինչպես արդեն նշվել էր, այստեղ վարչական ակտի գոյության վստահություն կարող է ունենալ շահագրգիռ երրորդ անձը, և պահանջել իր օրինական ակնկալիքների պաշտպանություն:

Այսպիսով, տարբեր վարչական օրենսդրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հիմնական մոտեցումները բարենպաստ/անբարենպաստ, իրավաչափ/ոչ իրավաչափ վարչական ակտերի գոյության վստահության պաշտպանության իրավունքի նկատմամբ նույնն են՝ ոչ իրավաչափ անբարենպաստ վարչական ակտերը ենթակա են բեկանման առանց որևէ խնդրի, քանզի այստեղ խոսք չի կարող լինել անձի՝ վարչական ակտի նկատմամբ վստահություն ունենալու մասին, իսկ

¹ Վստահության պաշտպանության իրավունքի սկզբունքին անդրադարձ է կատարել նաև ՀՀ Սահմանադրական դատարանն իր՝ 2009 թ. նոյեմբերի 24-ի ՍԴՈ-839 և 2014 թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-1148 որոշումներում:

² Ստորև ներկայացված օտարերկրյա օրենսդրություններում կարելի է հանդիպել օրենսդրական վարչաիրավական կարգավորումների, որոնց համաձայն իրավաչափ վարչական ակտերը ենթակա են փոփոխման, վերանայման կամ բեկանման ինչպես արտադատական՝ այն ընդունած վարչական մարմնի կամ նրա վերադաս վարչական մարմնի կողմից, այնպես էլ դատական կարգով՝ օրենքով հստակ սահմանված բացառիկ դեպքերում:

օրինակ ոչ իրավաչափ բարենպաստ վարչական ակտերի պարագայում անձն ունենում է այդ վարչական ակտի գոյության նկատմամբ վստահություն և օրենքները սահմանում են՝ երբ է այն ենթակա պաշտպանության սույն սկզբունքի հիմքով, երբ՝ ոչ, իսկ ներպետական օրենսդրությունը, փաստորեն, բարենպաստ վարչական ակտի բեկանում/վերանայում թույլ է տալիս Օրենքի 67-րդ հոդվածով, որի ներկայիս ձևակերպումների առնչությամբ սույն աշխատությունում մատնանշվել են հնարավոր վտանգները, որոնք հանգեցնում են մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների, մասնավորապես՝ Սահմանադրության 50-րդ հոդվածով ամրագրված՝ պատշաճ վարչարարության իրավունքի խախտմանը:

3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կարծում ենք, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում վստահության պաշտպանության մասով առկա կարգավորումը՝ ոչ իրավաչափ վարչական ակտերի նկատմամբ վստահության առնչությամբ, բավարար չէ վստահության պաշտպանության իրավունքի սկզբունքի էության ամբողջական արտացոլման համար, սկզբունքն օրենքում՝ որպես վարչարարության և վարչական վարույթի հիմնարար սկզբունք, ամրագրված չէ, այլ նորմերում ամբողջությամբ բացահայտված չէ, պատկերացումները մի քիչ վերացական են և ոչ կոնկրետ: Հետևաբար և առաջանում է վտանգ, որ քաղաքացիները չեն հասկանա իրենց իրավունքների ամբողջ շրջանակը, ինչպես նաև տվյալ սկզբունքի իմաստը:

Այս սկզբունքի էությունը վարչական ակտի մասով այն է, որ վարչական ակտ ստացած անձը բոլոր հիմքերն ունի ենթադրելու, որ տվյալ ակտն իր առնչությամբ պատշաճ կերպով է կայացվել և իրավունք ունի ոչ միայն հիմնվել դրա վրա, այլ սկսել իրականացնել այն և հուսալ, որ այն չի փոխվի: Հետևաբար և վարչական մարմինների կողմից համապատասխան ակտի ընդունման կամ չընդունման նկատմամբ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վստահությունը պետք է պաշտպանվի օրենքով: Կարևոր է նաև ուշադրության արժանացնել այն, որ շահագրգիռ երրորդ անձը նույնպես վարչական ակտի գոյության նկատմամբ կարող է ունենալ վստահություն, մասնավորապես, ոչ բարենպաստ վարչական ակտերի պարագայում, երբ անձի համար այն առաջացնում է անբարենպաստ հետևանք, և որի նկատմամբ իր վստահության պաշտպանության ապահովումն է պահանջում շահագրգիռ երրորդ անձը,

ով կարող է այդ պաշտպանության ապահովումն ակնկալել նաև դատական կարգով:

Վստահության պաշտպանության սկզբունքը, որպես մարդու պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի իրացման յուրօրինակ երաշխիք, պետք է որպես վարչարարության և վարչական վարույթի հիմնարար սկզբունք իր ամրագրումը ստանա վարչական օրենսդրությունում:

Ըստ այդմ, առաջարկվում է *վստահության պաշտպանության սկզբունքի* ամրագրումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ Գլխում՝ ապահովվելով հավասարակշռություն պետության, հասարակության և անձի իրավունքների միջև, որը նաև հնարավորություն կընձեռներ հաստատել իրավունքի սուբյեկտների գործողությունների կարևոր ուղեցույցները և վարչաիրավական պաշտպանության միջոցների առավել լայն կիրառումը՝ նպաստելով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պատշաճ վարչարարության իրավունքի իրացմանը, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածով ամրագրված լիազորության՝ վստահության պաշտպանության սկզբունքով երաշխավորված իրագործելիության համար:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

Նորմատիվ իրավական ակտեր

1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 18.02.2004 թ., ՀՕ-41-Ն / ՀՀՊՏ 2004.04.14/21(320):
2. ՌԴ Սահմանադրության 2020 թ. փոփոխություններ, https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_346019/3d0cac60971a511280cbba229d9b6329c07731f7/
3. Закон Республики Узбекистан об административных процедурах /14.12.2017 г./, <https://lex.uz/docs/3492203>

Գիտական գրականություն

1. Сборник законов об административных процедурах, 2-е издание – М.: Инфотропик Медиа, 2016. – 444 с. – ISBN 978-5-9998-0247-7.
2. Ежегодник публичного права 2016: Административный акт. - М.: Инфотропик Медиа, 2015. -572 с. - ISBN978-8-9998-0258-3.

1(113)2024
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ
132

3. Кустов С.С. Принцип защиты доверия: формирование доктрины и практики правоприменения в России // Вестник Воронежского государственного университета. Серия: Право. 2023. № 2 (53). - С. 53–61. DOI: <https://doi.org/10.17308/law/1995-5502/2023/2/53-61>

4. Legitimate Expectations in the Common Law World/ Edited by M.Groves and G.Weeks. Oxford and Portland, 2017. ISBN 9781509909513

Դատական գործեր

1. ՍԴՈ-839, 24 նոյեմբերի 2009 թ.:

https://www.concourt.am/decision/decisions/633eb1ba306b5_sdv-839.pdf

2. ՍԴՈ-1148, 18 ապրիլի 2014թ.:

https://www.concourt.am/decision/decisions/634698a7431e9_sdv-1148.pdf

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ПЕРЕСМОТРА АДМИНИСТРАТИВНОГО АКТА ВЫШЕСТОЯЩИМ АДМИНИСТРАТИВНЫМ ОРГАНОМ ПО СОБСТВЕННОЙ ИНИЦИАТИВЕ В ЦЕЛЯХ КОНТРОЛЯ В КОНТЕКСТЕ ПРИНЦИПА ЗАЩИТЫ ДОВЕРИЯ

Аннотация

Действенной гарантией реализации конституционного права человека на надлежащее администрирование является обеспечение принципа защиты доверия, что, являясь одной из актуальных проблем действующей административно-правовой системы, будет способствовать совершенствованию института административного права в результате достаточного изучения.

В частности, проблематичен вопрос, связанный с пересмотром административного акта вышестоящим административным органом (должностным лицом) по собственной инициативе в целях контроля, именно в контексте обеспечения принципа защиты доверия, поскольку в административном праве, с одной стороны, вышестоящему административному органу (должностному лицу) предоставляется полномочие по собственной инициативе в порядке контроля пересматривать административный акт, принятый нижестоящим

административным органом, с другой стороны, исполнение такого полномочия может сталкиваться с правом адресата административного акта доверять существованию административного акта, поэтому исполнение такого полномочия должно вытекать из принципов законности и соразмерности управления и не подрывать суть принципа защиты доверия, на законодательном уровне обеспечивая право адресата административного акта доверять существованию административного акта.

Ключевые слова: принцип охраны доверия, законное ожидание, административное производство, правомерный и противоправный административный акт, правовое последствие.

THE BASIC PROBLEMS OF REVISION OF THE ADMINISTRATIVE ACT BY THE SUPERIOR ADMINISTRATIVE BODY ON ITS OWN INITIATIVE IN THE CONTEXT OF THE PRINCIPLE OF TRUST PROTECTION

Annotation

1(113)2024

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՊԱՏԱՐԱՆ

ՊԱՏԱՐԱՆ



An effective guarantee of the realization of the constitutional human right to good governance is to ensure the principle of protection of trust, and based on the current problems of the current administrative and legal system, the latter will contribute to the improvement of the institute of administrative law as a result of sufficient study.



In particular, the issue related to the revision of an administrative act for control purposes by a superior administrative body (official) on its own initiative is problematic in the context of ensuring the principle of protection of trust, because, on the one hand, in administrative law, a higher administrative body (official) is given the authority to review an administrative act adopted by a lower administrative body, on the other hand, the use of such powers may contradict the right of the addressee of the act to trust the existence of an administrative act, therefore, the use of such powers

should proceed from the principles of legality and proportionality of administration and not undermine the essence of the principle of protection of trust, ensuring at the legislative level the right of the addressee of an administrative act to trust the existence of an administrative act.

Keywords: principle of protection of trust, legitimate expectation, administrative proceedings, lawful and unlawful administrative act, legal consequences.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 10.03.2024 թ., փրվել է գրախոսության 11.03.2024 թ., ընդունվել է փպագրության 21.03.2024 թ.:



ՄԻԼԵՆԱ ՂԱԶԱՐՅԱՆ

*Հայաստանի եվրոպական
համալսարանի իրավագիտության
ամբիոնի հայրորդ*

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ ՈՐՊԵՍ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՕՐՅԵԿՏ**

Ամփոփագիր

Հոդվածում ներկայացվում է պետական տարածքի սահմանադրաիրավական դոկտրինը: Այդ կապակցությամբ տարածքը՝ որպես սահմանադրաիրավական կարգավորման օբյեկտ, քննարկվում է սահմանադրական իրավունքի հիմնային ինստիտուտների տեսանկյունից, մասնավորապես՝ imperium և dominium միասնական ռեժիմի դիրքից՝ որպես տարածքային գերակայության արտահայտում, «մարդու» և «քաղաքացու» կարգավիճակների փոխկապվածության և հասարակության ու պետության տարածքային կազմակերպման համակարգում:

Հիմնաբառեր. տարածք, պետություն, սահմանադրություն, իրավական ինքնիշխանություն, տարածքային ինքնիշխանություն:

Ժամանակակից իրավագիտության մեջ «պետության տարածք» եզրույթն ընկալվում է որպես հիմնարար հասկացություն, որը «ժողովուրդ» և «իշխանություն» կատեգորիաների հետ միասին կազմում է պետության կազմավորման եռատարր միասնական համակարգ:

Դեռևս XIX դարի վերջին, գերմանացի հայտնի պետականագետ Հ. Ելլինեկը նշել է, որ՝ «որպեսզի խուսափես իրավական ֆիկցիայից, անհրաժեշտ է պետության գոյությունը ճանաչել վերջինիս բաղկա-

1 (113)2024

◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ցությունը կազմող իրական տարրերի առկայությամբ. այդ տարրերն են՝ տարածքը, ժողովուրդը, իշխանությունը»¹:

Կամ, «տարածքի»՝ որպես պետության առաջնային հատկանիշի, վերաբերյալ ֆրանսիացի հանրային իրավունքի ոլորտի իրավագետ Լեոն Դյուգին դեռևս XX դարի սկզբներին նշել է, որ՝ «պետությունը որպես այդպիսին կարող է տեղ գտնել այն ժամանակ, երբ նա տեղակայվել է որոշակի սահմաններով տարածքի վրա: ... և առանց տարածքի ժողովրդի կողմից հանրային իշխանության կազմակերպումը կդադարի պետություն լինելուց»²:

Պետության տարածքի վերաբերյալ տեսական տարբեր մոտեցումներ տեղ են գտել մասնագիտական գրականության մեջ: Այսպես, սկսած XIX դարից պետության տարածքի իրավաընկալման վերաբերյալ տարբեր մոտեցումներ են ներկայացվել: Այսպես, ռուս իրավագետ Վ. Իվանով-սկին նշել է, որ՝ «այն տարածքը, որն զբաղեցնում է ժողովուրդը, պետության կարևոր տարրն է: Եվ այդ առումով որևէ այլ պետություն չի կարող զբաղեցնել երկրի մակերևույթի որևէ մաս, որտեղ ստեղծվել են պետական կազմակերպության հետագա զարգացման ու կատարելագործման համար զանգվածային պայմաններ»³:

Ակնհայտ է, որ հեղինակի կողմից «տարածքը» դիտարկվում է առավելապես պետության կազմակերպման միջոց, բայց ոչ պետության հատկանիշ: Հիշյալ մոտեցման վերաբերյալ իր տեսակետն է արտահայտում պետության և իրավունքի հայտնի տեսաբան Ն.Ս. Կորկունովը՝ անդելով, որ՝ «իրավագետ Վ. Իվանովսկին, սահմանելով պետության իրավական բնութագիրը, այդպես էլ չի դիտարկում տարածքային հատկանիշը որպես պետության հատկանիշ»⁴:

Հետագա տարիների ընթացքում խորացնելով իրենց գիտական պատկերացումները պետության տարածքի վերաբերյալ՝ մասնավորապես, պրոֆեսոր Վ.Ս. Յակուշևի անդամը, դա այն տարածքն է, որի վրա տարածվում է տվյալ պետության իրավազորությունը⁵: Ավելի ընդհանրական սահմանում է տվել

¹ Տե՛ս **Еллинек Г.** Общее учение о государстве. - СПб., 1908, էջ. 103 / Новое издание. - М., 2018, էջ 135:

² Տե՛ս **Дюги Л.** Конституционное право. Общая теория государства. - М., 1908, էջ 128 / Новое издание. - М., 2015, էջ 147:

³ Տե՛ս **Ивановский В.** Государственное право // Известия и ученые записки Казанского университета. 1895, № 5, էջ 71-72:

⁴ Տե՛ս **Коркунов Н.М.** Лекции по общей теории права. - СПб., 1914, էջ 17 / Новое издание. - М., 2020, էջ 15:

⁵ Տե՛ս Теория государства и права / Под ред. **В.С. Якушева.** - М., 2001, էջ 57:

պրոֆեսոր Ս.Ս. Ալեքսեևը, ըստ որի՝ պետության տարածքը՝ որպես բնակչության տարածքային կազմակերպման ձև, այդ տարածքի սահմաններում անմիջականորեն փոխկապակցվում է հանրային իշխանության իրականացման հետ¹:

Կամ, պրոֆեսոր Վ.Ե. Չիրկինը պետության տարածքը դիտարկում է որպես տարածքային գերակայություն, այսինքն՝ «իր տարածքում ժողովրդի լիարժեք իշխանության դրսևորում», ինչը հիմնավորվում է այն հանգամանքով, որ տվյալ տարածքում որևէ այլ իշխանություն չի կարող սահմանափակել տվյալ տարածքի ժողովրդի հանրային իշխանությունը²: Իսկ հայ իրավագետներից պրոֆեսոր Ժ.Դ. Զհանգիրյանը գտնում է, որ՝ «պետության տարածքն անբողջական է, անօտարելի, բացառիկ և անձեռնմխելի»³:

Ակնհայտ է, որ ներկայացվածի համատեքստում «տարածքի» վերաբերյալ գիտական հետազոտությունները չեն կորցրել իրենց արդիականությունը և հատկապես XXI դարում իրավագիտության համար դրանք կարևորվում են հատուկ անհրաժեշտությամբ՝ պայմանավորված աշխարհաքաղաքական ներկայիս իրավիճակով:

Նորովի մոտեցման անհրաժեշտություն ունի Հայաստանի Հանրապետության տարածքի անձեռնմխելիության և տարածքային ամբողջականության վերաբերյալ գիտակցումը:

Այսպես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ «տարածք» եզրույթը հիշատակվում է սահմանադրական տարբեր կարգավորումների շրջանակում. «ՀՀ զինված ուժերի կողմից տարածքային ամբողջականության ապահովումը (հոդվ. 14, մաս 1), պետության տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունքի իրականացումը (հոդվ. 40, մաս 1), տարածքային համաչափ զարգացման վերաբերյալ պետության քաղաքականության նպատակի սահմանումը (հոդվ. 86, կետ 10), Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների սահմանումն ու բաժանումը (հոդվ. 121), կառավարության տարածքային քաղաքականության իրագործումը (հոդվ. 160, մաս 1, 3), տարածքի փոփոխության հարցով Ազգային ժողովի կողմից Սահմանադրական դատարանի դիմելը (հոդվ. 169, մաս 2), համայնքի ավագանու կողմից

¹ Տե՛ս **Алексеев С.С.** Теория государства и права. - М., 2008, էջ 121:

² Տե՛ս **Чиркин В.Е.** Государствоведение. - М.: Юристь, 1999, էջ 95:

³ Տե՛ս 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 82-րդ հոդվածի մեկնաբանությունը // Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ (ընդ. խմբ. Գ Հարությունյանի, Ա. Վաղարշյանի): Եր., 2010, էջ 780:

համայնքի տարածքում պարտադիր կատարման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունումը (հոդվ. 182, մաս 3), հանրաքվեով տարածքի փոփոխության հարցի լուծումը (հոդվ. 205, մաս 1) և այլն:

Հիշատակված սահմանադրական նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ «պետության տարածքի» էությունն ու բովանդակությունն անմիջականորեն բացահայտվում է Սահմանադրության 121-րդ հոդվածի բովանդակությունից, ըստ որի՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են մարզերը և համայնքները: Վարչատարածքային բաժանումը, Կառավարության ներկայացմամբ, սահմանվում է օրենքով»: Թեև պետության տարածքի մաս կազմող ընդերքի և օդային տարածքի մասին Սահմանադրությունում խոսք չի գնում, այդուհանդերձ, անհրաժեշտ է նկատել, որ միջազգային իրավունքով ձևավորված ավանդույթի հիման վրա օրենսդրական կարգավորումների շրջանակում այդ տարածքները ևս դիտարկվում են պետության տարածքի մաս¹, իսկ Սահմանադրության 10-րդ հոդվածի 2-րդ մասը հռչակում է, որ՝ ընդերքը և ջրային ռեսուրսները պետության բացառիկ սեփականությունն են:

Ակներև է, որ «պետության տարածքի» (ցամաքի, ջրային և օդային) որպես սահմանադրաիրավական կատեգորիայի և ինստիտուտի տեսական ու գործնական մոտեցումների վերաիմաստավորման վերաբերյալ հիմնախնդրի առանձնահատկությունը նրանում է, որ դրանով հետաքրքրված են տարբեր գիտակարգերի ներկայացուցիչները, որոնք ձգտում են հասնել ողջ հասարակության գոյության միակ նյութական արժեքի վերաբերյալ խորքային գիտելիքների՝ հետապնդելով տարբեր նպատակներ: Իրավագիտությունը նույնպես գործուն մասնակցություն ունի տարածքի սահմանադրաիրավական կարգավիճակի պարզման, դրա ամբողջականության և միասնականության ապահովման իրավական երաշխիքների մշակման խնդրում:

Այսինքն, ժամանակակից հասարակության և պետության տարածքային կազմակերպման հիմնախնդիրների վերաբերյալ առկա տեսական-իրավական պատկերացումների համատեքստում, կարծում ենք, որ ներկայիս սահմանադրական իրավունքում տարածքի սահմանադրական-իրավական էության և նշանակության վերաբերյալ գերակշռում է պարզունակ այն մոտեցումը, ըստ որի՝ պետության տարածքն

¹ 2011 թվականի նոյեմբերի 28-ի Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգիրքը, «Պետական սահմանի մասին» 2001 թվականի նոյեմբերի 20-ի ՀՕ-265 օրենքը և այլն:

ընկալվում է որպես՝ ցամաքային, ջրային և օդային տարածություն, որը գտնվում է պետության սահմանների շրջանակում և նրա ինքնիշխանության ներքո¹:

Սակայն, անհրաժեշտ է նկատել, որ այդ նույն տարածքի վրա են տարածվում ոչ միայն պետական ինքնիշխանությունը, այլև պետության իրավական կարգադրագրերը, նրա իրավակիրառ ու իրավապահպան գործառնությունները, օրինական հարկադրանքը և արդարադատության իրականացման իրավասությունը:

Միաժամանակ, տեսական նման պատկերացումների բազմազանության պարագայում դեռևս պետության տարածքի սահմանադրաիրավական էությունն ու նշանակությունը լիարժեք չեն արտացոլում այդ տարածքի սահմանադրաիրավական իմաստն ու բովանդակությունը, քանի որ, որպես կանոն, հաշվի չեն առնվում այդ հիմնախնդրի բարդ ու բազմակողմանի հատկանիշները, ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր իրավունքում:

Ի տարբերություն մասնավոր իրավական մոտեցման, որը պետության տարածքը դիտարկում է որպես սեփականության կամ քաղաքացիաիրավական շրջանառության օբյեկտ, հանրային իրավական մոտեցումը բացահայտում է տարածքի էությունն ու բովանդակային առանձնահատկությունները, սահմանում է տարածքը որպես պետության գոյության նյութական հիմք, որպես ժողովրդի (ազգի) ինքնության նյութական հիմք ու նախադրյալ, որպես ինքնիշխանության և իրավական համակարգի, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասության գործադրման սահման²: Պետության տարածքի հանրային և մասնավոր իրավական մոտեցումների տարանջատման վերաբերյալ արդարացի է մեջբերել գերմանացի միջազգային իրավունքի պրոֆեսոր Լ. Օպենհեյմի տեսակետը պետության տարածքի սեփականության բնույթի վերաբերյալ, ըստ որի՝ «Պետության տարածքը ևս պետության տարածքային սեփականություն է ("territorial property")»: Սակայն, անհրաժեշտ է նկատել, որ «տարածքային սեփականություն» եզրույթը հանրային իրավունքի կատեգորիա է, որը չպետք է շփոթել մասնավոր սեփականության հետ: Այսինքն, պետու-

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք: Գիրք երկրորդ: Եր., 2016, էջ 10:

² Տե՛ս **Барсегов Ю.Г.** Территория в международном праве. - М., 1958; **Бабурин С.Н.** Территория государства. Правовые и геополитические проблемы. - М., 1997; **Клименко Б.М.** Государственная территория. Вопросы теории и практики международного права. - М., 1974 և այլք:

թյան տարածքը միապետի կամ կառավարության կամ նույնիսկ տվյալ պետության ժողովրդի սեփականությունը չէ»¹:

Միաժամանակ, անհրաժեշտ է կարևորել այն շեշտադրումները, որոնք առնչվում են տարածքի հանրային իրավական բնութագրիչների՝ որպես պետության տարածքային կազմակերպման և հանրային իշխանության մարմինների ձևավորման մասով դրանց ազդեցության, ինչպես նաև տարածքային գերակայության՝ որպես ինքնիշխան պետության հատկանիշի և տարածքային ամբողջականության սկզբունքի հարաբերակցության հետ²:

Չնայած այդպիսի մոտեցումների կարևորությանը, տարածքի հանրային իրավական բնութագրի կողքին գոյություն ունեն նաև տարածքի մարդկային չափումները, որոնք նույնպես արտահայտում են տվյալ տարածքի բնութագրական հատկանիշները: Դրա համար էլ սույն աշխատանքի ուշադրության կենտրոնում են պետական տարածքի սահմանադրաիրավական և մասնավոր իրավական բնութագրական հատկանիշները:

Պետության տարածքը ազգային և միջազգային իրավունքի նորմերով ճանաչված տարածքն է, որը սահմանագծով տարանջատված է այլ ինքնիշխան պետությունների տարածքից, և որի նկատմամբ տարածվում է տվյալ պետության ինքնիշխանությունը, այդ թվում՝ իշխանության գերակայությունը: Այստեղից, պետության տարածքը ոչ միայն իրավաքաղաքական կատեգորիա է, այլ նաև տվյալ ժողովրդի ինքնությունը հաստատող նյութական բաղադրիչ, և միաժամանակ՝ ապրելու և արարելու կենսապայման, որտեղ խոսք կարող է լինել մշակույթի, տնտեսության, իրավական համակարգի և ժողովրդի կենսապահովման այլ պայմանների մասին:

Պետության տարածքը նաև տվյալ ժողովրդի հարատևելու նախապայմանն է, նրա ներկայի ու ապագայի հիմնասյունը: Ժողովրդի պատմական տարածքը ձևավորված է դարերի ընթացքում, օրինակ, հայ ժողովրդի պարագայում հայկական լեռնաշխարհը և նրա սահմանների հստակեցումը տևել է հազարամյակներ՝ ք.ա. III-II հազարամյակների ընթացքում:

¹ Տե՛ս International Law. A Treatise / By **L. Oppenheim**. Sixth Edition. London; New York; Toronto, 1947. էջ 408:

² Մասնավորապես, տե՛ս **Крощ В.И.** Теория конституционного правопользования. - М., 2015, էջ 114-115. **Темираев А.В.** Конституционно-правовое содержание принципа территориальная целостность // Конституционное и муниципальное право. - М., 2017, 4(148), էջ 121-124:

Տարածքը ոչ միայն ժողովրդի, այլ պետության գոյության և բնականոն զարգացման հիմնական գործոնն է: Եվ պատահական չէ, որ հին ու նոր պատերազմների հիմնական պատճառը տարածքն է, որին տիրելու համար անզիջում պայքարում են բոլոր ժամանակներում: Սակայն, պետության տարածքի արժեքանական նշանակությունն առավելապես խարսխված է նրա՝ որպես սահմանադրաիրավական կատեգորիայի, իրավական բովանդակության ու նշանակության վրա: Ավելին, պետության տարածքային ամբողջականության և դրա անվտանգության ապահովման համար, յուրաքանչյուր երկրի Սահմանադրություն (այդ թվում՝ ՀՀ Սահմանադրությունը, հոդվ. 14) սահմանում է տարածքային ամբողջականության ապահովման որոշակի երաշխիքների համակարգ:

Պատմական և ծագումնաբանական առումով ցանկացած պետության տարածքային կազմակերպումը սկսվում է հանրային մարմինների տարածքային բաժանումով (մարզեր, շրջաններ, գավառներ և այլն), իսկ բնակչության բաժանումը ըստ տարածքային պատկանելիության՝ սկսվում է տվյալ երկրի տարածքում հասարակական քաղաքական կյանքում մարդկանց ներգրավմամբ:

Պետության տարածքային կազմակերպման համակարգում բնակչության՝ որպես մարդկանց միավորումների, էթնիկական խմբերի, ազգերի ընդհանրության առկայության պայմաններում տարածքը ձեռք է բերում որոշակի արժեքային նշանակություն, որը հետագա իրավական զարգացումների ընթացքում կազմում է սահմանադրական հիմնարար արժեքային համակարգի բաղկացուցիչ մաս: Հետևաբար, ժամանակակից սահմանադրաիրավական դոկտրին ունեցող պետություններում տարածքը բնութագրվում է որպես հանրային իրավական և մասնավոր իրավական բնութագրական հատկանիշների մեկ միասնական ամբողջություն:

Պետության տարածքային կազմակերպման սահմանադրաիրավական արժեհամակարգը կազմում են նաև ոչ միայն տնտեսական, սոցիալական, մշակութային, ազգային-պատմական, այլև՝ իրավական բնութագրիչները, որոնք որպես կանոն, ամրագրված են սահմանադրաիրավական նորմերում և սկզբունքներում: Այս առումով, պետական տարածքի իրավական բնութագրիչների առանձնահատկությունը պայմանավորված է նրանով, որ դրանք ամրագրված են ոչ միայն հիմնական օրենքներում, այնպես էլ միջազգային պայմանագրերում և միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներում, որոնք կազմում

1(113)2024

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ

են տվյալ պետության ողջ իրավական համակարգի բաղկացուցիչ մասը¹:

Այսպիսով, պետության տարածքը՝ որպես սահմանադրաիրավական կարգավորման օբյեկտ, ընդհանրացված ձևով կարելի է ներկայացնել սահմանադրական իրավունքի հետևյալ ինստիտուտների տեսանկյունից, որոնցից յուրաքանչյուրն ունի այս կամ այն բովանդակային բնութագիրը.

Առաջին՝ դրանք այն սահմանադրաիրավական ինստիտուտներն են, որոնցում ամրագրված է պետության տարածքային գերակայությունը, ընդ որում դա ենթադրում է, որ ժամանակակից սահմանադրական իրավունքի տեսությունում և պրակտիկայում տարածքային գերակայությունը բնութագրվում է երկակի հատկանիշներով՝ ա) պետության լիիրավ և բացառիկ ինքնիշխանությունը իր տարածքի նկատմամբ (imporium), բ) տարածքը՝ որպես պետության նյութական հիմք, ներառում է ոչ միայն ցամաքը, այլև ներքին և արտաքին ջրերը, օդային տարածությունը (dominium),

Երկրորդ՝ պետական իշխանության տարածքային կազմակերպման ինստիտուտները (պետության տարածքային կառուցվածքը, վարչատարածքային բաժանումը, դրանց առանձնահատկությունները և փոխհարաբերությունները և այլն)².

Երրորդ՝ տեղական ինքնակառավարման համակարգի ինստիտուտները, որը ենթադրում է այնպիսի սահմանադրաիրավական հարցերի լուծումներ, որոնք ունեն տեղական կամ համայնքային նշանակություն, տեղական ինքնակառավարման մարմինների սահմանները և այլն,

Չորրորդ՝ պետական իշխանության իրավասու տարածքային ինստիտուտները, որոնք կոչված են լուծելու համապետական և տեղական ինքնակառավարման միջև առաջացող խնդիրները, տարածքային մարմինների (մարզերի) և տեղական ինքնակառավարման (համայնքների) միջև ծագած հարցերը և այլն.

¹ Մանրամասն տե՛ս **Леванин И.В.** Государственное единство России: теоретико-правовое исследование: дисс. доктора юрид. наук. - М., 2003, 304 էջ: **Остроухов Н.В.** Территориальная целостность государств в современном праве и ее обеспечение в РФ и на постсоветском пространстве: дисс. доктора юрид. наук. - М., 2010, 484 էջ: **Устименко Н.А.** Конституционно-правовые аспекты территориальной целостности РФ: дисс. канд. юрид. наук. - М., 2005, 184 էջ: **Уханкин В.В.** Конституционно-правовой механизм обеспечения государственной целостности РФ: дисс. канд. юрид. наук. - М., 2009, 250 էջ, և ուրիշներ:

² Տե՛ս Территория в публичном праве / **Нарутто С.В., Шугрина Е.С., Исаев И.А., Алебастрова И.А.,** МГЮА им О.Е. Кутафина. - М., 2013, 319 էջ:

Հինգերորդ՝ պետական իշխանության տարածքային այն ինստիտուտները, որոնք լիազորված են լուծելու մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների իրականացման, դրանց պաշտպանության, սոցիալ-մշակութային խնդիրները:

Հասկանալի է, որ թվարկված ինստիտուտները նախ սպառնիչ չեն և բացի դրանից յուրաքանչյուր պետության սահամանադրաիրավական համակարգում դրանք ունեն իրենց առանձնահատկությունները, իրականացման եղանակներն ու նպատակները:

Սակայն, իրենց առանձնահատկություններով պայմանավորված՝ պետության տարածքի ժամանակակից հայեցակարգը ենթադրում է, որ պետության տարածքային գերակայությունը դրսևորվում է միաժամանակ և՛ նյութական, և՛ տարածության առումով¹: Ընդ որում, պետության՝ որպես իրավունքի սուբյեկտի համար տարածքը գոյություն ունի անդադար, կրում է շարունակական բնույթ, որի սահմաններից դուրս անիմաստ է պետության գոյությունը: Հետևաբար, դա հավասարապես վերաբերում է հանրային իշխանության բոլոր սուբյեկտներին (պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմիններին):

Այնուհետև, ցանկացած պետական-քաղաքական կազմակերպության բնակչությունը բաժանված է տարածքային հատկանիշով, սակայն անձի իրավական կարգավիճակը պայմանավորված չէ տարածքային բաժանման բուն փաստով, այլ այն սահմանված է երկրի Սահմանադրությամբ՝ անկախ տարածքի այս կամ այն վայրում գտնվելու փաստից;

Պետության և բնակչության տարածքային կազմակերպումը, այդ թվում տեղական ինքնակառավարման մարմինների համայնքային կազմակերպումը, ենթադրում է դրանց գործուն ազդեցությունը պետական և տեղական ինքնակառավարման ինստիտուտների, անձի իրավական կարգավիճակի ինստիտուտների գործառնությունների վրա: Այդ առումով, պետության և բնակչության տարածքային կազմակերպումն իրենից ներկայացնում է համապարփակ միջոց, որն ապահովում է առավել բարենպաստ պայմաններ հասարակության արդյունավետ կառավարման և մարդու իրավունքների ու ազատությունների երաշխավորված պաշտպանության համար:

Այսպիսով, ամփոփելով կարելի է եզրակացնել, որ՝

¹ Ст'у Территория в публичном праве, նույն աշխ., էջ 97-98:

1) պետության տարածքն ընկալվում է որպես՝ ա) պետության պարտադիր հատկանիշ, բ) պետության՝ որպես քաղաքական կազմակերպության անքակտելի մաս, գ) պետության գոյության անհրաժեշտ ու բնական պայման, դ) պետության մեջ հասարակության կազմակերպման նյութական հիմք,

2) այդ տարածքի պաշտպանությունը, այսինքն՝ պետության միասնականության և տարածքային ամբողջականության ապահովումը պետությունների անքակտելի որակական հատկանիշներն են, միաժամանակ, միմյանց փոխլրացնող և փոխպայմանավորված սահմանադրական արժեքներ, որոնք ապահովվում են սահմանադրաիրավական երաշխիքներով և այլ կառուցակարգերով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ (ընդ. խմբ. **Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի**): Եր., 2010, 1086 էջ:

2. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք: Գիրք երկրորդ: Եր., 2016, 345 էջ:

3. **Алексеев С.С.** Теория государства и права. - М., 2008, 457 էջ:

4. **Барсегов Ю.Г.** Территория в международном праве. - М., 1958, 268 էջ:

5. **Бабурин С.Н.** Территория государства. Правовые и геополитические проблемы. - М., 1997, 325 էջ:

6. **Дюги Л.** Конституционное право. Общая теория государства. - М., 1908 / Новое издание. - М., 2015, 244 էջ:

7. **Ивановский В.** Государственное право // Известия и ученые записки Казанского университета. 1895, № 5, էջ 71-72:

8. **Клименко Б.М.** Государственная территория. Вопросы теории и практики международного права. - М., 1974, 278 էջ:

9. **Коркунов Н.М.** Лекции по общей теории права. - СПб., 1914, էջ 17-18: Новое издание. - М., 2020, 479 էջ:

10. **Кросс В.И.** Теория конституционного правопользования. - М., 2015, 390 էջ:

11. **Леванин И.В.** Государственное единство России: теоретико-правовое исследование: дисс. доктора юрид. наук. - М., 2003, 304 էջ:

12. **Нарутто С.В., Шугрина Е.С., Исаев И.А., Алебастрова И.А.** Территория в публичном праве / МГЮА им О.Е. Кутафина. - М., 2013, 319 էջ:
13. **Остроухов Н.В.** Территориальная целостность государств в современном праве и ее обеспечение в РФ и на постсоветском пространстве: дисс. доктора юрид. наук. - М., 2010, 484 էջ:
14. Теория государства и права / Под ред. **В.С. Якушева.** - М., 2001, 425 էջ:
15. **Чиркин В.Е.** Государствоведение. - М.: Юрист, 1999, 547 էջ:
16. **Устименко Н.А.** Конституционно-правовые аспекты территориальной целостности РФ: дисс. канд. юрид. наук. - М., 2005, 184 էջ:
17. **Уханкин В.В.** Конституционно-правовой механизм обеспечения государственной целостности РФ: дисс. канд. юрид. наук. - М., 2009, 250 էջ:
18. International Law. A Treatise / By **L. Oppenheim.** Sixth Edition. London; New York; Toronto, 1947. էջ 408:

ГОСУДАРСТВЕННАЯ ТЕРРИТОРИЯ КАК ОБЪЕКТ КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ

Аннотация

В статье представлена конституционно-правовая доктрина государственной территории. В связи с этим государственная территория как объект конституционно-правового регулирования рассматривается сквозь призму базовых институтов конституционного права, в частности, с точки зрения единства режимов *Imperium* и *dominium* - как конституционного проявления территориального верховенства, взаимосвязи статусов “человека” и “гражданина” в системе территориальной организации общества и государства.

Ключевые слова: территория, государство, Конституция, правовой суверенитет, территориальный суверенитет.

STATE TERRITORY AS AN OBJECT OF LEGAL CONSTITUTIONAL REGULATION

Annotation

The author presents a legal constitutional doctrine of state territory in the unity of public and personal characteristics. Thus, territory as an object of legal constitutional regulation is viewed in several ways through the prism of basic institutions of constitutional law, through the unity of imperium and dominium modes as a constitutional manifestation of territorial supremacy, through the interaction of two statuses: person and citizen in the system of territorial organization of state and society.

Keywords: state, Constitution, jurisdictional sovereignty, territorial sovereignty.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 27.02.2024 թ., փրվել է գրախոսության 01.03.2024 թ., ընդունվել է տպագրության 07.03.2024 թ.:

DOI: 10.59560/18291155-2024.1-151



ՇՈՂԵՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության
ծառայության կազմակերպման
վարչության հրահանգիչ,
Հայ-ռուսական համալսարանի
քաղաքագիտության ամբիոնի հայցորդ

**ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ամփոփագիր

Տեղեկատվության ազատության իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է, որի պատշաճ օրենսդրական կարգավորման և իրականացման մեխանիզմների բացակայության պայմաններում էապես դժվարանում է նաև այլ՝ հարակից իրավունքների իրականացումը: Սույն հոդվածը միտված է Հայաստանի Հանրապետությունում մասսայական տեղեկատվության ազատության սահմանադրաիրավական երաշխիքների ուսումնասիրությանը: Ոլորտը կարգավորող օրենսդրության ուսումնասիրությունը թույլ է տվել բացահայտել, որ մասսայական տեղեկատվության ազատության հայեցակարգի օրենսդրական ամրագրումը միակողմանի է և ամբողջովին չի արտացոլում անհատի, հասարակության և պետության շահերի հավասարակշռության ապահովման երաշխիքների սահմանադրորեն հիմնավորված անհրաժեշտությունը:

Հիմնաբառեր. Սահմանադրություն, երաշխիք, տեղեկատվության ազատություն, հիմնարար իրավունքներ, մասսայական տեղեկատվություն:

1. «Երաշխիք» հասկացության ծագումնաբանությունն ու հիմնական սահմանումները

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 1(113)2024

«Երաշխիք» բառը ծագել է ֆրանսերեն «garantie» բառից և թարգմանվում է որպես ապահովում, պաշտպանություն¹: Հասկացությունը մշակվել է երկար տարիներ և ներկայացնում է սերունդների գիտական մտքի ձեռքբերումները:

Պ.Պ. Գլուշչենկոն և մի շարք այլ հեղինակներ երաշխիքները սահմանում են որպես տնտեսական, քաղաքական, գաղափարական և իրավական միջոցներ, որոնք ապահովում են այդ իրավունքների և շահերի շարունակական բարելավումը, դրանց իրականացումը և անհրաժեշտության դեպքում՝ արդյունավետ պաշտպանությունը: Ս.Ն. Բուլդիրը ձևակերպում է հետևյալ սահմանումը. «Երաշխիքներն այն ընդհանուր պայմաններն ու իրավական տեխնիկայի հատուկ միջոցներն են, որոնք ապահովում են փաստացի իրականացում, հուսալի պաշտպանություն, իսկ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների խախտման դեպքում՝ վերջիններիս պաշտպանությունը»²: Ս.Վ. Իվանովը երաշխիքները սահմանում է որպես մի շարք պայմաններ, միջոցներ, մեթոդներ, որոնք նախատեսված են ինչ-որ բան ապահովելու համար, իսկ սահմանադրական-իրավական երաշխիքը՝ որոշակի երևույթ սահմանադրական իրավունքի ոլորտում, առանց որի հնարավոր օբյեկտի անվտանգությունը չի կարող ապահովվել կամ առանց որի դրա արդյունավետությունը անբավարար կլինի³: Ըստ Ա.Գ.Վաղարշյանի՝ մարդու իրավունքների երաշխիքները պայմաններ, կառուցակարգեր, եղանակներ ու միջոցներ են՝ ուղղված իրավունքների և ազատությունների կենսագործմանը, դրանց պահպանությանը և պատշաճ պաշտպանությանը: Առանց երաշխիքների մարդու իրավունքները կմնան բարի ցանկություն, պատվիրան և չեն կարող կատարել իրենց հասարակական առաքելությունը: Այդ երաշխիքների համակարգում կարևոր տեղ են գրավում իրավականները: Դրանք Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված մարդու իրավունքներն են, դրանց իրականացման կարգը, պահպանության և պաշտպանության իրավական միջոցները, կառուցակարգերը⁴:

¹ Տե՛ս Dictionnaire Français-Russe: Larousse. Paris. 2005. pg. 193:

² Տե՛ս **Болдырев С.Н.** Гарантии как технико-юридические средства обеспечения прав и свобод личности // Общество и право. 2010. № 5. - С. 21:

³ Տե՛ս **Иванов С.В.** Понятие и сущность конституционно-правовых гарантий // Вестник Омского университета. Сер.: Право. 2016. № 2. - С. 68:

⁴ Տե՛ս **Վաղարշյան Ա.Գ.**, Մարդու իրավունքների ու ազատությունների կենսագործման և սահմանափակման սահմանադրական նորամուծությունները (համակարգային և ձևական իրավաբանական մեկնաբանություն), էջ 1:

2. Մասսայական տեղեկատվության ազատության իրավական երաշխիքները

Մասսայական տեղեկատվության ազատության իրավական երաշխիքներն անքակտելիորեն կապված են տեղեկատվական իրավունքների և ազատությունների երաշխիքների հետ: Տեղեկատվական իրավունքի հիմքը, դրա իրավական հենքերը, առաջին հերթին, տեղեկատվական իրավունքներն ու ազատություններն են, որոնց երաշխիքների ապահովումը հանդիսանում է իրավունքի նոր ճյուղի՝ տեղեկատվական իրավունքի նպատակը:

Տեղեկատվության ազատության իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է, որի պատշաճ օրեսդրական կարգավորման և իրականացման մեխանիզմների բացակայության պայմաններում մարդու համար էապես կոժվարանա նաև այլ իրավունքների իրականացումը: Կարևորելով տեղեկություն ստանալու իրավունքը՝ ամբողջ աշխարհում, ինչպես նաև մեր երկրում, ընդունվել են տեղեկատվության ազատության վերաբերյալ մի շարք իրավական ակտեր:

Խոսքի, կարծիքի և տեղեկատվության ազատությունը դասվում է քաղաքակրթության համեմատաբար նոր ձեռքբերումների շարքին: Մարդկության պատմության մեծ մասն ընթացել է այդպիսի ազատության ժխտման և այն կարծիքի ու խոսքի սահմանափակման պայմաններում, որոնք բնակչության մեծամասնության կամ իշխող դասակարգերի կողմից համարվում էին վնասակար, վտանգավոր կամ կեղծ: Խոսքի ազատության սկիզբը դրեց անգլիական 1689 թվականի Իրավունքների մասին բիլլը: Այնուհետև այն արտացոլվեց 1787 թվականի ԱՄՆ-ի Սահմանադրության առաջին փոփոխության մեջ, և աստիճանաբար 20-րդ դարի սկզբին եվրոպական երկրների մեծ մասն իր սահմանադրական ակտերում երաշխավորեց այդ ազատությունը¹:

1789 թվականի Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրում (Ֆրանսիա) ասվում է. «Յուրաքանչյուր պետական միավորման նպատակն է ապահովել մարդու բնական և անօտարելի իրավունքները»:

Այս փաստաթղթերը, որոնք մինչ օրս գործում են իրենց երկրներում, հետագայում հիմք են հանդիսացել միջազգային փաստաթղթերի համար, իսկ վերջիններս, իրենց հերթին, դարձել են ներպետական իրավական ակտերի մոդելներ՝ դրանով իսկ մատնանշելով ներպետական և միջպետական իրավունքի փոխկախվածությունը:

¹ Տե՛ս Հարությունյան Գ.Գ., Վաղարշյան Ա.Գ., «Սահմանադրության մեկնաբանություններ: Եր., 2010թ.:

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ 1(113)2024

Ինչպես նշել է Վ.Ե. Չիրկինը, սկսած 1789 թվականի Մարդու և քաղաքացու իրավունքների ֆրանսիական հռչակագրից, աշխարհի երկրների սահմանադրությունների մեծ մասը սկսեցին պարունակել նորմեր՝ կապված մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի հետ, ներառյալ տեղեկատվության իրավունքը:

Ազատությունը, ներառյալ լրատվամիջոցների ազատությունը, առանձին պետությունում չի կարող գոյություն ունենալ համաշխարհային հանրության այլ պետություններից մեկուսացված և չի կարող չհենվել որոշ ընդհանուր սկզբունքների, հիմքերի, ընդհանուր նախադրյալների վրա: Իսկ այդպիսի նախադրյալները հենց միջազգային ու միջպետական ակտերն են:

3. Մասսայական տեղեկատվության ազատությունը Հայաստանի Հանրապետությունում

Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվության ազատության իրավունքը կարգավորվում է ՀՀ կողմից վավերացված միջազգային-իրավական ակտերով, ՀՀ Սահմանադրությամբ, «Տեղեկատվության ազատության մասին», «Զանգվածային լրատվության մասին», «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին», «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով:

Որպես մի շարք միջազգային կազմակերպությունների անդամ՝ ՀՀ-ն ստորագրել է մարդու իրավունքներին վերաբերող կարևորագույն միջազգային փաստաթղթեր՝ դրանով իսկ պարտավորվելով հարգել մարդու իրավունքները, այդ թվում՝ արտահայտվելու և տեղեկատվության ազատության իրավունքները:

Մարդու իրավունքները սահմանող հիմնական միջազգային իրավական փաստաթղթերից են «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը», «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան և «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային համաձայնագիրը»: Տեղեկություն փնտրելու և ստանալու իրավունքը հռչակվում է «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 19-րդ¹, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին»

¹ Տե՛ս The Right to Access to Public Information in the Americas: Specialized Supervisory and Enforcement Bodies <http://www.oas.org/en/iachr/expression/docs/reports/access/thematic%20report%20access%20to%20public%20information%202014.pdf>

Եվրոպական կոնվենցիայի 10-րդ¹, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային համաձայնագրի» 19-րդ² հոդվածներով:

Որպես ՄԱԿ-ի անդամ՝ Հայաստանը միացել է 1948 դեկտեմբերի 10-ի ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից ընդունված «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին»: Հռչակագրի 19-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի համոզմունքների ազատության և դրանք անկաշկանդ արտահայտելու իրավունք, այդ իրավունքը ներառում է իր համոզմունքներին հավատարիմ մնալու ազատությունը և ցանկացած միջոցներով ու պետական սահմաններից անկախ տեղեկատվություն և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը»:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը», որը ՀՀ կողմից վավերացվել է 1993 թվականի սեպտեմբերի 23-ին, 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի առանց միջամտության սեփական կարծիք ունենալու, ազատ արտահայտվելու իրավունք, որն ընդգրկում է, անկախ պետական սահմաններից, ցանկացած տեսակի տեղեկատվություն և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը, լինեն դրանք բանավոր, գրավոր, թե՛ տպագիր, թե՛ իր ընտրած ցանկացած այլ միջոցով: 19-րդ հոդվածի 3-րդ մասով Դաշնագիրը նախատեսում է նաև 2-րդ մասի նկատմամբ սահմանափակումներ՝ կապված այլ անձանց իրավունքները կամ հեղինակությունը հարգելու, պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության, բարոյականության պաշտպանության հետ: Սույն հոդվածն իր մեկնաբանումն է ստացել ՄԱԿ-ի՝ 2011 թվականի Մարդու իրավունքների կոմիտեի կողմից մշակված ուղեցույցում: Անդրադառնալով տեղեկատվություն տնօրինողներին, «տեղեկություն» հասկացությանը՝ ուղեցույցը ներառել է նաև դրույթներ հանրային նշանակություն ունեցող պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ: Մասնավորապես, ուղեցույցում նշված է, որ տեղեկատվության ազատության իրավունքի իրականացման համար դաշնագրի մասնակից պետությունները պետք է ակտիվորեն հրապարակայնացնեն հանրային նշանակություն ունեցող պաշտոնական տեղեկությունները, ապահովեն այդպիսի տեղեկատվության հեշտ, արագ, արդյունավետ և պրակտիկ հասանելիությունը: Համաձայն ուղեցույցի՝

¹ Տե՛ս European Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, Rome, 4.XI.1950:

² Տե՛ս International Covenant on Civil and Political Rights, General comment No. 34, Freedoms of opinion and expression, Geneva, (12 September 2011):

մասնակից պետությունները պետք է նաև համապատասխան միջոցներ ձեռնարկեն, որոնց դեպքում կապահովվի տեղեկության մատչելիությունը և տեղեկություններ փնտրելու և ստանալու հնարավորությունը: Այդպիսի միջոց է, օրինակ, տեղեկատվության ազատության վերաբերյալ օրենսդրությունը: Ուղեցույցն արձանագրում է, որ պետք է ժամանակին ընթացք տրվեն տեղեկություն ստանալու հարցումներին՝ դաշնագրով սահմանված կանոններին համապատասխան: Անդրադարձ է կատարվել նաև տեղեկության տրամադրման համար վճարներին՝ սահմանելով, որ դրանք չպետք է այնպիսին լինեն, որ տեղեկության տրամադրման արգելք դառնան: Մասնակից պետությունները պետք է ապահովեն, որ տեղեկության տրամադրումը մերժվի միայն հիմնավոր պատճառներով, ինչպես նաև ստեղծվեն բողոքարկման մեխանիզմներ տեղեկության տրամադրումը մերժելու կամ տեղեկություն ստանալու հարցումներին չպատասխանելու դեպքում¹:

1950 թվականին նորաստեղծ Եվրոպայի խորհուրդը մշակեց միջազգային համաձայնագիր, որը կարգավորում էր մարդու իրավունքները և հիմնական ազատությունները Եվրոպայում: 2001 թվականի հունիսի 25-ին ՀՀ-ն, միանալով Եվրոպայի խորհրդին, իր անդամակցության արարողության պահին ստորագրեց «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան: Կոնվենցիայի 10-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու, տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում»:

Կոնվենցիան նախատեսում է նաև թույլատրելի սահմանափակումներ, եթե դրանք ծառայեցվում են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես նաև այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու

¹ St'u International Covenant on Civil and Political Rights, General comment No. 34, Freedoms of opinion and expression, Geneva, (12 September 2011):

անաչառությունը պահպանելու համար¹: Այսինքն, եթե սահմանափակումները համաչափ են:

2009 թ.-ի հունիսի 18-ին Եվրոպայի խորհրդի կողմից ընդունվեց կարևորագույն մի փաստաթուղթ՝ «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին կոնվենցիան», որը պաշտոնական փաստաթղթերի հասանելիության համապարփակ իրավունքը հաստատող առաջին փաստաթուղթն էր: Կոնվենցիան ուժի մեջ է մտել 2020 թվականին և ՀՀ-ի կողմից ստորագրվել նույն թվականի հունիսի 24-ին²: Կոնվենցիան սահմանում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման, ինչպես նաև հանրային նշանակության մարմինների պաշտոնական փաստաթղթերի մատչելիությունը և կարգավորում է դրա հետ կապված ընդհանուր իրավահարաբերությունները: Համաձայն նախաբանի՝ կոնվենցիան ընդունվել է՝ հաշվի առնելով պետական մարմինների թափանցիկության կարևորությունը բազմակարծ և ժողովրդավարական հասարակությունում, ինչպես նաև այն, որ «պաշտոնական փաստաթղթերի հասանելիության իրավունքի գործադրումը հանրության համար տեղեկատվության աղբյուր է, օգնում է հանրությանը կարծիք կազմել հասարակության վիճակի և պետական մարմինների վերաբերյալ, նպաստում է պետական մարմինների ազնվությանը, արդյունավետությանը և հաշվետվողականությանը՝ դրանով իսկ օգնելով նրանց լեգիտիմության հաստատմանը»: Կոնվենցիան նախատեսում է նաև ազգային օրենսդրությամբ պաշտոնական փաստաթղթերի մատչելիության հնարավոր սահմանափակումներ՝ տարբեր բնագավառներում (ազգային անվտանգություն, պաշտպանություն, միջազգային հարաբերություններ) շահերի պաշտպանության նպատակով³: Այս փաստաթուղթը, մի կողմից ևս մեկ անգամ հաստատելով միջազգային պայմանագրերով և ՀՀ ներպետական օրենսդրությամբ սահմանված՝ տեղեկատվության ազատության հիմնարար իրավունքը, մյուս կողմից սահմանում է պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների, մեկ բառով՝ իշխանության բաց և թափանցիկ աշխատելու պարտականությունը և իշխանության իրական կրողի՝ ժողովրդի կողմից վերահսկելի լինելու սկզբունքը:

¹ Տե՛ս European Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, Rome, 4.XI.1950:
² Տե՛ս Ստորագրվել է Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան [15.08.2021] www.1lurer.am
³ Տե՛ս The Council of Europe Convention on Access to Official Documents, (Tromsø, 18.VI.2009):

Մարդու իրավունքների երաշխավորման գործում մեծ է Սահմանադրության դերը, որը պարունակում է բարձրագույն իրավական ուժ ունեցող երաշխիք-հոդվածներ: Ամենից ընդհանուր երաշխիքը սահմանադրական կարգն է, նրա համընդհանուր ճանաչում գտած սկզբունքներն ու նորմերը և, անշուշտ, դրանց անշեղ պահպանությունը: Սահմանադրական այդ երաշխիքից բխում են հիմնական իրավունքների և ազատությունների ապահովման որոշակի հնարավորություններ մարդկանց համար և որոշակի պարտականություններ՝ պետության համար: Մարդու իրավունքների ճանաչումը, պահպանությունը, ապահովումը և պաշտպանությունը պետության պարտականությունն է¹:

«Սահմանադրության 42-րդ հոդվածը սահմանում է կարծիքի արտահայտման ազատությունը. «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք, որը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը»:

Քննարկվող հոդվածը խոսքի ազատության բովանդակային բաղադրատարր է դիտարկում տեղեկատվության ազատության իրավունքը: Այդ իրավունքի սահմանադրական բովանդակությունից բխում է, որ Մարդը կարող է ազատորեն փնտրել, ստանալ, տարածել տեղեկություններ, գաղափարներ՝ տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Տեղեկություններ ստանալու իրավունքը երաշխավորվում է Սահմանադրության 51-րդ հոդվածով. «Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք»:

33-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորվում է հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը. «Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունք»: 2-րդ մասը նախատեսում է հաղորդակցության ազատության և գաղտնիության թույլատրելի սահմանափակումներ՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ

¹ Տե՛ս **Վաղարշյան Ա.Գ.**, Մարդու իրավունքների ու ազատությունների կենսագործման և սահմանափակման սահմանադրական նորամուծությունները (համակարգային և ձևական իրավաբանական մեկնաբանություն), էջ 2:

բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Անձնական տվյալների պաշտպանությունը սահմանում է Սահմանադրության 34-րդ հոդվածը: Այն երաշխավորում է անձի՝ իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունքը՝ նախատեսելով թույլատրելի սահմանափակումներ: Անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն՝ անձի համաձայնությամբ: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ծանոթանալու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իր մասին հավաքված տվյալներին և պահանջելու ոչ հավաստի տվյալների շտկում, ինչպես նաև ապօրինի ձեռք բերված կամ այլևս իրավական հիմքեր չունեցող տվյալների վերացում: Անձնական տվյալներին ծանոթանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով¹:

Թեև Սահմանադրության վերոնշյալ հոդվածները երաշխավորում են ՀՀ-ում տեղեկատվության ազատության իրավունքը, սակայն Սահմանադրությունն ինքնին առանց այլ օրենքների ընդունակ չէ լուծելու իրավական կարգավորման խնդիրները:

Սահմանադրությունը հիմնական օրենքն է, ունի հիմնադիր բնույթ: Սահմանադրության ընդունումը չի նշանակում, որ դրա իրավական գաղափարներն ու նորմերը, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների մասին դրույթներն արդեն իրականություն են: Սահմանադրությունն ամրագրում է հասարակական հարաբերությունների վրա իրավական ներգործության ցանկալի տեսլականը, որի իրականության վերաձելն ու հասարակական հարաբերությունները սահմանադրականացնելը պահանջում են պետաիրավական ակտիվ գործունեություն: Սահմանադրական հիմնադրույթները և պահանջները սոցիալական պրակտիկայում կենսագործելու բազմափուլ ճանապարհի առաջին օղակն են: Հիմնական օրենքի դրույթների հետագա զարգացումը կատարվում է այլ նորմատիվ փաստաթղթերի միջոցով²:

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (06.12.2015 թ., ուժի մեջ է մտել 22.12.2015 թ., ՀՀՊՏ 2015.12.21):

² Տե՛ս **Վաղարշյան Ա.Գ.**, Մարդու իրավունքների ու ազատությունների կենսագործման և սահմանափակման սահմանադրական նորամուծությունները (համակարգային և ձևական իրավաբանական մեկնաբանություն), էջ 3:

1(113)2024
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ

ՀՀ-ում տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով:

Օրենքի 4-րդ հոդվածը որպես տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքներ է սահմանում տեղեկությունները գրանցելու, դասակարգելու և պահպանելու միասնական կարգի սահմանումը, տեղեկություններ փնտրելու և ստանալու ազատության պաշտպանությունը, տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովումը և հրապարակայնությունը:

Սկզբունքները երաշխավորում են տեղեկատվություն ստանալու և տարածելու իրավունքը՝ առանց պետության կողմից անհիմն սահմանափակումների:

Մասնավորապես, 8-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը և առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաև տարերային (ներառյալ՝ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին և դրանց հետևանքներին, ներկայացնում է ՀՀ տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առևտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը, ինչպես նաև եթե վերջինիս չտրամադրելը բացասական ազդեցություն կունենա ՀՀ սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական և հոգևոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա¹:

Թեև օրենքը կարգավորում է տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները, սահմանում տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկատվություն տնօրինողների իրավասությունները, ինչպես նաև տեղեկություններ ստանալու կարգը, ձևերը և պայմանները, սակայն ունի մի շարք բացթողումներ, որոնք խոչընդոտում են տեղեկատվական իրավունքի պատշաճ իրականացմանը:

Մասնավորապես, մի շարք երկրներ տեղեկատվության ազատության օրենքով նախատեսում են վերահսկման հատուկ մասնագիտացված մարմին, որը կոչվում է Տեղեկատվության ազատության հարցերի հանձնաժողով (երբեմն՝ Հանձնակատար, եթե պաշտոնը միանձնյա է): Որոշ երկրներում այս դերը հատկացված է արդեն իսկ գոյություն ունեցող

¹ Տե՛ս «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-11-Ն, 23.09.2003 թ.):

հաստատությանը՝ Օմբուդսմենին կամ մարդու իրավունքների պաշտպանության հարցերով հանձնաժողովին¹:

Հայաստանն առայժմ բողոքարկումներով զբաղվելու գործառույթը հատկացրել է Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) գրասենյակին, որը ստեղծվել է 2007 թվականին ընդունված՝ «Մարդու իրավունքների պաշպանի մասին» ՀՀ օրենքով: ՄԻՊ-ը մարդու իրավունքների հարցերով մասնագիտացած Օմբուդսմեն է: Հայաստանի տեղեկատվության ազատության ոլորտի օրենսդրությունը որևէ այլ վերահսկողական կամ իրազեկման գործառույթներ (այսինքն՝ բողոքարկումներից զատ) չի տալիս որևէ կենտրոնական մարմնի: Խնդիրն այստեղ կայանում է նրանում, որ ՄԻՊ-ին տրված միակ վերահսկման գործառույթը բողոք-դիմումները լսելն է: Պաշտպանին չի տրվել իրազեկման այն դերը, որը սովորաբար տրվում է մասնագիտացված վերահսկող մարմիններին:

4. Եզրակացություն

Ամփոփելով վերոշարադրյալը՝ գալիս ենք այն եզրահանգմանը, որ մասսայական տեղեկատվության ազատության հայեցակարգի օրենսդրական ամրագրումը միակողմանի է և հավուր պատշաճի չի արտացոլում անհատի, հասարակության և պետության շահերի հավասարակշռության ապահովման երաշխիքների սահմանադրորեն հիմնավորված անհրաժեշտությունը: Կարող ենք փաստել, որ մասսայական տեղեկատվության տարածումն ամրագրող և երաշխավորող նորմատիվ իրավական ակտերի համակարգի առկայությանը զուգահեռ, ներկայումս նույն այդ տեղեկատվությունից պաշտպանվելու իրավունքը չունի պատշաճ իրավական կարգավորում: Առկա իրավական նորմերը, որոնք ուղղված են պաշտպանելու քաղաքացիներին անստույգ, անարժանահավատ և վնասակար տեղեկատվությունից, ոչ համակարգված բնույթ ունեն:

Ստեղծված իրավիճակում, տեղեկատվության տարածման իրավունքն ամրագրող օրենսդրական համակարգի կատարելագործմանը զուգահեռ անհրաժեշտ է տեղեկատվությունից պաշտպանության իրավունքն ամբողջական տեսության մշակում և նորմատիվ իրավական ակտերի կատարելագործում:

¹ Տե՛ս Տեղեկատվության ազատության իրավունքը կարգավորող օրենսդրական շրջանակի վերլուծություն https://foi.am/wp-content/uploads/2023/10/Armenia-Analysis_ARM.pdf

ՍԱԳՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՈՎՈՒՄ 1(113)2024

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն (06.12.2015թ., ուժի մեջ է մտել 22.12.2015թ., ՀՀՊՏ 2015.12.21):
2. **Վաղարշյան Ա.Գ.**, Մարդու իրավունքների ու ազատությունների կենսագործման և սահմանափակման սահմանադրական նորամուծությունները (համակարգային և ձևական իրավաբանական մեկնաբանություն), էջ 1:
3. **Հարությունյան Գ.Գ, Վաղարշյան Ա.Գ.**, ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ: Եր., 2010 թ.:
4. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-11-Ն, 23.09.2003 թ.):
5. Տեղեկատվության ազատության իրավունքը կարգավորող օրենսդրական շրջանակի վերլուծություն https://foi.am/wp-content/uploads/2023/10/Armenia-Analysis_ARM.pdf
6. Ստորագրվել է Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան [15.08.2021] www.1lurer.am
7. **Болдырев С.Н.** Гарантии как технико-юридические средства обеспечения прав и свобод личности // Общество и право. 2010. № 5. - С. 21.
8. **Иванов С.В.** Понятие и сущность конституционно-правовых гарантий // Вестник Омского университета. Сер.: Право. 2016. № 2. - С. 68.
9. Dictionnaire Français-Russe: Larousse. Paris. 2005. pg. 193.
10. European Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, Rome, 4.XI.1950.
11. International Covenant on Civil and Political Rights, General comment No. 34, Freedoms of opinion and expression, Geneva, (12 September 2011).
12. The Council of Europe Convention on Access to Official Documents, (Tromsø, 18.VI.2009).
13. The Right to Access to Public Information in the Americas: Specialized Supervisory and Enforcement Bodies <http://www.oas.org/en/iachr/expression/docs/reports/access/thematic%20report%20access%20to%20public%20information%202014.pdf>

КОНСТИТУЦИОННО-ПРАВОВЫЕ ГАРАНТИИ СВОБОДЫ МАССОВОЙ ИНФОРМАЦИИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Аннотация

Наличия декларации прав человека недостаточно, важна также реализация этих прав, то есть создание благоприятных условий для их осуществления, обеспечение их защиты, устранение барьеров, мешающих людям использовать свои возможности. Другими словами, права человека должны быть гарантированы.

Право на свободу информации является одним из фундаментальных прав человека, и при отсутствии должного законодательного регулирования и механизмов его реализации человеку будет существенно сложно осуществлять и другие права.

Целью данной статьи является исследование конституционно-правовых гарантий свободы массовой информации в Республике Армения.

Исследование законодательства, регулирующего эту сферу, позволяет выявить, что законодательно закрепленное понятие свободы массовой информации является односторонним и не отражает в достаточной мере конституционно обоснованную необходимость соблюдения баланса интересов личности, общества и государства.

Ключевые слова: Конституция, гарантии, свобода информации, основные права, массовая информация.

CONSTITUTIONAL AND LEGAL GUARANTEES OF FREEDOM OF MASS INFORMATION IN THE REPUBLIC OF ARMENIA

Annotation

In addition to the Declaration of Human Rights, it is important to implement them; that is, to create favorable conditions for their implementation, to ensure their preservation and protection, and to eliminate the obstacles that prevent people from utilizing their opportunities. In other words, human rights must be guaranteed.

The right to freedom of information is one of the fundamental human rights, and in the absence of proper legislative regulation and implementation mechanisms, it will be significantly difficult for a person to realize other rights as well.

This article aims to study the constitutional and legal guarantees of mass media freedom in the Republic of Armenia.

The study of the legislation regulating the field has revealed that the legislative fixation of the concept of freedom of mass media is one-sided and does not fully reflect the constitutionally justified need to guarantee the balance of the interests of the individual, society, and the state.

Keywords: Constitution, guarantee, freedom of information, fundamental rights, mass information.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 18.03.2024 թ., փրվել է գրախոսության 18.03.2024 թ., ընդունվել է տպագրության 28.03.2024 թ.:

DOI: 10.59560/18291155-2024.1-165



ԼՈՒՍԻՆԵ ՔՈՍՅԱՆ

ՀՀ Դատական դեպարտամենտի
Իրավական ակտերի մշակման և
փորձաքննությունների վարչության
գլխավոր մասնագետ,
Հայաստանում ֆրանսիական համալսարանի
իրավագիտության ամբիոնի դասախոս,
իրավագիտության մագիստրոս

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
«ՔՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ» ՊԱՀԱՆՋՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ
ՍԿՋՐՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

Ամփոփագիր

2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրությամբ ֆիզիկական և իրավաբանական անձանց Սահմանադրական դատարան անմիջականորեն դիմում ներկայացնելու հնարավորության նախատեսումից ի վեր այդ եղանակով մարդու իրավունքների պաշտպանության հիմնահարցերը հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց ձեռք են բերել մեծ կարևորություն և համակարգային կարգավորման անհրաժեշտություն:

Միննույն ժամանակ, պետք է նշել, որ, պայմանավորված այն հանգամանքով, որ Սահմանադրական դատարանում գործի քննության միակ առիթը օրենքով սահմանված պահանջներին համապատասխանող դիմումն է, ուստի առավել կարևորվում է այդ պահանջների սահմանադրաիրավական բովանդակության ուսումնասիրումն ու բացահայտումը:

Ընդ որում, ի տարբերություն Սահմանադրական դատարան դիմում ներկայացնող մյուս սուբյեկտների, ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից կոնկրետ գործով վերջնական դատական ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի սահմանադրականությունը որոշելու վերաբերյալ ներկայացվող դիմումներին

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1(113)2024

սահմանադրական և օրենսդրական մակարդակով ներկայացվում են առավել «խիստ» պահանջներ, որոնց պահպանության դեպքում միայն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից ներկայացված դիմումը ըստ էության քննության կառնվի Սահմանադրական դատարանի կողմից:

Ուստի, սույն հոդվածի նպատակը անհատական դիմումներին ներկայացվող «բովանդակային» պահանջների, դրանց սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումն է, Սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումների նախնական ուսումնասիրության արդյունքում ձևավորած իրավակիրառ պրակտիկայի և այդ հարաբերությունները կարգավորող սահմանադրական և օրենսդրական կարգավորումների համադրված ուսումնասիրությունն է, ինչը միայն թույլ կտա հստակեցնել այն պահանջները, որոնց պետք է համապատասխանի Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումը:

Հիմնաբառեր. անհատական դիմում, սահմանադրականություն, դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառում, վերջնական դատական ակտ, օրենքի դրույթի կիրառում, իրավունքի խախտում, պատճառահետևանքային կապ:

Սույն հոդվածի շրջանակներում իրականացված ուսումնասիրության նպատակն է սահմանադրական կոնկրետ վերահսկողության միջոցով մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմի՝ «անհատական դիմումներին», որպես ինստիտուտի, էության և անհատական դիմումներին ներկայացվող պահանջների և քննության առանձնահատկությունների բացահայտումը:

Ինչպես բազմաթիվ պետությունների սահմանադրություններում և օրենսդրական ակտերում, այնպես էլ Հայաստանի Հանրապետության դեպքում Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված են անհատական սահմանադրական գանգատների ընդունման կոնկրետ նախապայմաններ, որոնք պահպանելու դեպքում միայն անհատական դիմումը կարող է վարույթ ընդունվել և քննության առնվել Սահմանադրական դատարանի կողմից:

Այդպիսի նախապայմանների, այլ կերպ ասած՝ սահմանադրական անհատական դիմումին ներկայացվող պահանջների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջիններս ապահովում են, մի կողմից, անձանց սահմանադրական դատարան դիմելու մատչելիությունը, մյուս կողմից, թույլ են տալիս սահմանադրական դատարանում քննության առարկա դարձնել միայն այնպիսի հարցեր, որոնք իրավամբ սահմանադրականության խնդիր են բովանդակում:

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող են դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասը, կրկնելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում ամրագրված կարգավորումը, սահմանում է, որ սույն հոդվածում նշված գործերով դիմում (այսուհետ՝ անհատական դիմում) կարող է ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը¹:

Այսպիսով վերոնշյալ նորմերի ուսումնասիրությունը թույլ է տալիս, որպես սահմանադրական անհատական զանգատներին ներկայացվող պահանջներ, առանձնացնել հետևյալ չափանիշները.

1. Ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարաններում դիմողը հանդիսացել է դատավարության մասնակից,
2. Դիմողի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով կիրառվել է որևէ օրենքի դրույթ,
3. Դիմողը սպառել է ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,
4. Դիմողը վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև

¹ Տե՛ս «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենք, ընդունվել է 2018 թվականի հունվարի 17-ին, ՀՕ-42-Ն օրենքով, 69-րդ հոդվածի 1-ին մաս:
 Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=172259>

համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը¹:

Ֆիզիկական և իրավաբանական անձանց համար սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունը ծագում է քաղաքացիաիրավական, վարչաիրավական վեճերի կարգավորման, ինչպես նաև քրեական մեղադրանքի կապակցությամբ կայացված վերջնական դատական ակտի և համապատասխանաբար՝ նշված վեճերի և քրեական մեղադրանքի հարցի լուծման իրավագործությամբ օժտված դատական մարմիններում պաշտպանության միջոցները սպառելու արդյունքում:

«Դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառման» պահանջը ենթադրում է համապատասխան դատավարական օրենսդրության նորմերով նախատեսված՝ իր ենթադրյալ խախտված իրավունքի վերականգնման դատավարական բոլոր հնարավորությունների սպառում: Բացի այդ, դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառելու սահմանադրական պահանջից բխում է նաև, որ եթե առկա է եղել որևէ դատական ատյան, որը կարող է(եր) քննել դիմողի կողմից բարձրացված հարցը, սակայն դիմողը չի օգտվել այդ հնարավորությունից, ապա վերջինս չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները²:

Այս տեսանկյունից անհրաժեշտ է նշել, որ բոլոր այն դեպքերում, երբ համապատասխան դատարանը կայացնում է ներկայացված հայցադիմումը, վերաքննիչ բողոքը կամ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում՝ սահմանելով ժամկետ թերությունները շտկելու և այն կրկին ներկայացնելու համար, անձը պարտավոր է դատարանի նշած ժամկետում թերությունները շտկել և այն կրկին ներկայացնել: Այսինքն՝ յուրաքանչյուր դեպքում ֆիզիկական կամ իրավաբանական անձը պետք է

¹ Անհատական դիմումներին ներկայացվող չափանիշներին Սահմանադրական դատարանն անդրադարձել է իր բազմաթիվ որոշումներում, որոնցից է Սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշումը: Սույն որոշման 4-րդ կետում Սահմանադրական դատարանը նշել է անհատական դիմումի՝ Սահմանադրական դատարանում քննության առարկա դառնալու պայմանները:

Հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=50249>

² «Դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառման» անհատական դիմումներին ներկայացվող սահմանադրական պահանջին Սահմանադրական դատարանն անդրադարձել է իր՝ ինչպես Սահմանադրական դատարանի դատական կազմերի, այնպես էլ աշխատակարգային մի շարք որոշումներում, որոնցից են Սահմանադրական դատարանի դատական կազմի 2016 թվականի փետրվարի 26-ի ՍԴԴԿՈ/1-6 որոշումը, 2018 թվականի հունվարի 15-ի ՍԴԴԿՈ/1-2 որոշումը, 2018 թվականի հուլիսի 30-ի ՍԴԴԿՈ/1-19, 2019 թվականի մայիսի 29-ի ՍԴԴԿՈ-27, 2019 թվականի հուլիսի 17-ի ՍԴԴԿՈ-39, 2019 թվականի հոկտեմբերի 24-ի ՍԴԴԿՈ-58 որոշումները, Սահմանադրական դատարանի 2019 թվականի մարտի 29-ի ՍԴԱՈ-23 աշխատակարգային որոշումը:

ձեռնարկի իրենից կախված բոլոր միջոցները համապատասխան դատական ատյանում իր գործի քննության ապահովման համար, հակառակ դեպքում հայցադիմումը, վերաքննիչ բողոքը կամ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի տեսանկյունից չի կարող համարվել որպես դիմողի կողմից բարձրացված հարցի կապակցությամբ վերջնական դատական ակտ և դատական պաշտպանության միջոցների սպառում, քանի որ դիմողը հնարավորություն է ունեցել հայցադիմումում կամ բողոքում մատնանշված ժամկետում սխալները շտկելու և այն կրկին ներկայացնելու համար¹:

Դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառման պահանջը հիմնված է միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի վրա: Այն միջազգային սովորույթային իրավունքի մի մասն է, որը ճանաչվել է այդպիսին Արդարադատության միջազգային դատարանի նախադեպային իրավունքում²: Որպես կանոն, իրավական պաշտպանության բոլոր միջոցների սպառումը՝ որպես դատարան ներկայացվող դիմումներին ուղղված պահանջ, սահմանվում է այն դեպքերում, երբ համապատասխան դատարանը նպատակ ունի ծառայելու որպես մարդու իրավունքների պաշտպանության սուբսիդիար օղակ, և, տվյալ դեպքում, սահմանադրի կողմից նման պահանջ ամրագրելու նպատակն այն է, որ կոնկրետ անձի հիմնական իրավունքներին վերաբերող հարցին բոլոր իրավասու դատարաններն իրենց լիազորությունների շրջանակներում անդրադառնան, որից հետո միայն Սահմանադրական դատարանը, ունենալով նաև տվյալ հարցի վերաբերյալ իրավասու բոլոր դատական ատյանների կողմից ձևավորված իրավակիրառ պրակտիկան և կիրառված նորմերի մեկնաբանությունները, անհատական դիմումի շրջանակներում անդրադառնա այդ հարցին և տա հանրային իշխանության բոլոր մարմինների ու պաշտոնատար անձանց համար պարտադիր լուծումներ: Դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառման պահանջը ենթադրում է պաշտպանության միայն արդյունավետ միջոցների սպառում: Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը

¹ Սահմանադրական դատարանը «Դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառման» պահանջի՝ անհատական դիմումում պահպանվածության վերաբերյալ նման դիրքորոշում է հայտնել, ի թիվս այլնի, Սահմանադրական դատարանի դատական կազմի 2018 թվականի հունիսի 28-ի ՍԴԴԿՈ/2-19, 2019 թվականի մայիսի 29-ի ՍԴԴԿՈ-27 որոշումներով:

² Օրինակ, տե՛ս Interhandel-ի գործով (Շվեյցարիան ընդդեմ Ամերիկայի Միացյալ Նահանգների) Արդարադատության միջազգային դատարանի 1959 թ.-ի մարտի 21-ի վճիռը: Հասանելի է՝ <https://www.icj-cij.org/sites/default/files/case-related/34/11203.pdf>

(այսուհետ՝ նաև Դատարան)՝ իր նախադեպային իրավունքում արտահայտելով այն դիրքորոշումը, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածը, որով սահմանվում է յուրաքանչյուրի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, «սերտորեն կապված է» Կոնվենցիայի հոդված 35-ի կետ 1-ի հետ, որի համաձայն Դատարանը կարող է քննել գործը, միայն երբ սպառված կլինեն ներպետական իրավական պաշտպանության բոլոր միջոցները, քանզի «այդ կանոնը հիմնվում է Կոնվենցիայի հոդված 13-ում արտացոլված այն ենթադրության վրա [...], որ ներպետական համակարգում գոյություն ունի ենթադրյալ խախտումներին վերաբերող մատչելի արդյունավետ միջոց¹: Այնուհանդերձ, «միջոցները, որ պահանջվում է սպառել հոդված 35-ի կետ 1-ով, վերաբերում են հենց ենթադրյալ խախտումներին, հասանելի են ու բավարար»²:

Յուրաքանչյուր դեպքում, Սահմանադրական դատարանը կամ Սահմանադրական դատարանի դատական կազմը գնահատելիս, թե արդյո՞ք որևէ կոնկրետ պաշտպանության միջոց բավարարում է արդյունավետության չափանիշը, պետք է հաշվի առնի առանձին գործի որոշակի հանգամանքներ:

Այս առումով, քննարկման է ենթակա այն հարցը, թե արդյո՞ք ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառելու և վերջնական դատական ակտով կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը վիճարկելու անհատական դիմումներին ներկայացվող պահանջը պահպանված պետք է համարվի բոլոր այն դեպքերում, երբ ֆիզիկական կամ իրավաբանական անձը Սահմանադրական դատարանում վիճարկում է առաջին ատյանի դատարանի կամ վերաքննիչ դատարանի կողմից կայացված այն դատական ակտով կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթ, որը բողոքարկման ենթակա չէ համապատասխանաբար վերաքննության կամ վճարեկության կարգով:

Այս հարցադրմանը պատասխանելու համար տեղին է վկայակոչել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից իր բազմաթիվ որոշումներում արտահայտած այն դիրքորոշումները, ըստ որի՝ իրավական

¹ Օրինակ տե՛ս, *Մակ Ֆարլեյնս ընդդեմ Իռլանդիայի* գործը, դիմ. թիվ 31333/06, Մեծ պալատի 2010թ. սեպտեմբերի 10-ի վճիռը, պարբերություն 107:

Հասանելի է՝ <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22fulltext%22:%5B%2231333/06%22%5D,%22documentcollectionid%22:%5B%22GRANDCHAMBER%22,%22CHAMBER%22%5D,%22itemid%22:%5B%22001-100413%22%5D%7D>

² Նույն տեղում:

պաշտպանության ներպետական միջոցները սպառելու կանոնը պետք է համապատասխանի ճկունության, առկայության, պատշաճության և արդյունավետության չափանիշներին: Մասնավորապես, Ռինգեյսենն ընդդեմ Ավստրիայի գործով Դատարանն ընդգծել է, որ մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում իրավական պաշտպանության միջոցների սպառման կանոնը անհրաժեշտ է կիրառել որոշակի ճկունությամբ, առանց ավելորդ ձևականությունների¹, ներպետական միջոցների սպառման կանոնը ոչ բացարձակ է, ոչ էլ պետք է կիրառել մեխանիկորեն²:

Մեկ այլ՝ Սեյդովիչն ընդդեմ Իտալիայի գործով Դատարանն արտահայտել է այն դիրքորոշումը, որ դիմումատուները պարտավոր են սպառել իրավական պաշտպանության ներպետական միայն այն միջոցները, որոնք տվյալ ժամանակահատվածում գոյություն են ունեցել տեսության մեջ և պրակտիկայում, և որոնք կարող են ուղղակիորեն կիրառվել այսինքն՝ միջոցներ, որոնք մատչելի են, ներկայացված բողոքների դիմաց կարող են տրամադրել փոխհատուցում և ներկայացնում են հաջողության ողջամիտ հեռանկարներ³:

Փաստորեն, մի կողմից, օրենսդրությամբ անհատական դիմումներին ներկայացված է դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառման պահանջ, որը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի դեպքում ենթադրում է գործի քննություն Առաջին աստիճանի դատարանում, Վերաքննիչ դատարանում և Վճռաբեկ դատարանում, մյուս կողմից, կարծում են, ֆիզիկական և իրավաբանական անձինք չպետք է ծանրաբեռնվեն ոչ արդյունավետ և հեռանկար չունեցող պաշտպանության միջոցների սպառման պարտականությամբ այն դեպքում, երբ օրենսդրությամբ առկա չէ այն դատական ակտի վերաքննության կամ վճռաբեկության կարգով բողոքարկման հնարավորություն, որով կիրառվել է վիճարկվող նորմատիվ իրավական ակտի դրույթը:

¹ Տե՛ս Ռինգեյսենն ընդդեմ Ավստրիայի գործը, դիմում թիվ 2614/65, Դատարանի 1971 թ. հուլիսի 16-ի վճիռ, պարբերություն 89:

Հասանելի է՝ [https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:\[%22001-57565%22\]}](https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-57565%22]})

² Տե՛ս Կոզաջոլուն ընդդեմ Թուրքիայի գործը, դիմում թիվ 2334/03, Մեծ պալատի 2009 թվականի փետրվարի 19-ի վճիռ, պարբերություն 40:

Հասանելի է՝ [https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:\[%22001-91413%22\]}](https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-91413%22]})

³ Տե՛ս Սեյդովիչն ընդդեմ Իտալիայի գործը, դիմում թիվ 56581/00, Մեծ պալատի 2006 թվականի մարտի վճիռ, պարբերություն 46:

Հասանելի է՝ [https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:\[%22001-218566%22\]}](https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-218566%22]})

Պակասն ընդդեմ Լիտվիայի գործը, դիմում թիվ 34932/04, Մեծ պալատի 2011 թվականի հունվարի 6-ի վճիռ, պարբերություն 75:

Հասանելի է՝ [https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:\[%22001-102617%22\]}](https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-102617%22]})

Նման դեպքերում, կարծում եմ, որ Սահմանադրական դատարանը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, 69-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումներով նախատեսված պահանջների պահպանության հարցը քննարկելիս, կախված այն հանգամանքից, թե խնդրո առարկա դատական ակտի բողոքարկման ինչ հնարավորություն է նախատեսված օրենսդրությամբ, որպես վերջնական դատական ակտ պետք է դիտարկի Առաջին ատյանի դատարանի կամ Վերաքննիչ դատարանի համապատասխան դատական ակտը, իսկ անհատական դիմումների՝ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության ընդունելության պարտադիր պայման՝ ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառած լինելու պարտադիր պահանջը դիմողի կողմից համարվի պահպանված:

Ինչպես արդեն նշվեց, անձի անհատական դիմումը Սահմանադրական դատարանում քննության կարող է ընդունվել, ի թիվս այլ պահանջների, այն դեպքում, երբ դիմողը ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարաններում հանդիսացել է դատավարության մասնակից, որի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով կիրառվել է որևէ օրենքի դրույթ:

Սահմանադրական դատարանն իր որոշումներում անդրադարձել է «վերջնական դատական ակտ» և «օրենքի դրույթի կիրառում» հասկացությունների սահմանադիրավական բովանդակության բացահայտմանը: Մասնավորապես, Սահմանադրական դատարանն իր՝ 2008 թվականի սեպտեմբերի 9-ի ՍԴՈ-758 որոշմամբ նշել է, որ անհատական դիմումի շրջանակներում սահմանադրական դատարանում կարող են վիճարկվել դատարանի վերջնական ակտով կիրառված օրենքի դրույթները: Որպես վերջնական դատական ակտ առանձին դեպքերում կարող են հանդես գալ տարբեր ատյանի՝ առաջին ատյանի, վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանի դատական ակտերը: Առավել հաճախ վերջնական դատական ակտը վճռաբեկ դատարանի կողմից կայացվող ակտն է, որը կայացվել է ի սպառումն պաշտպանության բոլոր միջոցների: Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ սահմանադրական նշված դրույթը որպես անհատական դիմումի ընդունելիության պայման ամրագրում է վիճարկվող օրենքի դրույթի՝ վերջնական դատական ակտով կիրառված լինելու պահանջը, ինչը չի նշանակում, որ վերջնական դատական ակտով կիրառված դրույթը պետք է պարտադիր կերպով կիրառված լինի նաև առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում. օրենքի դրույթի սահմանադրականությունը սահմանադրական դատարանում վիճարկելու

համար բավական է միայն այդ դրույթի կիրառումը վերջնական դատական ակտով¹:

Իր մեկ այլ՝ 2013 թվականի սեպտեմբերի 18-ի ՍԴՈ-1114 որոշմամբ Սահմանադրական դատարանը հստակեցրել է «վերջնական դատական ակտ» հասկացությունը, ըստ որի՝ այն հաճախ շփոթում են վերադաս դատարանի կողմից կայացված ակտի հետ: Եթե քաղաքացին դիմել է վճռաբեկ դատարան և վերջինս մերժել է նրա դիմումը քննության ընդունել, դա չի նշանակում, որ այդ որոշումն է վերջնական դատական ակտ: (... Սահմանադրական նորմը վերաբերում է վերջնական դատական ակտին, այլ ոչ թե բողոքարկման ընթացքում վերջին ատյանի դատարանի կողմից ընդունված ցանկացած ակտի: Սահմանադրաիրավական բովանդակությամբ դատարանի վերջնական ակտն այն ակտն է, որը գործն ըստ էության լուծել է, օրինական ձևով ուժի մեջ է մտել և անձի համար առաջացրել է համարժեք իրավական հետևանք: Նման մոտեցումից է բխում նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241.11-րդ հոդվածի 2-րդ մասի իրավական բովանդակությունը, համաձայն որի. «Սույն օրենսգրքի իմաստով՝ վերջնական դատական ակտ է համարվում սույն օրենսգրքով սահմանված կարգով առաջին ատյանի դատարանի կայացրած և ուժի մեջ մտած, բողոքարկման ոչ ենթակա, Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի կայացրած և ուժի մեջ մտած, գործի քննությունը սկսելը և շարունակելը բացառող, ինչպես նաև գործն ըստ էության լուծող դատական ակտը»²:

Ինչ վերաբերում է Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով «օրենքի դրույթի կիրառում» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությանը, ապա Սահմանադրական դատարանն իր բազմաթիվ որոշումներում արտահայտել է այն դիրքորոշումը, որ «...իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի...», ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասում պարունակվող «...և չի կիրառվել» բառակապակցություններում «կիրառում» հասկացությունը չի վերաբերում դատական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչման: Միայն այն պարագայում դա կարող է դիտարկվել որպես

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2008 թվականի սեպտեմբերի 9-ի ՍԴՈ-758 որոշումը, 11-րդ կետ:

² Տե՛ս Սահմանադրական դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 18-ի ՍԴՈ-1114 որոշումը, 10-րդ կետ:

1(113)2024
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

օրենքի դրույթի «կիրառում», երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետևանքներ: Բոլոր այն դեպքերում, երբ վկայակոչումն ունի ծանուցողական բնույթ կամ դրա միջոցով դատավարության կողմի ուշադրությունն է հրավիրվում իր գործողությունների օրինականության վրա, հարցի սահմանադրականության բարձրացման տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում»: Միննույն ժամանակ, դա նշանակում է, որ օրենքի դրույթի ձևական չվկայակոչումը վերջնական դատական ակտում չի ենթադրում, որ այն դիմողի նկատմամբ չի կիրառվել, եթե այն նրա համար առաջացրել է իրավական հետևանքներ¹:

Այսպիսով, անձի՝ անհատական դիմումով Սահմանադրական դատարան դիմելու իրավունքի բովանդակությունն ու իրացման վերոհիշյալ շրջանակները պայմանավորված են սահմանադրական կոնկրետ վերահսկողության այն հիմնական տրամաբանությամբ, նպատակներով ու առանձնահատկություններով, որոնք ձևավորվել են սահմանադրական-արդարադատական պրակտիկայում (այդ թվում՝ միջազգային) և ամրագրվել օրենքով: Մասնավորապես, Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս, ի թիվս ըստ ձևի ներկայացվող պահանջների կատարման, անձը.

- պետք է հստակ պատկերացնի իր նկատմամբ վերջնական դատական ակտով կիրառված օրենքի նորմի բովանդակությունը և փորձի գնահատել ու նախատեսել Սահմանադրական դատարանում իր իրավունքների պաշտպանությանն ուղղված և Սահմանադրությամբ ու օրենքով թույլատրելի հետագա գործողությունները,

- փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքներն են խախտվել և ի՞նչ է ակնկալում Սահմանադրական դատարանում դիմումի քննության արդյունքում,

- պետք է ձեռնպահ մնա դիմումում քաղաքական կամ ոչ իրավական բնույթի հարցադրումներից, արտահայտություններից, դատարանի նկատմամբ ճնշում գործադրելու փորձերից,

- դիմումում առաջադրված հարցի հիմքում ներկայացնի իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր, իրավաբանորեն հիմնավորի իր միջնորդությունները,

- անհրաժեշտության և հնարավորության դեպքում (իր ընտրությամբ) ապահովի իր իրավունքները և շահերը Սահմանադրական դատարանում

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2010 թվականի նոյեմբերի 30-ի ՍԴԴ-927 որոշումը, 5-րդ կետ:

մասնագիտական բավարար կարողությամբ ներկայացնելու ընդունակ օրինական ներկայացուցչի (փաստաբան, իրավաբանական բարձրագույն կրթություն ունեցող կամ սահմանադրական իրավունքի բնագավառում գիտական աստիճան ունեցող անձ):

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով, մասնավորապես 69-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է անհատական դիմումներով հիմնավորումներ ներկայացնելու պահանջ, մասնավորապես, ըստ որի՝ անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Դիմումով վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ հիմնավորումներ ներկայացնելու պահանջին Սահմանադրական դատարանն անդրադարձել է իր 2009 թվականի մարտի 3-ի ՍԴԱՈ-21 որոշմամբ, ըստ որի՝ անհատական դիմումին ներկայացված այս պահանջը նշանակում է, որ դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Նշված պահանջին համապատասխան՝ դիմողը պետք է նաև դիմումում առաջադրված հարցի հիմքում ներկայացնի իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր՝ ձեռնպահ մնալով քաղաքական կամ ոչ իրավական բնույթի հարցադրումներից ու արտահայտություններից¹:

Սահմանադրական դատարանի դատական կազմը կամ Սահմանադրական դատարանը, ստանալով անհատական դիմումը, յուրաքանչյուր դեպքում գնահատում է ներկայացված դիմումով հիմնավորվածության պահանջի պահպանվածության հարցը: Պետք է նշել, որ յուրաքանչյուր դեպքում դիմումի նախնական ուսումնասիրության փուլում դրա հիմնավորվածության բավարար մակարդակի պահպանված լինելու հանգամանքի ստուգումը գնահատողական կատեգորիա է և պայմանավորված է այն գնահատողի սուբյեկտիվ ընկալմամբ:

¹Տե՛ս Սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշումը, կետ 4:

Հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=50249>

ՍԱԳՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1(113)2024

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ, ի տարբերություն Սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող այլ սուբյեկտների կողմից ներկայացվող դիմումների, կոնկրետ սահմանադրական վերահսկողության շրջանակներում ներկայացվող անհատական դիմումների դեպքում, կարծում են, դրանց ներկայացվող հիմնավորվածության պահանջի առավել նվազ շեմ պետք է դիտարկվի: Մասնավորապես, այն դեպքերում, երբ ներկայացված դիմումով պահանջված են անհատական դիմումներին ներկայացվող հիմնավորվածության պահանջի նվազագույն չափանիշները, այն է՝ դիմողի կողմից, նախ, վկայակոչված է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր այն հիմնական իրավունքը կամ ազատությունը, որն ըստ դիմողի խախտվել է, այնուհետև՝ Սահմանադրության այն դրույթը, որին ըստ դիմողի հակասում է իր կողմից դիմումով վիճարկվող դրույթը, ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև, իսկ դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքում կասկած է առաջանում դիմումով վիճարկվող նորմի սահմանադրականության վերաբերյալ, ապա ներկայացված անհատական դիմումը պետք է ընդունվի քննության Սահմանադրական դատարանի կողմից:

Սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող այլ սուբյեկտների պարագայում, ինչպիսիք են, օրինակ, Ազգային ժողովը, պատգամավորների ընդհանուր թվի մեկ հինգերորդը, Ազգային ժողովի խմբակցությունը, Հանրապետության նախագահը, Կառավարությունը և այլք, այսինքն՝ վերացական սահմանադրական վերահսկողության շրջանակներում նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականության վիճարկման դեպքում, պայմանավորված դիմողների կարգավիճակով՝ պետք է ներկայացվեն Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումի հիմնավորվածության, դրանցով ներկայացվող փաստարկման առավել բարձր չափանիշներ: Այս մասին դիրքորոշում է արտահայտել նաև Սահմանադրական դատարանը իր 2021 թվականի դեկտեմբերի 3-ի ՍԴԱՌ-248 աշխատակարգային որոշմամբ, ըստ որի Սահմանադրական դատարան դիմող այլ սուբյեկտների պարագայում, որպիսիք են, օրինակ, Ազգային ժողովը, պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը, Ազգային ժողովի խմբակցությունը, Հանրապետության նախագահը, Կառավարությունը և այլն, օրենսդիրը սահմանափակվել է Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումին առաջադրվող ընդհանուր ձևական բնույթի պահանջների շարադրմամբ: Սահմանադրական դատարանը գտել է, որ հիշատակված

սուբյեկտները, ելնելով իրենց սահմանադրաիրավական բարձր կարգավիճակից, պետք է ցուցաբերեն առավել բարձր մակարդակի փութաջանություն և, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վիճարկելով այս կամ այն իրավական ակտի կամ դրա դրույթի/դրույթների սահմանադրականությունը, պատշաճ կերպով հիմնավորեն վիճարկվող դրույթի և Սահմանադրությամբ պահպանվող արժեքի/իրավունքի հնարավոր խախտման միջև պատճառահետևանքային կապը¹:

Սահմանադրական անհատական դիմումներին ներկայացվող բովանդակային պահանջների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դրանք օրենսդրությամբ հստակ նախատեսված են, իսկ Սահմանադրական դատարանի իրավակիրառ պրակտիկայում բացահայտվել են դրանց սահմանադրաիրավական բովանդակությունը, և միայն այդ պահանջներին, իսկ, առավել կոնկրետ, դրանց՝ Սահմանադրական դատարանի իրավակիրառ պրակտիկայում բացահայտված բովանդակությանը համապատասխան ներկայացված անհատական դիմումը կարող է հիմք հանդիսանալ անձի սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման համար: Առավելապես այս հանգամանքով էլ պայմանավորված՝ կարևորվում է սահմանադրական անհատական դիմումներին ներկայացվող պահանջների ուսումնասիրությունն ու քննարկումը:

Սահմանված պահանջներին համապատասխան անհատական դիմում ներկայացնելու հանգամանքի կարևորության գիտակցումով պայմանավորված՝ այս աշխատանքի շրջանակներում անդրադարձ կատարվեց սահմանադրական անհատական դիմումներին ներկայացվող պահանջներին, ներկայացվեց Սահմանադրական դատարանի ձևավորած իրավակիրառ պրակտիկան, ինչպես նաև ներկայացվեցին Սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումների նախնական ուսումնասիրության, դրանց ընդունելության հարցի լուծման փուլերի, ինչպես նաև այս դիմումների հիման վրա սահմանադրական դատարաններում իրականացվող գործերի ըստ էության քննության առանձնահատկությունները:

Ողջ վերոգրյալի արդյունքում իմ կողմից առանձնացվեցին և քննարկման առարկա դարձան անհատական դիմումների ներկայացման, դրանց հիման վրա Սահմանադրական դատարանում իրականացվող դատավարական գործողությունների համակարգում առկա հետևյալ

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 3-ի ՍԴԱՈ-248 աշխատակարգային որոշումը, կետ 3.2:

Հասանելի է՝ https://concourt.am/decision/decisions/621385cf2aeb0_sdav-248.pdf

1(113)2024

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

հարցադրումները և դրանց վերաբերյալ ներկայացվեցին որոշակի առաջարկներ:

Մասնավորապես՝ ներկայացնելով անհատական դիմումներին ներկայացվող «դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառման» սահմանադրական և օրենսդրական պահանջը և բացահայտելով դրա բովանդակությունը՝ անհրաժեշտ քննարկման առարկա դարձրի այն հարցադրումը, թե արդյո՞ք ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառելու և վերջնական դատական ակտով կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը վիճարկելու անհատական դիմումներին ներկայացվող պահանջը պահպանված պետք է համարվի բոլոր այն դեպքերում, երբ ֆիզիկական կամ իրավաբանական անձը Սահմանադրական դատարանում վիճարկում է առաջին ատյանի դատարանի կամ վերաքննիչ դատարանի կողմից կայացված այն դատական ակտով կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթ, որը բողոքարկման ենթակա չէ համապատասխանաբար վերաքննության կամ վճռաբեկության կարգով:

Մեջբերելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ իրավական պաշտպանության միայն արդյունավետ միջոցների սպառման պահանջների վերաբերյալ արտահայտած դիրքորոշումները, վերլուծելով ներպետական օրենսդրական կարգավորումները և կարևորելով սահմանադրական արդարադատության միջոցով մարդու իրավունքների պաշտպանությունը՝ եկել եմ այն եզրահանգման, որ նման դեպքերում պետք է Առաջին ատյանի դատարանի կամ Վերաքննիչ դատարանի համապատասխան դատական ակտը, կախված այն հանգամանքից, թե խնդրո առարկա դատական ակտի բողոքարկման ինչ հնարավորություն է նախատեսված օրենսդրությամբ, համարվի այդ գործով վերջնական դատական ակտ, իսկ ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառած լինելու պարտադիր պահանջը դիմողի կողմից համարվի պահպանված:

Անդրադառնալով անհատական սահմանադրական դիմումներին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով ներկայացվող հիմնավորվածության պահանջին՝ հանգել եմ այն եզրահանգման, որ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից ներկայացվող դիմումների հիմնավորվածության առավել նվազ շեմ պետք է դիտարկվի Սահմանադրական դատարանի կողմից, մասնավորապես, այն դեպքերում, երբ ներկայացված դիմումով պահպանված են անհատական դիմումներին ներկայացվող հիմնավորվածության պահանջի նվազագույն չափանիշները, այն է՝ դիմողի կողմից, նախ, վկայակոչված է

Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր այն հիմնական իրավունքը կամ ազատությունը, որն ըստ դիմողի խախտվել է, այնուհետև՝ Սահմանադրության այն դրույթը, որին ըստ դիմողի հակասում է իր կողմից դիմումով վիճարկվող դրույթը, ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև, իսկ դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքում կասկած է առաջանում դիմումով վիճարկվող նորմի սահմանադրականության վերաբերյալ, ապա ներկայացված անհատական դիմումը պետք է քննության ընդունվի Սահմանադրական դատարանի կողմից:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն:
2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենք, ընդունվել է 2018 թվականի հունվարի 17-ին, ՀՕ-42-Ն օրենքով:
3. Սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշում:
4. Արդարադատության միջազգային դատարանի 1959 թ.-ի մարտի 21-ի վճիռ Շվեյցարիան ընդդեմ Ամերիկայի Միացյալ Նահանգների գործով, հասանելի է՝ <https://www.icj-cij.org/sites/default/files/case-related/34/11203.pdf>
5. Մակ Ֆարլեյնն ընդդեմ Իռլանդիայի գործը, դիմում թիվ 31333/06, Մեծ պալատի 2010 թ. սեպտեմբերի 10-ի վճիռ, հասանելի է՝ <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22fulltext%22:%5B%2231333/06%22%5D%22documentcollectionid%22:%5B%22GRANDCHAMBER%22%22CHAMBER%22%5D%22itemid%22:%5B%22001-100413%22%5D%7D>
6. Ռինգելսենն ընդդեմ Ավստրիայի գործը, դիմում թիվ 2614/65, Դատարանի 1971 թ. հուլիսի 16-ի վճիռ, հասանելի է՝ <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-57565%22%5D%7D>
7. Կոզաջոլուն ընդդեմ Թուրքիայի գործը, դիմում թիվ 2334/03, Մեծ պալատի 2009 թվականի փետրվարի 19-ի վճիռ, հասանելի է՝ <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-91413%22%5D%7D>
8. Սեյդովիչն ընդդեմ Իտալիայի գործը, դիմում թիվ 56581/00, Մեծ պալատի 2006 թվականի մարտի վճիռ, հասանելի է՝ <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-218566%22%5D%7D>

9. Սահմանադրական դատարանի 2008 թվականի սեպտեմբերի 9-ի ՍԴՈ-758 որոշում:

10. Սահմանադրական դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 18-ի ՍԴՈ-1114 որոշում:

11. Սահմանադրական դատարանի 2010 թվականի նոյեմբերի 30-ի ՍԴՈ-927 որոշում:

ТРЕБОВАНИЯ, ПРЕДЪЯВЛЯЕМЫЕ СОДЕРЖАНИЮ ИНДИВИДУАЛЬНЫХ ОБРАЩЕНИЙ, КАК ОБЯЗАТЕЛЬНЫЕ УСЛОВИЯ ОБЕСПЕЧЕНИЯ ПРИНЦИПА ДОСТУПНОСТИ КОНСТИТУЦИОННОГО СУДА

Аннотация

С принятием Конституции 2005 года, в которой была предусмотрена возможность физических и юридических лиц напрямую обращаться в Конституционный Суд, вопросы защиты прав человека посредством обращения в Конституционный Суд приобрели большое значение, и возникла необходимость их систематического регулирования параллельно с развитием общественных отношений.

При этом следует отметить, что в связи с тем, что единственным поводом для рассмотрения дела в Конституционном Суде является обращение, соответствующее установленным законом требованиям, изучение и раскрытие конституционно-правового содержания этих требований является приоритетным.

При этом, в отличие от других субъектов, подающих обращение в Конституционный Суд, на конституционно-законодательном уровне к обращениям физического или юридического лица по определению конституционности нормативно-правового акта, примененного вынесенным в отношении него окончательным судебным актом по конкретному делу, на конституционном и законодательном уровне предъявляются более «жесткие» требования, только при соблюдении которых Конституционным Судом будет рассматриваться обращение, поданное физическим или юридическим лицом.

Таким образом, целью настоящей статьи является раскрытие «содержательных» требований, предъявляемых к отдельным обращениям, их конституционно-правового содержания и комплексное исследование юридической практики, формируемой Конституционным Судом в результате предварительного изучения индивидуальных обращений, и конституционных и законодательных норм, регулирующих эти отношения, что позволит уточнить требования, которым должно отвечать индивидуальное обращение, подаваемое в Конституционный Суд.

Ключевые слова: индивидуальное обращение, конституционность, исчерпание средств судебной защиты, окончательный судебный акт, применение положения права, нарушение закона, причинно-следственная связь.

"SUBSTANTIVE" REQUIREMENTS FOR INDIVIDUAL APPLICATIONS AS MANDATORY CONDITIONS FOR ENSURING THE PRINCIPLE OF ACCESSIBILITY OF THE CONSTITUTIONAL COURT

Annotation

Since the 2005 edition of the Constitution provided for the possibility of individuals and legal entities to directly submit an application to the Constitutional Court, the issues of human rights protection in this way have gained great importance along with the development of public relations and the need for systematic regulation.

At the same time, it should be noted that, due to the fact that the only occasion for hearing a case by the Constitutional Court is an application that meets the requirements established by law, therefore, the study and disclosure of the constitutional content of these requirements is more important.


At the same time, unlike other applicants submitting an application to the Constitutional Court, at the constitutional and legislative level "stricter" requirements are submitted to the applications submitted by individuals or legal entities to determine the constitutionality of a normative legal act applied to him by a final judicial act in a specific case, and only in case of

compliance with those requirements the application submitted by a legal entity will be considered by the Constitutional Court.

Therefore, the purpose of this article is to reveal the "substantive" requirements submitted to individual applications, their constitutional and legal content, the combined study of the legal practice formed by the Constitutional Court as a result of the preliminary study of individual applications and the constitutional and legislative regulations regulating these relations, which will only allow clarifying the requirements which must respond to the individual application submitted to the Constitutional Court.

Keywords: individual application, constitutionality, exhaustion of remedies, final judicial act, application of a provision of law, violation of law, causation.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 17.03.2024 թ., տրվել է գրախոսության 18.03.2024 թ., ընդունվել է տպագրության 20.03.2024 թ.:



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ
ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ
ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 145-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

ք. Երևան

17 հունվարի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի ներկայացուցիչ Ա. Վարդևանյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Ստեփանյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 68-րդ հոդվածների,

1(113)2024

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը (այսուհետ նաև՝ Դատական օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի փետրվարի 7-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2018 թվականի փետրվարի 10-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ին:

Դատական օրենսգրքի՝ **«Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինները»** վերտառությամբ 145-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է.

«1. Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեն՝

- 1) էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը.
- 2) Լիազոր մարմինը.

3) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ սույն հոդվածի 1.1-ին կետով նախատեսված դեպքերում»:

Դատական օրենսգրքի վերոնշյալ հոդվածը լրացվել է ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-197-Ն օրենքով (ընդունվել է 2020 թվականի մարտի 25-ին, ուժի մեջ է մտել 2020 թվականի մայիսի 2-ին), որով վիճարկվող հոդվածի 1-ին մասը լրացվել է 3-րդ կետով՝ հետևյալ ձևակերպմամբ.

«3) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ սույն հոդվածի 1.1-ին կետով նախատեսված դեպքերում»:

Գործի քննության առիթը ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի (այսուհետ նաև՝ Դիմող)՝ 2022 թվականի փետրվարի 15-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Սահմանադրական դատարանը 2022 թվականի նոյեմբերի 8-ի ՍԴԱՈ-177 աշխատակարգային որոշմամբ կասեցրել է նշված գործի

վարույթը՝ լրացուցիչ նյութեր հետազոտելու և տեղեկություններ ստանալու անհրաժեշտությամբ պայմանավորված:

2022 թվականի դեկտեմբերի 10-ին Սահմանադրական դատարանի՝ սույն գործով զեկուցող դատավորի լիազորությունները դադարել են, և Սահմանադրական դատարանի 2023 թվականի հունվարի 10-ի ՍԴԱՈ-2 աշխատակարգային որոշմամբ սույն գործով նոր զեկուցող դատավոր է նշանակվել:

Սահմանադրական դատարանի 2024 թվականի հունվարի 9-ի ՍԴԱՈ-7 աշխատակարգային որոշմամբ սույն գործի վարույթը վերսկսվել է, և գործի դատաքննությունը նշանակվել է 2024 թվականի հունվարի 16-ին:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով Դատական օրենսգրքի վիճարկվող իրավադրույթն ու դրա հետ փոխկապակցված օրենսդրական այլ դրույթներ՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը գտնում է, որ Դատական օրենսգրքով Արդարադատության նախարարի՝ որպես գործադիր իշխանության ներկայացուցչի կողմից դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը չի համապատասխանում իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքին և հակասում է Սահմանադրության 164-րդ հոդվածի պահանջներին:

Դիմողը պնդում է. «(...) նշված գործիքակազմը լայնորեն իրացվում է Արդարադատության նախարարի կողմից, որը եթե հանդիսանար դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու միակ գործիքակազմը կարող էր ունենալ իրավաչափ հետապնդվող նպատակ, սակայն հենց նույն Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքը սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի 1-ին մասը որևէ կերպ չի դիտարկում Արդարադատության նախարարությանը որպես միակ կարգապահական վարույթ հարուցող սուբյեկտ»:

Սույն համատեքստում Դիմողն ընդգծում է էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դերը և նշում, որ պատահական չէ, որ այն բաղկացած չէ բացառապես դատավորներից, այլ նաև ոչ դատավոր անդամներից, ինչը հենց պետք է երաշխավորեր

Արդարադատության նախարարության՝ որպես կարգապահական վարույթ հարուցող սուբյեկտի կառուցակարգի վերացումը:

Դիմողը հայտնում է, որ 2019-2021 թվականներին Արդարադատության նախարարի կողմից հարուցված կարգապահական վարույթների թիվը հիմնավորում է սահմանադրականության խնդիրները վիճարկվող նորմի և դրա փաստացի գործադիր իշխանություն-դատական իշխանություն բաժանման ու հավասարակշռման անհամապատասխանությունը՝ ստեղծված իրավիճակը դիտելով որպես սահմանադրականության խնդիր Սահմանադրության 1-ին հոդվածի՝ «իրավական պետություն» նորմ-սկզբունքի հետ:

Վկայակոչելով Սահմանադրական դատարանի 2021 թվականի հոկտեմբերի 12-ի ՍԴՈ-1613 որոշմամբ Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ի մասի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը՝ Դիմողը նշում է, որ կարգապահական վարույթ հարուցելու մասին դիմումներ/հաղորդումներ ներկայացնելու, կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող սուբյեկտների որոշման հարցն օրենսդրի լայն հայեցողության շրջանակում է, որի սահմաններն ուրվագծվում են ինչպես Սահմանադրությամբ ամրագրված վերաբերելի հիմնարար սկզբունքներով, այնպես էլ դրանց բովանդակության բացահայտմանն ուղղված Սահմանադրական դատարանի դիրքորոշումներով: Ըստ այդմ՝ Դիմողը հանգում է հետևության, որ օրենսդիրը, ունենալով կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող սուբյեկտների որոշման լայն հայեցողություն, այն որևէ դեպքում չի կարող վերածել Սահմանադրության 1-ին, 4 և 164-րդ հոդվածներով նախատեսված սահմանադրական երաշխիքների խաթարման:

Դիմողի կարծիքով՝ միջազգային իրավական զարգացումներին համընթաց՝ պետք է իրականացվի նաև նշված հարցի վերաբերյալ օրենսդրական քաղաքականություն: Մինչդեռ, չնայած Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (այսուհետ նաև՝ ԳՐԵԿՈ) ներկայացրած ունիվերսալ բնույթ ունեցող առաջարկներին, որևէ գործողություն չի իրականացվում նշված հարցի վերաբերյալ, իսկ նշված խնդիրն օրենսդրի տիրույթում հաղթահարման ենթակա չէ, իսկ կարգապահական վարույթների թիվն ինքնին պարզ է դարձնում, որ այն գործադիր իշխանության կողմից ոչ թե իրականացվում է որպես բացառիկ

1(113)2024
 ◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

միջոց կամ բացառություն ընդհանուր կանոնից, այլ որպես լայնորեն իրացման ենթակա գործիքակազմ, ինչը պետք է գնահատվի Սահմանադրական դատարանի կողմից՝ պնդելով որ Սահմանադրական դատարանի կողմից սույն հարցի սահմանադրականության գնահատման տեսանկյունից երբևէ քննության առարկա չեն դարձել դիմումում ներկայացված միջազգային հեղինակավոր կազմակերպությունների մոտեցումներն ու առաջարկները:

Դիմողը նշում է, որ թեև Սահմանադրության 175-րդ հոդվածի ուժով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծման բացառիկ լիազորությունը պատկանում է Բարձրագույն դատական խորհրդին, կարգապահական վարույթի հարուցման և դատավորին կարգապահական «հետապնդման» ենթարկելու գործիքակազմը վիճարկվող կարգավորման ուժով պատկանում է գործադիր իշխանությանը: Այլ կերպ ասած՝ ըստ Դիմողի՝ գործադիր իշխանությունը, պայմանավորված օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով, ունենալով անհամաձայնություն ցանկացած դատավորի կամ նրա կայացրած որոշման հետ, կարող է դատավորին ենթարկել կարգապահական «հետապնդման»:

Դիմողի կարծիքով՝ նման գործիքակազմն առաջացնում է Սահմանադրության 4-րդ հոդվածով երաշխավորված՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքին հակասող իրավիճակ:

Դիմողի դիտարկմամբ՝ խնդրահարույց է Դատական օրենսգրքի 146-րդ հոդվածով նախատեսված՝ կարգապահական վարույթ հարուցելու առիթներից վարույթ հարուցող մարմնի կողմից իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի ինքնուրույն հայտնաբերումը:

Մասնավորապես, Դիմողի դիտարկմամբ՝ «(...) սույն վեճի շրջանակներում առաջանալու է անհրաժեշտություն նաև համակարգային առումով փոխկապակցվածության մասով գնահատել Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի սահմանադրական օրենքի 146-րդ հոդվածի կարգապահական վարույթ հարուցելու առիթներին, մասնավորապես այն, որ «վարույթ հարուցող մարմնի կողմից իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի ինքնուրույն հայտնաբերումը»:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող նորմով նախատեսված՝ Արդարադատության նախարարի լիազորությունը հանգեցնում է պետական իշխանության երկու անկախ և առանձին ճյուղերի՝ գործադիր և դատական իշխանությունների լիազորությունների սահմանադրական հավասարակշռման խաթարման, և սույն սահմանադրական վեճի լուծումն առանցքային նշանակություն կունենա նաև սահմանադրական մշակույթի և հանրային իշխանական կյանքում սահմանադրաիրավական արժեհամակարգի ձևավորման և երաշխավորման տեսանկյունից:

Ամփոփելով՝ Դիմողը խնդրում է որոշել Դատական օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Սահմանադրության 1-ին, 4 և 164-րդ հոդվածներին համապատասխանության հարցը:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Ազգային ժողովը (այսուհետ՝ Պատասխանող) իր դիրքորոշումներում անհամաձայնություն է հայտնում Դիմողի այն փաստարկին, որ գործադիր իշխանությունը, օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով անհամաձայնություն ունենալով ցանկացած դատավորի կողմից կայացված որոշման հետ, իր վերաբերմունքը կարող է դրսևորել՝ դատավորին կարգապահական հետապնդման ենթարկելով: Պատասխանողը վկայակոչում է, որ Դատական օրենսգրքի նշված օրենսդրական կարգավորմամբ սահմանված են դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթները և հիմքերը, ինչպես նաև կարգապահական վարույթ հարուցող մարմնի վրա է դրված դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայության ապացուցման պարտականությունը, ինչը չարաշահումներից զերծ մնալու երաշխիք է:

Պատասխանողը վկայակոչում է Եվրոպայի դատավորների խորհրդակցական խորհրդի, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում դատական անկախության վերաբերյալ Կիևյան հանձնարարականների (այսուհետ նաև՝ Կիևյան հանձնարարականներ), Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Վենետիկի հանձնաժողով) դիրքորոշումները՝ ընդունելով, որ պահպանվել է այն կանոնը, որ

դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու գործընթացում ներգրավված անձը չի կարող մասնակցել կարգապահական պատասխանատվության որոշման գործընթացին և, մասնավորեցնելով այն Դատական օրենսգրքի 145-րդ հոդվածով սահմանված սուբյեկտների գործառույթների նկատմամբ, գտնում է, որ դրանք տարանջատված են:

Պատասխանողը գտնում է նաև, որ նշված իրավակարգավորումներով պայմանավորված՝ Արդարադատության նախարարի՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու լիազորությունը որևէ կերպ չի կարող մեկնաբանվել որպես գործադիր իշխանություն-դատական իշխանություն բաժանման ու հավասարակշռման սահմանադրական անհամապատասխանություն, քանի որ Արդարադատության նախարարը նախաձեռնում է կարգապահական վարույթ, իսկ վերջնական որոշում կայացնելու լիազորությամբ օժտված է միայն Բարձրագույն դատական խորհուրդը: Այսինքն՝ թեև կարգապահական վարույթ հարուցելու լիազորությունը վերապահված է Արդարադատության նախարարին, այնուամենայնիվ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավասությամբ օժտված է միայն Բարձրագույն դատական խորհուրդը:

Պատասխանողը վկայակոչում է «Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ) վճիռը, որում արձանագրվել են այն դեպքերը, երբ դատարաններից տարբերվող մարմիններ են լուծում այնպիսի վեճեր, որոնց նկատմամբ կիրառելի է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը: Մասնավորապես, ըստ Պատասխանողի՝ նշյալ որոշման մեջ ՄԻԵԴ-ը նշել է, որ որոշելու համար, թե արդյոք դատարանը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ի մասի իմաստով կարող է համարվել անկախ, պետք է հաշվի առնել, ի թիվս այլոց, դրա անդամների նշանակման կարգը և նրանց պաշտոնավարման ժամկետը, արտաքին ճնշումների դեմ երաշխիքների առկայությունը և այն հարցը՝ արդյո՞ք այդ մարմինն ընկալվում է որպես անկախ:

Պատասխանողը վկայակոչել է նաև Սահմանադրական դատարանի 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշմամբ արտահայտած դիրքորոշումները, համաձայն որոնց՝ դատավորին կարգապահական

պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերով Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատարան հանդես գալու դեպքերում Սահմանադրությամբ և այլ օրենքներով նախատեսված են դատարաններին բնորոշ այնպիսի դատավարական երաշխիքներ, ինչպիսիք են ողջամիտ ժամկետում գործի քննությունը, օրենքի և դատարանի առաջ հավասարությունը, դատական վարույթի հրապարակայնությունը, դատական ակտերի պարտադիրությունը, որոնք իրենց ամբողջության մեջ գնահատվել են որպես Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների իրացման ապահովմանն ուղղված միջոցներ:

Ամփոփելով իր դիրքորոշումները՝ Պատասխանողը խնդրում է Դատական օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը ճանաչել Սահմանադրությանը համապատասխանող:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով վիճարկվող նորմի սահմանադրականությունը գնահատել հետևյալ հարցադրումների շրջանակում.

3.1. արդյո՞ք Դատական օրենսգրքի վիճարկվող իրավադրույթով Արդարադատության նախարարի՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու լիազորությունը համապատասխանում է Սահմանադրության 4-րդ հոդվածով երաշխավորված՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքին.

3.2. արդյո՞ք Արդարադատության նախարարի կողմից դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու լիազորությունը սահմանափակում է դատավորի անկախությունը.

3.3. արդյո՞ք Արդարադատության նախարարի կողմից դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը համատեղելի է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթում Սահմանադրության 63-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի երաշխիքների հետ:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրության 4-րդ հոդվածի համաձայն՝ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համա-

պատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա:

Նշյալ սահմանադրական սկզբունքը ներառում է երկու բաղադրատարր՝ իշխանությունների բաժանում և իշխանությունների հավասարակշռում, որոնք սահմանադրական ժողովրդավարության, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության և իրավունքի գերակայության ապահովման սահմանադրական պայման և երաշխիք են: Այն ապահովում է միասնական պետական իշխանության երեք ճյուղերի գործառույթային բաժանման միջոցով պետական իշխանական լիազորությունների անվերահսկելիության բացառումը, որով և սահմանադրական ժողովրդավարությունում իշխանության կենտրոնացումը և մեկ մարմնի կամ համակարգի վերահսկողությունը կանխելու նպատակը ժողովրդավարության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության և իրավունքի գերակայությունն ապահովելու համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելն է:

Սահմանադրական դատարանը նախկինում ևս անդրադարձել է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի սահմանադրաիրավական բովանդակությանը: Ի մասնավորի՝ 2008 թվականի հոկտեմբերի 14-ի ՍԴՈ-766 որոշմամբ Սահմանադրական դատարանը սահմանել է. «(...) պետական իշխանությունը հանդես է գալիս որպես պետականորեն կազմակերպված ժողովրդի հանրային իշխանության ձև, որն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա: Այդ բաժանումն իրականացվում է իշխանության գործառնական բնույթից ելնելով, որին համապատասխան ձևավորվում են անհրաժեշտ կառուցակարգեր՝ համապատասխան մարմիններ, որոնք սահմանադրորեն օժտվում են համարժեք լիազորություններով և իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:

Իր մեկ այլ՝ 2021 թվականի փետրվարի 23-ի ՍԴՈ-1578 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշել է. «Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, ձևակերպված լինելով Սահմանադրության 4-րդ հոդվածում, ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ պայման լինելուց բացի, կոչված է նաև

ապահովելու անհրաժեշտ միջավայր Սահմանադրության 1-ին հոդվածով հռչակված՝ Հայաստանի Հանրապետության իրավական պետության որակի համար՝ հանդիսանալով իրավական պետության մյուս հատկանիշների, մասնավորապես՝ հանրային իշխանության մարմինների գործունեության օրինականության, իրավական որոշակիության, իշխանության չարաշահման կամ կամայականությունների արդյունավետ արգելքի, օրենքի առջև հավասարության, խտրականության արգելքի, արդարադատության մատչելիության և արդար դատաքննության իրավունքի ապահովման կարևոր երաշխիքներից մեկը:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման մասին Սահմանադրության 4-րդ հոդվածով նախատեսված սկզբունքի պահանջն է պետական իշխանության գործառույթային (օրենսդիր, դատական և գործադիր) և այդ գործառույթների իրագործմանը կոչված ինստիտուտների (պետական մարմինների և պաշտոնատար անձանց) հստակ տարանջատվածությունը: Իշխանությունների բաժանումը, սակայն, ինքնանպատակ չէ, քանի որ իշխանության իրականացման ընթացքում պետության կենսական կարևոր խնդիրների իրագործման նպատակով այն անհրաժեշտաբար պետք է զուգորդվի իշխանությունների հավասարակշռմամբ: Այսինքն՝ հստակ տարանջատվածության հետ մեկտեղ պետական իշխանության ճյուղերը անհրաժեշտաբար պետք է գտնվեն ընդհանուր հավասարակշռության մեջ»:

2021 թվականի ապրիլի 29-ի ՍԴՌ-1590 որոշման մեջ Սահմանադրական դատարանն արձանագրել է. «(...) Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը ժողովրդավարության, իրավունքի գերակայության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության հիմնարար երաշխիք է, որը թույլ է տալիս կյանքի կոչել Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված Հայաստանի Հանրապետության՝ ժողովրդավարական և իրավական պետություն հանդիսանալու սահմանադրի հրամայականը»:

Գործադիր իշխանության ներգրավվածությունը դատավորների սահմանադրաչափ գործունեության ապահովման նպատակով քաղաքականության մշակմանն ու իրականացմանը բխում է դատավորի անկախության և անաչառության վերաբերյալ Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասից, որպես դատական իշխանության առանցքային կառուցակարգ, և

դատարանի անկախության և անաչառության մասին Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասից, որպես արդար դատաքննության բաղադրիչ: Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով և 164-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վերոհիշյալ սահմանադրական հրամայականները հանրային իշխանությանը ծանրաբեռնում են դրանց ապահովմանն ուղղված՝ օրենսդրի կողմից նշված հիմքերով և ընթացակարգով միջոցներ ձեռնարկելու լիազորությամբ, որը, ի թիվս կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող այլ մարմինների, իրականացվում է նաև Արդարադատության նախարարի կողմից: Հետևաբար՝ Արդարադատության նախարարությանն առաջադրված վերոնշյալ խնդրի իրականացումը ենթադրում է համարժեք լիազորությունների առկայություն, որն ուղղված է վերը նշված նպատակի իրականացմանը:

Միաժամանակ, Արդարադատության նախարարի կողմից ներկայացված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությունը դատավորի նկատմամբ միջամտող ակտ չէ, որը դատավորի նկատմամբ իրավական հետևանք է առաջացնում, այլ ընդամենը նախաձեռնում է նման միջամտող ակտ կայացնելու իրավասություն ունեցող միակ իրավասու ատյանի՝ Բարձրագույն դատական խորհրդի առջև դատավորի կարգապահական գործով վեճի լուծման հնարավորություն: Վերոնշյալի հիման վրա Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արդարադատության նախարարի՝ որպես վարույթ հարուցող լիազոր մարմնի մասնակցությունը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթին, իբրև այդպիսին, չի հակասում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման սահմանադրական սկզբունքին:

4.2. Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

Սահմանադրական դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատավորի անկախությանն ու վերջինիս իրավական երաշխիքներին:

Մասնավորապես, 2006 թվականի սեպտեմբերի 20-ի ՍԴՌ-647 որոշման մեջ Սահմանադրական դատարանն արձանագրել է. «(...) Սահմանադրությամբ և օրենքներով անհրաժեշտ սահմանադրաիրավական երաշխիքներ պետք է ստեղծվեն դատարանների անկախության

ապահովման համար: Իր հերթին, դատարանների անկախությունը վերացական հասկացությունն չէ: Այն ենթադրում է գործառնական, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անկախության այնպիսի նախադրյալներ, որոնք անհրաժեշտ ու բավարար են դատարանների ու ողջ դատական իշխանության անկախությունը երաշխավորելու համար»:

2019 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1463 որոշման մեջ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «(...) Սահմանադրության 1-ին և 4-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունն իրավական պետություն է, որում, որպես սահմանադրական կարգի հիմնական սկզբունք, երաշխավորված է պետական, այդ թվում՝ դատական իշխանության իրականացումը՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, ինչը դատարանների անկախությունը երաշխավորող և սահմանադրական նախապայման է: Համակցված Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասի հետ՝ այն առաջնահերթ ենթադրում է դատական իշխանությունը (արդարադատությունը) իրականացնող դատավորների գործառնական, կառուցակարգային, նյութական և սոցիալական անկախության նորմատիվ այնպիսի կարգավորումների առկայություն, որոնք անհրաժեշտ և բավարար են արդարադատության իրականացման համար»:

Սույն որոշման 4.1-ին ենթակետում նշված դիրքորոշումների համատեքստում զարգացնելով վերոնշյալ որոշումներում արտահայտած դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ դատական, օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերի բաժանման սահմանադրական սկզբունքի ապահովման նպատակը սահմանադրական ժողովրդավարությունում պետական իշխանության ճյուղերից յուրաքանչյուրի սահմանադրական խնդիրների իրականացման ուղղությամբ նրա գործունեության արդյունավետության երաշխավորումն է, որը դատական իշխանությանը վերաբերելի մասով՝ արդարադատության իրականացումն է:

Սահմանադրության 173-րդ հոդվածում ամրագրված է Բարձրագույն դատական խորհրդի կարգավիճակը, այն է՝ վերջինս դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորող անկախ պետական մարմին է: Վերոգրյալից բխում է, որ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու՝ Բարձրագույն դատական խորհրդի՝

Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված գործառույթը Սահմանադրի կողմից վստահվել է այս ատյանին՝ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավասության ողջ շրջանակը զերծ պահելով հանրային իշխանության որևէ մարմնի կամ պաշտոնատար անձի միջամտող ազդեցությունից՝ այն վերապահելով միայն այնպիսի ատյանի իրավասությանը, որի սահմանադրական առաքելությունը և գործունեության հիմնական նպատակը հենց դատարանների և դատավորների անկախության երաշխավորումն է:

Սահմանադրական դատարանը, ուսումնասիրելով Դատական օրենսգրքով նախատեսված կարգապահական վարույթի հարուցման կառուցակարգի վերաբերյալ իրավակարգավորումները, հարկ է համարում ընդգծել, որ Արդարադատության նախարարի և Դատական օրենսգրքով նախատեսված մյուս սուբյեկտների լիազորությունները սահմանափակված են դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծմամբ, որից հետո նշված սուբյեկտները կարգապահական հարցերով միջամտող և վերջնական որոշում կայացնելու լիազորություն չունեն:

Արդարադատության նախարարի՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու լիազորության սահմանադրականությունը քննարկելիս այս գործոնն իրենց խորհրդատվական փաստաթղթերում կարևորել են նաև Վենետիկի հանձնաժողովը¹, Միավորված ազգերի կազմակերպությունը (այսուհետ՝ նաև ՄԱԿ)², Դատավորների միջազգային միությունը³, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (այսուհետ՝ նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ)⁴ և Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհուրդը⁵:

¹ Տե՛ս 2017թ. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի վերաբերյալ CDL-AD(2017)019 կարծիքը, Դատարանների և դատավորների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կարծիքների և զեկույցների թիվ CDL-PL(2019)008 ժողովածուն:

² Տե՛ս ՄԱԿ-ի 06.09.1985թ. Հանցավորության կանխման և հանցանք կատարած անձանց նկատմամբ վերաբերմունքի 7-րդ համաժողովի կողմից ընդունված՝ դատավորների անկախության հիմնական սկզբունքները:

³ Տե՛ս Դատավորների միջազգային միության կողմից 17.11.1999թ. ընդունված՝ դատական համընդհանուր խարտիայի 7.1-ին հոդվածը:

⁴ Տե՛ս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում դատական անկախության 2010թ. ընդունված Կիլյան հանձնարարականների 26-րդ կետը:

⁵ Տե՛ս Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհրդի 2002թ. ընդունած թիվ 3 կարծիքը:

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1(113)2024

Վերոնշյալի համատեքստում Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ կարգապահական վարույթի հարուցման ինստիտուտի՝ գործող օրենսդրությամբ նախատեսված կառուցակարգերին:

Դատական օրենսգրքի 145-րդ հոդվածը սահմանում է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինների շրջանակը, որի 1-ին մասի համաձայն՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեն՝

- «1) Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը.
- 2) Լիազոր մարմինը.

3) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ սույն հոդվածի 1.1-ին կետով նախատեսված դեպքերում»:

Այսպիսով, կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող սուբյեկտների բազմաթվությունը չէզոքացնում է մտավախությունն առ այն, որ սույն իրավասությունը կարող է կենտրոնացվել գործադիր իշխանության ձեռքում:

Այս համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը հանդես է գալիս որպես կարգապահական վարույթ հարուցող մասնագիտացված մարմին և լիազորված է մշտադիտարկում իրականացնելու միայն դատավորների գույքային դրության նկատմամբ՝ բացահայտելու ապօրինի հարստացման հնարավոր ռիսկերը, ինչպես նաև հայտարարագիրը դիտավորությամբ չներկայացնելու, հայտարարագրման ենթակա տվյալ(ներ)ը թաքցնելու և/կամ հայտարարագրում կեղծ տվյալ(ներ) ներկայացնելու, հայտարարագրմանն առնչվող ձևական (հայտարարագրի լրացման /հանձման կարգ/ պահանջներ) և բովանդակային (հայտարարագրում անզուշուրությամբ սխալ և/կամ ոչ ամբողջական տվյալ(ներ) ներկայացնելը) խախտումների հայտնաբերման դեպքերում և այդ հիմքով դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ դիմելու Բարձրագույն դատական խորհրդին (Դատական օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15 և 16-րդ կետեր):

Իր հերթին, Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը դատավորների ինքնակառավարման մարմնի՝ Ընդհանուր ժողովի կողմից ձևավորվող հանձնաժողովներից մեկն է, որը կազմված է վեց դատավոր

անդամներից և երկու դատավոր չհանդիսացող անդամներից (Դատական օրենսգրքի 77-րդ հոդվածի 4-րդ մաս), որոնց ներկայացնում են համապատասխան հասարակական կազմակերպությունները (Դատական օրենսգրքի 77-րդ հոդվածի 9-րդ մաս): Հետևաբար՝ նշյալ մարմնում գերազանցապես ներկայացված են դատավորները, իսկ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներն իրականացնում են առավելապես հասարակական դիտարկման (watchdog) գործառույթ, որի նպատակն է նվազեցնել դատավորների համայնքում կորպորատիվիզմի և կարգավիճակի ընդհանրությամբ պայմանավորված հատվածական շահերի հնարավոր գերակայությունը:

Նշյալի հետ համակցված՝ Արդարադատության նախարարը՝ որպես կարգապահական վարույթ հարուցող լիազոր մարմին, կարող է ապահովել դատավորների կարգապահական հարցերով գերակշռաբար դատավոր անդամներից բաղկացած՝ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից հնարավոր համայնքային համերաշխությունից ազդվող որոշումների շրջանցումը՝ դատավորների դեմ կարգապահական բողոքներ պարունակող հաղորդում ներկայացնող անձանց համար կարգապահական արդարադատության մատչելիության երաշխավորման համար: Չունենալով դատավորների հետ համակարգային և կորպորատիվ շահերով պայմանավորված փոխկապվածություն կամ իր որոշումների վրա ազդող այլ ինստիտուցիոնալ գործոններ՝ Արդարադատության նախարարը կարող է հանդես գալ որպես Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի գործունեությունը լրացնող ինստիտուցիոնալ սուբյեկտ: Հետևաբար՝ Արդարադատության նախարարի՝ վիճարկվող նորմով նախատեսված լիազորությունն արդյունավետորեն կարող է լրացնել դատավորների կարգապահական վարույթների հարուցման համակարգը՝ բացահայտելով դատավորների առերևույթ ոչ իրավաչափ վարքագծի՝ կարգապահական պատասխանատվության խնդիր պարունակող հնարավոր դեպքերը:

Սահմանադրական դատարանը դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և իրականացնելու ընթացակարգի՝ օրինականության, արդարության և արդյունավետության չափանիշներին համապատասխանությունը կարևորում է ոչ միայն դատավորների անկախության և

պաշտպանվածության, այլև արդարադատություն հայցող ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների առումով:

Այսպես՝ կարգապահական վարույթներով դատավորների կողմից թույլ տրված խախտումների արձանագրումն ու դատավորների նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցի կիրառումը ճյուղային դատավարական օրենսդրությամբ նախատեսված հիմքերով և կարգով հանդիսանում է նոր հանգամանք գործը դատավարական կարգով նորոգելու համար, ինչը նշանակում է նախկինում տեղ գտած իրավունքների խախտումների վերացման և իրավունքների վերականգնման արդյունավետ կառուցակարգի առկայություն:

Ընդ որում, հատկանշական է, որ Սահմանադրական դատարանը 2021 թվականի հոկտեմբերի 12-ի ՍԴՈ-1613 որոշմամբ Սահմանադրությանը հակասող է ճանաչել Դատական օրենսգրքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքները՝ այդ թվում այնքանով, որքանով սահմանադրական իմաստով խնդրահարույց էր համարել դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով քաղաքացիներին Բարձրագույն դատական խորհուրդ դիմելու ուղղակի իրավունք վերապահելը, մասնավորապես, խնդրահարույց համարելով դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավասություն ունեցող մարմինների մեկտեղման մոտեցումը և Սահմանադրության տեսանկյունից առավել ընդունելի համարելով դիմողների կողմից ստացվող բողոքների ինստիտուցիոնալ զտումը և դրանից հետո միայն պետական իշխանության **տարբեր թևեր** ներկայացնող մարմինների կողմից կարգապահական վարույթների հարուցումը՝ այնուհետև վերջիններս քննության ուղարկելով Բարձրագույն դատական խորհուրդ:

Անդրադառնալով Դիմողի այն պատճառաբանությանը, թե գործադիր իշխանությունը, օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով ունենալով անհամաձայնություն ցանկացած առարկայի դատարանի կայացրած որոշման հետ, կարող է դրան արձագանքել՝ դատավորին կարգապահական «հետապնդման» ենթարկելով, ապա Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ կարգապահական վարույթներում արդար դատաքննության երաշխիքների առկայությունը և արդար դատա-

քննության կառուցակարգերի շարունակական պատշաճ իրացումը չեզոքացնում են նման նպատակային միջնորդություններ ներկայացնելու հաջողության հեռանկարի վտանգը:

Ավելին, Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու սահմանադրաիրավական նշանակությունն ու հետևանքները հաշվի առնելով՝ պետք է բացառվեն կարգապահական վարույթ հարուցող մարմինների և կարգապահական պատասխանատվության հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու իրավասություն ունեցող մարմնի միջև այնպիսի փոխհարաբերությունները, որոնք անկողմնակալ դիտորդի մոտ կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ կարգապահական վարույթով նրանց անաչառության նկատմամբ կամ որևէ կերպ գնահատվել իբրև դատավորի և, առհասարակ, դատական իշխանության նկատմամբ ներգործության միջոց: Կարգապահական վարույթի ողջ գործընթացի սահմանադրականությունը, ի թիվս այլ երաշխիքների, պայմանավորված է նաև նրանով, որ բացառում է անկողմնակալ դիտորդի ողջամիտ կասկածն առ այն, որ գործընթացն իրականացվում է օրինականության, դատարանի գործունեությանը չմիջամտելու, դատավորի և դատարանի անկախությունը հարգելու, և ըստ այդմ՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքների նախատեսմամբ:

Ինչ վերաբերում է կարգապահական վարույթի հարուցման փուլում դատավորի անկախության և հեղինակության ապահովման ընթացակարգային պայմաններին, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Դատական օրենսգրքի 147-րդ հոդվածի 9-րդ մասի ուժով՝ վարույթ հարուցող մարմինը պարտավոր է ապահովել կարգապահական վարույթի գաղտնիությունը, իսկ նույն օրենսգրքի 153-րդ հոդվածում ամրագրված է Բարձրագույն դատական խորհրդում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը քննելիս դատավորի իրավունքների և պարտականությունների շրջանակը, հետևաբար՝ առկա են բավարար երաշխիքներ դատավորի անկախության և հեղինակության պաշտպանվածության համար: Ուստի՝ եթե հարուցված կարգապահական վարույթը կարճվում է, ապա դա որևէ ազդեցություն չի թողնում դատավորի պաշտոնեական առաջխաղացման վրա: Ավելին՝ Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ Սահմանադրությամբ և

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1(113)2024

Դատական օրենսգրքով ամրագրված են այն հիմնական երաշխիքները, որոնց շնորհիվ՝ նախադրյալներ են ստեղծված ինչպես արդարադատության պատշաճ իրականացման, այնպես էլ պաշտոնավարման ընթացքում ոչ իրավաչափ ներգործությունից զերծ լինելու համար: Այսինքն՝ Արդարադատության նախարարի կողմից կարգապահական վարույթ հարուցելու լիազորությունը չի կարող ազդել դատավորի անկախության և հեղինակության վրա, քանի որ Արդարադատության նախարարին վերապահված չէ որևէ լիազորություն, որի իրականացումը ներազդում է կարգապահական վարույթի հետագա ընթացքի վրա՝ կանխորոշելով դրա արդյունքով կայացվելիք՝ դատավորի համար միջամտող որոշումը:

4.3. Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև այն հարցին, թե Արդարադատության նախարարի կողմից դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելն արդյո՞ք համատեղելի է Սահմանադրության 63-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի երաշխիքների հետ:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

Դատական օրենսգրքի 90-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, ինչպես նաև իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու վերաբերյալ հարցերը քննելիս Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան»:

Քանի որ սույն դիմումի առարկան վերաբերում է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու փուլին, ստորև կքննարկվի այդ փուլի իրավական ընթացակարգի համապատասխանությունն արդար դատաքննության իրավունքից բխող երաշխիքներին:

Սահմանադրական դատարանը սույն գործին վերաբերելի է համարում արդար դատաքննության իրավունքի համակարգում ընդգրկված, մասնա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1(113)2024

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

վորապես՝ հետևյալ իրավունքները՝ իր գործով դիրքորոշում հայտնելու, ապացույց ներկայացնելու, ողջամիտ ժամկետում իր գործի քննության և անկախ ու անաչառ դատարանի կողմից գործի արդարացի քննության և պատճառաբանված դատական ակտի իրավունքները:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում գնահատել կարգապահական վարույթ հարուցելուց հետո՝ մինչև Բարձրագույն դատական խորհուրդ դիմելու հարցի լուծման ընթացակարգում դատավորի համար նախատեսված արդար դատաքննության բավարար երաշխիքների առկայությունը: Այսպես՝ Դատական օրենսգրքի 147-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Դատավորը, որի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել, իրավունք ունի՝

1) ներկայացնելու գրավոր բացատրություններ, ապացույցներ և անելու միջնորդություններ.

2) վարույթ հարուցող մարմնից ստանալու կարգապահական վարույթի նյութերի պատճենները.

3) սույն մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված իրավունքները իրականացնելու անձամբ կամ փաստաբանի միջոցով»:

Հաշվի առնելով, որ կարգապահական վարույթ հարուցելուց հետո համապատասխան պետական մարմինը կամ պաշտոնատար անձը պետք է գնահատի՝ արդյոք Բարձրագույն դատական խորհուրդ դիմելու իրավական և փաստական հիմքեր առկա՞ են, թե ոչ՝ վերջին դեպքում որոշում կայացնելով վարույթը կարճելու մասին, Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ դատավորին վերապահված ընթացակարգային երաշխիքները բավարար են իրեն կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունից պաշտպանվելու համար:

Անդրադառնալով գործի ողջամիտ ժամկետում քննության իրավունքին՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու փուլում պահպանված են նաև ողջամիտ ժամկետում քննության անհրաժեշտ երաշխիքները: Մասնավորապես՝ Դատական օրենսգրքի 146-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկվում է այն հարուցելու առիթը վարույթ հարուցող մարմնին հայտնի դառնալու

օրվանից մեկ ամսվա ընթացքում, իսկ փորձաքննություն նշանակվելու դեպքում՝ փորձաքննության կատարման համար անհրաժեշտ ժամկետով»:

Դատական օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հարուցված կարգապահական վարույթի տևողությունը մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելը չի կարող վեց շաբաթից ավելի լինել»:

Դատական օրենսգրքի վերաբերելի դրույթներով, մի կողմից՝ անհրաժեշտ ժամկետային սահմանափակում է նախատեսվում Արդարադատության նախարարի և կարգապահական վարույթ հարուցելու լիազորություն ունեցող մյուս մարմինների կողմից դատավորի նկատմամբ վարույթ հարուցելու առիթի օրինականությունն ու առերևույթ հիմքերի առկայությունն ստուգելու համար, իսկ մյուս կողմից՝ հնարավորություն է տրվում դատավորին ներկայացնելու սեփական դիրքորոշումն ու այն հիմնավորող ապացույցները՝ միևնույն ժամանակ կարգապահական վարույթ հարուցելու հարցը և հարուցման պարագայում վարույթի հետագա ընթացքը քննարկելու համար տրամադրելով այնքան ժամանակ, որքան ողջամտորեն բավարար կհամարվի անկողմնակալ քննություն իրականացնելու և դատավորի՝ որպես կարգապահական վարույթի հատուկ սուբյեկտի իրավունքներն ու հեղինակությունը պաշտպանելու համար:

Ինչ վերաբերում է անձի՝ անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի քննության իրավունքին, Սահմանադրական դատարանը դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու ինստիտուտը քննարկելիս նշյալ իրավունքը դիտարկում է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցող և կարգապահական պատասխանատվության ենթարկող մարմինների տարանջատման համատեքստում, ինչն արդեն իսկ քննարկվել է սույն որոշման 4.2-րդ կետում:

Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինների կողմից կարգապահական վարույթ հարուցելու գործընթացում կամայականությունների կանխման նպատակով Դատական օրենսգրքով հստակ և սպառիչ սահմանվել են կարգապահական վարույթ հարուցելու հիմքերը և առիթները (Դատական օրենսգրքի 124 և 146-րդ հոդվածներ), որոնք մի կողմից՝ հանդես են գալիս որպես խնդրո առարկա գործընթացը մեկնարկելու անհրաժեշտ

իրավական նախադրյալներ, մյուս կողմից՝ իբրև երաշխիքներ այն դատավորի համար, որի նկատմամբ համապատասխան կարգապահական վարույթ է հարուցվել:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

1(113)2024

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ



17 հունվարի 2024 թվականի
ՍԴՈ-1709

◆ ՏԵՂԵԿՎՈՐ



ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 145-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈՒ-1709 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի հունվարի 17-ի ՍԴՈՒ-1709 որոշմամբ (հրապարակվել է 2024 թվականի հունվարի 22-ին) որոշել է.

«1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը (...):»:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի հունվարի 17-ի ՍԴՈՒ-1709 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը՝ որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել

1(113)2024
◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
201

քվեարկությանը և քվեարկել կողմ կամ դեմ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը: Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք որոշման կամ եզրակացության ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որն անհապաղ հրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև հրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով և Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

Վերոգրյալ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ օրենքով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

1. Անդրադառնալով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանություններին և եզրահանգմանը, հարկ եմ համարում նշել հետևյալը.

1.1. Նախ կարծում եմ, որ սույն գործով քննության առարկա հարցի՝ ՀՀ արդարադատության նախարարի՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու լիազորության սահմանադրաիրավական բովանդակությունն անհրաժեշտ է բացահայտել իշխանությունների բաժանման և հավասարակշռման, ինչպես նաև դատական իշխանության անկախության Սահմանադրությամբ ամրագրված սկզբունքների համատեքստում:

Սահմանադրության 4-րդ հոդվածը որպես սկզբունք սահմանել է, որ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա:

Սահմանադրական դատարանը 2021 թվականի ապրիլի 29-ի ՍԴՈ-1590 որոշմամբ նշել է, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը ժողովրդավարության, իրավունքի գերակայության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության հիմնարար երաշխիք է, որը թույլ է տալիս կյանքի կոչել Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված Հայաստանի Հանրապետության՝ ժողովրդավարական և իրավական պետություն հանդիսանալու սահմանադրի հրամայականը:

Մեկ այլ՝ 2021 թվականի փետրվարի 23-ի ՍԴՈ-1578 որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման մասին Սահմանադրության 4-րդ հոդվածով նախատեսված սկզբունքի պահանջն է պետական իշխանության գործառույթային (օրենսդիր, դատական և գործադիր) և այդ գործառույթների իրագործմանը կոչված ինստիտուտների (պետական մարմինների և պաշտոնատար անձանց) հստակ տարանջատվածությունը: Իշխանությունների բաժանումը, սակայն, ինքնանպատակ չէ, քանի որ իշխանության իրականացման ընթացքում պետության կենսական կարևոր խնդիրների իրագործման նպատակով այն անհրաժեշտաբար պետք է զուգորդվի իշխանությունների հավասարակշռմամբ: Այսինքն՝ հստակ տարանջատ-

1(113)2024
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

վածության հետ մեկտեղ պետական իշխանության ճյուղերը անհրաժեշտաբար պետք է գտնվեն ընդհանուր հավասարակշռության մեջ:

Կարծում եմ՝ ելակետային պետք է դիտարկել այն հանգամանքը, որ իշխանությունների սահմանադրական հավասարակշռության ապահովման համար վերջիններիս գործառույթային, հակակշռող և զսպող լիազորությունները պետք է հստակորեն բաժանված լինեն՝ երաշխավորելով ինչպես իշխանությունների սահմանադրական գործառույթների համակարգային ամբողջականությունը, այնպես էլ իշխանության յուրաքանչյուր թևի գործառույթային անկախությունը:

Իշխանությունների բաժանման համակարգում իր ուրույն դերն ունի դատական իշխանությունը, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ իշխանության այս ճյուղին է վերապահված արդարադատություն իրականացնելու բացառիկ լիազորությունը¹: Ուստի իրավական պետությունում իշխանությունների ամրապնդման հանձնառությունն առաջին հերթին ենթադրում է անկախ և անաչառ դատական իշխանության առկայություն, իսկ դատական իշխանության ինքնուրույնությունն ապահովող անկախության սկզբունքի լիարժեք կենսագործման համար անհրաժեշտ է նախատեսել այդ սկզբունքի ապահովման իրական երաշխիքներ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշմամբ ընդգծել է հետևյալը. հաշվի առնելով այն կարևոր տեղը, որ դատական իշխանությունը զբաղեցնում է պետական մարմիններում ժողովրդավարական հասարակության մեջ և իշխանությունների տարանջատման և դատական իշխանության անկախության ապահովման աճող կարևորությունը՝ պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձվի դատական իշխանության անդամների պաշտպանությանը այնպիսի գործոններից, որոնք ազդելով նրանց կարգավիճակի կամ կարիերայի վրա՝ կարող են սպառնալ նրանց դատական անկախությանը և ինքնավարությանը²:

Սահմանադրական դատարանը 2021 թվականի հոկտեմբերի 12-ի ՍԴՈ-1613 որոշմամբ նշել է, որ դատարանների անկախությունը վերացական հասկացություն չէ: Այն ենթադրում է գործառնական, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անկախության այնպիսի նախադրյալներ, որոնք անհրաժեշտ ու բավարար են դատարանների ու ողջ

¹ Սահմանադրության 162-րդ հոդված:

² Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Bilgen v.Turkey թիվ 1571/07 գանգատով 09.03.2021 թվականի վճիռ, կետ 58:

դատական իշխանության անկախությունը երաշխավորելու համար: Սահմանադրությամբ ամրագրված են մի շարք հիմնարար սկզբունքներ, որոնք ամրագրում են դատարանների՝ որպես միասնական պետական իշխանության ինքնուրույն թևի՝ դատական իշխանության, և դատավորների՝ որպես դատական իշխանության միակ կրողների, սահմանադրական կարգավիճակը՝ սահմանադրորեն երաշխավորելով նրանց անկախությունը: Օրենքները կոչված են իրավական համարժեք երաշխիքներ ստեղծելու այդ անկախության ամրապնդման համար:

Սահմանադրական նշված հիմնարար սկզբունքները լիարժեքորեն կարող են կյանքի կոչվել ու երաշխավորվել ոչ միայն դատարանների ձևավորման ու դատավորների թեկնածուների ընտրության, նրանց անկախության համար անհրաժեշտ սոցիալական ու նյութական կամ այլ անհրաժեշտ ընթացակարգային երաշխիքներ սահմանելու, այլ նաև նրանց գործունեությանը միջամտության առումով իր մեջ լուրջ պոտենցիալ պարունակող՝ **դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի** վերաբերյալ արդյունավետ, գործուն, միևնույն ժամանակ հավասարակշռված կանոնակարգումներ սահմանելու միջոցով, որոնց պարագայում կբացառվի կամ նվազագույնի կհասցվի դատավորի գործունեությանն անհարկի, չհիմնավորված կամ թերի հիմնավորված բոլոր տեսակի ազդեցությունները:

Իր հերթին Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդն արձանագրել է, որ «Դատական իշխանությունը ժամանակակից ժողովրդավարական պետության երեք կարևոր և հավասարազոր հենասյուններից մեկն է: Այն կարևոր դեր և գործառույթներ է կատարում իշխանական մյուս երկու թևերի հետ հարաբերություններում: Այն ապահովում է, որ կառավարությունները և վարչական ապարատը հաշվետու լինեն իրենց գործողությունների համար (...): Իր այս գործառույթը կատարելու համար դատական իշխանությունը պետք է անկախ լինի այդ մարմիններից, այդ թվում՝ պետք է զերծ լինի նման մարմինների հետ ոչ պատշաճ կապերից կամ նրանց ազդեցությունից: Սա անպայմանորեն իր հետևանքներն ունի դատավորի կարիերայի գրեթե բոլոր ասպեկտների վրա՝ վերապատ-

1(113)2024
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

րաստումից մինչև նշանակում և առաջխաղացումից մինչև **կարգապահական պատասխանատվություն**¹»:

Այսպիսով, դատական իշխանության անկախությունը ենթադրում է այնպիսի օրենսդրական երաշխիքների առկայություն, որոնց պայմաններում դատարաններն իրենց գործառնության լիազորությունները կարող են իրականացնել՝ զերծ լինելով արտաքին ներգործությունից և ճնշումներից: Ուստի դատական իշխանության և դրա ինստիտուտների կազմավորումը և գործունեության անկախությունը պետք է իրականացվի և ապահովվի այնպես, որպեսզի իշխանության այս թևը զերծ մնա քաղաքական գործընթացներից և ազդեցություններից: Այդուհանդերձ, դատական իշխանության ներկայացուցիչների գործառնության անկախությունը չի կարող բացարձակ բնույթ կրել, այն կարող է ենթարկվել նաև սահմանափակումների: Ըստ այդմ՝ դատական իշխանության նկատմամբ հանրային վստահությունն ապահովելու նկատառումներից էլ բխում է դատավորի դատական գործառնության նկատմամբ որոշակի կարգապահական վերահսկողություն սահմանելու անհրաժեշտությունը: Թեև կարգապահական պատասխանատվությունը դատավորի պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման արդյունքում առաջացած խնդիրների վերացմանը միտված, օրենսդրությամբ նախատեսված բնականոն գործընթաց է՝ ուղղված դատավորի նկատմամբ համապատասխան ներգործության միջոցներ կիրառելուն, այդուհանդերձ ելակետային է օրենսդրությամբ այնպիսի երաշխիքներ պարունակող կառուցակարգի նախատեսումը, որը հնարավորություն կտա ապահովելու դատավորի կարգապահական պատասխանատվության ինստիտուտի՝ նախատեսված նպատակի արդյունավետ գործադրումը՝ պայմանով, որ այն որևէ կերպ չխաթարի Սահմանադրությամբ ամրագրված՝ դատական իշխանության անկախության և իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիմնարար սկզբունքները:

1.2. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը բխում է Սահմանադրության 164-րդ հոդվածից,

¹ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի՝ «Դատական իշխանության անկախության և դատավորների անփոփոխելիության չափորոշիչների մասին» թիվ 1 (2001) կարծիք, կետ 11:

որի 5-րդ մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և կարգը սահմանվում են Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով: Փաստորեն, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունն ուղղակիորեն սահմանված է հիմնական օրենքով՝ Սահմանադրությամբ, իսկ դրա հիմքերն ընթացիկ օրենսդրությամբ: Ըստ այդմ, «Դատավորի կարգապահական պատասխանատվությունը» վերտառությամբ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ գլխում ամրագրված դրույթներով նախատեսվել է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության է ենթարկում Բարձրագույն դատական խորհուրդը¹, իսկ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեն էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը, Լիազոր մարմինը², Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ նույն հոդվածի 1.1-ին կետով նախատեսված դեպքերում³:

Այսպիսով, ըստ օրենսդրական կարգավորումների՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինների շարքին է դասվում նաև ՀՀ արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարը:

Մինչդեռ Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով) և Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և օրենքի գերակայության գլխավոր տնօրինության (DGI) Մարդու իրավունքների տնօրինությունը (DHR), «ՀՀ դատական օրենսգրքի և որոշ այլ օրենքների փոփոխությունների վերաբերյալ» 2019 թվականին տրված համատեղ կարծիքով⁴ անդրադառնալով Արդարադատության նախարարի՝ դատավորի նկատ-

¹ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի 1-ին մաս:

² «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 102-րդ հոդվածի 4-րդ մասից բխում է, որ Լիազոր մարմինը արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարն է:

³ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի 1-ին մաս:

⁴ Վենետիկի հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և օրենքի գերակայության գլխավոր տնօրինության Մարդու իրավունքների տնօրինության՝ «ՀՀ դատական օրենսգրքի և որոշ այլ օրենքների փոփոխությունների վերաբերյալ» CDL-AD (2019) 024 համատեղ կարծիք (թիվ 963/2019), կետ 30:

մամբ կարգապահական վարույթ հարուցելու լիազորություն ունեցող մարմին լինելու հարցին, նշել է, որ Վենետիկի հանձնաժողովը քննադատական դիտարկումներ է կատարել Չեռնոգորիայի կողմից ընդունված համադրելի դրույթի վերաբերյալ, որով արդարադատության նախարարին իրավունք է վերապահվել կարգապահական վարույթ հարուցել դատավորների նկատմամբ: Ըստ վերջիններիս՝ նման դեպքում հարց է առաջանում, թե արդյոք դա համահունչ է դատական իշխանության անկախությանը և իշխանությունների տարանջատման սկզբունքին: Իսկ ՀՀ դատական օրենսգրքի վերաբերյալ 2017 թվականի հոկտեմբերի կարծիքով¹ Վենետիկի հանձնաժողովը նշել է հետևյալը. հաշվի առնելով այն, որ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովն առավել բազմազան կազմ ունի, քան Արդարադատության նախարարը, կարելի է ենթադրել, որ նախարարի լիազորությունները կարող են աստիճանաբար վերացվել նոր համակարգի (Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի) գործարկումից հետո: Այնուհետև՝ Վենետիկի հանձնաժողովը և Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և օրենքի գերակայության գլխավոր տնօրինությունը (DGI) ՀՀ դատական օրենսգրքի փոփոխությունների նախագծի վերաբերյալ 2022 թվականի համատեղ կարծիքով² վերահաստատել են վերոնշյալ դիրքորոշումը:

Բացի այդ, Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբը (այսուհետ՝ ԳՐԵԿՈ) «Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում» Հայաստանի կողմից պարտավորությունների կատարման վերաբերյալ իր՝ 2017 թվականի զեկույցում³ նշել է, որ գործադիր իշխանության մաս հանդիսացող Արդարադատության նախարարի ներգրավվածությունը դատավորների նկատմամբ կարգապահական վարույթում կարող է դիտարկվել որպես դատական անկախության հետ ոչ ամբողջությամբ

¹ Վենետիկի հանձնաժողովի՝ «ՀՀ դատական օրենսգրքի վերաբերյալ» CDL-AD (2017) 019 կարծիք (թիվ 893/2017), կետ 136:

² Վենետիկի հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և օրենքի գերակայության գլխավոր տնօրինության (DGI)՝ «Հայաստանի Դատական օրենսգրքի փոփոխությունների նախագծի վերաբերյալ» CDL-AD (2022) 044 համատեղ կարծիք (թիվ 1101/2022), կետ 9:

³ ԳՐԵԿՈ-ի՝ «Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում» Հայաստանի կողմից պարտավորությունների կատարման վերաբերյալ՝ 2017 թվականի դեկտեմբերի 8-ի GrecoRC4(2017)15 զեկույց, կետ 45:

համատեղելի: Այնուհետև՝ ԳՐԵԿՈՒ-ն նշված դիրքորոշումը կրկին հաստատել է իր՝ 2019 թվականի զեկույցում՝ միաժամանակ ափսոսանք հայտնելով, որ Արդարադատության նախարարը դեռևս ունի դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու գործառույթ, ինչպես նաև իրավունք՝ ստանալու տեղեկություններ այն ընթացիկ դատական գործերի վերաբերյալ, որոնց վերաբերյալ դեռևս չկա օրինական ուժի մեջ մտած դատական ակտ: ԳՐԵԿՈՒ-ն նաև պնդել է իր տեսակետն այն կապակցությամբ, որ Արդարադատության նախարարի դերը կարգապահական վարույթներում պետք է դադարեցվի¹: Իսկ 2021 թվականի զեկույցում կրկին վերահաստատել է, որ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերում Արդարադատության նախարարն այլևս չպետք է դերակատարություն ունենա, քանի որ դա անհամատեղելի է դատական իշխանության անկախության սկզբունքի հետ²: Նշված հարցի առնչությամբ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը նշել է, որ պետության ղեկավարը, Արդարադատության նախարարը կամ քաղաքական իշխանությունների ցանկացած այլ ներկայացուցիչ չեն կարող ներգրավված լինել կարգապահական հարցերով զբաղվող մարմնի կազմում³:

Ելնելով վերոգրյալ միջազգային փաստաթղթերից՝ կարելի է եզրակացնել, որ Արդարադատության նախարարին դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն վերապահելը միջազգային կառույցների կողմից դիտարկվել է որպես դատական իշխանության անկախության սկզբունքին, ինչպես նաև իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիմնարար սկզբունքին հակասող կարգավորում:

Սույն գործով Սահմանադրական դատարանը, անրադառնալով Արդարադատության նախարարի կողմից դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու լիազորությանը, նշել է, որ «Գործադիր իշխանության ներգրավվածությունը դատավորների սահմա-

¹ ԳՐԵԿՈՒ-ի՝ «Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում» Հայաստանի կողմից պարտավորությունների կատարման վերաբերյալ 2019 թվականի դեկտեմբերի 6-ի GrecoRC4 (2019) 21 զեկույց, կետ 44, 47:

² ԳՐԵԿՈՒ-ի՝ «Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում» Հայաստանի կողմից պարտավորությունների կատարման վերաբերյալ 2021 թվականի սեպտեմբերի 22-ի GrecoRC4 (2021) 15 զեկույց, կետ 43:

³ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի՝ «Հասարակությանը ծառայող բարձրագույն դատական խորհրդի մասին» թիվ 10 (2007) կարծիք, կետ 63:

նադրաչափ գործունեության ապահովման նպատակով քաղաքականության մշակմանն ու իրականացմանը բխում է դատավորի անկախության և անաչառության վերաբերյալ Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասից, որպես դատական իշխանության առանցքային կառուցակարգ, և դատարանի անկախության և անաչառության մասին Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասից, որպես արդար դատաքննության բաղադրիչ: Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով և 164-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վերոհիշյալ սահմանադրական հրամայականները հանրային իշխանությանը ծանրաբեռնում են դրանց ապահովմանն ուղղված՝ օրենսդրի կողմից նշված հիմքերով և ընթացակարգով միջոցներ ձեռնարկելու լիազորությամբ, որը, ի թիվս կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող այլ մարմինների, իրականացվում է նաև Արդարադատության նախարարի կողմից: Հետևաբար՝ Արդարադատության նախարարությանն առաջադրված վերոնշյալ խնդրի իրականացումը ենթադրում է համարժեք լիազորությունների առկայություն, որն ուղղված է վերը նշված նպատակի իրականացմանը»:

Վերոնշյալ դիրքորոշման կապակցությամբ հարկ եմ համարում նշել հետևյալը.

- ◆ Արդարադատության նախարարությունը, հանդիսանալով գործադիր իշխանության հանրապետական մարմին, կոչված է մշակելու և իրականացնելու «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքով իրեն վերապահված գործունեության ոլորտում¹ Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը²: Այսինքն՝ Արդարադատության նախարարության գործունեության նպատակն

¹ Հարկադիր կատարման, քրեակատարողական, պրոբացիայի, սնանկության, փաստաբանության, հաշտարարության, նոտարական գործունեության, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման, իրավաբանական անձանց պետական գրանցման և հաշվառման, անհատ ձեռնարկատերերի հաշվառման, զանգվածային լրատվության միջոցների հաշվառման, անձնական տվյալների պաշտպանության, շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման, իրավական փորձաքննության, միջազգային իրավական փոխօգնության, հակակոռուպցիոն և պետական ծառայությունների մատուցման միասնական գրասենյակների գործունեության ոլորտներ՝ համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 3-րդ մասի:

² ՀՀ արդարադատության նախարարության կանոնադրության 1-ին մաս:

ուղղված է բացառապես կոնկրետ ոլորտներում կառավարության քաղաքականության մշակմանն ու իրականացմանը, ուստի օրենսդրի կողմից սահմանվող ցանկացած լիազորություն պետք է ուղղակիորեն բխի վերջինիս գործունեության նպատակից:

Տվյալ դեպքում Արդարադատության նախարարին դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն վերապահելը որևէ առնչություն չունի վերջինիս գործունեության նպատակի, ընդհուպ կառավարության քաղաքականության մշակման և իրականացման հետ, ավելին՝ նման իրավունքի վերապահումն ըստ էության ենթադրում է գործադիր իշխանության կողմից դատավորի իրականացրած արդարադատության նկատմամբ վերահսկողություն՝ խախտելով վերջիններիս գործառութային անկախությունը: Մինևույն ժամանակ նկատի ունենալով դատական իշխանության կողմից արդարադատություն իրականացնելու միջոցով գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավասությամբ օժտված լինելու հանգամանքը՝ կարծում եմ, որ նման կառուցակարգի սահմանումը կարող է պարունակել դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու միջոցով վերջիններիս վրա ճնշում գործադրելու գործուն ռիսկ:

Բացի վերոնշյալից, Սահմանադրական դատարանը նաև նշել է, որ «Արդարադատության նախարարը՝ որպես կարգապահական վարույթ հարուցող լիազոր մարմին, կարող է ապահովել դատավորների կարգապահական հարցերով զերակշռաբար դատավոր անդամներից բաղկացած՝ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից հնարավոր համայնքային համերաշխությունից ազդվող որոշումների շրջանցումը՝ դատավորների դեմ կարգապահական բողոքներ պարունակող հաղորդում ներկայացնող անձանց համար կարգապահական արդարադատության մատչելիության երաշխավորման համար: Չունենալով դատավորների հետ համակարգային և կորպորատիվ շահերով պայմանավորված փոխկապվածություն կամ իր որոշումների վրա ազդող այլ ինստիտուցիոնալ գործոններ՝ Արդարադատության նախարարը կարող է հանդես գալ որպես Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի գործունեությունը լրացնող ինստիտուցիոնալ սուբյեկտ»:

Համաձայն չլինելով նշված դիրքորոշման հետ՝ հարկ եմ համարում նշել հետևյալը.

Ինչպես վերը նշվեց գործող կարգավորումները դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն վերապահել են նաև Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին, որը «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի փոփոխությունների արդյունքում այլևս բաղկացած չէ միայն դատավոր անդամներից, այլ դրա կազմում ընդգրկվել են նաև ոչ դատավոր անդամներ¹ (փոփոխությունները կատարվել են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-197-Ն օրենքով, որն ընդունվել է 25.03.2020 թվականին, իսկ ուժի մեջ մտել՝ 02.05.2020 թվականին):

Այս կապակցությամբ անհրաժեշտ է հիշատակել Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումը՝ ՀՀ դատական օրենսգրքի նախագծով դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինների ընտրության վերաբերյալ: Մասնավորապես՝ Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ Կարգապահական հարցերի հանձնաժողովը միայն դատավորներից կազմված լինելու արդյունքում առաջացող ռիսկերը նվազեցնելու մի քանի լուծում է հնարավոր: Հնարավոր լուծում է Կարգապահական հարցերի հանձնաժողովի կառուցվածքի հավասարակշռումը՝ դրանում ներառելով նաև իրավաբանական մասնագիտություն ունեցող ոչ դատավոր անդամների²:

Կարծում եմ, որ օրենսդրությամբ ոչ միատարր կազմ ունեցող Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն վերապահելն արդեն իսկ հանդիսանում է արդյունավետ կառուցակարգ՝ դատավորի կարգապահական պատասխանատվության ինստիտուտի՝ օրենսդրությամբ սահմանված նպատակի իրագործման համար:

Վերոնշյալից ելնելով՝ գտնում եմ, որ գործադիր իշխանության թևի ներկայացուցիչ Արդարադատության նախարարին դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու անմիջական

¹ «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 4-րդ մաս:

² Վենետիկի հանձնաժողովի՝ «ՀՀ դատական օրենսգրքի վերաբերյալ» CDL-AD (2017) 019 կարծիք (թիվ 893/2017), կետ 135:

լիազորություն վերապահելը չի բխում ո՛չ իշխանությունների բաժանման և հավասարակշռման, ո՛չ էլ դատական իշխանության անկախության հիմնարար սկզբունքներից: Միաժամանակ գտնում են, որ որպես այլընտրանքային լուծում հակակշիռ ստեղծելու տեսանկյունից Արդարադատության նախարարի կողմից դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն կարող է վերապահվել բացառապես միջնորդավորված ձևով, օրինակ այն կարող է դրսևորվել Արդարադատության նախարարի կողմից էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի ոչ դատավոր անդամների թեկնածության առաջադրմամբ, որպիսի պայմաններում կապահովվի Արդարադատության նախարարի մասնակցությունը էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու գործընթացին:

1.3. Բացի վերոնշյալից գտնում են, որ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտն իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի համատեքստում քննարկելիս էական նշանակություն ունի նաև այն հարցի պարզումը, թե արդյոք գործադիր իշխանության ներկայացուցչի կողմից կարգապահական վարույթ հարուցելու լիազորության վերապահումը չի ենթադրում գործուն ռիսկ՝ դատական իշխանության անկախության վրա ազդեցություն ունենալու տեսանկյունից:

Այսպես, կարգապահական պատասխանատվության առաջացման հնարավորությունը նախատեսել է նաև Սահմանադրությունը, որի 164-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորը չի կարող պատասխանատվության ենթարկվել արդարադատություն իրականացնելիս հայտնած կարծիքի կամ կայացրած դատական ակտի համար, բացառությամբ երբ առկա են հանցագործության կամ կարգապահական խախտման հատկանիշներ: «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի կարգավորումներից հետևում է, որ Արդարադատության նախարարի կողմից կարգապահական վարույթ հարուցելու հիմք է հանդիսանում նաև դատավորի կողմից արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ

դատավարական իրավունքի նորմի խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ¹:

Այս համատեքստում զգայուն հարցերից է կարգապահական պատասխանատվության «արժանի» վարքագծի շրջանակի պարզումը: Այդ կապակցությամբ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը սահմանում է հետևյալ կանոնները. դատական ակտի բեկանումը կամ փոփոխումը ինքնին հիմք չէ այդ ակտը կայացրած դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար, ինչպես նաև արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս օրենքի մեկնաբանությունը, փաստերի և ապացույցների գնահատումն ինքնին չեն կարող հանգեցնել կարգապահական պատասխանատվության: Նշվածները միջազգայնորեն ընդունված բացառություններն են դատավորներին նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտման համար կարգապահական պատասխանատվության ենթարկելու շրջանակից, սակայն կարևոր է, թե այս գնահատողական հասկացությունները գործնականում ինչպես են կիրառվում կարգապահական վարույթ հարուցելու իրավունք ունեցող գործադիր իշխանության ներկայացուցչի՝ Արդարադատության նախարարի, և կարգապահական վարույթ իրականացնող մարմնի՝ Բարձրագույն դատական խորհրդի կողմից:

Նկատի ունենալով, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը ենթադրում է նաև միջամտություն դատավորի գործառությանին անկախությանը, ապա ոչ միայն կարգապահական վարույթի իրականացման, այլ նաև դրա հարուցման ընթացակարգի վերաբերյալ օրենսդրական կարգավորումները պետք է համահունչ լինեն դատական իշխանության անկախության սկզբունքին:

Թեև «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի կարգավորումների համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության է ենթարկում Բարձրագույն դատական խորհուրդը, այդուհանդերձ այդպիսի պատասխանատվության ենթարկելու նախադրյալ է հանդիսանում նաև Արդարադատության նախարարի կողմից դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու լիազորությամբ հանդես գալը: Ուստի

¹ «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ:

նման լիազորությամբ հանդես գալու իրավունքը հարկ եմ համարում քննարկման առարկա դարձնել նաև կարգապահական վարույթի հարուցման հիմք հանդիսացող՝ դատավորի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտում թույլ տրված լինելու համատեքստում:

Ընդհանուր առմամբ դատավորի մասնագիտական անկախությունը նշանակում է, որ դատավորն արդարադատություն իրականացնելիս ղեկավարվում է միայն Սահմանադրությամբ և օրենքներով: Ո՛չ օրենսդիր, ո՛չ գործադիր իշխանության մարմինները, և ո՛չ էլ դատական իշխանության ներկայացուցիչները չեն կարող դատավորին թելադրել, թե վերջինս ինչպես պետք է լուծի իր քննությանը հանձնված գործը կամ հարցը: Այս տեսանկյունից ընդունված է տարբերակել դատավորի «արտաքին» և «ներքին» անկախությունը¹: Արտաքին անկախությունը վերաբերում է օրենսդիր և գործադիր իշխանության մարմիններից դատարանի անկախությանը, ինչը ենթադրում է, որ պետք է բացառվեն նրանց կողմից դատարանների և դատավորների վրա «ոչ պատշաճ ձևով» ազդելու փորձերը: Իսկ ներքին անկախությունը ենթադրում է դատավորի անկախություն դատական իշխանության ներսում, այսինքն՝ անկախություն գործընկեր դատավորներից, ինչպես նաև այլ դատարանների դատավորներից²: Ընդ որում, դատավորի մասնագիտական անկախությունը վերաբերում է գործի քննության ողջ ընթացքին, և օրենսդրական կարգավորումների խնդիրն է ապահովել, որ դատավորի կայացրած

¹ Art. 2 and 3 of the Universal Charter of the Judge (adopted on 17 November 1999 and updated on 14 November 2017); Chapters II and III of the Recommendation CM/Rec(2010)12 of the Committee of Ministers [of the Council of Europe] to member states on judges: independence, efficiency and responsibilities (2010); Art. 2.03 and 2.04 of the Montreal Universal Declaration on the Independence of Justice (1983); Art. 1.3 and 1.4 of the Bangalore Principles of Judicial Conduct (2007):

² Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով դատավորների ներքին անկախությանը, արտահայտել է այն դիրքորոշումը, համաձայն որի՝ դատական անկախությունը պահանջում է, որ առանձին դատավորները անհարկի ազդեցություններից զերծ լինեն ոչ միայն դատական համակարգից դուրս, այլև դրա ներսում: Դատական այս ներքին անկախությունը պահանջում է, որ նրանք զերծ լինեն դատավորների կամ այն անձանց իրահանգներից կամ ճնշումներից, որոնք դատարանում ունեն վարչական լիազորություններ, ինչպիսիք են դատարանի նախագահը կամ դատարանի բաժանմունքի նախագահը: Դատական համակարգի ներսում և, մասնավորապես, իրենց դատական վերադասներից դատավորների անկախությունն ապահովող բավարար երաշխիքների բացակայությունը կարող է հանգեցնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն եզրակացությանը, որ դիմումատուի կասկածները դատարանի (անկախության և) անաչառության վերաբերյալ կարող են լինել օբյեկտիվորեն արդարացված (տե՛ս, օրինակ, Parlov-Tkalčić v Croatia թիվ 24810/06 գանգատով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 22.12.2009 թվականի վճիռը, կետ 86):

◆ 1(113)2024

◆ ՏԵՂԵԿՎԳԻԻ

◆ ՍԱՀՄԱՆԱԿՐԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ

որոշումները և դրանց հիմքում ընկած ողջ գործընթացը զերծ լինեն կողմնակի ազդեցությունից և միջամտությունից:

Դատավորի գործառնությանն անկախության սկզբունքից է բխում դատավորի՝ ներքին համոզմունքով առաջնորդվելու գաղափարը: Հարկ եմ համարում նշել, որ «ներքին համոզում կամ համոզմունք» արտահայտությունը թե՛ դատավարական օրենսգրքերում, թե՛ մասնագիտական գրականության մեջ առավելապես կիրառվում է ապացույցների գնահատման և դրա հիման վրա որևէ փաստ հաստատված համարելու համատեքստում, սակայն այն ավելի լայն իմաստով կարելի է բնորոշել որպես որոշակի օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների ու գործոնների հիման վրա անձի, տվյալ դեպքում՝ դատավորի մոտ ձևավորված վստահություն կոնկրետ հարցի քննարկման արդյունքների նկատմամբ (օրինակ՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու մասին և այլն): Նման համոզմունքը հանգեցնում է համապատասխան իրավական գնահատականների, ընկած է դատավորի կողմից կայացվող որոշումների հիմքում և պայմանավորում է դրանցում ներկայացվող իրավական դիրքորոշումները: Հենց նշված լայն իմաստով էլ սույն հատուկ կարծիքում օգտագործվում է «ներքին համոզմունք» արտահայտությունը՝ չսահմանափակվելով միայն ապացույցների գնահատման գործընթացով:

◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ

Հարկ է նշել, որ նյութական կամ դատավարական նորմի խախտման հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հնարավորության վերաբերյալ միջազգային հանրության կողմից ընդունված միասնական մոտեցում առկա չէ: Մի կողմից՝ դատավորի անկախությանը միջամտելու ռիսկերը խոսում են դատավորի կայացրած որոշումների նկատմամբ կարգապահական վերահսկողության իրականացումը բացառելու օգտին: Սակայն մյուս կողմից՝ դատական համակարգի նկատմամբ հանրային վստահությունն ապահովելու նկատառումներից կարելի է բխեցնել դատավորի դատական գործառնության նկատմամբ որոշակի կարգապահական վերահսկողություն սահմանելու անհրաժեշտությունը:

Մինչդեռ դատական որոշումների բովանդակության ուսումնասիրումն ինչպես կարգապահական վարույթ հարուցելու լիազորություն ունեցող Արդարադատության նախարարի, այնպես էլ կարգապահական վարույթ

իրականացնող մարմնի՝ Բարձրագույն դատական խորհրդի կողմից կարող է հանգեցնել հետևյալ խնդրահարույց իրավիճակներին. Նախ՝ գործադիր իշխանության ներկայացուցիչ Արդարադատության նախարարը դատավորի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի նորմի ենթադրյալ խախտում թույլ տրված լինելու հանգամանքը բացահայտելու համար պետք է գնահատման առարկա դարձնի դատավորի կողմից արդարադատություն իրականացնելու որակը, ինչը ենթադրում է գործադիր իշխանության կողմից դատական իշխանության անկախության ուղղակի միջամտություն: Բացի այդ, դա կարող է սահմանափակել դատական անկախությունը որոշումների կայացման գործընթացում՝ ազդելով դատավորի՝ ներքին համոզմունքով առաջնորդվելու ազատության վրա: Օրինակ՝ նախկինում գործող ՀՀ դատական օրենսգիրքը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ժամկետի հաշվարկը սկսում էր դատական ակտը կայացնելու պահից¹ (նշված կարգավորումը գործել է մինչև 09.04.2018 թվականը), ինչը նշանակում էր, որ դատական խորհուրդը կարող էր դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում կայացնել այն պայմաններում, երբ դեռևս դատական ակտի դեմ ներկայացված բողոքը քննվում էր վերադաս դատարանի կողմից: Այս կարգավորման հիմնական քննադատությունն այն էր, որ վերադաս դատարանի դատավորը կարող էր կաշկանդվել դատական խորհրդի դիրքորոշմամբ և չգործել իր ներքին համոզմամբ: Հետագայում այս մտահոգությունը փարատելու որոշակի փորձ արվեց «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով (ուժի մեջ է մտել 09.04.2018 թվականին), որը սահմանեց, որ նյութական կամ դատավարական նորմի խախտման հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ժամկետը հաշվարկվում է խախտումը վարույթ հարուցող մարմնի կողմից հայտնաբերվելու պահից², սակայն եթե խախտումը հայտնաբերվել է մինչև տվյալ գործով

¹ ՀՀ դատական օրենսգրքի (ուժը կորցրել է 09.04.2018 թվականին) 153.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթը կարող է հարուցվել սույն օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերով՝ տվյալ գործով կամ հարցով համապատասխան դատական ակտը կայացնելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում»:

² «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 144-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով

1(113)2024
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՈՒՍՏԱՆՈՒԿՆԵՐԿԱՆ ՈՒՍՏԱՐԱՆ

1(113)2024

◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ ԴԱՏԱՐԱՆ

Եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, ապա ժամկետը հաշվարկվում է տվյալ ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից¹: Այդուհանդերձ, նշված սահմանադրական օրենքում տեղ է գտել նաև այնպիսի կարգավորում, որի համաձայն՝ եթե դատավորի կողմից թույլ են տրվել դատավարական նորմերի այնպիսի խախտումներ, որոնք հանգեցնում են դատական պաշտպանության իրավունքի խախտման և արդարադատության խաթարման, ապա վարույթ կարող է հարուցվել նաև մինչև տվյալ եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը: Ասվածը նշանակում է, որ քննարկված մտահոգությունն այդպես էլ ամբողջությամբ չի վերացել, քանի որ ամեն դեպքում իսպառ չեն բացառվել այնպիսի իրավիճակները, երբ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննվի և լուծվի միննույն որոշման իրավաչափության՝ վերադաս դատարանում քննության ընթացքում:

Նշված կարգավորմանը զուգահեռ դատավարական իրավահարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերում ամրագրվել է կարգավորում առ այն, որ նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը դատական ակտի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման²: Հիշյալ կարգավորումներից հետևում է, որ դատական սխալի առկայության հաստատումը հանդիսանում է վերադաս դատական ատյանների կողմից

վարույթը կարող է հարուցվել արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտման հիմքով՝ խախտումը վարույթ հարուցող մարմնի կողմից հայտնաբերվելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում: Սույն կետով նախատեսված հիմքով կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, եթե եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է ութ տարի»:

¹ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 144-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «եթե սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված խախտումը հայտնաբերվել է մինչև տվյալ գործով եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, ապա նույն կետով նախատեսված մեկ տարվա ժամկետը հաշվարկվում է տվյալ ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից, իսկ եթե դատավորի կողմից թույլ են տրվել դատավարական նորմերի այնպիսի խախտումներ, որոնք հանգեցնում են դատական պաշտպանության իրավունքի խախտման և արդարադատության խաթարման, ապա վարույթ կարող է հարուցվել նաև մինչև տվյալ եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը»:

² ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 2-րդ մաս, 152-րդ հոդվածի 1-ին մաս, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 364-րդ հոդվածի 2-րդ մաս, 365-րդ հոդվածի 1-ին մաս, 01.07.1998 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդված, 30.06.2021 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 354-րդ հոդվածի 1-ին մաս:

քննարկման և գնահատման հարց: Նման պայմաններում իրավունքի նորմի խախտման հիմքով կարգապահական պատասխանատվությունը կարող է կարգապահական վարույթը վերաճել քողարկված բողոքարկման վարույթի, որի շրջանակում կարգապահական վարույթ հարուցող Արդարադատության նախարարի, այնուհետև՝ Բարձրագույն դատական խորհրդի կողմից ըստ էության քննարկվեն այն հարցերը, որոնք պետք է քննվեն սովորական դատավարական կարգով՝ վերադաս դատարաններում բողոքի քննության շրջանակում: Նշված հանգամանքը դիսկեր է պարունակում այն տեսանկյունից, որ եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտած չլինելու դեպքում որևէ նորմի խախտման հիմքով Արդարադատության նախարարի կողմից դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ նախաձեռնելու, այնուհետև՝ Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքում վերջիններիս կողմից նշված խախտմանը գնահատական տալը կարող է կաշկանդել վերադաս դատական ատյանի դատավորներին եզրափակիչ դատական ակտի բողոքարկմամբ բարձրացված հարցին իրենց ներքին համոզմամբ դիրքորոշում արտահայտելիս, քանի որ մշտապես առկա է լինելու այն գիտակցումը կամ մտայնությունը, որ վերադաս դատական ատյանի կողմից ստարադաս դատարանի դիրքորոշումը հիմնավոր համարելը ևս հանգեցնելու է վերադաս դատական ատյանի դատավորների նկատմամբ նույն հարցի առնչությամբ կարգապահական վարույթ հարուցելուն: Հետևաբար նման պայմաններում վտանգի տակ է դրվելու վերադաս դատական ատյանի դատավորների կողմից իրենց ներքին համոզմամբ և անկախության սկզբունքի պահպանմամբ արդարադատություն իրականացնելը:

Բացի վերոնշյալից, չի բացառվում նաև այնպիսի իրավիճակներ, երբ կարգապահական վարույթ իրականացնող մարմինը և վերադաս դատական ատյանները նյութական կամ դատավարական նորմի խախտման վերաբերյալ ունենան իրար ակնհայտ հակասող դիրքորոշումներ: Ավելին՝ դա կարող է առաջացնել այնպիսի իրավիճակներ, երբ գործադիր իշխանության ներկայացուցչի նախաձեռնությամբ սկիզբ առած կարգապահական վարույթով Բարձրագույն դատական խորհուրդը ստանձնի դատական նախադեպ ստեղծելու լիազորություն, քանի որ դատավորները հետագայում որոշումներ կայացնելիս ստիպված կլինեն կաշկանդվել այդ

մարմնի արտահայտած դիրքորոշումներով: Սա դատավորի համար կարող է նաև ստեղծել հակասական իրավիճակներ, երբ օրենքի և նորմատիվ իրավական այլ ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական գործառույթ ունեցող Վճռաբեկ դատարանը որևէ հարցի կապակցությամբ արտահայտի այնպիսի իրավական դիրքորոշում, որը չհամընկնի դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավասություն ունեցող Բարձրագույն դատական խորհրդի՝ միևնույն հարցի կապակցությամբ արտահայտած այլ դիրքորոշման հետ: Մինչդեռ սահմանադիրը հռչակել է, որ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության ապահովումը Վճռաբեկ դատարանի առաքելությունն է, որն իրականացվում է դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով¹: Այսինքն՝ սահմանադիրը միայն Վճռաբեկ դատարանին է օժտել օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական առաքելությամբ:

Փաստորեն, չնայած դատական ակտի օրինականության ստուգումը բացառապես եռաստիճան դատական համակարգին պատկանելու հանգամանքին՝ նյութական կամ դատավարական նորմի խախտման հիմքով Արդարադատության նախարարը դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու, այնուհետև՝ Բարձրագույն դատական խորհուրդը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորության շրջանակում փաստացի գնահատում են դատական ակտի օրինականությունը՝ ստանձնելով վերադաս դատական ատյանի դեր, իսկ որոշակի դեպքերում ստանձնելով նաև օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովող մարմնի դեր: Ավելին՝ Սահմանադրական դատարանը 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշմամբ իր մտահոգությունն է հայտնել այն առթիվ, թե արդյոք «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում հստակ տարանջատված են նյութական կամ դատավարական օրենքի խախտումը գնահատելու հարցում, մի կողմից՝ վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների, մյուս կողմից՝ Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները՝ միաժամանակ օրենսդրա-

¹ ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մաս:

կան նախաձեռնության սուբյեկտների ուշադրությունը հրավիրելով նշված հարցի վրա:

Ամփոփելով վերոնշյալը՝ գտնում եմ, որ նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումները կարող են հանդիսանալ վերադաս դատական ատյանում դատական ակտի բողոքարկման և ըստ այդմ՝ դատական ակտի վերանայման հիմք, այլ ոչ՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք, առավել ևս, որ նշված հիմքով գործադիր իշխանության թևի ներկայացուցիչ Արդարադատության նախարարին կարգապահական վարույթ հարուցելու, որպիսի հիմքով և Բարձրագույն դատական խորհրդին դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորության վերապահումը խաթարում է դատավորի անկախության սկզբունքը:

Ելնելով վերոնշյալից՝ գտնում եմ, որ հնարավորինս պետք է նվազագույնի հասցվի նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտման հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելը: Իսկ ահա դատական սխալի համար դատավորի նկատմամբ Արդարադատության նախարարի կողմից կարգապահական վարույթ հարուցելը, որպիսի հիմքով և Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելը¹ ընդհանրապես պետք է բացառվի՝ որպես իշխանությունների բաժանման և հավասարակշռման, դատավորի անկախության սահմանադրական սկզբունքները վտանգող երևույթներ:

1.4. Սահմանադրական դատարանը, անդրադառնալով Արդարադատության նախարարի կողմից դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու լիազորության հարցին, նաև արձանագրել է, որ նշված լիազորությունը չի կարող ազդել դատավորի անկախության և

¹ Ըստ իս՝ որպես նշված կանոնից բացառություն՝ Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատական սխալի համար դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելը պետք է հնարավոր լինի միայն այն դեպքում, երբ դատական ակտի բողոքարկման արդյունքում առկա է վերադաս դատարանի (մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանի) կողմից կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, որով արձանագրվել է ստորադաս դատարանի կողմից թույլ տրված նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը:

հեղինակության վրա, քանի որ Արդարադատության նախարարին վերապահված չէ որևէ լիազորություն, որի իրականացումը ներազդում է կարգապահական վարույթի հետագա ընթացքի վրա՝ կանխորոշելով դրա արդյունքով կայացվելիք՝ դատավորի համար միջամտող որոշումը:

Հարկ եմ համարում նշել, որ Սահմանադրական դատարանն Արդարադատության նախարարի կողմից դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու լիազորության սահմանադրականության հարցը պարզել է՝ քննարկման առարկա դարձնելով միայն վիճարկվող իրավանորմը, մինչդեռ կարծում եմ, որ վիճարկվող իրավանորմի սահմանադրական կամ հակասահմանադրական լինելու եզրահանգմանը հնարավոր էր գալ բացառապես վիճարկվող դրույթի և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի այլ իրավակարգավորումների համալիր մեկնաբանության արդյունքում: Ավելին՝ միայն նշված դեպքում հնարավոր կլիներ վեր հանել այն խնդրահարույց հարցերը, որոնք վտանգում են դատական իշխանության անկախությունը և մյուս իշխանություններից բաժանված և հավասարակշռված լինելու սահմանադրական պահանջը:

Ուստի կարծում եմ, որ վիճարկվող դրույթը, բացի սույն հատուկ կարծիքի նախորդ կետերում քննարկված դեպքերի, անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել նաև Բարձրագույն դատական խորհրդի կազմի և Արդարադատության նախարարի՝ որպես դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու լիազորություն ունեցող սուբյեկտի հարաբերակցության տեսանկյունից:

Այսպես՝ Բարձրագույն դատական խորհուրդն իր ուրույն տեղն ու դերն ունի իշխանությունների բաժանման ու հավասարակշռման համակարգում, մասնավորապես՝ սահմանադիրը վերջինիս դիտարկել է որպես անկախ պետական մարմին, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը: Վենետիկի հանձնաժողովը, անդրադառնալով Բարձրագույն դատական խորհրդի անկախությանը, նշել է, որ այն պետք է համարժեք լինի Սահմանադրությամբ նախատեսված անկախության իրավական բովանդակությանը: Խորհրդի գործունեության արդյունավետությունն ու լիարժեքությունը որևէ չափով չպետք է կաշկանդված լինի

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 1(113)2024

իշխանության ճյուղերի որևէ մարմնի, ընդհուպ դատավորների ինքնակառավարման մարմինների հնարավոր ներազդեցությամբ: Վերջինս հատկապես վերաբերում է **դատավորների կարգապահական վարույթների իրականացմանը**¹:

Իշխանությունների բաժանման ու հավասարակշռման համակարգում Բարձրագույն դատական խորհրդի հակակշռող լիազորության և դատաբանների ու դատավորների անկախության ապահովման գործառույթի տեսանկյունից հատկապես կարևորվում է Բարձրագույն դատական խորհրդի կազմը և դրա կազմավորման կարգը: Այսպես՝ Բարձրագույն դատական խորհուրդը հանդիսանում է պետական իշխանության երկու ճյուղերի կողմից համատեղ ձևավորված պետական մարմին, որտեղ հավասարապես ներկայացված են օրենսդիր և դատական իշխանությունների կողմից ընտրված տաս անդամները²: Ըստ այդմ էլ՝ Բարձրագույն դատական խորհուրդն իր սահմանադրական լիազորությունների իրականացումն ապահովում է պետական իշխանության նշված երկու ճյուղերի կողմից ընտրված անդամների մասնակցությամբ: Ի թիվս այլնի՝ Բարձրագույն դատական խորհրդի լիազորություններից է նաև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծումը³, որն իրականացվում է Բարձրագույն դատական խորհրդի անդամների ձայների որոշակի հարաբերակցությամբ: Այսպես՝ նշված որոշումների ընդունման կարգը ժամանակագրական առումով հանգում է հետևյալին.

09.04.2018 թվականին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի կարգավորումների համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում էին խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Այնուհետև՝ օրենսդրական փոփոխությունների արդյունքում 02.05.2020 թվականին ուժի մեջ մտած ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմա-

¹ Վենետիկի հանձնաժողովի 2007 թվականի հունիսի 22-ի CDL-AD(2007)028 կարծիք, (թիվ 403/2006):

² «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մաս:

³ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ:

նադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-197-Ն օրենքով նախատեսվեց որոշումների ընդունման տարբեր կարգ՝ ըստ որոշումների տեսակի: Մասնավորապես՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում էին խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, իսկ դատավորի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ որոշումները՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Նշված կարգավորումը ևս ենթարկվել է օրենսդրական փոփոխությունների. արդյունքում՝ 25.02.2022 թվականին ուժի մեջ մտած ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-22-Ն օրենքով նախատեսվել է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են՝ նիստին մասնակցող խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե որոշմանը կողմ է քվեարկել խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը¹: Նշված կարգավորումից հետևում է, որ օրենսդրական փոփոխությունների արդյունքում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշման կայացման համար անհրաժեշտ ձայների շեմն իջեցվել է, մասնավորապես՝ դատավորը կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության, եթե նշված որոշմանը կողմ են քվեարկել Բարձրագույն դատական խորհրդի հինգ անդամներ (սա այն դեպքերում, երբ որևէ հիմքով Բարձրագույն դատական խորհուրդը կգործի տաս անդամից պակաս կազմով)²:

Վերոնշյալ կարգավորումն Արդարադատության նախարարի կողմից դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու լիա-

¹ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 6-րդ մաս:

² Սույն հատուկ կարծիքը շարադրելիս հաշվի է առնվում այն հանգամանքը, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 25.10.2023 թվականին ընդունված ՀՕ-335-Ն օրենքի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության Բարձրագույն դատական խորհրդի կազմի վերաբերյալ դրույթները դեռևս ուժի մեջ մտած չեն, քանի որ ըստ նշված օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի՝ նշված օրենքի 2-21-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում Բարձրագույն դատական խորհրդի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահին:

զորության համատեքստում դիտարկելիս տեսականորեն չի բացառվում այնպիսի իրավիճակի հնարավորությունը, որ գործադիր իշխանության ներկայացուցիչը, կասկածի տակ դնելով դատավորի կողմից իրականացված արդարադատության որակը, հանդես գա դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու նախաձեռնությամբ, իսկ Բարձրագույն դատական խորհրդի հինգ ոչ դատավոր անդամների կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելուն կողմ քվեարկելու արդյունքում դատավորը ենթարկվի կարգապահական պատասխանատվության՝ առանց Բարձրագույն դատական խորհրդի՝ դատական իշխանության որևէ ներկայացուցչի դիրքորոշումը հաշվի առնելու:

Սահմանադրական դատարանը, 2021 թվականի հունիսի 10-ի ՍԴՈ-1598 որոշմամբ անդրադառնալով Բարձրագույն դատական խորհրդի կողմից որոշման կայացմանը, նշել է, որ օրենսդրի կողմից իրավացիորեն ընտրվել է որոշումների կայացման ձայների այնպիսի քանակ, որն ապահովի պետական իշխանության երկու ճյուղերից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամների համաձայնությունը, ինչը, տվյալ դեպքում Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունն է՝ առնվազն 6 ձայն:

Նշված որոշման բովանդակությունից հետևում է, որ նման իրավակարգավորման նպատակն այնպիսի որոշումների կայացումն է, որն արժանացել է Բարձրագույն դատական խորհրդի անդամներից առնվազն վեցի հավանությանը, այսինքն՝ Բարձրագույն դատական խորհրդի այնքան անդամների համաձայնությամբ, որը բացառում է միայն դատավորների ընդհանուր ժողովի կամ միայն Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամների կողմից որոշումների կայացումը¹:

Վերոնշյալի համատեքստում կարևորելով կոլեգիալ գործունեության ընթացքում բազմակարծության ապահովումը, սուբյեկտիվիզմի և կամայականության բացառումը՝ գտնում են, որ Բարձրագույն դատական խոր-

¹ Սույն հատուկ կարծիքը շարադրելիս հաշվի է առնվում այն հանգամանքը, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 25.10.2023 թվականին ընդունված ՀՕ-335-Ն օրենքի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության համար Բարձրագույն դատական խորհրդի կազմի վերաբերյալ դրույթները դեռևս ուժի մեջ մտած չեն, քանի որ ըստ նշված օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի՝ նշված օրենքի 2-21-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում Բարձրագույն դատական խորհրդի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահին:

1(113)2024
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԿՐՈՒԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ
 225

հրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումների կայացման կարգին վերաբերող իրավակարգավորումները ևս պետք է լինեն Սահմանադրական դատարանի վերը նշված դիրքորոշմանը համահունչ՝ բացառելով Բարձրագույն դատական խորհրդի կողմից բացառապես դատավոր անդամների կամ ոչ դատավոր անդամների կողմից կոնկրետ շահ, այդ թվում՝ համայնքային շահ հետապնդելու արդյունքում որոշումների կայացման հնարավորությունը: Վերը նշված իրավիճակը հատկապես խնդրահարույց է դառնում այն դեպքում, երբ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթը հարուցվում է գործադիր իշխանության ներկայացուցչի նախաձեռնությամբ, իսկ որոշումը Բարձրագույն դատական խորհրդում կայացվում է օրենսդիր իշխանության կողմից ընտրված հինգ անդամի համաձայնությամբ (սա այն դեպքերում, երբ որևէ հիմքով Բարձրագույն դատական խորհուրդը կգործի տաս անդամից պակաս կազմով)՝ որևէ կերպ չարժևորելով դատական իշխանության կողմից ընտրված անդամների կարծիքը, որպիսի պայմաններում ոչ միայն չի ապահովվի իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի իրագործումը, այլև կվտանգվի դատական իշխանության անկախությունը:

Վերոգրյալ ողջ պայրճառաբանությունների լույսի ներքո գտնում եմ, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը հակասում է Սահմանադրության 4-րդ հոդվածին և 164-րդ հոդվածի 1-ին մասին:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«29» հունվարի 2024թ.

1(113)2024

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐՈՒՄ ՀԱՄԱՏԵՂ
ԿՈՈՊԵՐԱՑԻՈՆ ՆԱԽԱԳԾԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՍ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍՈՎ
«ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2014
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

23 հունվարի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Հ. Հովակիմյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)

1(113)2024
◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1(113)2024

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

Կառավարության ներկայացուցիչ՝ Էկոնոմիկայի նախարար Վ. Քերոբյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2023 թվականի մայիսի 25-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից արդյունաբերության ճյուղերում համատեղ կոոպերացիոն նախագծեր իրականացվելիս ֆինանսական աջակցություն տրամադրելու մասով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2023 թվականի 17 նոյեմբերի N 1970-Ա որոշմամբ հավանություն է տվել 2023 թվականի մայիսի 25-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից արդյունաբերության ճյուղերում համատեղ կոոպերացիոն նախագծեր իրականացվելիս ֆինանսական աջակցություն տրամադրելու մասով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2023 թվականի նոյեմբերի 20-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ արձանագրությունը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից արդյունաբերության ճյուղերում համատեղ կոոպերացիոն նախագծեր իրականացվելիս ֆինանսական աջակցություն տրամադրելու մասով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2023 թվականի մայիսի 25-ին Մոսկվայում:

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին Հայաստանի Հանրապետությունը միացել է 2014 թվականի հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր), որը վավերացվել է 2014 թվականի դեկտեմբերի 4-ին Ազգայի Ժողովի ԱԺՈ-132-Ն որոշմամբ (ՍԴՈ-1175):

Սույն Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է Արձանագրությամբ սահմանված բովանդակությամբ փոփոխել Պայմանագրի **20-րդ հոդվածի 1-ին կետի առաջին պարբերությունը**, լրացնել **92-րդ հոդվածի 9-րդ կետի 1-ին ենթակետը**, ինչպես նաև **«Արդյունաբերական համագործակցության մասին» արձանագրությունը** (Պայմանագրի թիվ 27 հավելված) լրացնել **նոր՝ 3-րդ կետով՝** Արձանագրությամբ սահմանված բովանդակությամբ:

Արձանագրությամբ նախատեսվող փոփոխությունների նպատակն է՝ ստեղծել Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵԱՏՄ) շրջանակներում արդյունաբերության ոլորտների կոոպերացիոն ծրագրերի իրականացման համար ֆինանսական աջակցության նոր գործիք:

Արձանագրությամբ սահմանվում է ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից արդյունաբերության ճյուղերում համատեղ կոոպերացիոն նախագծերի իրականացման նպատակով ֆինանսական միջոցների ձևավորման ընթացակարգը և ամրագրվում է, որ այդպիսի նախագծերի ընտրության ու իրականացման կարգը, ինչպես նաև ֆինանսական աջակցության ձևաչափը սահմանվում են համապատասխանաբար Եվրասիական միջկառավարական և Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդների որոշումներով:

Արձանագրությունը բաղկացած է նախաբանից և 2 հոդվածներից:

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 1(113)2024

Արձանագրությունը ստորագրվել է Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզական Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կողմից:

2. Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անդամ պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստացման օրվանից:

3. Արձանագրությամբ կատարված փոփոխության արդյունքում՝ Հայաստանի Հանրապետությունը՝ ի հավելումն նախկինում ստանձնած պարտավորությունների, փոխադարձության հիման վրա, ստանձնում է, մասնավորապես՝ հետևյալ պարտավորությունը.

Պայմանագրի 27-րդ Հավելվածի 3-րդ կետով նախատեսված՝ ֆինանսական աջակցության մեխանիզմի գործողության դադարեցման դեպքում՝ ամբողջ ծավալով ապահովել այն ֆինանսական պարտավորությունների կատարումը, որոնք առաջացել են դրա գործողության շրջանակներում արդյունաբերության ճյուղերում համատեղ կոոպերացիոն նախագծերի իրականացման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին Հանձնաժողովի խորհրդի կողմից ընդունված որոշումների հիման վրա՝ այդ նախագծերի իրականացման ամբողջ ժամկետի ընթացքում (Արձանագրության հոդված 1, կետ 3, Պայմանագրի փոփոխված 27-րդ Հավելվածի 3-րդ կետի 7-րդ պարբերություն):

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված արտաքին քաղաքականության իրականացման նպատակին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական

օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը
Ո Ր Ո Շ Ե Ց .

1. 2023 թվականի մայիսի 25-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից արդյունաբերության ճյուղերում համատեղ կոոպերացիոն նախագծեր իրականացվելիս ֆինանսական աջակցություն տրամադրելու մասով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

23 հունվարի 2024 թվականի
ՍԴՈ-1710

1(113)2024

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐՈՒՄ ՀԱՄԱՏԵՂ ԿՈՈՊԵՐԱՑԻՈՆ ՆԱԽԱԳԾԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՍ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍՈՎ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1710 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴՏՎԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ 1(113)2024

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2023 թվականի մայիսի 25-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից արդյունաբերության ճյուղերում համատեղ կոոպերացիոն նախագծեր իրականացվելիս ֆինանսական աջակցություն տրամադրելու մասով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի հունվարի 23-ի ՍԴՈ-1710 որոշմամբ որոշել է, որ 2023 թվականի մայիսի 25-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից արդյունաբերության ճյուղերում համատեղ կոոպերացիոն նախագծեր իրականացվելիս ֆինանսական աջակցություն տրամադրելու մասով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի հունվարի 23-ի ՍԴՈ-1710 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված

պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի հունվարի 23-ի ՍԴՈ-1710 որոշմամբ 2023 թվականի մայիսի 25-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից արդյունաբերության ճյուղերում համատեղ կոոպերացիոն նախագծեր իրականացվելիս ֆինանսական աջակցություն տրամադրելու մասով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումին ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի

կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարանի դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարանի ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարանի առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարանի միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարանի դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ

1(113)2024
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված

լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել,

1(113)2024
 ◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմա-

նադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ փվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ փվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող գրկվել սահմանադրական արդարադատության սրանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է փրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«23» հունվարի 2024թ.

1(113)2024

◆ ՏԵՂԵԿՍԳԻԿ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՊԵՏԱԿԱՆ (ՄՈՒՆԻՑԻՊԱԼ) ԳՆՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԺԱՄԱՆԱԿ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ
ՃԱՆԱԶՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

1(113)2024

◆ Քաղ. Երևան

23 հունվարի 2024 թ.

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմայանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,

◆

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Ավանեսյանի,

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2023 թվականի օգոստոսի 29-ին ստորագրված՝ «Պետական (մունիցիպալ) գնումների իրականացման ժամանակ բանկային երաշխիքների փոխադարձ ճանաչման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 2109-Ա որոշմամբ հավանություն է տվել 2023 թվականի օգոստոսի 29-ին ստորագրված՝ «Պետական (մունիցիպալ) գնումների իրականացման ժամանակ բանկային երաշխիքների փոխադարձ ճանաչման մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2023 թվականի դեկտեմբերի 8-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Պետական (մունիցիպալ) գնումների իրականացման ժամանակ բանկային երաշխիքների փոխադարձ ճանաչման մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) կողմից 2023 թվականի օգոստոսի 29-ին Մոսկվայում:

2. Համաձայնագրով նախատեսվում է կարգավորել պետական (մունիցիպալ) գնումների իրականացման նպատակով անդամ պետությունների կողմից տրամադրված բանկային երաշխիքների փոխադարձ ճանաչման հետ կապված հարաբերությունները:

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 1(113)2024

3. Համաձայնագրի նպատակն է ապահովել անդամ պետության տարածքում գրանցված հնարավոր մատակարարների անարգել մասնակցությունը մյուս անդամ պետությունում անցկացվող պետական (մունիցիպալ) գնումներին՝ նպաստելով անդամ պետությունների տնտեսական շահերի առաջնդմանը և պատվիրատուների իրավունքների պաշտպանությանը:

4. Համաձայնագրի գործողությունը չի տարածվում այն պետական (մունիցիպալ) գնումների վրա, որոնց մասին տեղեկություններն անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան պետական գաղտնիք են կազմում, ինչպես նաև անդամ պետությունների ազգային (կենտրոնական) բանկերի կողմից իրականացվող գնումների վրա:

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

5.1. ապահովել այն բանկային երաշխիքների ճանաչումը, որոնք տրվում են պրինցիպալի (**հնարավոր մատակարար կամ մատակարար, որին տրամադրվել է բանկային երաշխիքը**) անդամ պետության տարածքում գրանցված՝ այլ անդամ պետության բենեֆիցիարի (**պատվիրատու, հոգուտ որի տրվել է բանկային երաշխիքը**) կողմից իրականացվող պետական (մունիցիպալ) գնումների նպատակներով (հոդված 2),

5.2. երաշխավորել, որ պրինցիպալի անդամ պետության տարածքում գրանցված և բանկային երաշխիք տված անձը ներառվի այլ անդամ պետության բենեֆիցիարի պետական (մունիցիպալ) գնումներին մասնակցության համար բանկային երաշխիք տված անձանց ցանկում, եթե պետական (մունիցիպալ) գնումների ոլորտում բենեֆիցիարի անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված է այդպիսի ցանկի ձևավորում (հոդված 4, մաս 1),

5.3. ապահովել, որ երաշխիք տված անձը՝ պրինցիպալի անդամ պետության լիազորված մարմնի տեղեկատվության հիման վրա, հանվի երաշխիք տված անձանց ցանկից՝ Համաձայնագրի պահանջներին երաշխիք տված անձի չհամապատասխանելու կամ երաշխիք տված

անձի կողմից գրավոր դիմում ներկայացվելու դեպքերում (հոդված 4, մաս 2),

5.4. ապահովել, որ բանկային երաշխիքը ներառվի բանկային երաշխիքների ռեեստրում՝ պետական (մունիցիպալ) գնումների ոլորտում բենեֆիցիարի անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով (հոդված 5),

5.5. երաշխավորել, որ բենեֆիցիարի և երաշխիք տված անձի, ինչպես նաև բենեֆիցիարի և պրինցիպալի միջև վեճերը քննվեն դատական կարգով՝ ըստ բենեֆիցիարի գրանցման վայրի, բենեֆիցիարի անդամ պետության օրենսդրությանը համապատասխան (հոդված 6),

5.6. սահմանել Համաձայնագրի իրականացման համար պատասխանատու լիազորված մարմիններ (հոդված 7),

5.7. Համաձայնագրի իրականացման ժամանակ ինքնուրույն կրել երաշխիք տված անձանց ցանկի և բանկային երաշխիքների ռեեստրի ստեղծման և (կամ) վարման և (կամ) արդիականացման հետ կապված ծախսերը (հոդված 8):

6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2023 թվականի օգոստոսի 29-ին ստորագրված՝ «Պետական (մունիցիպալ) գնումների իրականացման ժամանակ բանկային երաշխիքների փոխադարձ ճանաչման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

23 հունվարի 2024 թվականի
ՍԴՈ-1711

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2023 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 29-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՊԵՏԱԿԱՆ
(ՄՈՒՆԻԳԻՊԱԼ) ԳՆՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ
ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՃԱՆԱԶՄԱՆ
ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-ԻՆ
ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1711 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2023 թվականի օգոստոսի 29-ին ստորագրված՝ «Պետական (մունիցիպալ) գնումների իրականացման ժամանակ բանկային երաշխիքների փոխադարձ ճանաչման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի հունվարի 23-ի ՍԴՈ-1711 որոշմամբ որոշել է, որ 2023 թվականի օգոստոսի 29-ին ստորագրված՝ «Պետական (մունիցիպալ) գնումների իրականացման ժամանակ բանկային երաշխիքների փոխադարձ ճանաչման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի հունվարի 23-ի ՍԴՈ-1711 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 1(113)2024

եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎՈՐԻ ԴԱՏԱՐԱՆ 1(113)2024

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի հունվարի 23-ի ՍԴՈ-1711 որոշմամբ 2023 թվականի օգոստոսի 29-ին ստորագրված՝ «Պետական (մունիցիպալ) գնումների իրականացման ժամանակ բանկային երաշխիքների փոխադարձ ճանաչման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարանի դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1(113)2024
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԵՂԵԿՎՈՐ
 247

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համա-

պատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված

իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով

1(113)2024

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ

նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստորագել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության աղիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ

էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«23» հունվարի 2024թ.

1(113)2024

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ԴԱՎԻԹ ՓՈԼԱԴՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ 1998
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 35-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 10-ՐԴ ԿԵՏԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

23 հունվարի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմող Դավիթ Փոլադյանի (այսուհետ նաև՝ Դիմող) ներկայացուցիչ Կ. Մեծլումյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի (այսուհետ՝ Պատասխանող) ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդված 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

1(113)2024

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Դավիթ Փոլադյանի դիմումի հիման վրա՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

1998 թվականի **Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը** (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին, ուժի մեջ մտել՝ 1999 թվականի հունվարի 12-ին, ուժը կորցրել՝ 2022 թվականի հուլիսի 1-ին, բացառությամբ 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 483-րդ հոդվածով նախատեսված դեպքերի: Օրենսգրքի 54-րդ, 54.1-ին, 54.2-րդ, 54.3-րդ, 54.4-րդ գլուխների դրույթներն ուժը չեն կորցրել:

Օրենսգրքի՝ «**Քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ**» վերտառությամբ 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով սահմանվում է.

«1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝

(...)

10) անձը մահացել է, բացառությամբ այն դեպքերի, երբ գործի վարույթն անհրաժեշտ է մահացածի իրավունքների վերականգնման համար կամ ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար»:

Օրենսգրքի վերոնշյալ դրույթը ընդունման պահից որևէ փոփոխության չի ենթարկվել:

Գործի քննության առիթը Դիմողի՝ 2023 թվականի օգոստոսի 2-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը, Պատասխանողի գրավոր բացատրությունը, դատական դեպարտամենտից պահանջված և ստացված թիվ ԵԱՆԴ/1508/02/10 քաղաքացիական գործի

1(113)2024
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ ՏԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

և թիվ ԵԴ/0382/01/20 քրեական գործի նյութերը, գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Գործի դատավարական նախապատմությունը

1.1. Թիվ ԵԱՆԴ/1508/02/10 քաղաքացիական գործը.

Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քննելով թիվ ԵԱՆԴ/1508/02/10 քաղաքացիական գործն ըստ հայցի Դիմողի ընդդեմ Անդրանիկ Այվազյանի՝ գումարի և հաշվարկվող տոկոսների բռնագանձման, Անդրանիկ Այվազյանի նկատմամբ ունեցած պարտավորությունները դադարած ճանաչելու, դրամական միջոցներն ապօրինի պահելու և դրանք վերադարձնելուց խուսափելու համար տոկոսներ, դրա արդյունքում պատճառված վնասներ բռնագանձելու, ինչպես նաև խաբեության ազդեցության տակ կնքված գործարքն անվավեր ճանաչելու պահանջների մասին, և ըստ Անդրանիկ Այվազյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Դիմողի՝ գումարի և հաշվարկվող տոկոսների բռնագանձման պահանջի մասին, և ըստ հայցի Դիմողի ընդդեմ Կադաստրի կոմիտեի Արմավիրի մարզային ստորաբաժանման, Անդրանիկ Այվազյանի, Անահիտ Սանթրոբի Առաքելյանի՝ անշարժ գույքի նվիրատվության կեղծ պայմանագրերի՝ որպես առոչինչ գործարքների անվավերության հետևանքների կիրառման, իրավունքի պետական գրանցումներն անվավեր ճանաչելու, անշարժ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու և ստացված գումարը բաշխելու պահանջների մասին, և ըստ հայցի Դիմողի ընդդեմ Անդրանիկ Այվազյանի, Անահիտ Առաքելյանի, երրորդ անձ՝ Կադաստրի կոմիտեի Երևանի տարածքային ստորաբաժանման՝ անշարժ գույքի բաժնեմասի նկատմամբ Անդրանիկ Այվազյանի սեփականության իրավունքը ճանաչելու, անշարժ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու և բռնագանձումը բաժնեմասի վրա տարածելու պահանջների մասին, 2012 թվականի ապրիլի 25-ին վճռել է՝

- քաղաքացիական գործի վարույթն ըստ հայցի Դիմողի ընդդեմ Անդրանիկ Այվազյանի՝ պարտավորության գումարի, տոկոսների, պատճառված վնասի գումարի բռնագանձման պահանջների մասով, կարճել,

1(113)2024
 ◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 1(113)2024

- հակընդդեմ հայցվոր Անդրանիկ Այվազյանի հակընդդեմ հայցը բավարարել,

- Դիմողի հայցն ընդդեմ Անդրանիկ Այվազյանի՝ վերջինիս նկատմամբ ունեցած պարտավորությունները դադարած ճանաչելու պահանջի մասին, մերժել,

- Դիմողի հայցն ընդդեմ Անդրանիկ Այվազյանի՝ 2002 թ. ապրիլի 28-ին 362.000 ԱՄՆ դոլար ստացած լինելու վերաբերյալ խաբեության ազդեցության տակ իր կողմից Անդրանիկ Այվազյանին տրված ստացականն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել,

- թիվ ԵԱՆԴ/1508/02/10 քաղաքացիական գործի վարույթը՝ անշարժ գույքի համասեփականատեր ճանաչելու պահանջի մասով, կարճել,

- Դիմողի հայցն ընդդեմ Անդրանիկ Այվազյանի, Անահիտ Առաքելյանի, Երրորդ անձ՝ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Երևանի տարածքային ստորաբաժանման՝ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու և ստացված գումարի՝ Անդրանիկ Այվազյանի բաժնի վրա բռնագանձում տարածելու պահանջի մասին, մերժել, Դիմողի հայցն ընդդեմ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի մարզային ստորաբաժանման, Անդրանիկ Այվազյանի, Անահիտ Սանթուրի Առաքելյանի՝ անշարժ գույքերի նվիրատվության կեղծ պայմանագրերի՝ որպես առոչինչ գործարքների նկատմամբ անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին, մերժել:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանը 2012 թվականի դեկտեմբերի 14-ին որոշել է վերաքննիչ բողոքը մերժել և Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2012 թվականի ապրիլի 25-ի թիվ ԵԱՆԴ/1508/02/10 վճիռը թողնել օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ դատարանը 2013 թվականի փետրվարի 27-ին որոշել է վերադարձնել թիվ ԵԱՆԴ/1508/02/10 քաղաքացիական գործով վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 14-ի որոշման դեմ Դիմողի և նրա ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքը:

1.2. Թիվ ԵԴ/0382/01/20 քրեական գործը.

Դիմողի կողմից ներկայացված հաղորդման հիման վրա 2018 թվականի օգոստոսի 13-ին հարուցվել է թիվ 17861818 քրեական գործը, որով Դիմողին տուժող ճանաչելու մասին որոշում է կայացվել:

Թիվ 17861818 քրեական գործով 2020 թվականի մարտի 4-ին որոշում է կայացվել Անդրանիկ Այվազյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

Հիշյալ քրեական գործով 2020 թվականի ապրիլի 29-ին կազմված մեղադրական եզրակացության համաձայն՝ Անդրանիկ Սերյոժայի Այվազյանը մեղադրվել է այն բանի համար, որ «նա՝ թիվ ԵԱՆԴ/1508/02/10 քաղաքացիական գործի քննության ընթացքում՝ 2011 թ. դեկտեմբերի 20-ին տեղի ունեցած դատական նիստի ժամանակ շահադիտական դրդումներով տրվել է սուտ ցուցմունք»:

Մեղադրական եզրակացության մեջ, մասնավորապես, նշվել է. «Անդրանիկ Սերյոժայի Այվազյանը Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում՝ ըստ Դավիթ Փոլադյանի հայցի ընդդեմ Անդրանիկ Այվազյանի՝ գումարի և այդ գումարին հաշվարկվող տոկոսների բռնագանձման, Անդրանիկ Այվազյանի նկատմամբ ունեցած պարտավորությունները, այդ թվում՝ 28.04.2002թ. ստացականում նշված պարտավորությունը դադարած ճանաչելու, դրամական միջոցներն ապօրինի պահելու և դրանք վերադարձնելուց խուսափելու համար տոկոսներ, դրա արդյունքում պատճառված վնասներ բռնագանձելու, ինչպես նաև խաբեության ազդեցության տակ կնքված գործարքն անվավեր ճանաչելու պահանջների մասին, և ըստ Անդրանիկ Այվազյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Դավիթ Փոլադյանի՝ գումարի և այդ գումարին հաշվարկվող տոկոսների բռնագանձման պահանջի մասին, և (...) պահանջների մասին դատավոր Ա. Պետրոսյանի նախազառույցային քննվող թիվ ԵԱՆԴ/1508/02/10 քաղաքացիական գործի քննության ընթացքում՝ 2011 թվականի դեկտեմբերի 20-ին տեղի ունեցած դատական նիստի ժամանակ շահադիտական դրդումներով, այն է՝ Դավիթ Փոլադյանից իբր որպես պարտք 362.000 ԱՄՆ դոլար գումարը ստանալու, ինչպես նաև 2002 թվականի հունիսի 13-ին կազմված և ստորագրված եռակողմ համաձայնագրով ստանձնած՝ Դավիթ Փոլադյանին 120.000 ԱՄՆ դոլար գումար վճարելու պարտավորությունը չկատարելու նպատակով, սուտ

1(113)2024
 ◆ ՏԵԼԵՎԻԶԻՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 257

ցուցմունք է տվել այն մասին, թե հիշյալ համաձայնագրում նշված «այլևս մեկս մյուսի հանդեպ պարտք ու պահանջ չունենք և չենք ներկայացնելու» միտքը չի վերաբերել Դավիթ Փոլադյանի կողմից իրեն տրված ստացականին, քանի որ Դավիթ Փոլադյանի կողմից բաժնեմասը Վլադիմիր Ադամյանին վաճառելու նպատակով կնքված համաձայնությունը որևէ կերպ չի կարող վերաբերել Դավիթ Փոլադյանի կողմից 28.04.2002 թ. իրեն տրված ստացականով հաստատված պարտքի գումարին կամ դրա պահանջից հրաժարվելուն, այլապես համաձայնագրում ուղղակի նշում կկատարվեր դրա մասին կամ առանց երրորդ անձանց մասնակցության իր և Դավիթ Փոլադյանի միջև կկնքվեր առանձին համաձայնագիր: Համաձայնագրում ինքը հանդես է եկել միայն որպես հիշյալ անձանց միջև կնքված գործարքի պայմանի՝ բաժնեմասի օտարման դիմաց Դավիթ Փոլադյանին 120.000 ԱՄՆ դոլար գումարի վճարման երաշխավոր, հիշյալ գումարն իրականում պետք է փոխանցեր իրեն՝ Դավիթ Փոլադյանի ունեցած պարտքի մի մասի դիմաց և ինքը, համաձայնագրում ստորագրելով, չի հրաժարվել պարտքից»:

Թիվ 17861818 քրեական գործով 2020 թվականի ապրիլի 29-ին դատախազը հաստատել է մեղադրական եզրակացությունը, և քրեական գործն ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ ըստ էության քննության համար:

2020 թվականի մայիսի 5-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը կայացրել է գործը վարույթ ընդունելու մասին որոշում, քրեական գործին տրվել է թիվ ԵԴ/0382/01/20 համարը:

2022 թվականի հունիսի 16-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քննության առնելով թիվ ԵԴ/0382/01/20 քրեական գործով պաշտպանի միջնորդությունը՝ Անդրանիկ Սերյոժայի Այվազյանի նկատմամբ մահվան հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ, որոշել է Անդրանիկ Սերյոժայի Այվազյանի նկատմամբ Քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով քրեական հետապնդումը դադարեցնել և թիվ ԵԴ/0382/01/20 քրեական գործի վարույթը կարճել՝ ամբաստանյալի մահվան հիմքով այն պատճառաբանությամբ, որ՝ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով նախատեսված երկու

1(113)2024
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

բացառություններից երկրորդի փառացի մեկնաբանությունից երևում է, որ վարույթի շարունակությունը պետք է անհրաժեշտ լինի որևէ անձի նկատմամբ քննված գործին, սակայն քաղաքացիադատավարական կամ վարչադատավարական ընթացակարգերով իրականացվող վարույթները որևէ անձի նկատմամբ իրականացվող վարույթներ չեն:

(...)

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով նախատեսված երկու բացառություններից երկրորդին, այն է՝ «երբ գործի վարույթն անհրաժեշտ է ... ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար ...» արտահայտությանը փոփոխ լայն մեկնաբանություն և այն մեկնաբանվի նաև որպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իմաստով պայմանագրային հարաբերություններից բխող դատական ակտի դեմ նոր երևան եկած հանգամանքներով բողոք բերելու իրավունքի իրացում, ապա կհիմաստագրվեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածով սահմանված խնդիրները և ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1358 որոշմամբ արտահայտված մեկնաբանությունները:

(...)

Հետևաբար Դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ մահացած անձի մերձավոր ազգականները, այն գիտակցմամբ, որ ոչ արդարացնող հիմքով քրեական գործի կարճմամբ օրենսդիրը մեղադրյալին արդարացվածի կարգավիճակ չի տրամադրում, այնուամենայնիվ չեն ցանկանում, որպեսզի քրեական վարույթը շարունակվի, իսկ գործի վարույթի հետագա շարունակությունը պայմանավորված չէ քրեադատավարական ընթացակարգով քննված գործի վերսկսմամբ, ուստի քրեական գործի վարույթը ենթակա է կարճման»:

2022 թվականի սեպտեմբերի 26-ին վերաքննիչ քրեական դատարանը որոշել է ներկայացված վերաքննիչ բողոքները մերժել՝ Երևան քաղաքի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ԵԴ/0382/01/20 քրեական գործով 2022 թվականի հունիսի 16-ի որոշումը թողնելով անփոփոխ այն պատճառաբանությամբ, որ՝ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով սահմանված «կամ ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հան-

1(113)2024
 ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 259

գամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար» ձևակերպման փառացի մեկնաբանությունից բխում է, որ դրա կիրառման համար վարույթի շարունակությունը պետք է անհրաժեշտ լինի որևէ անձի նկատմամբ քննված գործի վերսկսման համար, այնինչ քաղաքացիադատավարական կամ վարչադատավարական ընթացակարգերով իրականացվող վարույթները որևէ անձի նկատմամբ իրականացվող վարույթներ չեն:

Անդրադառնալով վերաքննիչ բողոքների փաստարկներին առ այն, որ ՀՀ քաղաքացիական դատավարության և վարչական դատավարության օրենսգրքերով նախատեսված իրավանորմերի վերլուծությունից բխում է, որ պետությունը, ի դեմս օրենսդիր մարմնի, ՀՀ քաղաքացիական և ՀՀ վարչական դատավարություններում անձանց՝ իրենց խախտված իրավունքների վերականգնման համար որպես լրացուցիչ երաշխիք՝ նախատեսել են արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված հանգամանքի շրջադարձի հնարավորություն այն դեպքում, երբ ի թիվս այլնի դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված կլինի վկայի սույր ցուցմունքներ տալը, Վերաքննիչ դատարանը փաստում է, որ թեև նշված պնդումն ըստ էության հիմնավորված է, այն չի կարող հիմք հանդիսանալ մահացած անձի նկատմամբ քրեական հետապնդումը շարունակելու և առավել ևս մեղադրական դատավճռի կայացման համար, հաշվի առնելով, որ օրենսդիրը նման հնարավորություն չի նախատեսում: Հակառակ փրամաբանությամբ առաջնորդվելու պարագայում դատարանը կստանձնի օրենսդրի դերակատարություն, ինչն անթույլատրելի է»:

Վճռաբեկ դատարանը 2023 թվականի մարտի 7-ին որոշել է վերաքննիչ քրեական դատարանի 2022 թվականի սեպտեմբերի 26-ի որոշման դեմ Դիմողի ներկայացուցչի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել:

2. Դիմողի դիրքորոշումը

Դիմողը գտնում է, որ վիճարկվող իրավանորմով նախատեսված «երբ գործի վարույթն անհրաժեշտ է (...) ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար (...)» ձևակերպմանն իրավակիրառ պրակտիկայում տրված այն մեկնաբանությունը, ըստ որի՝ օրենսդիրը նկատի է ունեցել բացառապես քրեական

գործերը, չի բխում վիճարկվող նորմի սահմանադրաիրավական բովանդակությունից՝ հակասելով Սահմանադրության 61, 63, 78, 79 և 80-րդ հոդվածներին:

Դիմողն ընդգծում է. «(...) Դավիթ Փոլադյանի համար կարևոր էր թիվ ԵԴ/0382/01/20 քրեական գործով դատարանի դատավճիռը, քանի որ եթե Անդրանիկ Այվազյանը մեղավոր ճանաչվեր սույր ցուցմունք տալու մեջ, ապա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով դատավճիռը հիմք կհանդիսանար Դիմումատուի սեփականության իրավունքի և կյանքի որակի վրա էականորեն ազդած՝ թիվ ԵԱՆԴ/1508/02/10 քաղաքացիական գործով կայացված վերջնական դատական ակտի դեմ նոր երևան եկած հանգամանքի հիմքով բողոք բերելու համար»:

Դիմողը նշում է, որ վիճարկվող իրավանորմը՝ դատարանների կողմից տրված մեկնաբանությամբ, հակասում է Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներին և խտրական կերպով սահմանափակում է տուժողի իրավունքների վերականգնման հնարավորությունը, մինչդեռ, ըստ Դիմողի, «քրեական արդարադատության հիմնական գործառույթը, որն է՝ տուժողի պահանջները բավարարելը և շահերը պաշտպանելը»:

Ամփոփելով՝ Դիմողը խնդրում է. «1. 01.07.1998թ. ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, իրավակիրառ պրակտիկայում տրված այն մեկնաբանությամբ, որ «երբ գործի վարույթն անհրաժեշտ է [...] ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար [...]» ձևակերպման «ուրիշ անձանց» եզրույթը վերաբերում է բացառապես քրեական դատավարությանը մասնակից անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու հնարավորությանը և չի վերաբերում քաղաքացիական դատավարությանը մասնակից անձանց մասնակցությամբ գործը նոր երևան եկած հանգամանքների կապակցությամբ վերսկսելու հնարավորությանը, ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներին հակասող և անվավեր»:

2. Եթե 01.07.1998թ. ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի «երբ գործի վարույթն անհրաժեշտ է [...] ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար [...]»

ձևակերպումը վերաբերում է բացառապես քրեական դատավարությանը մասնակից անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու հնարավորությանը և չի վերաբերում քաղաքացիական դատավարությանը մասնակից անձանց մասնակցությամբ գործը նոր երևան եկած հանգամանքների կապակցությամբ վերսկսելու հնարավորությանը, ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներին հակասող և անվավեր»:

3. Պատասխանողի դիրքորոշումը

Պատասխանողը նշում է, որ քրեական գործի վարույթը մահացածի իրավունքների վերականգնման համար շարունակելու վերաբերյալ կարգավորումն ուղղված է անձի պատվի և բարի համբավի անձեռնմխելիության, մարդու արժանապատվության անխախտելիության և անմեղության կանխավարկածի օրենսդրական երաշխավորմանը:

Պատասխանողը պնդում է. «(...) քրեական դատավարության օրենսդրության խնդիրներն են հանցագործությունից պաշտպանությունը, քրեական օրենսգրքերով չթույլատրված արարք կատարած անձի բացահայտումը, սակայն դրան հակառակ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով նախատեսված երկու բացառություններից երկրորդին, այն է՝ «երբ գործի վարույթն անհրաժեշտ է ... ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար ...» արտահայտությանը տրվի լայն մեկնաբանություն և այն մեկնաբանվի նաև որպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իմաստով պայմանագրային հարաբերություններից բխող դատական ակտի դեմ նոր երևան եկած հանգամանքներով բողոք բերելու իրավունքի իրացում, ապա կիմաստագրվեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածով սահմանված խնդիրները և ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՄԴՈ-1358 որոշմամբ արտահայտված մեկնաբանությունները»:

Պատասխանողը պնդում է, որ Քրեական դատավարության օրենսգրքում «գործ» հասկացությունը կիրառվում է բացառապես քրեատավարական իմաստով, ինչի մասին, ըստ Պատասխանողի՝ վկայում է նաև այն հանգամանքը, որ վիճարկվող դրույթում նույն նախադասության մեջ «գործ» հասկացության հետ միասին օգտագործվում է նաև «գործի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1(113)2024

վարույթ» ձևակերպումը, իսկ վերջինս կիրառելի է բացառապես քրեադատավարական համատեքստում:

Պատասխանողը նշում է. «*Ինչ վերաբերում է «գործ» հասկացության՝ «նոր ի հայտ եկած հանգամանք» եզրույթի վարչադատավարական և քաղաքացիադատավարական օրենսգրքերի համատեքստում դիտարկմանը և մեկնաբանմանը, ապա թեև նշված հասկացությունը և համապատասխան ինստիտուտն առկա է նաև այդ օրենսգրքերում, սակայն դրանցից յուրաքանչյուրն ունի իրավունքի ճյուղի իր առանձնահատկությունները և դրանց իմաստները չեն կարող անալոգիկ կերպով տարածվել և ընկալվել ինչպես փոխադարձաբար, այնպես էլ քրեական դատավարության օրենսգրքի համատեքստում, եթե այդ մասին չկա հատուկ նշում տրված օրենսգրքում»:*

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատասխանողը խնդրում է «Դավիթ Փոլադյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ընդունել որոշում՝ վիճարկվող դրույթները Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին:

4. Սահմանադրական վեճի շրջանակը

Սույն գործով սահմանադրական վեճի բովանդակությունը Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետում ամրագրված «*ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար*» ձևակերպման բերումով վիճարկվող նորմին իրավակիրառ պրակտիկայում տրված այն մեկնաբանության սահմանադրականությունն է, համաձայն որի՝ մեղադրյալի մահվանից հետո քրեական գործի վարույթը կարող է շարունակվել այլ անձին վերաբերելի՝ **միայն** քրեական գործի վերսկսման անհրաժեշտության բերումով՝ նրա նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքի հիմքով:

Սույն դիմումով վիճարկվող դրույթի (դրան իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության) սահմանադրականությունը որոշելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդադառնալ այն հարցադրմանը, թե արդյո՞ք Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով ամրագրված «*ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ*

եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար» ձևակերպմանն իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, ըստ որի՝ վարույթի շարունակությունը պետք է անհրաժեշտ լինի բացառապես քրեական գործի վերսկսման համար, ապահովվում է քաղաքացիական դատավարության շրջանակներում նոր երևան եկած հանգամանքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման միջոցով անձի՝ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի, Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը:

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

5.1. Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

Սահմանադրությամբ նախատեսված՝ արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները, լինելով միմյանց հետ փոխկապակցված, պայմանավորում են սույն սահմանադրական վեճում այս երկու հիմնական իրավունքների համակցված դիտարկման անհրաժեշտությունը:

2015 թվականի հունիսի 26-ի ՍԴՈ-1222 որոշմամբ Սահմանադրական դատարանը, անդրադառնալով նոր երևան եկած հանգամանքի բնույթին և դրա հիմքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման ինստիտուտի սահմանադրական բովանդակությանը, մասնավորապես, նշել է.

« (...)

- նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության ստուգումն իրավական լուրջ երաշխիք է անձի խախտված իրավունքները վերականգնելու, դատական

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1(113)2024

սխալներն ուղղելու և գործով ճշմարտությունը բացահայտելու ուղղությամբ,

- այդ հանգամանքներն իրենց բնույթով այնպիսին են, որ չնայած օբյեկտիվորեն գոյություն են ունեցել գործով վերջնական դատական ակտի կայացման պահին, սակայն հայտնի չէին և(կամ) չէին կարող հայտնի լինել թե՛ գործին մասնակցող անձանց և թե՛ դատարանին, կամ հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, կամ որոշ դեպքերում («Ք քաղ. դատ. օր.-ի 204.32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ») նորահայտ են,

- իրավասու անձի կողմից որպես նոր երևան եկած հանգամանքներ դատարան ներկայացված հիմնավորումները (տեղեկությունները, փաստարկները) առիթ են ուժի մեջ մտած դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը պատշաճ իրավական ընթացակարգով ուսումնասիրելու և իրավական անհրաժեշտ հիմնավորումների (ապացույցների) առկայության (այդ հանգամանքները որպես գործի լուծման համար էական նշանակություն ունեցող գնահատվելու) դեպքում հիմք են դատական ակտը վերանայելու (բեկանելու և գործն իրավասու դատարանի նոր քննությանն ուղարկելու) համար, այսինքն՝ այդպիսի քննության շրջանակներում իրավասու դատարանը նաև պետք է որոշի, թե որքանով են ներկայացված հանգամանքներն ազդել քննության առարկա գործի ելքի վրա և ինչպես պետք է վերականգնվեն անձի հնարավոր խախտված իրավունքները,

- դատավարական (քրեական, քաղաքացիական) օրենսդրությամբ օբյեկտիվորեն սահմանված չէ որպես «նոր երևան եկած» գնահատելի հանգամանք հանդիսացող փաստարկների, տեղեկությունների, ապացույցների սպառիչ անվանական ցանկը, ինչը յուրաքանչյուր գործով շահագրգիռ անձի կողմից այդպիսիք ներկայացվելու դեպքում դատարանի գնահատման (որոշման) խնդիրն է, միաժամանակ, օրենսդրության խնդիրն է չբացառել որպես «նոր երևան եկած» իրավաբանորեն գնահատելի որևէ հանգամանքի՝ իրավասու դատարանում քննության հնարավորությունը, եթե դրա՝ դատական ակտի հիմքում օբյեկտիվորեն հաշվի չառնելը հանգեցրել է անիրավաչափ, անհիմն որոշման կայացմանը, հետևաբար՝ նաև անձի իրավունքների խախտմանը,

- ուժի մեջ մտնող դատական ակտեր՝ վկայակոչված այս կամ այն (նախապես հայտնի կամ անհայտ) հանգամանքի հիմքով վերանայելու անհրաժեշտության իրավական հիմնավորման (ապացուցման) պարտականությունը կրում է այդպիսի վերանայում նախաձեռնած անձը,

- ուժի մեջ մտնող դատական ակտերի վերանայումը՝ նոր երևան եկած հանգամանքներով, կատարվում է դատավարական համապատասխան ընթացակարգով, որի շրջանակներում իրավասու դատարանը կոչված է լուծելու արդարադատական հետևյալ հիմնական խնդիրները. գործով կայացված որոշման հիմքում չարտացոլված և նոր երևան եկած փաստական հանգամանքների (ապացույցների) ուսումնասիրում, իրավագնահատում և իրավական վեճի լուծման համար օրենսդրության համապատասխան նորմերի ընտրություն, դրանց մեկնաբանում ու կիրառում, որոնց հաջորդում են պարտադիր իրավական հետևանքներ, այդ թվում՝ անձի իրավունքների պաշտպանության հետ կապված»:

5.2. Վերոգրյալի համատեքստում Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերջնականության սկզբունքից բացառություն կարող է լինել միայն ծանրակշիռ հիմնավորումներով, քանի որ հիշյալ հիմնարար սկզբունքի իրավական արժեքը պայմանավորված է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով դրա հասցեատերերի համար ստեղծված իրավական վիճակի կայունությունն ապահովելու (դրանով իսկ իրավական որոշակիությունը երաշխավորելու) սահմանադրական հրամայականով:

Իր հիմնարար իրավական արժեքով հանդերձ՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերջնականության սկզբունքը բացարձակ չէ, և դրանից կարող է լինել բացառություն՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով՝ արդարադատության այնպիսի թերության ուղղման նպատակով, որի բացահայտմամբ օրինական ուժի մեջ մտած դատական ակտն անհամատեղելի է դառնում արդար դատաքննության բուն էության հետ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման իրավունքը պահանջում է օրենքով նախատեսված հանգամանքների և պայմանների առկայության պարագայում օրինական ուժի մեջ մտած դատական ակտի իրավաչափության ստուգման հնարավորություն, որի իրականացումը, միաժամանակ, չի կարող հանգեցնել վերջնական դատական ակտի՝

վերաքննության կամ վճռաբեկության ընդհանուր կարգով բողոքարկման քողարկված հնարավորության:

5.3. Մինչ սույն գործով վիճարկվող դրույթի սահմանադրականության ստուգումը Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ մահացած անձի նկատմամբ քրեական հետապնդումը շարունակելու իրավական հնարավորության խնդրին՝ արձանագրելով, որ նման հնարավորության համար իրավական կառուցակարգի և դրա տարրերի ընտրության իրավասությունը վերապահված է օրենսդրին, որի լիազորությունն է դատավարական կողմերի շահերի հավասարակշռման միջոցով ապահովել ինչպես մահացածի, այնպես էլ տուժողի իրավունքների պաշտպանությունը:

Այս առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող իրավադրույթին վերաբերող՝ 2017 թվականի մարտի 21-ի ՍԴԴ-1358 որոշմամբ (մահացածի իրավունքների վերականգնման նպատակով վարույթի շարունակման մասով) Սահմանադրական դատարանը կարևորել է անձի մահվան հիմքով վարույթի դադարեցման պարագայում մահացածի հարազատների կամարտահայտությունը հաշվի առնելը: Սակայն սույն դիրքորոշումը որևէ կերպ չի կարող մեկնաբանվել որպես տուժողի իրավունքների պաշտպանության բացառում: Այն հանգամանքը, որ Սահմանադրական դատարանը հիշյալ որոշմամբ կարևորել է մահացածի իրավունքների վերականգնման նպատակով վարույթը շարունակելիս մահացածի մերձավոր ազգականների դիրքորոշումը, չի կարող մեկնաբանվել որպես օրենսդրի կողմից «ուրիշ անձանց» հիմնական իրավունքի դատական պաշտպանության ապահովման հայեցողության սահմանափակում:

5.4. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ մահացած անձի նկատմամբ քրեական գործի հարուցումը և քրեական հետապնդումն առհասարակ Օրենսգրքով նշված դեպքերում հնարավոր է համարվել: Թեպետ Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով ամրագրված իրավակարգավորմամբ, որպես *ընդհանուր կանոն*, սահմանվում է, որ անձի մահվան դեպքում քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, սակայն այս կանոնից նախատեսված է բացառություն: Մասնավորապես՝ նույն դրույթով օրենսդիրը նախատեսել

է իրավասու մարմնի կողմից վարույթը շարունակելու իրավասություն՝ (1) մահացածի իրավունքների վերականգնման կամ, (2) ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու նպատակների համար:

Սույն իրողությունն արձանագրվել է նաև Սահմանադրական դատարանի 2015 թվականի հունիսի 9-ի ՍԴՈ-1213 որոշմամբ. «(...) օրենսգրքի 35-րդ հոդվածում թվարկված են այն հանգամանքները, որոնք բացառում են ինչպես քրեական գործ հարուցելու և քրեական հետապնդում իրականացնելու հնարավորությունը, այնպես էլ առաջացնում են պարտավորություն՝ կարճել քրեական գործի վարույթը: Նշված հանգամանքներից յուրաքանչյուրի բացահայտման դեպքում քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, իսկ քրեական հետապնդումը՝ դադարեցման: Միևնույն ժամանակ, այս ընդհանուր մոտեցումն ունի վերապահումներ, (...):»:

Վիճարկվող իրավադրույթի «մահացածի իրավունքների վերականգնման» նպատակով վարույթի շարունակության իրավասության առնչությամբ Սահմանադրական դատարանը 2017 թվականի մարտի 21-ի ՍԴՈ-1358 որոշմամբ նշել է. «(...) իրավակիրառ պրակտիկան պետք է առաջնորդվի այն մոտեցմամբ, որ անձի մահվան հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու կամ գործի վարույթը կարճելու դեպքում անհրաժեշտ է այդ մասին իրազեկել նրա մերձավոր ազգականին, ապահովել վերջինի դիրքորոշման լսելիությունը, մահացածի իրավունքների վերականգնման անհրաժեշտության դեպքում քրեական գործի վարույթը շարունակելու՝ նրա պահանջի բավարարումը և մասնակցությունը մահացածի իրավունքների պաշտպանության և նրա մեղավորության հարցը պարզելուն ուղղված դատավարության ողջ ընթացքում»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն սահմանադրական վեճի շրջանակում նորմը վիճարկվում է միայն «ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու» նպատակի մասով, Սահմանադրական դատարանը մահացածի իրավունքների վերականգնման նպատակին կանդախտաբան ալիքով, որքանով դա վերաբերելի և անհրաժեշտ է վիճարկվող դրույթի իրավական բովանդակության բացահայտման ամբողջականության

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1(113)2024

համար:

5.5. Վիճարկվող դրույթում առկա «*ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար*» ձևակերպման իրավական բովանդակության վերհանման առնչությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև Օրենսգրքում «*քրեական գործ*» և «*գործ*» եզրույթների օգտագործմանը:

Մասնավորապես՝ Օրենսգրքի «*Քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած հիմնական հասկացությունները*» վերտառությամբ 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «*Քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած ներքոհիշյալ հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը՝ (...) 2) քրեական գործ՝ քրեական հետապնդման մարմնի կամ դատարանի կողմից իրականացվող առանձին վարույթ՝ քրեական օրենսգրքով չթույլատրված մեկ կամ մի քանի ենթադրաբար կատարված արարքների կապակցությամբ*»:

Նշվածից հետևում է, որ Քրեական օրենսգրքով՝ նախատեսված արարքի կապակցությամբ իրականացվող առանձին վարույթը նշելու համար Օրենսգրքում օգտագործվում է «*քրեական գործ*» եզրույթը: Սահմանադրական դատարանը նկատում է, որ Օրենսգրքի ամբողջ տեքստում «*քրեական գործ*» եզրույթի բազմակի կիրառումն ակնհայտ է դարձնում օրենսդրի՝ դատավարական վարույթի տեսակի որոշակիացման նպատակը: Այդուհանդերձ, Օրենսգրքում բազմիցս օգտագործվում է նաև «*գործ*» իրավական եզրույթը՝ առանց որոշակիացնելու այն «*քրեական*» ածականով: Վերջինս, ինքնին, չի կարող իրավական նորմերի՝ առանց դրանց՝ իրավաբանական մեկնաբանության գործիքակազմի ճշգրիտ կիրառման ինքնուրույնաբար մեկնաբանվել քրեական գործից բացի այլ վարույթներին վերաբերելու իմաստով, և հակառակը՝ Օրենսգրքում «*գործ*» իրավական եզրույթը ինքնին չի կարող մեկնաբանվել որպես բացառապես վերաբերելի քրեական գործերին՝ առանց հաշվի առնելու համապատասխան նորմի ողջ համատեքստը և բովանդակությունը:

Նման պայմաններում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարության շրջանակում կոնկրետ իրավական վարույթը նկատի ունենալու նպատակով Օրենսգրքում օգտագործվում է «*քրեական գործ*» եզրույթը, իսկ «*գործ*» եզրույթը քրեական գործին ակնհայտորեն վերաբերելի է այն դեպքում, երբ դա անմիջապես բխում է

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1(113)2024

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆

կոնկրետ նորմի բովանդակությունից: Իր հերթին, Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով նախատեսված՝ «*ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար*» ձևակերպումը որևէ կերպ չի վկայում, որ մեղադրյալի մահվան դեպքում քննվող քրեական գործը չի կարճվում, եթե դա անհրաժեշտ է նոր ի հայտ եկած հանգամանքի կապակցությամբ բացառապես մեկ այլ քրեական գործի վերսկսման համար: Վիճարկվող դրույթին տրված հակառակ մեկնաբանությունն ունենալու է սահմանափակող բնույթ, իսկ այդ դրույթը, իրավասու մարմնի համար մահացած անձի նկատմամբ քրեական վարույթն իրականացնելու իրավասություն սահմանելուն զուգահեռ՝ այլոց համար իրենց իրավունքների դատական պաշտպանության նպատակով վարույթը շարունակելու իրավական հնարավորություն նախատեսող նորմ հանդիսանալով, ենթակա չէ նման իրավական հնարավորությունը սահմանափակող տարածական մեկնաբանության: Այս եզրահանգումն ամրապնդվում է նաև այն դիտարկմամբ, որ Սահմանադրական դատարանը չի տեսնում որևէ բացատրություն, որ վիճարկվող դրույթը, դիցուք, միայն քրեական դատավարությանը վերաբերելու մասով սահմանափակելու նպատակ հետապնդելու պարագայում օրենսդիրը չհստակեցնե՞ր իր մտադրությունը՝ «*գործ*» եզրույթի փոխարեն Օրենսգրքում բազմակի կիրառված «*քրեական գործ*» եզրույթը կիրառելու համար: Վիճարկվող դրույթի վերլուծությամբ Սահմանադրական դատարանը չի նշմարում որևէ այլ հանգամանք, ինչը ցույց կտար, որ «*ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար*» ձևակերպման մեջ առկա «*գործը*» եզրույթը վերաբերելի է բացառապես քրեական գործի՝ չնե՞րառելով, դիցուք, քաղաքացիական դատավարության կարգով քննված գործ:

5.5. Հիմք ընդունելով այն, որ վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցը սույն գործով բարձրացվում է այն համատեքստում, թե որքանով է տուժողի համար ապահովված քաղաքացիական դատավարության արդյունքում կայացված դատական ակտի՝ նոր երևան եկած հանգամանքով վերանայման իրավունքի արդյունավետ իրացումը, Սահմանադրական դատարանը գտնում է, որ հիշյալ հարցի քննարկումը

պետք է իրականացնել սույն գործին առնչվող իրավահարաբերությունների ծագման պահին ուժի մեջ գտնվող՝ 2018 թվականի փետրվարի 9-ին ընդունված և նույն թվականի ապրիլի 9-ին ուժի մեջ մտած Քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ նոր երևան եկած հանգամանքով դատական ակտի վերանայմանը վերաբերող դրույթների և դրանց հետ վիճարկվող դրույթի ունեցած կապերի համակարգային վերլուծությամբ:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով կարող են վերանայվել առաջին արյանի դատարանի և վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած այն դատական ակտերը, որոնք ենթակա են բողոքարկման, վճարման կարգադրությունները, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու, այն առանց քննության թողնելու, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին և վճռաբեկ բողոքի քննության արդյունքով կայացված որոշումները»:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Նոր երևան եկած հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե՝

(...)

2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ վկայի սուտ ցուցմունքները, փորձագետի ակնհայտ կեղծ եզրակացությունը, թարգմանչի ակնհայտ սխալ թարգմանությունը, գրավոր կամ իրեղեն ապացույցների կեղծված լինելը հանգեցրել են ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելուն:

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել է, որ բողոք բերած անձ չհանդիսացող գործին մասնակցող անձինք կամ նրանց ներկայացուցիչները կատարել են գործի քննության հետ կապված հանցավոր արարք, որը հանգեցրել է ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելուն, կամ գործի քննության հետ կապված հանցավոր արարքը կատարել է դատավորը»:

Անդրադառնալով վիճարկվող դրույթում օգտագործված «նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսել» և

1(113)2024
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԵՂԵԿՎՈՐ ԴԱՏԱՐԱՆ
 271

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1(113)2024

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

Քաղաքացիական դատավարության օրենսգրքում օգտագործված «նոր երևան եկած հանգամանքներ» և «օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը վերանայել» եզրույթների միջև առկա տարբերություններին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքում «*նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու*» ինստիտուտի վերաբերյալ հիմնական դրույթներն ուժը կորցրել և, միաժամանակ, փոխարինվել են էականորեն նույնական իրավական բովանդակությամբ «*դատական ակտերի վերանայումը նոր երևան եկած հանգամանքով*» իրավական ինստիտուտին առնչվող մի շարք դրույթներով «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված թիվ ՀՕ-270-Ն օրենքով (տե՛ս, մասնավորապես, հիշյալ օրենքի 70 և 81-րդ հոդվածները): Թեպետ նշված օրենսդրական փոփոխություններից հետո Օրենսգրքի որոշ դրույթներում պահպանվում է «*նոր ի հայտ եկած հանգամանք*» ձևակերպումը, ակնհայտ է, որ այն ուղղակիորեն վերաբերում է «*նոր երևան եկած հանգամանք*» իրավական ինստիտուտին: Ամեն դեպքում, քննարկվող դրույթների վերլուծությունից ակնհայտ է, որ դրանք արտացոլում են միևնույն իրավական կառուցակարգը: Ինչպես Օրենսգրքի վիճարկվող դրույթում «*նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսել*» ձևակերպումը, այնպես էլ Քաղաքացիական դատավարության օրենսգրքում «*նոր երևան եկած հանգամանքներով կարող են վերանայվել օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը*» ձևակերպումը վերաբերում են այն իրավիճակին, երբ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կայացման պահին գոյություն ունեցող այնպիսի հանգամանքի մասին է հետագայում հայտնի դարձել, որն էական նշանակություն ունի համապատասխան հարցի լուծման համար և նախապես հայտնի չէր, ինչի բերումով օրենքի հիման վրա նույն հարցի վերաբերյալ կարող է կայացվել նոր դատական ակտ:

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթի և Քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ նոր երևան եկած հանգամանքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայմանը վերաբերող դրույթների իրավական

բովանդակությունը համընկնում է՝ անկախ դրանցում օգտագործվող եզրույթների տարբերություններից:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներից հետևում է, որ օրենսդիրը որպես նոր երևան եկած հանգամանք է դիտարկում, մասնավորապես, քրեական դատավարության կարգով օրինական ուժի մեջ մտած համապատասխան դատավճռով հաստատված այնպիսի հանգամանքի արդյունքում կայացված դատական ակտի առնչությամբ իրավական գործընթացը, որը կարող է վերսկսվել նոր երևան եկած հանգամանքի ուժով: Օրենսդիրը քաղաքացիական դատավարությունում նոր երևան եկած հանգամանքի հիմքով վարույթի հնարավորություն է նախատեսել միայն օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայությամբ, որը կարող է կայացվել բացառապես քրեական դատավարության շրջանակներում:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ նոր երևան եկած հանգամանքներով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայմանը վերաբերող դրույթները Օրենսգրքի վիճարկվող նորմի հետ գտնվում են համակարգային կապի մեջ, և այդ կապի հաշվառմամբ վիճարկվող նորմին տրված մեկնաբանությամբ է հնարավոր ապահովել քաղաքացիական դատավարության կարգով նոր երևան եկած հանգամանքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման իրավունքի իրացումը:

5.6. Դատարանները, դիմողի գործով մեկնաբանելով վիճարկվող դրույթի՝ *«ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար»* ձևակերպման մեջ նշված *«գործը»* եզրույթը, եզրահանգել են, որ այն վերաբերում է բացառապես մեկ այլ քրեական գործի: Նշվածով պայմանավորված՝ ամբաստանյալի մահացած լինելու փաստի հիմքով քրեական գործը, որով Դիմողն ունեցել է տուժողի կարգավիճակ, կարճվել է առանց գործով դատավճռի հանգելու հեռանկարի (տե՛ս սույն որոշման 1.2-րդ կետը): Սահմանադրական դատարանը փաստում է, որ նշվածի արդյունքում Դիմողը զրկվել է ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելուն հանգեցրած ենթադրյալ հանցավոր արարքի առկայության վերաբերյալ վերջնական դատական հաստատման (որպես նոր երևան եկած հանգամանք)

1(113)2024
 ◆ ՏԵԼԵՎԻԶԻՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

դատավարական հեռանկարից միայն այն փաստի բերումով, որ իր իրավունքի ենթադրյալ խախտումը նոր երևան եկած հանգամանքի հիման վրա վիճարկելու հնարավորությունը (քրեական դատավարությունը համապատասխան մեղադրական դատավճռով ավարտվելու դեպքում) նախատեսված է եղել քաղաքացիական դատավարության, այլ ոչ՝ քրեական դատավարության շրջանակում՝ արդյունքում Դիմողի համար ստեղծելով իր իրավունքի ենթադրյալ խախտման դեմ արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի իրացման «դատավարական փակուղի»:

5.7. Վերը նշվածի հիման վրա Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական դատավարական մեջբերված իրավակարգավորումների և վիճարկվող դրույթի համակարգային կապի հիման վրա կատարված վերլուծությունը վկայում է, որ վիճարկվող դրույթը չի սահմանափակվում միայն քրեական դատավարության շրջանակում նոր երևան եկած հանգամանքի հիմքով գործի վերսկսման իրավական հնարավորությամբ, այլ անհրաժեշտ կառուցակարգ է այլ ճյուղային, սույն գործին վերաբերելի մասով՝ քաղաքացիական դատավարության շրջանակում անձի՝ ենթադրյալ խախտված իրավունքի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման համար: Այս մոտեցումը համահունչ է նաև քրեական դատավարության օրենսդրությամբ ամրագրված՝ անձին հանցագործությունից պաշտպանելու նպատակին (Օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ), երբ դատարանի կողմից դատավճռով հաստատված լինելու դեպքում հանցագործությամբ պատճառված վնասի վերականգնման հնարավորությունը չի ենթադրում բացառապես քրեական դատավարական ընթացակարգերի գործարկում, այլ կարող է իրացվել նաև այլ ճյուղային դատավարական ընթացակարգերի շրջանակում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին մասով, 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ «նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար» ձևակերպումը վերաբերում է նաև քաղաքացիական դատավարության կարգով նոր երևան եկած հանգամանքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայմանը:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով, քանի որ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը Դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշմամբ տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

23 հունվարի 2024 թվականի
ՍԴՈ-1712



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 16-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

6 փետրվարի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռ. Գևորգյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2023 թվականի օգոստոսի 16-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառա-

1(113)2024

◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ ՏԵՂԵԿՎԱԳՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

վարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2022 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2023 թվականի նոյեմբերի 9-ի N 1937-Ա որոշմամբ հավանություն է տվել «2023 թվականի օգոստոսի 16-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2022 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2023 թվականի նոյեմբերի 13-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2022 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2023 թվականի օգոստոսի 16-ին՝ գործընկերային ֆինանսական համագործակցության միջոցով Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև առկա բարեկամական հարաբերություններն ամրապնդելու և խորացնելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սոցիալական, տնտեսական և շրջակա միջավայրի պահանջներին համապատասխանող զարգացմանը նպաստելու նպատակներով:

2. Համաձայնագիրը կազմված է նախաբանից և չորս հոդվածներից:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

3.1. օգտագործել Վերականգնման վարկերի բանկից (այսուհետ նաև՝ ՎՎԲ) ստացվելիք մինչև 12,000,000 (տասներկու միլիոն) եվրոյի չափով վարկը, որը Հայաստանի Հանրապետության Կառավարությանը հասանելի է դարձել Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարության կողմից, «Վերականգնվող էներգիայի ընդլայնում և էներգախնայողություն. փուլ III» ծրագրի (այսուհետ նաև՝ Ծրագիր) իրականացման համար՝ այն պայմաններով, որոնք կսահմանվեն ՎՎԲ-ի և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև կնքվելիք պայմանագրերով (հոդված 1, 1-ին պարբերություն, հոդված 2, 1-ին պարբերություն),

3.2. երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետության Կառավարության՝ վարկառու չհանդիսանալու դեպքում Վերականգնման վարկերի բանկի օգտին վճարումները կատարվեն եվրոյով՝ ի կատարումն Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն կնքվելիք վարկային պայմանագրերով վարկառուների ստանձնած պարտավորությունների, եթե Կողմերը համատեղ կարգով ընտրել են այլ վարկառուների (ընդունող կողմերի) (հոդված 1, 1-ին պարբերություն, հոդված 2, 3-րդ պարբերություն),

3.3. Հայաստանի Հանրապետության Կառավարության՝ ֆինանսական օժանդակություններ ստացող չհանդիսանալու դեպքում ՎՎԲ-ին տալ երաշխիք առ այն, որ կկատարվեն հետվճարման այն պահանջները, որոնք կարող են ծագել Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն կնքվելիք ֆինանսական օժանդակությունների պայմանագրերից (հոդված 2, 4-րդ պարբերություն),

3.4. ՎՎԲ-ին ազատել ուղղակի հարկերից, որոնք Հայաստանի Հանրապետությունում ենթակա են վճարման՝ կապված Համաձայնագրի 1-ին հոդվածի 1-ին պարբերությունում նշված ծրագրերի կամ 2-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված պայմանագրերի կնքման և իրականացման հետ (հոդված 3):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2023 թվականի օգոստոսի 16-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2022 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

6 փետրվարի 2024 թվականի
ՍԴՈ-1713

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2023 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 16-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ
ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 6-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1713 ՈՐՈՇՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2023 թվականի օգոստոսի 16-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2022 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի փետրվարի 6-ի ՍԴՈ-1713 որոշմամբ որոշել է, որ 2023 թվականի օգոստոսի 16-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2022 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի փետրվարի 6-ի ՍԴՈ-1713 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 1(113)2024

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով

ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի փետրվարի 6-ի ՍԴՈ-1713 որոշմամբ 2023 թվականի օգոստոսի 16-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2022 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ են համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեն համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում են, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

1(113)2024

◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարանի դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը:

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված:

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների:

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարանի դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ ◆ 1(113)2024

1(113)2024

◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ ՍԱՀՄԱՆԱՐՈՂՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ են համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674,

ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության

1(113)2024
 ◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:


Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«06» փետրվարի 2024թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻԻ ◆ 1(113)2024
287



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՍԵՅՍՄԻԿ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ (ԼՐԱՑՈՒՑԻՉ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ)» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

1(113)2024

◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ

Քաղ. Երևան

13 փետրվարի 2024 թ.

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Հ. Թովմասյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
Կառավարության ներկայացուցիչ՝ Տարաձքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Վ. Տերտերյանի,
համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2023 թվականի նոյեմբերի 27-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր (լրացուցիչ ֆինանսավորում)» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի հունվարի 18-ի N 65-Ա որոշմամբ հավանություն է տվել 2023 թվականի նոյեմբերի 27-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր (լրացուցիչ ֆինանսավորում)» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի հունվարի 31-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր (լրացուցիչ ֆինանսավորում)» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Վարկային համաձայնագիր) ստորագրվել է 2023 թվականի նոյեմբերի 27-ին՝ սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման նպատակով:

Ծրագիրն իրականացվելու է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ որպես կատարող մարմնի, ինչպես նաև Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ)՝ որպես իրականացնող մարմնի կողմից:

Վարկային համաձայնագրով սահմանված կարգով և բովանդակությամբ փոփոխություններ են կատարվում Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ)՝ 2022 թվականի հունվարի 1-ով թվագրված Ընթացիկ գործառնությունների մասով Վարկային կանոնակարգերում:

2. Վարկային համաձայնագիրն ունի 3 ժամանակացույց՝ ժամանակացույց 1. «Մարման ժամանակացույց», ժամանակացույց 2. «Վարկային միջոցների հատկացում և առհանում», ժամանակացույց 3. «Ծրագրի կատարում»:

ԱԶԲ-ն համաձայնում է ԱԶԲ-ի սովորական կապիտալ միջոցներից Հայաստանի Հանրապետությանը տրամադրել վաթսուներեք միլիոն հարյուր հազար եվրոյի (€66,100,000) չափով վարկ, ընդ որում, նշված գումարը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել Արժույթի փոխարկման միջոցով՝ Վարկային համաձայնագրի 2.06 կետի դրույթներին համապատասխան: Վարկի փակման ամսաթիվն է 2027 թվականի սեպտեմբերի 30-ը կամ այնպիսի ամսաթիվ, որը ժամանակ առ ժամանակ կարող է համաձայնեցվել Հայաստանի Հանրապետության և ԱԶԲ-ի միջև:

Վարկն ունի մայր գումարի 7 տարի մարման ժամկետ և վարկի արտոնյալ ժամանակահատված, որը մայր գումարի առաջին մարման ամսաթվին՝ 2039 թվականի հունվարի 15-ին, նախորդող ժամանակահատվածն է:

3. Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

3.1. սկսած 2039 թվականի հունվարի 15-ից մինչև 2045 թվականի հուլիսի 15-ը՝ կիսամյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ին և հուլիսի 15-ին ԱԶԲ-ին վճարել տոկոսագումար վարկի՝ ժամանակ առ ժամանակ առհանված և դեռևս չվճարված մայր գումարի նկատմամբ՝ յուրաքանչյուր Տոկոսագումարի վճարման ժամանակահատվածի համար՝ Euribor/Եվրոպական միջբանկային առաջարկի տոկոսադրույքի, 0.60%-ի, ինչպես նախատեսվում է Վարկային կանոնակարգերի 3.02 կետով՝ հանած 0.10%, ինչպես նախատեսվում է Վարկային կանոնակարգերի 3.03 կետով, և մարման հավելավճարի (maturity premium) 0.30%-ի չափով, ինչպես նախատեսվում է Վարկային կանոնակարգերի 3.03 կետով (հողված 2, կետեր 2.02, 2.04 և ժամանակացույց 1, պարբերություն 1),

3.2. վճարել տարեկան 0.15%-ի չափով պարտավորավճար, որը հաշվեգրվում է վարկի ամբողջական գումարի նկատմամբ (հանած ժամանակ առ ժամանակ առհանվող գումարները)՝ սկսած Վարկային համաձայնագրի ամսաթվին հաջորդող 60-րդ օրվանից հետո (հողված 2, կետ 2.03),

3.3. սկսած 2039 թվականի հունվարի 15-ից մինչև 2045 թվականի հունվարի 15-ը՝ կիսամյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ին և հուլիսի 15-ին վերադարձնել Վարկային հաշվից առհանված Վարկի մայր գումարը՝ 7.142857 մասնաբաժնով, իսկ 2045 թվականի հուլիսի 15-ին 7.142859 մասնաբաժնով (հոդված 2, կետեր 2.04, 2.05 և Ժամանակացույց 1, պարբերություն 1),

3.4. Վարկային միջոցները տրամադրել Ծրագիրը կատարող մարմնին՝ ԱԶԲ-ի և Հայաստանի Հանրապետության համար փոխհամաձայնեցված պայմաններով, և ապահովել, որ Ծրագիրը կատարող մարմինն այդ միջոցներն օգտագործի Ծրագրի ծախսերի ֆինանսավորման նպատակով՝ Վարկային համաձայնագրում սահմանված դրույթներին համապատասխան (հոդված 3, կետ 3.01),

3.5. Ծրագիրն իրականացնելիս կատարել Վարկային համաձայնագրի Ժամանակացույց 3-ում նախատեսված բոլոր պարտավորությունները կամ ապահովել դրանց կատարումը (հոդված 4, կետ 4.01),

3.6. Ծրագրի հետ կապված վարել առանձին հաշիվներ և գրանցամատյաններ, Ծրագրի համար պատրաստել տարեկան ֆինանսական հաշվետվություններ՝ ԱԶԲ-ի համար ընդունելի ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ստանդարտներին համապատասխան, ապահովել այդ ֆինանսական հաշվետվությունների տարեկան աուդիտն անկախ աուդիտորների կողմից, որոնց որակավորումը, փորձը և նրանց ներկայացվող տեխնիկական առաջադրանքն ընդունելի են ԱԶԲ-ի համար՝ համաձայն ԱԶԲ-ի համար ընդունելի աուդիտի ստանդարտների, որպես յուրաքանչյուր այդպիսի աուդիտի մաս ապահովել աուդիտորների կողմից այնպիսի հաշվետվության ներկայացում, որը ներառում է ֆինանսական հաշվետվությունների և Վարկային միջոցների օգտագործման վերաբերյալ աուդիտորների եզրակացությունը (եզրակացությունները), ինչպես նաև կառավարման վերաբերյալ գրության ներկայացում (որտեղ նշվում են աուդիտի ընթացքում բացահայտված Ծրագրի ներքին հսկողության մասով թերությունները, եթե այդպիսիք կան), և յուրաքանչյուր համապատասխան ֆինանսական տարվա ավարտից ոչ ուշ, քան 6 ամիս հետո ԱԶԲ-ին է տրամադրել աուդիտորական ուսումնասիրություն անցած ֆինանսական հաշվետվությունների, աուդիտի հաշվետվության և կառավարման վերաբերյալ գրության պատճենները՝

բոլորն անգլերեն, ինչպես նաև այդ փաստաթղթերին առնչվող և դրանց աուդիտի վերաբերյալ այլ տեղեկատվություն, որն ԱԶԲ-ն ժամանակ առ ժամանակ ողջամտորեն կպահանջի (հոդված 4, կետ 4.02, ենթակետ «ա»),

3.7. Ի լրումն Վարկային համաձայնագրի 4-րդ հոդված 4.02 կետի «ա» ենթակետով նախատեսված աուդիտ անցած տարեկան ֆինանսական հաշվետվությունների՝ ապահովել, որ Ծրագիրը կատարող մարմինը՝ տրամադրի ԱԶԲ-ի համար ընդունելի ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ստանդարտներին համապատասխան պատրաստված իր տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ապահովի իր ֆինանսական հաշվետվությունների տարեկան աուդիտի իրականացումն անկախ աուդիտորների կողմից, որոնց որակավորումը, փորձը և նրանց ներկայացվող տեխնիկական առաջադրանքն ընդունելի են ԱԶԲ-ի համար՝ համաձայն ԱԶԲ-ի համար ընդունելի աուդիտի ստանդարտների, և համապատասխան մարմնի կողմից հաստատվելուց ոչ ուշ, քան 1 ամիս հետո և ոչ ուշ, քան յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից 12 ամիս հետո, նայած որն է ավելի վաղ, ԱԶԲ-ին տրամադրի աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների պատճենները անգլերենով և այդ փաստաթղթերին ու դրանց աուդիտին վերաբերող այնպիսի տեղեկատվություն, որը ԱԶԲ-ն ժամանակ առ ժամանակ ողջամտորեն կպահանջի (հոդված 4, կետ 4.02, ենթակետ «գ»),

3.8. ԱԶԲ-ի պահանջով ԱԶԲ-ի համար ապահովել Վարկային համաձայնագրի 4-րդ հոդվածի 4.02 կետի «ա»(iii) ենթակետի համաձայն նշանակված աուդիտորների հետ Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների և Հայաստանի Հանրապետության՝ Ծրագրին առնչվող ֆինանսական խնդիրների քննարկումը և թույլ տալ ու պահանջել տվյալ աուդիտորների ցանկացած ներկայացուցչի մասնակցությունը ԱԶԲ-ի կողմից նախաձեռնվող այդպիսի քննարկումներին (հոդված 4, կետ 4.02, ենթակետ «դ»),

3.9. որպես Վարկային կանոնակարգերի 7.01 և 7.04 կետերում նախատեսված տեղեկատվության և հաշվետվությունների մաս, ԱԶԲ-ին տրամադրել կամ ապահովել, որ տրամադրվեն՝ ա) կիսամյակային հաշվետվություններ՝ Ծրագրի իրականացման, այդ թվում՝ ՀԿՑ-ների (ՀԿՑ մատրիցայում սահմանված՝ յուրաքանչյուր հատկացման հետ կապակցված ցուցանիշ) իրագործման, Ծրագրի գործողությունների և Թույլատրելի

ծախսերի կատարման վերաբերյալ, և բ) ըստ ԱԶԲ-ի ողջամիտ պահանջի՝ Վարկային համաձայնագրի 4-րդ հոդվածի 4.03 կետի «ա» ենթակետով նկարագրված հաշվետվությունների հետ կապված հավելյալ տեղեկատվություն և այլ տեղեկատվություն՝ Ծրագրի իրականացման վերաբերյալ (հոդված 4, կետ 4.03),

3.10. հնարավորություն տալ ԱԶԲ-ի ներկայացուցիչներին իրականացնել Ծրագրի և ցանկացած համապատասխան գրառման ու փաստաթղթերի ստուգումներ (հոդված 4, կետ 4.04),

3.11. իրականացման համաձայնագրին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության իրավունքներն իրացնել ի պաշտպանություն Հայաստանի Հանրապետության և ԱԶԲ-ի շահերի, ինչպես նաև Վարկի նպատակներին համապատասխան (հոդված 4, կետ 4.05, ենթակետ «ա»),

3.12. Իրականացման համաձայնագրի համաձայն՝ որևէ իրավունք կամ պարտականություն չհանձնարարել, չփոփոխել, չվերացնել, կամ որևէ իրավունքից կամ պարտականությունից չիրաժարվել՝ առանց ԱԶԲ-ին նախապես ծանուցելու (հոդված 4, կետ 4.05, ենթակետ «բ»),

3.13. Մայր գումարի առաջին մարման ամսաթվի դրությամբ Վարկային միջոցներն ամբողջությամբ առհանված չլինելու դեպքում վերադարձնել այդ օրվա դրությամբ առհանված և չվճարված գումարը՝ Վարկային համաձայնագրի 1-ին ժամանակացույցի 1-ին պարբերությունում նախատեսված կարգով (Ժամանակացույց 1, պարբերություն 2, կետ «ա»),

3.14. այն պարագայում, երբ Մայր գումարի առաջին մարման ամսաթվի դրությամբ Վարկային միջոցներն ամբողջությամբ առհանված չեն, ապա Մայր գումարի առաջին մարման ամսաթվից հետո կատարված ցանկացած առհանման դեպքում այդ գումարները վերադարձնել նման առհանման ամսաթվին հաջորդող՝ Մայր գումարի յուրաքանչյուր մարման ամսաթվին՝ ԱԶԲ-ի կողմից սահմանված գումարի չափով՝ յուրաքանչյուր այդպիսի առհանված գումարը բազմապատկելով կոտորակով, որի համարիչը Վարկային համաձայնագրի 1-ին ժամանակացույցի 1-ին պարբերության աղյուսակում սահմանված՝ Մայր գումարի տվյալ մարման ամսաթվի դրությամբ սկզբնական Վճարման մասնաբաժինն է (Սկզբնական վճարման մասնաբաժին), իսկ հայտարարը՝ այդ ամսաթվին կամ դրանից հետո ընկած ժամանակահատվածի համար Մայր գումարի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
◆ 1(113)2024

մարման մնացած բոլոր սկզբնական վճարման մասնաբաժինների ընդհանուր գումարը (Ժամանակացույց 1, պարբերություն 2, կետ «բ»),

3.15. Մայր գումարի ցանկացած մարման ամսաթվի դրությամբ վճարվելիք Մայր գումարները հաշվարկելու նպատակներով Մայր գումարի մարման որևէ ամսաթվին նախորդող երկու օրացուցային ամիսների ընթացքում կատարված առհանումները դիտարկել որպես առհանված և չվճարված՝ առհանման ամսաթվին հաջորդող Մայր գումարի երկրորդ մարման ամսաթվի դրությամբ, և վճարել առհանման ամսաթվին հաջորդող՝ Մայր գումարի երկրորդ մարման ամսաթվից սկսած՝ Մայր գումարի մարման յուրաքանչյուր ամսաթվին (Ժամանակացույց 1, պարբերություն 3),

3.16. Վարկային հաշվից առհանում կատարելու վերաբերյալ առաջին դիմումը ԱԶԲ-ին ներկայացնելուց առաջ Ծրագիրը կատարող մարմնի անունով Ծրագրի համար պետական գանձապետարանում բացել հաշիվ («Դեպոզիտային հաշիվ»), որին պետք է փոխանցվի Ծրագրի գումարը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում առկա Հայաստանի Հանրապետության միասնական գանձապետական հաշվի միջոցով (որի մանրամասները պատշաճ կարգով տեղեկացնել ԱԶԲ-ին՝ առհանման հայտում), ինչպես նաև տարընթերցումներից խուսափելու նպատակով, Վարկային հաշվից ցանկացած առհանում կատարել Դեպոզիտային հաշվի միջոցով և Դեպոզիտային հաշիվը կառավարել և փակել ԱԶԲ-ի համար ընդունելի համարվող պայմաններին համապատասխան (Ժամանակացույց 2, պարբերություն 2),

3.17. Դեպոզիտային հաշվի հետ կապված վարել առանձին գրանցումներ՝ ԱԶԲ-ի համար ընդունելի հաշվապահական սկզբունքներին համապատասխան, ինչպես նաև ԱԶԲ-ի պահանջով կազմակերպել Դեպոզիտային հաշվի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ անկախ աուդիտորների կողմից, որոնց որակավորումը, փորձը և նրանց ներկայացվող տեխնիկական առաջադրանքն ընդունելի են ԱԶԲ-ի համար, համապատասխանում են աուդիտի միջազգային ստանդարտներին կամ ԱԶԲ-ի համար ընդունելի՝ դրանց ազգային համարժեքին և դրանք կազմելուց անմիջապես հետո, սակայն ամեն դեպքում ոչ ուշ, քան այդ մասին ԱԶԲ-ի կողմից պահանջ ներկայացնելուց 6 ամիս հետո, աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների

պատճենները և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորների եզրակացությունը տրամադրել ԱԶԲ-ին անգլերենով (Ժամանակացույց 2, պարբերություն 3),

3.18. չներկայացնել Վարկային հաշվից առհանման մեկից ավելի դիմում Ֆինանսական տարվա յուրաքանչյուր եռամսյակում, եթե ԱԶԲ-ի հետ այլ համաձայնություն չի ձեռք բերվում (Ժամանակացույց 2, պարբերություն 5),

3.19. Նախքան Վարկային հաշվից ՀԿՑ-ի հետ կապված առհանման դիմում ներկայացնելը ԱԶԲ-ին ներկայացնել բավարար ապացույցներ ՀԿՑ Հավաստման արձանագրությանը համապատասխան, որոնք ցույց են տալիս, որ՝ ա) ամբողջությամբ բավարարվել է տվյալ ՀԿՑ-ն, կամ բ) այն ՀԿՑ-ն, որի մասով թույլատրվում է մասնակի հատկացում (ինչպես նշված է ՀԿՑ մատրիցայում), բավարարվել է մասնակի հատկացման համար պահանջվող չափով՝ ՀԿՑ Հավաստման արձանագրությանը համապատասխան (Ժամանակացույց 2, պարբերություն 6),

3.20. եթե որևէ ՀԿՑ չի բավարարվել նախքան Ծրագրի ավարտի ամսաթիվը, ապա Ծրագրի ավարտի ամսաթվից հետո 6 ամսվա ընթացքում ԱԶԲ-ին վերադարձնել տվյալ ՀԿՑ-ի մասով ֆինանսավորման չվճարված կանխավճարային գումարը կամ դրա մի մասը (Ժամանակացույց 2, պարբերություն 9),

3.21. եթե ընդհանուր Թույլատրելի ծախսերի գումարն ավելի քիչ է, քան Հայաստանի Հանրապետության կողմից առհանված Վարկային գումարը, ապա ԱԶԲ-ին վերադարձնել պակասող գումարի չափով գումար Ծրագրի ավարտի օրվանից 6 ամսվա ընթացքում (Ժամանակացույց 2, պարբերություն 10),

3.22. Ծրագիրը կատարող մարմնի հետ ապահովել, որ Ծրագիրն իրականացվի ԾԻՓ-ում (ծրագրի իրականացման փաստաթուղթ) սահմանված մանրամասն մեխանիզմների համաձայն (Ժամանակացույց 3, պարբերություն 1),

3.23. ապահովել, որ Ծրագրի շրջանակներում Թույլատրելի ծախսերի ընդհանուր գումարը հավասար լինի Հայաստանի Հանրապետության կողմից Ծրագրի համար առհանված Վարկային միջոցներին կամ գերազանցի դրանք (Ժամանակացույց 3, պարբերություն 2),

3.24. ապահովել կամ այնպես անել, որ Ծրագիրը կատարող մարմինն ապահովի, որ ծրագրի իրականացման կամ ֆինանսական միջոցների

օգտագործմանն առնչվող շահակիրների բողոքները, այդպիսիք լինելու դեպքում, արդյունավետորեն հասցեագրվեն (Ժամանակացույց 3, պարբերություն 3),

3.25. ապահովել, որ Ծրագիրը կատարող մարմինն իր մասով կատարի Վարկային համաձայնագրում ներառված բոլոր պահանջները և պարտավորությունները՝ Ծրագրի նպատակները ժամանակին և արդյունավետորեն իրագործելու համար (Ժամանակացույց 3, պարբերություն 4),

3.26. ապահովել, որ Ծրագրի շրջանակում ձեռք բերված ՀԿՑ-ները շարունակեն պահպանվել ԴԱՎԾ-ի (Դպրոցների ամրացման և վերանորոգման ծրագիր) տևողության ընթացքում (Ժամանակացույց 3, պարբերություն 5),

3.27. տեղեկացնել ԱԶԲ-ին օգնություն տրամադրող բազմակողմ և երկկողմ այլ կազմակերպությունների հետ այնպիսի քննարկումների մասին, որոնք կարող են հետևանքներ ունենալ ԴԱՎԾ-ի և Ծրագրի իրականացման համար, և ԱԶԲ-ին ընձեռել ստացվող առաջարկների մասով դիտողություններ ներկայացնելու հնարավորություն, ինչպես նաև պատշաճորեն հաշվի առնել ԱԶԲ-ի տեսակետները՝ նախքան նման առաջարկը վերջնականացնելը և իրականացնելը (Ժամանակացույց 3, պարբերություն 6),

3.28. Ծրագիրը կատարող մարմնի հետ միասին ապահովել, որ բոլոր քաղաքականությունները, գործընթացները և ընթացակարգերը լինեն գործուն՝ Ծրագրի մասով պատշաճ և ժամանակին բյուջետային հատկացումները հասանելի դարձնելու համար՝ Ծրագրի ռեսուրսային պահանջներին համապատասխան (Ժամանակացույց 3, պարբերություն 7),

3.29. Ծրագիրը կատարող մարմնի հետ միասին ապահովել դպրոցների գործարկման և պահպանության համար տարեկան բյուջեի բաշխման համակարգի սահուն վերափոխումը և ապահովել, որ լինեն բավարար ֆինանսական միջոցներ՝ Ծրագրի շրջանակում ամրացված կամ վերակառուցված դպրոցների գործարկման և պահպանության համար դրանց գործունեության ողջ ժամանակահատվածում՝ համաձայն գործառնական և պահպանության ողջամիտ գործելակերպերի, ներառյալ՝ այդ դպրոցների շարունակական սեյսմիկ դիմակայության հետ կապված գործելակերպերը (Ժամանակացույց 3, պարբերություն 8),

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1(113)2024

3.30. ապահովել կամ այնպես անել, որ Ծրագիրը կատարող մարմինն ապահովի, որ տեխնիկական պահանջների, գնումների, ֆինանսական կառավարման, բնապահպանական և սոցիալական երաշխիքների, գենդերային ու սոցիալական հավասարության և մոնիթորինգի ու գնահատման հետ կապված Ծրագրի բոլոր գործողություններն իրականացվեն ժամանակին և արդյունավետորեն (ժամանակացույց 3, պարբերություններ 9, 10, 12, 13, 17 և 18),

3.31. ապահովել, որ Ծրագրի շրջանակում յուրաքանչյուր պայմանագիր շնորհվի Ծրագրի գնումների համակարգի հիման վրա՝ պատշաճ կերպով պահպանելով մրցակցության, տնտեսվարության և արդյունավետության, թափանցիկության, արդարության և հավասար հնարավորության սկզբունքները (ժամանակացույց 3, պարբերություն 11),

3.32. ապահովել կամ այնպես անել, որ Ծրագիրը կատարող մարմինն ապահովի, որ Ծրագրի շրջանակում ոչ մի շինարարություն կամ վերականգնում չունենա էական բացասական բնապահպանական ազդեցություններ, որոնք կարող են ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթի համաձայն դասակարգվել որպես A դասի ազդեցություն ունեցող, ինչպես նաև նախքան Ծրագրի շրջանակում որևէ շինարարություն կամ վերականգնում սկսելը կատարել կամ ապահովել, որ Ծրագիրը կատարող մարմինը կատարի սքրինինգ՝ Ծրագրից ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթի իմաստով որպես A դասի բնապահպանական ազդեցություն ունեցող աշխատանքների բացառումն ապահովելու նպատակով (ժամանակացույց 3, պարբերություն 14, կետ «ա»),

3.33. ապահովել կամ այնպես անել, որ Ծրագիրը կատարող մարմինն ապահովի, որ Ծրագրի շրջանակում բոլոր գործողությունների նախապատրաստումը, նախագծումը, շինարարությունը, իրականացումը, գործարկումը և դադարեցումը համապատասխանեն՝ շրջակա միջավայրին, առողջապահությանը և անվտանգությանն առնչվող՝ Հայաստանի Հանրապետության բոլոր կիրառելի օրենքներին, կանոնակարգերին և ուղեցույցներին, Բնապահպանական անվտանգության երաշխիքներին, և բոլոր միջոցառումներին և պահանջներին, ներառյալ՝ մոնիթորինգի պահանջները, որոնք ամրագրված են Ծրագրի Գործողությունների պլանում (ժամանակացույց 3, պարբերություն 14, կետ «բ»),

3.34. ապահովել կամ այնպես անել, որ Ծրագիրը կատարող մարմինն ապահովի, որ Ծրագիրը չներառի տարաբնակեցման ռիսկեր կամ ազդեցություններ՝ ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթի իմաստով, իսկ եթե չնախատեսված հանգամանքներով պայմանավորված Ծրագիրը ներառում է այդպիսի ազդեցություններ, ապա ապահովել, որ Ծրագիրը համապատասխանի՝ ա) տարաբնակեցմանն առնչվող բոլոր կիրառելի օրենքներին և կանոնակարգերին, բ) Հարկադիր տարաբնակեցման երաշխիքներին, և գ) բոլոր միջոցառումներին ու պահանջներին, ներառյալ՝ մոնիթորինգի պահանջները, որոնք ամրագրված են Ծրագրի Գործողությունների պլանում (Ժամանակացույց 3, պարբերություն 15),

3.35. ապահովել կամ այնպես անել, որ Ծրագիրը կատարող մարմինն ապահովի, որ Ծրագիրը չներառի բնիկ ժողովուրդների համար ռիսկեր կամ ազդեցություններ՝ ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթի իմաստով, իսկ եթե չնախատեսված հանգամանքներով պայմանավորված Ծրագիրը ներառում է այդպիսի ազդեցություններ, ապա ապահովել, որ Ծրագիրը համապատասխանի՝ ա) բնիկ ժողովուրդներին առնչվող բոլոր կիրառելի օրենքներին և կանոնակարգերին, բ) Բնիկ ժողովուրդների երաշխիքներին, և գ) բոլոր միջոցառումներին ու պահանջներին, ներառյալ՝ մոնիթորինգի պահանջները, որոնք ամրագրված են Ծրագրի Գործողությունների պլանում (Ժամանակացույց 3, պարբերություն 16),

3.36. ապահովել կամ այնպես անել, որ Ծրագիրը կատարող մարմինն ապահովի, որ Ծրագիրը համապատասխանի Հակակոռուպցիոն ուղեցույցներին, և որ ձեռնարկվեն բոլորը համապատասխան և յուրաժամանակյա միջոցառումները Ծրագրին առնչվող խարդախության, կոռուպցիայի կամ այլ արգելված գործողությունների մասով մեղադրանքների կանխարգելման, հայտնաբերման և դրանց արձագանքման նպատակով՝ Հակակոռուպցիոն ուղեցույցներին համապատասխան (Ժամանակացույց 3, պարբերություն 19),

3.37. ապահովել կամ այնպես անել, որ Ծրագիրը կատարող մարմինն ապահովի, որ՝ ա) ԱԶԲ-ն անհապաղ տեղեկացվի Ծրագրին վերաբերող խարդախության, կոռուպցիայի կամ որևէ այլ արգելված գործունեության մասով մեղադրանքների մասին, և բ) ապահովի ԱԶԲ-ի կողմից

մեղադրանքներին առնչվող հետաքննության շրջանակներում անվերապահ համագործակցություն և աջակցության տրամադրում, ներառյալ՝ բոլոր համապատասխան գրառումներին հասանելիության ապահովում՝ հետաքննության համարժեք իրականացման նպատակով (ժամանակացույց 3, պարբերություն 20),

3.38. ուժի մեջ մտնելու օրվանից 90 օրվա ընթացքում թարմացնել կամ ապահովել, որ Ծրագիրը Կատարող գործակալությունը թարմացնի իր հանրային կայքը՝ ա) Ծրագրի ընթացքի մասին տեղեկատվություն տրամադրելու, բ) Ծրագրի՝ տարեկան աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները հասանելի լինելուն պես դրանք տեղադրելու, և գ) Ծրագրի իրականացման վերաբերյալ այլ համապատասխան տեղեկատվություն տարածելու նպատակով (ժամանակացույց 3, պարբերություն 21):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2023 թվականի նոյեմբերի 27-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր (լրացուցիչ ֆինանսավորում)» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

13 փետրվարի 2024 թվականի
ՍԴՈ-1714

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՍԵՅՍՄԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ (ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ)» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈՒ-1714 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2023 թվականի նոյեմբերի 27-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Սեյամիկ անվտանգության բարելավման ծրագիր (լրացուցիչ ֆինանսավորում)» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի փետրվարի 16-ի ՍԴՈՒ-1714 որոշմամբ որոշել է, որ 2023 թվականի նոյեմբերի 27-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Սեյամիկ անվտանգության բարելավման ծրագիր (լրացուցիչ ֆինանսավորում)» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի փետրվարի 13-ի ՍԴՈՒ-1714 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ 1(113)2024
300

կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում

ՍԱՀՄԱՆԱՐՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1(113)2024

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի փետրվարի 13-ի ՍԴԴ-1714 որոշմամբ 2023 թվականի նոյեմբերի 27-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր (լրացուցիչ ֆինանսավորում)» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմա-

նադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1(113)2024

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի

մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է

1(113)2024
 ◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

համարվել իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվել դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում են, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում են, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի

մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ փյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ փյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պեղք է տրամադրվել օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«13» փետրվարի 2024թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 1(113)2024
307



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ (ՀԵՄԱ) ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ
ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

1(113)2024

◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղ. Երևան

20 փետրվարի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Արտաքին գործերի նախարարի տեղակալ Պ. Հովհաննիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2023 թվականի նոյեմբերի 20-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Հայաստանում Եվրոպական միության առաքելության (ՀԵՄԱ) կարգավիճակի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի հունվարի 25-ի N 95-Ա որոշմամբ հավանություն է տվել 2023 թվականի նոյեմբերի 20-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Հայաստանում Եվրոպական միության առաքելության (ՀԵՄԱ) կարգավիճակի մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի հունվարի 29-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը և հետազոտելով սույն գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Հայաստանում Եվրոպական միության առաքելության (ՀԵՄԱ) կարգավիճակի մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2023 թվականի նոյեմբերի 20-ին Երևանում՝ Հայաստանում Եվրոպական միության քաղաքացիական առաքելության տեղակայման միջոցով՝ տարածաշրջանում հարատև խաղաղության հաստատման ու կայունության ապահովման նպատակով:

2. Համաձայնագիրը տարածվում է Հայաստանում Եվրոպական միության առաքելության (այսուհետ՝ ՀԵՄԱ), նրա անձնակազմի վրա և գործում է միայն Հայաստանի Հանրապետության տարածքում:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 1(113)2024

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

3.1. մաքսային և հարկային հարցերում ՀԵՄԱ-ն դիտարկել որպես դիվանագիտական ներկայացուցչություն (հոդված 1, մաս 3),

3.2. դյուրացնել ՀԵՄԱ-ի անձնակազմի և ՀԵՄԱ-ի գույքի, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների մուտքը և ելքը Հայաստանի Հանրապետության տարածք, ինչպես նաև ազատել ՀԵՄԱ-ի անձնակազմին մաքսային հսկողությունից և ընթացակարգերից, մուտքի վիզայի ու միգրացիոն պահանջներից և միգրացիոն հսկողության ցանկացած ձևից (հոդված 4, մաս 2),

3.3. ազատել ՀԵՄԱ-ի անձնակազմին՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցմանը և օտարերկրացիների վերահսկողությանը վերաբերող կարգավորումներից, որով սակայն վերջինս ձեռք չի բերում Հայաստանի Հանրապետության տարածքում մշտական բնակության իրավունք կամ կացության կարգավիճակ (հոդված 4, մաս 3),

3.4. ՀԵՄԱ-ի գույքը, այդ թվում՝ տրանսպորտային միջոցները, ազատել հայտարարագրումից կամ այլ մաքսային փաստաթղթեր ներկայացնելու պահանջից և ցանկացած ստուգումից՝ Հայաստանի Հանրապետության տարածք դրանց մուտք գործելիս, տարանցելիս և Հայաստանի Հանրապետության տարածքից ելնելիս՝ Հայաստանի Հանրապետության օրենքներին և կարգավորումներին համապատասխան (հոդված 4, մաս 4),

3.5. ապահովել, որ ՀԵՄԱ-ն և ՀԵՄԱ-ի անձնակազմն իրենց տրանսպորտային միջոցներով, սարքավորումներով և պարագաներով օգտվեն Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում ազատ և անսահմանափակ տեղաշարժից, այդ թվում՝ իր օդային տարածքում (հոդված 4, մաս 7),

3.6. երաշխավորել ՀԵՄԱ-ի օբյեկտների, դրանց կահավորանքի և դրանցում գտնվող գույքի, ինչպես նաև նրանց տրանսպորտային միջոցների անձեռնմխելիությունը, ապահովել, որ դրանք չենթարկվեն խուզարկության, առգրավման, չդրվեն կալանքի տակ կամ չլինեն կատարողական վարույթի օբյեկտ (հոդված 5, մաս 2),

3.7. ՀԵՄԱ-ին ազատել իր նպատակների իրագործման համար ձեռք բերվող և ներմուծվող ապրանքների, մատուցվող ծառայությունների և օգտագործվող օբյեկտների մասով բոլոր պետական, տեղական և

համայնքային տուրքերից, հարկերից և վճարներից՝ Հայաստանի Հանրապետության օրենքներին և կարգավորումներին համապատասխան (հոդված 5, մաս 6),

3.8. Հայաստանի Հանրապետության օրենքներին և կարգավորումներին համապատասխան թույլատրել ՀԵՄԱ-ի նպատակների իրագործման համար անհրաժեշտ ապրանքների մուտքը և երաշխավորել, որ այդ ապրանքները կազատվեն բոլոր մաքսատուրքերից, վճարներից, ճանապարհավճարներից, հարկերից և համանման վճարներից՝ բացառությամբ պահեստավորման, փոխադրման և պահանջվող ու մատուցվող այլ ծառայությունների մասով վճարների (հոդված 5, մաս 7),

3.9. երաշխավորել, որ ՀԵՄԱ-ի անձնակազմը որևէ կերպ չձերբակալվի կամ չկալանավորվի (հոդված 6, մաս 1),

3.10. երաշխավորել ՀԵՄԱ-ի անձնակազմի՝ բոլոր հանգամանքներում քրեական հետապնդումից անձեռնմխելիությունը (հոդված 6, մաս 3),

3.11. ապահովել, որ չհարուցվի ՀԵՄԱ-ի անձնակազմի հետ կապված կատարողական վարույթ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նրա դեմ քաղաքացիական վարույթ է հարուցվում, որը չի առնչվում նրա պաշտոնական գործառույթներին, ինչպես նաև երաշխավորել, որ ՀԵՄԱ-ի անձնակազմը քաղաքացիական վարույթի շրջանակներում չի ենթարկվի անձնական ազատության որևէ սահմանափակման կամ իրավունքների այլ սահմանափակման (հոդված 6, մաս 6),

3.12. ազատել ՀԵՄԱ-ի անձնակազմին ՀԵՄԱ-ի համար մատուցվող ծառայությունների նկատմամբ կիրառելի սոցիալական ապահովության վերաբերյալ կարգավորումներից, որոնք կարող են գործել Հայաստանի Հանրապետությունում (հոդված 6, մաս 8),

3.13. ազատել ՀԵՄԱ-ի անձնակազմին ՀԵՄԱ-ի կամ ուղարկող պետությունների կողմից իրեն վճարվող աշխատավարձի և վարձատրությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս ստացված այլ եկամտի հարկումից (հոդված 6, մաս 9),

3.14. ՀԵՄԱ-ի անձնակազմի կողմից ներքին շուկայում ապրանքների և ծառայությունների ձեռքբերումն ազատել ԱԱՀ-ից և հարկերից՝ Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան (**հոդված 6, մաս 10**),

3.15. ստանձնել ՀԵՄԱ-ի անձնակազմի անվտանգությունը սեփական միջոցներով ապահովելու ամբողջ պատասխանատվությունը **և** ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները ՀԵՄԱ-ի և ՀԵՄԱ-ի անձնակազմի պաշտպանության, ապահովության և անվտանգության համար **(հոդված 9),**

3.16. ապահովել ՀԵՄԱ-ի անձնակազմին արդյունավետ հասանելիությունը, եթե պահանջվում է կամ անհրաժեշտ է ՀԵՄԱ-ի գործողությունների իրականացման համար՝

1) Հայաստանի Հանրապետության վերահսկողության տակ գտնվող օբյեկտներին, տարածքներին և ծառայողական մեքենաներին, որոնք առնչվում են ՀԵՄԱ-ի մանդատի իրականացմանը,

2) Հայաստանի Հանրապետության վերահսկողության ներքո գտնվող փաստաթղթերին, նյութերին և տեղեկություններին այնքանով, որքանով դա անհրաժեշտ է ՀԵՄԱ-ի մանդատի իրականացման համար **(հոդված 11, մաս 2),**

3.17. տրամադրել օգնություն ու աջակցություն ՀԵՄԱ-ին առնվազն նույն պայմաններով, ինչ պայմաններով դրանք տրամադրվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին **(հոդված 12, մաս 4),**

3.18. ապահովել, որ ՀԵՄԱ-ն ունենա անհրաժեշտ իրավունակություն իր առաքելությունն իրականացնելու համար, մասնավորապես, բանկային հաշիվներ բացելու և գույք ձեռք բերելու կամ այն տնօրինելու, ինչպես նաև իրավական վարույթում կողմ լինելու մասով **(հոդված 12, մաս 5),**

3.19. նպաստել ՀԵՄԱ-ի կողմից առևտրային կազմակերպությունների հետ առաքելության նպատակներով կնքված պայմանագրերի իրականացմանը **(հոդված 12, մաս 8),**

3.20. հնարավորություն տալ ՀԵՄԱ-ին անվճար օգտվելու հաճախականությունների տիրույթից **(հոդված 14, մաս 1):**

4. Համաձայնագրի կիրառման առնչությամբ ծագած բոլոր հարցերը ենթակա են համատեղ ուսումնասիրման ՀԵՄԱ-ի և Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների ներկայացուցիչների կողմից:

5. Նախնական համաձայնություն ձեռք չբերելու դեպքում Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված վեճերը Հայաստա-

նի Հանրապետության և Եվրոպական միության ներկայացուցիչների միջև ենթակա են լուծման բացառապես դիվանագիտական ճանապարհով:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2023 թվականի նոյեմբերի 20-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Հայաստանում Եվրոպական միության առաքելության (ՀԵՄԱ) կարգավիճակի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

20 փետրվարի 2024 թվականի
ՍԴՈ- 1715

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ (ՀԵՄԱ) ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈՒ-1715 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2023 թվականի նոյեմբերի 20-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Հայաստանում Եվրոպական միության առաքելության (ՀԵՄԱ) կարգավիճակի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի փետրվարի 20-ի ՍԴՈՒ-1715 որոշմամբ որոշել է, որ 2023 թվականի նոյեմբերի 20-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Հայաստանում Եվրոպական միության առաքելության (ՀԵՄԱ) կարգավիճակի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի փետրվարի 20-ի ՍԴՈՒ-1715 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1(113)2024

ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի փետրվարի 20-ի ՍԴՈ-1715 որոշմամբ 2023 թվականի նոյեմբերի 20-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Հայաստանում Եվրոպական միության առաքելության (<ԵՄԱ) կարգավիճակի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանա-

դրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ

1(113)2024
 ◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի

մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից

1(113)2024
 ◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող


ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1(113)2024

պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«20» փետրվարի 2024թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ՎՃՈՒՐԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 7-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 7-ՐԴ ՄԱՍԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
1(113)2024

Քաղ. Երևան

27 փետրվարի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Վճռաբեկ դատարանի (այսուհետ նաև՝ Դիմող),

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի (այսուհետ նաև՝ Պատասխանող) ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 40, 61 և 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության

աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2004 թվականի դեկտեմբերի 14-ին և ուժի մեջ է մտել 2005 թվականի հունիսի 21-ին:

Օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *«հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատողների աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, եթե համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ»:*

Վիճարկվող դրույթը սույն խմբագրությամբ ընդունվել է «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 2020 թվականի հունվարի 21-ի ՀՕ-49-Ն օրենքով:

Գործի քննության առիթը ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/2694/05/20 վարչական գործով «Սահմանադրական դատարան դիմելու մասին» 2023 թվականի օգոստոսի 31-ի որոշման հիման վրա նույն դատարանի՝ 2023 թվականի սեպտեմբերի 4-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը և Պատասխանողի գրավոր բացատրությունը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Գործի դատավարական նախապատմությունը

Կառավարությունը, ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով, 2019 թվականի մարտի 21-ի թիվ 271-Ա որոշմամբ Վահագն Վերմիշյանին նշանակել է քաղաքաշինության կոմիտեի նախագահ:

Կառավարությունը, ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով, 2020 թվականի փետրվարի 27-ի թիվ 211-Ա որոշմամբ Վահագն Վերմիշյանին ազատել է քաղաքաշինության կոմիտեի նախագահի պաշտոնից:

1(113)2024
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Վարչական դատարանը, քննելով թիվ ՎԴ/2694/05/20 վարչական գործն ըստ հայցի Վահագն Վերմիշյանի ընդդեմ Կառավարության՝ 2020 թվականի փետրվարի 27-ի «Վահագն Վերմիշյանին քաղաքաշինության կոմիտեի նախագահի պաշտոնից ազատելու մասին» թիվ 211-Ա որոշումն անվավեր ճանաչելու և նախկին հաստիքում վերականգնելու պահանջների մասին, 2021 թվականի ապրիլի 6-ին վճռել է.

«1.Վահագն Վերմիշյանի հայցն ընդդեմ ՀՀ կառավարության՝ 27.02.2020 թվականի «Վահագն Վերմիշյանին քաղաքաշինության կոմիտեի նախագահի պաշտոնից ազատելու մասին» թիվ 211-Ա որոշումն անվավեր ճանաչելու և նախկին հաստիքում վերականգնելու պահանջների մասին, մերժել:

(...)»:

Գործով կայացված վճիռը բողոքարկվել է վերաքննության կարգով: Վերաքննիչ վարչական դատարանը թիվ ՎԴ/2694/05/20 վարչական գործով 2023 թվականի հունիսի 16-ի իր որոշմամբ մասնակիորեն բեկանել և նույն մասով փոփոխել է վճիռը՝ որոշելով.

«Վահագն Վերմիշյանի հայցն ընդդեմ ՀՀ կառավարության՝ 27.02.2020 թվականի «Վահագն Վերմիշյանին քաղաքաշինության կոմիտեի նախագահի պաշտոնից ազատելու մասին» թիվ 211-Ա որոշումն անվավեր ճանաչելու և նախկին հաստիքում վերականգնելու պահանջների մասին բավարարել մասնակիորեն.

Անվավեր ճանաչել ՀՀ կառավարության 27.02.2020 թվականի «Վահագն Վերմիշյանին քաղաքաշինության կոմիտեի նախագահի պաշտոնից ազատելու մասին» թիվ 211-Ա որոշումը:

Պարտավորեցնել ՀՀ կառավարությանը Վահագն Վերմիշյանին հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարել հատուցում՝ միջին աշխատավարձի չափով, սկսած 27.02.2020թ. մինչև դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելը, և աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ միջին աշխատավարձի քառապատիկի չափով:

ՀՀ վարչական դատարանի 06.04.2021թ. վճիռը բողոքարկված ու չբեկանված մասով թողնել անփոփոխ: (...)»:

Վերաքննիչ վարչական դատարանը սույն որոշմամբ արձանագրել է.

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 1(113)2024

«(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը չի կարող մեկնաբանվել որպես անձին պաշտոնից ազատման հիմք, այլ՝ այն սահմանում է Կառավարության լիազորությունը՝ պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու Կառավարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարին՝ վարչապետի առաջարկությամբ: Այսինքն՝ որպես վիճարկվող իրավական ակտի ընդունման իրավական հիմք վկայակոչվել է բացառապես Կառավարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարին ազատելու լիազորությունն ամրագրող իրավական նորմը:

Աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունների դադարումը և՛ սահմանադիրը, և՛ օրենսդիրը պայմանավորել են օրենքով նախատեսված հիմքերի առկայությամբ: Այսինքն՝ աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունները դադարեցնելիս գործատուն պետք է առաջնորդվի բացառապես օրենքի պահանջներով՝ գործելով ոչ թե կամայականորեն, այլ առաջնորդվելով աշխատանքից ազատման համար օրենքով նախատեսված կոնկրետ հիմքով: (...)

Մինչդեռ, սույն դեպքում վիճարկվող որոշման մեջ հայցվորին իր պաշտոնից ազատելու օրենքով (ո՛չ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով, ո՛չ ՀՀ աշխատանքային օրենսգրքով) նախատեսված որևէ հիմք վկայակոչված չէ:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Վահագն Վերմիշյանը Քաղաքաշինության կոմիտեի նախագահի պաշտոնից ազատվել է առանց օրենքով նախատեսված որևէ օբյեկտիվ հիմքի առկայության, որպիսի պարագայում խախտվել է վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ և Խարտիայով երաշխավորված՝ աշխատանքային իրավունքների պաշտպանության հիմնարար իրավունքը, հետևաբար ՀՀ կառավարության՝ 27.02.2020 թվականի «Վահագն Վերմիշյանին Քաղաքաշինության կոմիտեի նախագահի պաշտոնից ազատելու մասին» թիվ 211-Ա որոշումը ենթակա է անվավեր ճանաչման, իսկ հակառակի վերաբերյալ ՀՀ վարչական դատարանի եզրակացությունը Վերաքննիչ դատարանը հիմնավոր չի գնահատում»:

Վճռաբեկ դատարանի 2023 թվականի օգոստոսի 14-ի որոշմամբ թիվ ՎԴ/2694/05/20 վարչական գործով վերաքննիչ վարչական դատարանի

կողմից 2023 թվականի հունիսի 16-ի կայացված որոշման դեմ Կառավարության ներկայացրած վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ դատարանը 2023 թվականի օգոստոսի 31-ին նույն գործով կայացրել է «Սահմանադրական դատարան դիմելու մասին» որոշում, ինչպես նաև նույն օրը կայացվել է այդ հիմքով «Գործի վարույթը կասեցնելու մասին» որոշում:

2. Դիմողի դիրքորոշումը

Դիմողը նշել է, որ թիվ ՎԴ/2694/05/20 վարչական գործով ներկայացված վճռաբեկ բողոքի քննության արդյունքում գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու հարցի լուծումը պայմանավորված է Օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասում ամրագրված իրավակարգավորման կիրառմամբ, որի սահմանադրականության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի մոտ ձևավորվել է հիմնավոր կասկած, ուստի նկատի ունենալով այն հանգամանքը, որ նշված գործի լուծումը հնարավոր է միայն վկայակոչված նորմատիվ իրավական ակտի դրույթի կիրառման միջոցով, անհրաժեշտություն է առաջացել այդ գործով կիրառման ենթակա վերը վկայակոչված իրավանորմի սահմանադրականության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Դիմողը վկայակոչել է Սահմանադրական դատարանի 2019 թվականի մարտի 19-ի ՍԴՈ-1449, 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև թիվ ՎԴ/9829/05/19 վարչական գործով 2023 թվականի մայիսի 3-ի որոշմամբ իր արտահայտած իրավական դիրքորոշումները, մասնավորապես, առ այն, որ *«(...) ինչպես սահմանադրական, այնպես էլ միջազգային իրավական նորմերը բացառում են գործադրուի նախաձեռնությամբ աշխատանքային հարաբերություններն առանց օրենքով նախատեսված որևէ հիմքի առկայության դադարեցնելու իրավական հնարավորությունը: Հաշվի առնելով, որ այդ նորմերը որևէ բացառություն չեն նախատեսում հանրային ծառայողների առնչությամբ, և հանրային ծառայության հիմքում ևս աշխատանքային իրավահարաբերություններն են (...) հանրային ծառայողի հետ աշխատանքային հարաբերությունների դադարեցումը ևս հնարավոր է բացառապես օրենքով նախատեսված հիմքի առկայության պայմաններում»*, և որ Օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱԲԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ 1(113)2024

մասի ուժով՝ «այն դեպքում, երբ հանրային ծառայության ոլորտում աշխատանքային հարաբերություններն սպառիչ կերպով կարգավորված են տվյալ ոլորտը կարգավորող օրենսդրությամբ, վերջինիս կարգավորումներն աշխատանքային օրենսդրության նկատմամբ ստանում են առաջնահերթ կիրառելիություն, իսկ աշխատանքային օրենսդրության դրույթներն այդ հարաբերությունների նկատմամբ կիրառվում են սուբսիդիարության կարգով»: Ըստ Դիմողի՝ ինչպես Սահմանադրական դատարանի, այնպես էլ Վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներով որպես ընդհանուր կանոն ընդգծվել է կամայական հիմքերով հանրային ծառայությունից ազատելու արգելքը՝ առանց որևէ բացառություն սահմանելու, այնինչ նման դիրքորոշումը որոշակի դեպքերում առաջացնում է իրավական փակուղի և Սահմանադրության տեսանկյունից ստեղծում է խնդրահարույց իրավիճակ:

Դիմողը ներկայացնում է, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 9-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորման առարկան բացառապես Կառավարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարին նշանակելու և ազատելու լիազորության սահմանումն է, իսկ նշված լիազորության իրացման համար անհրաժեշտ հիմքերը սահմանված են այլ իրավական նորմերով: Դիմողը նշում է, որ Օրենքը սահմանել է Կառավարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարի լիազորությունների դադարեցման (դադարման) հետևյալ հատուկ դեպքերը՝ քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխություն (Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մաս), վարչական պաշտոն զբաղեցնող անձի վերադասի (կամ) անմիջական ղեկավարի փոփոխություն (Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մաս) և նույն օրենքի 31-րդ հոդվածով նախատեսված անհամատեղելիության պահանջների խախտում: Դիմողը գտնում է, որ վարչական պաշտոնից ազատելու վերը նշված հիմքերը հատուկ են, և վարչական պաշտոնից ազատելու հիմքերի շրջանակը չի սահմանափակվում միայն Օրենքով նախատեսված հիմքերով, այլ ի լրումն նշվածի՝ վարչական պաշտոնից ազատելու հետ կապված հարաբերությունների նկատմամբ սուբսիդիարության սկզբունքով կիրառելի են նաև Օրենսգրքի նորմերը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1(113)2024

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

Դիմողի պնդմամբ՝ վարչական պաշտոն հանդիսացող՝ Կառավարությանը ենթակա մարմնի ղեկավարին պաշտոնից ազատելու հետ կապված իրավահարաբերությունները սուբսիդիարության սկզբունքով ևս դիտարկելով աշխատանքային օրենսդրության ներքո՝ Օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի ուժով, բախվում է կամայական հիմքերով հանրային ծառայությունից ազատելու արգելքին և հանգում սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց իրավիճակի: Դիմողը նշում է, որ վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցը պետք է քննարկել այն համատեքստում, թե արդյոք Օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասն այնքանով, որքանով տարածվում է Կառավարությանը ենթակա մարմնի ղեկավարի նշանակման և ազատման իրավահարաբերությունների վրա, համապատասխանում է Սահմանադրության 49-րդ հոդվածին, 57-րդ հոդվածի 2-րդ մասին և 146-րդ հոդվածին:

Դիմողը գտնում է, որ հանրային ծառայությունից կամայականորեն ազատելու արգելքի առկայության պայմաններում Կառավարությունը չի կարող օգտվել իրեն ենթակա մարմնի ղեկավարին իր հայեցողությամբ պաշտոնից ազատելու լիազորությունից. նշվածը կարող է խաթարել պետական կառավարման համակարգի մարմինների ձևավորման ամբողջ կառուցակարգը և պետական կառավարման անընդհատությունը՝ ստեղծելով լուրջ վտանգ պետության իրավական անվտանգության տեսանկյունից: Դիմողը նշում է, որ Կառավարության կողմից իրեն ենթակա մարմնի ղեկավարին պաշտոնից ազատելը ոչ թե հանրային ծառայությունից կամայականորեն ազատելու դրսևորում է, այլ պետության գործադիր իշխանության բարձրագույն մարմնի քաղաքական կամքի դրսևորում:

Ըստ Դիմողի՝ որպես պետական վարչական պաշտոն դասակարգված՝ Կառավարությանը, վարչապետին ենթակա մարմնի ղեկավարի պաշտոնը (իր գործառնությանից դերով պայմանավորված) պետք է առանձնացնել, քանի որ Օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի ուժով աշխատանքային օրենսդրության դրույթները դրա նկատմամբ կիրառելու պարագայում առաջ կգա հակասահմանադրական իրավիճակ, երբ խաթարվում է պետական կառավարման մարմինների բնականոն գործունեությունը, որը չի բխում պետության և հանրության շահերից:

Դիմողը գտնում է, որ Կառավարությանը և վարչապետին իրենց ենթակա մարմնի ղեկավարին պաշտոնից ազատելու լիազորության վերա-

պահումը բխում է պետական կառավարման համակարգի էությունից և Կառավարության մշակած քաղաքականության իրացման համար անհրաժեշտ կառուցակարգերի սահմանմանը վերաբերող օրենսդրական ակտերի ընդհանուր տրամաբանությունից: Նշվում է, որ նման պայմաններում վճռորոշ են հանրային պաշտոնների և հանրային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր տեսակի առանձնահատկությունները. տվյալ դեպքում Կառավարությանը ենթակա մարմնի ղեկավարի պետական վարչական պաշտոնը ևս առանձնանում է մյուս պետական վարչական պաշտոններից պետական կառավարման գործում իր ունեցած դերով և բարձր նշանակությամբ:

Դիմողը, հղում կատարելով Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասին, պնդում է նաև, որ եթե Կառավարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարը նշանակվել է հայեցողական որոշման կամ քաղաքական գործընթացի արդյունքում, վերջինս կարող է ազատվել իր զբաղեցրած պաշտոնից նույն օրենքով սահմանված հիմքի՝ հայեցողական որոշման կամ քաղաքական գործընթացի արդյունքում:

Դիմողը եզրակացնում է, որ Կառավարությանը, վարչապետին ենթակա պետական մարմնի ղեկավարին պաշտոնից ազատելու հետ կապված իրավահարաբերության նկատմամբ (Օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա) հանրային ծառայությունից կամայականորեն ազատելու արգելքը կիրառելու պայմաններում վիճարկվող դրույթը սահմանադրական կարգավորումների տեսանկյունից խնդրահարույց է:

3. Պատասխանողի դիրքորոշումը

Պատասխանողը նշել է, որ վարչական պաշտոնից ազատման հատուկ հիմքերը սահմանվում են Օրենքով (հատուկ նորմ), որը չի սահմանափակում սուբսիդիարության կարգով աշխատանքից ազատման՝ Օրենսգրքով (ընդհանուր նորմ) սահմանված հիմքերի կիրառման հնարավորությունը:

Պատասխանողը գտնում է, որ տվյալ դեպքում Օրենքով սահմանված է Կառավարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարին պաշտոնից ազատելու կարգ՝ հաշվի առնելով պաշտոնի առանձնահատկությունը, մասնավորապես՝ դրա նշանակովի լինելը: Պատասխանողը վկայակոչում է Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի, «Պետական կառավարման համա-

կարգի մարմինների մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումն առ այն, որ Կառավարությանը ենթակա մարմնի (բացառությամբ տեսչական մարմնի) ղեկավարին վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է Կառավարությունը:

Նշվում է, որ հաշվի առնելով հատուկ օրենքով այլ կարգ սահմանված լինելը՝ ընդհանուր օրենքը կիրառելի չէ, քանի որ ընդհանուր օրենքում հստակ բացառվել է դրա կիրառությունը, եթե հատուկ օրենքով այլ բան է սահմանված: Ըստ Պատասխանողի՝ Օրենսգիրքը սուբսիդիարության կարգով կիրառելի կլիներ այն դեպքում, եթե «Հանրային ծառայության մասին» օրենքով հանրային, մասնավորապես՝ Կառավարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարի պաշտոնից ազատման այլ կարգ սահմանված չլիներ: Պատասխանողն այսպիսով եզրահանգել է, որ վիճարկվող դրույթն իր իրավակարգավորիչ դերով չի առաջացնում սահմանադրականության խնդիր:

Պատասխանողը նշում է. «Անդրադառնալով վիճարկվող դրույթի՝ Դիմողի կողմից բարձրացվող կասկածներին, հարկ է նկատել, որ դրանք վկայում են ոչ թե նշյալ դրույթի հակասահմանադրական լինելու, այլ՝ Դիմողի վարույթում գտնվող կոնկրետ գործով կիրառելի դրույթի ընտրության կասկածի մասին»: Պատասխանողի գնահատմամբ դիմումում հիմնավորվում է ոչ թե այն, որ գործի լուծումը հնարավոր է միայն Օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասով ամրագրված իրավակարգավորման կիրառման միջոցով, այլ այն, որ վիճարկվող դրույթը կիրառելու պայմաններում և դրա արդյունքում հնարավոր է, որ կառաջանա սահմանադրականության խնդիր:

Ելնելով վերոգրյալից՝ Պատասխանողը խնդրում է ընդունել որոշում վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու կամ գործի վարույթը կարճելու մասին:

4. Սահմանադրական վեճի քննության շրջանակը և պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործը Սահմանադրական դատարանը քննում է դատարանի վարույթում գտնվող կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականության հարցի առնչությամբ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ներկա-

յացված դիմումի հիման վրա: Հետևաբար՝ սույն գործով սահմանադրական վեճի շրջանակը որոշակիացնելու նպատակով Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Դիմողը հիմնավոր կասկած ունի Օրենքով նախատեսված՝ պետական վարչական պաշտոններից ազատման իրավահարաբերությունների նկատմամբ, ըստ Դիմողի, կիրառման ենթակա Օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը սույն սահմանադրական վեճի շրջանակը սահմանում է հետևյալ հարցադրմամբ.

- արդյոք Օրենքով պետական վարչական պաշտոններում նշանակելու և վարչական պաշտոններից ազատելու իրավահարաբերություններում համապատասխան իրավասու մարմնի կամ պաշտոնատար անձի հայեցողության՝ Օրենքով նախատեսված շրջանակը համատեղելի է Սահմանադրության 49-րդ հոդվածի հետ.

- արդյոք Օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասը, հաշվի առնելով նաև իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը, համահունչ է Սահմանադրության 146-րդ հոդվածով նախատեսված՝ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված պետական կառավարման համակարգի մարմինների ընդհանուր ղեկավարումն իրականացնելու Կառավարության իրավասությանը:

Սույն սահմանադրական վեճի լուծմանը վերաբերելի Սահմանադրության դրույթները հետևյալն են.

Սահմանադրության 49-րդ հոդվածի համաձայն՝ *«Յուրաքանչյուր քաղաքացի ունի ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով»:*

Սահմանադրության 146-րդ հոդվածի համաձայն.

«1. Կառավարությունը գործադիր իշխանության բարձրագույն մարմինն է:

2. Կառավարությունն իր ծրագրի հիման վրա մշակում և իրականացնում է պետության ներքին և արտաքին քաղաքականությունը:

3. Կառավարությունն իրականացնում է պետական կառավարման համակարգի մարմինների ընդհանուր ղեկավարումը:

4. Կառավարության լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով»:

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

5.1. Սահմանադրական դատարանը վերահաստատում է ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու սահմանադրական հիմնական իրավունքի առնչությամբ նախկինում արտահայտած դիրքորոշումները: Մասնավորապես՝

2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշմամբ (կետ 4.1), Սահմանադրական դատարանը նշել է.

«(...) Սահմանադրության 49-րդ հոդվածի ձևակերպումներից հետևում է, որ հանրային ծառայության անցնելու իրավունքը սահմանադրորեն երաշխավորված է միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար, այս իրավունքի իրականացման համար օրենսդիրը պարտավոր է ապահովել ընդհանուր հիմքեր՝ բացառելով որևէ խտրականություն:

Մյուս կողմից՝ ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի իրականացման կառուցակարգերը կարող են էապես տարբերվել միմյանցից՝ կախված հանրային պաշտոնի առանձնահատկություններից և հանրային ծառայության տեսակից:

Բացի դրանից, ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի ծավալի մեջ ներառվում է նաև անձի կողմից ընդհանուր հիմունքներով զբաղեցված հանրային պաշտոնում պաշտոնավարելու իրավունքը, որը, իր հերթին, ենթադրում է օրենքով չնախատեսված, ինչպես նաև կամայական հիմքերով հանրային ծառայությունից ազատվելու արգելք»:

2021 թվականի հունիսի 10-ի ՍԴՈ-1598 որոշմամբ (կետեր 4.4, 4.6 և 4.7) Սահմանադրական դատարանը նշել է.

«4.4. Սահմանադրության 49-րդ հոդվածով հոչակվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացու ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունքը, որի իրականացման մանրամասների սահմանումը նույն հոդվածով վերապահվել է օրենսդրին: Սահմանադրության նշված հոդվածով նախատեսված իրավունքը պաշտպանվում էր 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 30.2-րդ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1(113)2024

հողվածով նախատեսված դրույթով, որի 2-րդ մասը Սահմանադրության 49-րդ հոդվածով նախատեսված «մանրամասներ»-ի կարգավորումը օրենսդրի հայեցողությանը թողնելու փոխարեն նախատեսում էր, որ օրենսդրի կողմից կարգավորման ենթակա էին այս իրավունքի շրջանակում «հանրային ծառայության սկզբունքները և կազմակերպման կարգը»:

(...)

4.6. Սահմանադրության 49-րդ հոդվածի և Սահմանադրության 81-րդ հոդվածով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումների հաշվառմամբ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածի գ) կետի համալիր վերլուծությունից բխում է, որ Սահմանադրության 49-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար նախատեսված հանրային ծառայության անցնելու իրավունքով սահմանադրորեն երաշխավորված է՝

ա) հանրային ծառայության անցնելու համար օրենսդրի կողմից ընդհանուր հիմունքներ սահմանված լինելու դեպքում Սահմանադրության 29-րդ հոդվածով նախատեսված խտրականության բացառումը,

բ) հանրային ծառայության անցնելու կամ հանրային ծառայության մեջ առաջխաղացման սահմանափակման կամ պաշտոնանկության կամ լիազորությունների այլ կերպ դադարեցման հիմքերը «օբյեկտիվ և ողջամիտ» չափանիշներին համապատասխանելու անհրաժեշտությունը:

4.7. Սահմանադրության 49-րդ հոդվածով նախատեսված հանրային ծառայության անցնելու իրավունքի իրացման մանրամասների սահմանումը սահմանադրի կողմից վերապահվել է օրենսդրի հայեցողությանը: Այսինքն՝ հանրային ծառայության անցնելու, դրանում առաջխաղացման և այն դադարելու և դադարեցնելու պայմանները, հիմքերը և կարգը սահմանվում են օրենքով: Հետևաբար՝ հանրային ծառայության անցնելու իրավունքի ընթացակարգային կողմը լիովին վերապահված է օրենսդրի հայեցողությանը, որը, միաժամանակ, կաշկանդված է խտրականության սահմանադրական արգելքով հանրային ծառայության անցնելու (տես՝ ՍԴՈ-1488, կետ 4.1) և հանրային ծառայությանը միջամտության (տես՝ ՍԴՈ-1224, կետ 22) հիմքեր և պայմաններ սահմանելիս:

Միաժամանակ, Սահմանադրության 49-րդ հոդվածով օրենսդրին վերապահված ընդարձակ հայեցողության վերապահման նպատակը

հանրային ծառայության պաշտոններում գործառույթների բազմազանության պայմանում այդ պաշտոններից յուրաքանչյուրի առանձնահատկություններին հանրային ծառայության անցնելու կառուցակարգերի համապատասխանությունն ապահովելն է (տես՝ ՍԴՈ-1488, կետ 4.1)»:

2023 թվականի նոյեմբերի 21-ի ՍԴՈ-1704 որոշմամբ (կետ 5.1) Սահմանադրական դատարանը նշել է.

«Հանրային ծառայության անցնելու իրավունքը՝ որպես ժողովրդավարական իշխանության իրացման յուրօրինակ դրսևորում, մի կողմից՝ իրավական և ժողովրդավարական պետության քաղաքացու՝ պետական կառավարման ոլորտում հանրային ծառայության՝ օրենքով նախատեսված կարգով և պայմաններով անցնելու հնարավորության ապահովման երաշխիք է: Մյուս կողմից՝ հանրային ծառայության անցնելու իրավունքի իրացմամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացին ոչ միայն մասնակցում է օրենքով նախանշված կարգով և պայմաններով հանրային իշխանության մարմինների քաղաքականության իրականացմանը, այլև հնարավորություն է ունենում հանրային ծառայության ոլորտում ծավալել աշխատանքային գործունեություն՝ իր մասնագիտական գիտելիքներին և կարողություններին համապատասխան»:

5.2. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ Սահմանադրության 49-րդ հոդվածի շրջանակում ներառվող հանրային ծառայության ողջ ոլորտը Օրենքով՝ ըստ տեսակային հատկանիշների, տարբերակվել է՝ պետական ծառայության, համայնքային ծառայության և հանրային պաշտոնների (Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մաս):

Պետական ծառայությունը՝ որպես մասնագիտական գործունեություն, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված լիազորությունների իրականացմանը, ունեցած մասնագիտական-ոլորտային առանձնահատկությունների հաշվառմամբ՝ ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դիվանագիտական ծառայությունը, մաքսային ծառայությունը, հարկային ծառայությունը, փրկարար ծառայությունը, զինվորական ծառայությունը (բացառությամբ օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության զորակոչի միջոցով իրականացվող շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության), ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը, ոստիկանությունում ծառայությունը, հակակոռուպցիոն

կոմիտեում ծառայությունը, արտաքին հետախուզության ծառայությունում ծառայությունը, քրեակատարողական ծառայությունը, պրոբացիայի ծառայությունը, հարկադիր կատարման ծառայությունը, դատական կարգադրիչների ծառայությունը, էկոպարեկային ծառայությունը (Օրենքի 3-րդ հոդվածի 2-3-րդ մասեր): Պետական ծառայության առանձին տեսակները կարգավորվում են համապատասխան ոլորտային օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով, որոնցում մանրամասն ներկայացվում են պետական ծառայության կոնկրետ ոլորտի առանձնահատկություններով պայմանավորված կարգավորումները:

Համայնքային ծառայությունը՝ որպես մասնագիտական գործունեություն, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենքներով և համապատասխան ավագանու որոշումներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների իրականացմանը (Օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մաս), իր հերթին կարգավորվում է ոլորտային առանձին օրենքով՝ «Համայնքային ծառայության մասին» օրենքով և դրա հետ կապված և փոխլրացնող այլ իրավական ակտերով:

Հանրային ծառայության վերոնշյալ տեսակների սահմանմանը վերաբերող իրավակարգավորումներից բխում են դրանց հետևյալ հիմնական բնութագրիչները՝ մասնագիտական բնույթ, այսինքն՝ պահանջվող մասնագիտական պատրաստվածության անհրաժեշտություն, տվյալ պաշտոնի նշանակման համար մասնագիտական աշխատանքային նախանշված արժանիքների առկայության պահանջ, քաղաքական գործընթացներով չպայմանավորված նշանակման և ազատման գործընթաց:

Փոխարենը՝ հանրային պաշտոնների զբաղեցման համար օրենսդիրը սահմանել է այլ բնութագրիչներ (Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մաս): հանրային պաշտոններն ընտրովի կամ նշանակովի պաշտոններ են, որոնք զբաղեցվում են 1) քաղաքական գործընթացների, 2) հայեցողական որոշումների, 3) ինչպես նաև օրենքով նախատեսված այլ ընթացակարգերի արդյունքով: Այս տեսակի պաշտոններն իրենց հերթին դասակարգվում են պետական և համայնքային հանրային պաշտոնների, որոնցից յուրաքանչյուրը ենթադասակարգվում է քաղաքական, վարչական և հայեցողական պաշտոնների, իսկ պետական հանրային պաշտոնների դեպքում՝ նաև ինքնավար պաշտոնների:

Հանրային պաշտոնների նշյալ դասակարգումից հետևում է դրանց համալրման և պաշտոնից ազատման առանձնահատուկ կարգը: Մասնավորապես, ի տարբերություն հանրային ծառայության պաշտոնների (պետական կամ համայնքային), հանրային պաշտոններին նշանակումները և պաշտոններից ազատումները պայմանավորված են քաղաքական գործընթացներով կամ նշանակման և ազատման լիազորությամբ օժտված պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հայեցողությամբ:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի՝ հանրային պաշտոնները «*զբաղեցվում են քաղաքական գործընթացների, հայեցողական որոշումների, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ ընթացակարգերի արդյունքով*» օրենսդրական ձևակերպումն ուղղակիորեն վերաբերում է տվյալ պաշտոնը զբաղեցնելուն: Այսինքն՝ առհասարակ պաշտոնավարումը և հետևաբար՝ պաշտոնին նշանակման և պաշտոնավարման դադարեցման հիմքը օրենսդիրը պայմանավորում է քաղաքական գործընթացներով, հայեցողական որոշումներով, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ ընթացակարգերով:

Այսպիսով, Սահմանադրական դատարանը փաստում է, որ հանրային պաշտոններ զբաղեցնելու վերաբերյալ որոշումը, որն ուղղակիորեն նշանակում է ոչ միայն այդ պաշտոնում նշանակումը, այլ նաև տվյալ պաշտոնում պաշտոնավարման դադարեցումը, ամբողջովին վերապահված է տվյալ պաշտոնում նշանակելու կամ պաշտոնից ազատելու իրավասությամբ օժտված պետական կամ համայնքային մարմնի կամ պաշտոնատար անձի հայեցողությանը, որի շրջանակը սահմանվում է Օրենքով կամ համապատասխան ոլորտային օրենսդրությանը վերաբերող այլ օրենսդրական ակտերով:

Սույն սահմանադրական վեճի շրջանակին վերաբերելի մասով Սահմանադրական դատարանը նկատում է, որ Օրենքով պետական վարչական պաշտոն զբաղեցնելու հարցը դասելով հայեցողական որոշմամբ լուծվող հարցերի շրջանակին՝ օրենսդիրը նախատեսել է միայն նման որոշում կայացնելու լիազորությամբ օժտված մարմինների կամ պաշտոնատար անձանց շրջանակը՝ առանց սահմանափակելու նույն հարցի առնչությամբ նրանց վերապահված հայեցողությունը:

5.3. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը վարչական պաշտոնը բնորոշում է որպես հանրային իշխանության մարմիններում նշանակովի պաշ-

տոն, որն զբաղեցնող պաշտոնատար անձն ապահովում է Սահմանադրությամբ և օրենքներով տվյալ մարմնին վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացումը և պատասխանատվություն է կրում իր պաշտոնից բխող նպատակների և խնդիրների իրականացման համար: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պետական վարչական պաշտոն է, ի թիվս այլնի, Կառավարությանը ենթակա մարմնի ղեկավարի պաշտոնը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով ուղղակիորեն սահմանվում են խնդրո առարկա պաշտոնում նշանակման և պաշտոնից ազատման կարգավորման տեսանկյունից հիմնարար նշանակություն ունեցող կանոններ, այն է՝ վարչական պաշտոն զբաղեցնող անձը կարող է փոփոխվել **նաև** քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության արդյունքով կամ վարչական պաշտոն զբաղեցնող անձի վերադասի (կամ) անմիջական ղեկավարի փոփոխության դեպքում: Ավելին, Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասից հետևում է, որ վարչական պաշտոն զբաղեցնող անձի վերադասի (կամ) անմիջական ղեկավարի փոփոխության դեպքում վարչական պաշտոն զբաղեցնող անձը՝ որպես ժամանակավոր պաշտոնակատար, շարունակում է պաշտոնավարել մինչև իր պաշտոնում նոր նշանակում կատարելը կամ նոր նշանակման (վերանշանակման) կատարման համար նույն մասով սահմանված ժամկետի ավարտը: Նոր նշանակումը կատարվում է վարչական պաշտոն զբաղեցնող անձի վերադասի (կամ) անմիջական ղեկավարի նշանակման օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Այսինքն՝ վարչական պաշտոնը նշանակովի պաշտոն է, որում անձի պաշտոնավարումն ուղղակիորեն պայմանավորված է ինչպես իր նշանակման կամ պաշտոնավարման դադարեցման հարցում նման լիազորություն ունեցող մարմնի կամ պաշտոնատար անձի հայեցողությամբ, այնպես էլ քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության արդյունքով կամ վարչական պաշտոն զբաղեցնող անձի վերադասի (կամ) անմիջական ղեկավարի փոփոխությամբ: Ընդ որում՝ վարչական պաշտոնում անձի փոփոխության՝ քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության արդյունքի կամ վարչական պաշտոն զբաղեցնող անձի վերադասի (կամ) անմիջական ղեկավարի փոփոխության հիմքերը չեն բացառում կամ սահմանափակում նույն պաշտոնում նշանակելու կամ պաշտոնից ազատելու

հարցով լիազորված համապատասխան մարմնի կամ պաշտոնատար անձի հայեցողությունը: Ավելին, Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության արդյունքի հիմքով և Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ վարչական պաշտոն զբաղեցնող անձի վերադասի (կամ) անմիջական ղեկավարի փոփոխության հիմքով պաշտոնավարման դադարեցման նկարագրված հնարավորությունները ոչ թե սահմանափակում, այլ ամրապնդում են խնդրո առարկա պաշտոնը զբաղեցնելու հարցում լիազոր մարմնի կամ պաշտոնատար անձի հայեցողությունը:

Հետևաբար՝ վարչական պաշտոն զբաղեցնող անձը չի կարող օգտվել իր պաշտոնավարման կայունության այնպիսի երաշխիքից, որի գործադրումը կհակասի իր պաշտոնին նշանակելու և պաշտոնից ազատելու իրավասություն ունեցող պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հայեցողությանը:

Ինչպես սույն որոշման 5.2-րդ կետում արդեն նշվեց, վարչական թվարկված պաշտոններում նշանակումների և այդ պաշտոններում պաշտոնավարման դադարեցման հարցերում իրավասու մարմնի կամ պաշտոնատար անձի հայեցողությունը դիտարկելով որպես պետական վարչական պաշտոնում պաշտոնավարման հիմք՝ օրենսդիրն այն չի սահմանափակել՝ դրանով իսկ ամրագրելով հանրային (դիցուք՝ վարչական պետական պաշտոնում) պաշտոնում նշանակման և ազատման իրավահարաբերությունների բնույթին համահունչ՝ վերադաս պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հայեցողության լայն շրջանակը: Այդպիսի հայեցողության (անկախ դրա լայն միջակայքից) սահմանափակման բացակայությունը չի կարող ինքնին նշանակել, որ Օրենքով կամ հանրային ծառայության ոլորտը կարգավորող այլ օրենքով «այլ բան նախատեսված չէ» վիճարկվող դրույթի իմաստով:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև արձանագրել, որ հանրային պաշտոնում նշանակման և պաշտոնից ազատման իրավասությանը վերաբերող դրույթների (Օրենքի 9-րդ հոդված) վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը մի շարք դեպքերում (ներառյալ՝ Կառավարությանը ենթակա մարմնի ղեկավարի պաշտոնում նշանակումը և պաշտոնից ազատումը) այս իրավասության իրացումը բաշխել է պաշտոնում նշանակելու և պաշտոնից ազատելու առաջարկություն կատարող

մարմնի (պաշտոնատար անձի) և այդ առաջարկության հիման վրա պաշտոնում նշանակումը և պաշտոնից ազատումն իրականացնող մարմնի կամ պաշտոնատար անձի միջև: Հաշվի առնելով, որ հանրային պաշտոնում նշանակումը և պաշտոնից ազատումը (գործընթացի ամբողջության մեջ), մասնավորապես, հիմնված են նման իրավասությամբ օժտված համապատասխան մարմնի կամ պաշտոնատար անձի հայեցողության վրա, Սահմանադրական դատարանը գտնում է, որ ինչպես համապատասխան առաջարկությունը կատարող, այնպես էլ այդ առաջարկության հիման վրա պաշտոնում նշանակումը և պաշտոնից ազատումն իրականացնող մարմինները կամ պաշտոնատար անձինք վարչական պաշտոնից ազատելու համապատասխան առաջարկություն ներկայացնելիս և ազատելիս օժտված են նույն հայեցողությամբ, ինչ վարչական պաշտոնում նշանակելու առաջարկության և այդ պաշտոնում նշանակելու հարցում:

5.4. Արձանագրելով պետական վարչական պաշտոն զբաղեցնելու (ներառյալ վարչական պաշտոնից ազատելու) հարցի լուծման (ներառյալ դրան վերաբերող համապատասխան առաջարկությամբ հանդես գալու) լիազորությամբ օժտված պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հայեցողության՝ Օրենքով նախատեսված սահմանափակումների բացակայությունը՝ Սահմանադրական դատարանի քննության հաջորդ հարցը նման լայն հայեցողության՝ Սահմանադրության 49-րդ հոդվածին համապատասխանության ստուգումն է:

Այս առնչությամբ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վեր հանել Սահմանադրության 146-րդ հոդվածի դրույթներից բխող՝ Կառավարության լիազորությունների և պատասխանատվության, ինչպես նաև դրանց հետ փոխկապակցված՝ Կառավարությանը ենթակա մարմիններում պետական վարչական պաշտոնների և հանրային ծառայության համակարգում դրանց գործառության լիազորությունների շրջանակը:

Մասնավորապես՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական վարչական պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձն ապահովում է Սահմանադրությամբ և օրենքներով տվյալ մարմնին վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացումը և պատասխանատվություն է կրում իր պաշտոնից բխող նպատակների և խնդիրների իրականացման համար:

Օրենքի (սույն որոշման կայացման պահին գործող խմբագրությամբ) նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պետական վարչական պաշտոններն են Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի, նրա տեղակալների, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի, նրա տեղակալների, վարչապետի աշխատակազմի ղեկավարի, նրա տեղակալների, Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի, Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների, վարչապետի աշխատակազմի գրասենյակի ղեկավարի, մարզպետների և նրանց տեղակալների, դատական ղեկարտամենտի ղեկավարի, Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի, գլխավոր ռազմական տեսուչի և նրա տեղակալի պաշտոնները:

Պետական կառավարման համակարգի մարմինները, ի թիվս այլնի, իրենց վերապահված լիազորությունների սահմաններում իրականացնում են Կառավարության քաղաքականությունը, որի արդյունավետությունը պայմանավորված է նաև Կառավարությանը ենթակա պետական կառավարման համակարգի մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության նկատմամբ արդյունավետ կառավարման և վերահսկողական գործիքակազմի առկայությամբ:

Սահմանադրության 159-րդ հոդվածն ամրագրում է պետական կառավարման համակարգի մարմինների շրջանակը (այն է՝ պետական կառավարման համակարգի մարմիններն են նախարարությունները, ինչպես նաև Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա այլ մարմինները)՝ օրենսդրին լիազորելով օրենքով սահմանել դրանց կազմավորման կարգը և լիազորությունները: Իրացնելով սույն սահմանադրական լիազորությունը՝ օրենսդիրը «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքի 4-րդ հոդվածում թվարկել է այս մարմինների հիմնական գործառույթը և դրանց շրջանակը: Մասնավորապես՝ Կառավարությանը ենթակա մարմինն ապահովում է Կառավարության քաղաքականության՝ օրենքով իրեն վերապահված առանձին ուղղության իրականացումը, ինչպես նաև աջակցում է իրեն վերապահված ուղղության շրջանակներում Կառավարության քաղաքականության մշակմանը: Այդ մարմինների թվին են դասվում Կադաստրի կոմիտեն, Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեն, Պետական եկամուտ-

ների կոմիտեն, Վիճակագրական կոմիտեն, Քաղաքաշինության կոմիտեն, Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը, Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը, Կրթության տեսչական մարմինը, Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը, Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը, Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը:

Բացի դրանից, Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի և «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքի (սույն որոշման կայացման պահին գործող խմբագրությամբ) 5-րդ հոդվածի հիմքով վարչապետին ենթակա մարմիններ են համարվում Ազգային անվտանգության ծառայությունը, Արտաքին հետախուզության ծառայությունը, Պետական պահպանության ծառայությունը և Պետական վերահսկողական ծառայությունը:

Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի և «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքի (սույն որոշման կայացման պահին գործող խմբագրությամբ) 6-րդ հոդվածի հիմքով նախարարություններին ենթակա մարմիններ են համարվում Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, Քրեակատարողական ծառայությունը, Պրոբացիայի ծառայությունը, Փրկարար ծառայությունը, Միասնական սոցիալական ծառայությունը, Պետական արարողակարգի ծառայությունը, Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը, Ջրային կոմիտեն, Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն, Զբոսաշրջության կոմիտեն, Զինված ուժերի գլխավոր շտաբը, Ռազմարդյունաբերության կոմիտեն, Պետական գույքի կառավարման կոմիտեն, Էկոպարեկային ծառայությունը, Լեզվի կոմիտեն, Ոստիկանությունը, Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն:

Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պաշտոնները, մասնավորապես՝ Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա մարմինների ղեկավարների պաշտոնները նույն դրույթի իմաստով դասակարգվում են որպես պետական վարչական պաշտոններ: Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա մարմինները հանդիսանում են պետական լիազորություններով և պատասխանատվությամբ օժտված առանցքային պետական գործառույթներ իրականացնող մարմիններ, որոնցից յուրաքանչյուրի գործունեությունը թե՛

1(113)2024
 ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

իր կարևորությամբ, թե՛ իր նկատմամբ վերադասություն ունեցող մարմնի կամ պաշտոնատար անձի համար այդ մարմնի գործունեության արդյունավետությամբ ուղղակիորեն առաջինի արդյունավետության վրա ունեցած ազդեցությամբ, չանտեսելով նաև վերը նշված ցանկերում ներառված մարմինների ղեկավար պաշտոնատար անձանց՝ 1) տվյալ մարմնի գործունեությունը կազմակերպելու հարցում ունեցած լիազորությունների և պատասխանատվության ծավալը (ինչը որոշ վարչական պաշտոնների դեպքում ամրապնդված և մանրամասնված է նաև հանրային պետական ծառայության ոլորտային օրենսդրությամբ), 2) հանրային ծառայության համակարգում զբաղեցրած բարձր դիրքը և 3) վստահված վարչական պաշտոնում պաշտոնավարման արդյունավետության ազդեցությունը տվյալ պաշտոնը զբաղեցնելու հարցի լուծմամբ իրավասու պետական մարմնի կամ պաշտոնատար անձի գործունեության արդյունավետության վրա, որակում են կոնկրետ վարչական պաշտոն զբաղեցնող անձի և իր վերադաս մարմնի կամ պաշտոնատար անձի հարաբերությունները որպես «հատուկ վստահությամբ և հավատարմությամբ փոխկապակցված» հարաբերություններ (տես՝ *mutatis mutandis* 2023 թվականի նոյեմբերի 21-ի ՍԴԴ-1704 որոշում, կետ 5.3): Այս հարաբերությունները պետական վարչական պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձին ծառայողական նպատակների իրականացման համար իր վերադաս մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից ցուցաբերված հատուկ վստահության և նույն նպատակի շրջանակում նրանից պահանջվող հատուկ հավատարմության փոխադարձ հարաբերություններ են:

«Հատուկ վստահությամբ և հավատարմությամբ փոխկապակցված» փոխադարձ հարաբերությունների այս բնույթն անառարկելիորեն թելադրում է պետական վարչական պաշտոնում նշանակման և դրանում պաշտոնավարման շարունակականության հարցում իրավասու (ներառյալ պաշտոնում նշանակելու կամ պաշտոնից ազատելու առաջարկությամբ հանդես գալու լիազորություն ունեցող) մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից նրա գործունեության ընթացիկ գնահատականին համահունչ հայեցողության շրջանակ, որի սահմանումը վերապահված է օրենսդրին:

Ելնելով վերը ներկայացված իրավական դիրքորոշումներից և վերլուծություններից՝ Սահմանադրական դատարանը եզրակացնում է, որ վարչական պաշտոնում նշանակման և վարչական պաշտոնից ազատելու

հարցում իրավասու պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հայեցողության չսահմանափակված շրջանակը՝ պայմանով, որ դրա գործադրմամբ պահպանվում է Սահմանադրության 29-րդ հոդվածով նախատեսված խտրականության արգելքը, չի հակասում Սահմանադրության 49-րդ հոդվածին:

5.5. Անդրադառնալով վարչական պաշտոն զբաղեցնող անձին պաշտոնից ազատելու կամայականության արգելքի հարցին՝ Սահմանադրական դատարանը վերահաստատում է վերը ներկայացված 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշմամբ արտահայտած իր դիրքորոշումն առ այն, որ՝ *«ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի ծավալի մեջ ներառվում է նաև անձի կողմից ընդհանուր հիմունքներով զբաղեցված հանրային պաշտոնում պաշտոնավարելու իրավունքը, որը, իր հերթին, ենթադրում է օրենքով չնախատեսված, ինչպես նաև կամայական հիմքերով հանրային ծառայությունից ազատվելու արգելք»* (2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488, կետ 4.1):

Սահմանադրական դատարանը, 2021 թվականի նոյեմբերի 2-ի ՍԴՈ-1616 որոշմամբ (կետ 4.5) անդրադառնալով *«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին»* օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի՝ *«բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատումը կարող է իրականացվել անկախ այն հանգամանքից՝ առկա են սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքեր, թե ոչ»* դրույթի սահմանադրականությանը, մասնավորապես, նշել է.

«Այս իրավակարգավորումն ընդհանուր իրավակարգավորման համատեքստում բացառիկ բնույթ ունի, որովհետև նախատեսում է կանոն, որը շեղվում է ընդհանուր իրավադրույթներից, տվյալ դեպքում՝ պայմանագրային զինվորական ծառայողին բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատելու ընդհանուր իրավական հիմքերից՝ սահմանելով նրանց վերաբերող բացառություն. նրանք կարող են ազատվել պաշտոնից նաև առանց օրենքով սահմանված ընդհանուր հիմքերի առկայության: Դրա հիմքում կարող են ընկած լինել բազմաթիվ գործոններ՝ ռազմաքաղաքական, կադրային-որակական, վստահության կորուստ, քաղաքական չեզոքության խախտում և այլն:

1(113)2024
 ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Սահմանադրական դատարանի գնահատմամբ Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասում առկա «օրենքով նախատեսված դեպքեր» բառակապակցությունը չի բացառում, որ այդպիսի ազատման հիմքերի շարքում կարող է լինել ռազմաքաղաքական և այլ գործոններով պայմանավորված՝ պաշտոնից ազատումը: Ստացվում է, որ Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված՝ անկախ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերի առկայության՝ բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատելը ևս ամրագրված է օրենքով, ուստի այս առումով դիմողի մտահոգությունն անհիմն է:

(...)

Վերոգրյալի լույսի ներքո ակնհայտ է, որ Սահմանադրության 57-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթի պահանջին համահունչ՝ Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասով օրենսդիրը սահմանել է պայմանագրային զինծառայողին պաշտոնից ազատելու հիմքերը՝ նույն հոդվածի 3-րդ մասում հաշվի առնելով զինվորական ծառայության առանձնահատկությունները, պաշտոնից ազատող սուբյեկտին իրավունք վերապահելով բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատել նաև անկախ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերի առկայության»:

Այսպիսով, Սահմանադրական դատարանը հիշյալ որոշմամբ արձանագրել է, որ օրենքով չնախատեսված հիմքով հանրային ծառայությունից ազատելու արգելքին վերաբերող կանոնը պահպանված է, երբ օրենսդիրը որպես պաշտոնից ազատման հիմք առանձնահատուկ իրավիճակում դիտարկում է իրավասու մարմնի հայեցողությունը: Պետական վարչական պաշտոնում պաշտոնավարման՝ սույն որոշման 5.4-րդ կետում շարադրված բնույթից բխող առանձնահատկություններն ընդգծելով՝ վերը նշված դիրքորոշումների համատեքստում Սահմանադրական դատարանը որևէ պատճառ չի տեսնում հայեցողական որոշման հիմքով պետական վարչական պաշտոն զբաղեցնող անձի պաշտոնավարումը դադարեցնելու դեպքի մասով իր նախորդիվ արտահայտած դիրքորոշումից շեղվելու համար:

5.6. Դիմումում վկայակոչված թիվ ՎԴ/9829/05/19 վարչական գործով Դիմողի կողմից 2023 թվականի մայիսի 3-ին կայացված որոշմամբ (տե՛ս նաև սույն որոշման 2-րդ կետը), մասնավորապես, նշվել է, որ

«(...)Վարչական պաշտոնից ազատելու՝ Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով և «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված լիազորության իրացման հիմքերը սահմանված են Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում, 31-րդ հոդվածի 17-րդ մասում (Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում վարչական պաշտոնից ազատումը տեղի է ունենում սահմանված ժամկետում տվյալ պաշտոնում այլ անձի նշանակելու փաստի ուժով, այլ ոչ թե վարչապետի համապատասխան լիազորության իրացման արդյունքում):

(...)

Ըստ այդմ՝ հաշվի առնելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի՝ որպես հանրային ծառայությունը կանոնակարգող հատուկ օրենքի և ՀՀ աշխատանքային օրենսգրքի վերը բացահայտված հարաբերակցությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական պաշտոնից ազատելու հետ կապված հարաբերությունները սուբսիդիարության (լրացուցիչ) սկզբունքով կարգավորման են ենթակա նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի նորմերով: Այսինքն՝ ի լրումն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ վարչական պաշտոնից ազատելու ոչ սպառիչ հիմքերի, վարչական պաշտոնից ազատելու համար կիրառելի են նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածով սահմանված՝ գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային հարաբերությունները դադարեցնելու հիմքերը:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասում և «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված՝ վարչական պաշտոնից ազատելու լիազորության իրացման համար անհրաժեշտ պայման է կա՛մ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ վարչական պաշտոնից ազատելու որևէ հիմքի, կա՛մ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված՝ գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային հարաբերությունները դադարեցնելու որևէ հիմքի առկայությունը»:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում շեշտել, որ սույն որոշման 5.2-5.5-րդ կետերում ներկայացված դիրքորոշումներից հետևում է, որ Օրենքով նախատեսված հատուկ հիմքերը (Օրենքի 6-րդ հոդվածի 2, 3-րդ մասեր, 31-րդ հոդվածի 17-րդ մաս) ոչ թե բացառում են պետական

1(113)2024
 ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

վարչական պաշտոնից ազատման հարցում համապատասխան իրավասու մարմնի կամ պաշտոնատար անձի հայեցողությունը, այլ ներառված են հայեցողության այդ շրջանակում (Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մաս):

5.7. Վերը շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո վիճարկվող դրույթի՝ հանրային ծառայության հարաբերությունների նկատմամբ կիրառելիության առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այն բլանկետային հղում պարունակող նորմ է, որով Օրենսգրքի դրույթների կիրառելիությունը տարածվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձի ծառայողական հարաբերությունների նկատմամբ՝ պայմանով, որ «*համապատասխան օրենքով այլ բան նախատեսված չէ*»:

Օրենսգրքի՝ «Աշխատանքային օրենսդրության նպատակը» վերտառությամբ 2-րդ հոդվածի ուժով՝ աշխատանքային օրենսդրության նպատակն է՝

- 1) սահմանել ֆիզիկական անձանց (...) աշխատանքային իրավունքների և ազատությունների պետական երաշխիքները.
- 2) նպաստել աշխատանքի բարենպաստ պայմանների ստեղծմանը.
- 3) պաշտպանել աշխատողների և գործատուների իրավունքներն ու շահերը:

Վիճարկվող դրույթի կարգավորման նպատակային նշանակությունը հատուկ օրենքով չկարգավորված իրավահարաբերությունների կանոնակարգումն է՝ կանխելու համար նման իրավահարաբերությունների կարգավորման հարցում առկա օրենքի հնարավոր բացը:

Սույն որոշման 5.2-5.3-րդ կետերում Սահմանադրական դատարանի վերլուծության արդյունքում ակնհայտ է, որ պետական վարչական պաշտոն զբաղեցնելու հարցի լուծումն Օրենքով վերապահված է այդ պաշտոնում նշանակման և դրանից ազատման (օրենքով նախատեսված դեպքերում նաև նման առաջարկություն ներկայացնելու) լիազորություն ունեցող մարմնի հայեցողությանը, և, հետևաբար, այս մասով բացակայում է իրավահարաբերության կարգավորման բացը: Այդուհանդերձ, պետական վարչական պաշտոնում պաշտոնավարման հարաբերությունները ներառում են նաև, մասնավորապես, պետական վարչական պաշտոն զբաղեցնող անձի կողմից իր ծառայողական պարտականությունների կատարման համատեքստում վարձատրության, անձնական տվյալների պաշտպանության, աշխատաժամանակին, հանգստի ժամանակին,

աշխատանքային կարգապահությանը, իր անվտանգությանն ու առողջությանը, աշխատանքի պայմաններին և աշխատանքի կատարմանը, նյութական պատասխանատվությանը, տրամադրվելիք երաշխիքներին և հատուցումներին, գործադուլների անցկացմանը վերաբերող իրավահարաբերությունները, որոնցից որևէ մեկի առկայության պայմանով վիճարկվող դրույթի իմաստով համապատասխան օրենքով այլ բան նախատեսված չլինելու դեպքում կարող են կիրառվել Օրենսգրքի համապատասխան դրույթները՝ սուբսիդիարության սկզբունքի շրջանակում:

Այս իմաստով, վիճարկվող դրույթը համապատասխան օրենքով չկարգավորված իրավահարաբերությունների նկատմամբ կիրառության առնչությամբ Սահմանադրության 49-րդ հոդվածի հետ անհամատեղելիություն չունի:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին մասով, 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 4-րդ մասով, 170-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի դրույթները չեն տարածվում պետական վարչական պաշտոնում նշանակման և այդ պաշտոնից ազատման իրավահարաբերությունների նկատմամբ:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

27 փետրվարի 2024 թվականի
ՍԴՈ-1716

1(113)2024
◆ ՏԵՂԵԿՎԳԻԻ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
347



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

ՍԴ ԴԱՏԱՎՈՐ ԱՐԱԻԿ ԹՈՒՆՅԱՆՆ ԸՆՏՐՎԵԼ Է
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ



Եվրասիական տնտեսական միության դատարանի դատավոր ընտրվելու կապակցությամբ դադարել են ՍԴ դատավոր Արաիկ Թունյանի լիազորությունները՝ իր դիմումի հիմքով՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 147-րդ հոդվածի 2-րդ մասով:

Սահմանադրական դատարանի նախագահը, դատավորները և աշխատակազմը շնորհավորում են դատավոր Ա. Թունյանին Եվրասիական տնտեսական միության դատարանի դատավոր ընտրվելու կապակցությամբ՝ երախտիքի խոսք հղելով ՀՀ Սահմանադրական

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1(113)2024

դատարանի դատավորի պաշտոնում երկարամյա արդյունավետ աշխատանքի համար և վստահություն հայտնում, որ պարոն Թունյանի բարձր պրոֆեսիոնալիզմն ու մասնագիտական գործունեությունը կարևոր նշանակություն կունենան Եվրասիական տնտեսական միության դատարանի աշխատանքի արդյունավետության բարձրացման գործում:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈՒՍՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՂ ԴՈՆՈՐ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ



1(113)2024

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ

2024 թվականի հունվարի 24-ին Սահմանադրական դատարանում հյուրընկալվել են Բարձր դատարանի ինստիտուցիոնալ բարեփոխումների օրակարգին աջակցող Դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչները:

Հանդիպման նպատակն էր համակարգել Դոնոր կառույցների հետ զուգահեռ իրականացվող ծրագրերը՝ կրկնություններից խուսափելու, իրականացվող աշխատանքներն առավել նպատակային դարձնելու, այդ կերպ՝ կայուն համակարգային փոփոխությունները կյանքի կոչելու համար:

ԱՄՆ ՄՁԳ Հայաստանի արդարադատության ոլորտի աջակցության ծրագրի նախաձեռնությամբ տեղի ունեցած հանդիպմանը մասնակցել են ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության ծրագրի (INL), ԵԽ երևանյան գրասենյակի, ՀՀ-ում ԵՄ պատվիրակության, ՀՀ-ում Նիդերլանդների Թագավորության դեսպանության ներկայացուցիչները: Հանդիպմանը քննարկվել են Սահմանադրական դատարանում ընթացող բարեփոխումների օրակարգը, գործողությունների ծրագիրը, ինչպես նաև նախանշվել են Դոնոր կազմակերպություններից յուրաքանչյուրի հետ աշխատանքի հստակ ուղղությունները:

Քննարկման մասնակիցները վստահություն են հայտնել, որ աշխատանքային նման ձևաչափն արդարադատության ոլորտի բարեփոխումներին աջակցող կազմակերպություններին և Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչություններին հնարավորություն կտա համախմբվել արդարադատության ոլորտի կառույցների հետ արդյունավետ համագործակցության գաղափարի շուրջ՝ բարեփոխումների գործընթացը դարձնելով առավել արդյունավետ և տեսանելի:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 28-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1(113)2024

◆ ՏԵՂԵԿՎՈՐ ԴԱՏԱՐԱՆ

Սահմանադրական դատարանում տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի կազմավորման 28-րդ տարեդարձին և դատական տարվա խորհրդանշական բացմանը նվիրված պաշտոնական միջոցառումը, որին ներկա են եղել Հանրապետության նախագահ Վահագն Խաչատրյանը, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, օրենսդիր, գործադիր և դատական իշխանության ներկայացուցիչներ, Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ:

ՍԴ նախագահ Արման Դիլանյանը, ողջունելով հյուրերին, իր խոսքում ամփոփել է Բարձր դատարանի 2023 թվականի գործունեությունը: Արման Դիլանյանը նշել է, որ 2023 թվականը, լինելով բարդ և ծանրաբեռնված տարի, Սահմանադրական դատարանի համար նշանավորվել է սահմանադրական արդարադատության իրականացման չափանիշների վերաբերյալ Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված նախադեպային իրավական դիրքորոշումների տեսանկյունից զարգացմամբ:

«Սահմանադրական մշակույթի ձևավորումն ու զարգացումն ուղիղ կապ ունեն երկրում սահմանադրական անվերանգության, իրավական

պետության և առհասարակ սահմանադրականության հաստատման ու ամրապնդման հետ: Սահմանադրական մշակույթը միայն Սահմանադրությունն իմանալը չէ, դա նաև Սահմանադրությունը հարգելն է, պաշտպանելն ու պահպանելը, ապահովելն ու քարոզելը, դրա հրամայականներն իրականացնելը: Սա ժողովրդավարական պետությանն ուղեկցող մշտական գործընթաց է՝ իրավունքը գաղափարախոսության, իսկ գաղափարախոսությունն իրավունքի դրույթների վերածելու մասին», - իր խոսքում նշել է ՍԴ նախագահը:

Հայաստանում սահմանադրական արդարադատության հիմքերը դրվել են 1995 թվականի հուլիսի 5-ին համապետական հանրաքվեի արդյունքում ընդունված Սահմանադրության ընդունմամբ, որն ուրվագծեց այնպիսի դատաիրավական համակարգ, որը ներառում էր նաև Սահմանադրական դատարանը: Ի կատարումն ընդունված Սահմանադրության՝ 1995 թվականի նոյեմբերի 20-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Սահմանադրական դատարանի մասին» օրենքը, որն ստորագրվեց Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից 1995 թվականի դեկտեմբերի 6-ին և ամբողջականացրեց նորաստեղծ սահմանադրական մարմինների գործունեության օրենսդրական հիմքերը:

1996 թվականի փետրվարի 5-ին և 6-ին նշանակվեցին Սահմանադրական դատարանի անդրանիկ կազմի անդամները, Ազգային ժողովում տեղի ունեցավ հանդիսավոր երդման արարողությունը, և Բարձր դատարանը պաշտոնապես սկսեց գործել 1996 թվականի փետրվարի 6-ից: Սահմանադրությամբ իրենց վերապահված մանդատի բերումով սահմանադրական դատարաններն աշխարհի տարբեր կետերում, այդ թվում նաև մեր հանրապետությունում, մեծ դեր ունեն հանրային-հասարակական փոխհարաբերությունների հավասարակշռման ու զսպումների և հակակշիռների արդյունավետ համակարգերի առարկայացման գործում:

«Սահմանադրությունը կիրառելիս և մեկնաբանելիս չհենվել միայն դրա ձևական կամ փառացի բովանդակության վրա: Հանդիսանալով պետականության անբաժանելի հատկանիշ՝ Սահմանադրությունն օժտված է տվյալ պետության ու ժողովրդի հետ անհատականացվող, Սահմանադրության մեջ ուղիղ չարտացոլվող մի շարք բաղադրիչներով, որպիսիք են մշակութային, պատմական, բարոյական, արժեքանական և այլ բաղադրիչներ, և միայն դրանց հաշվառմամբ իրականացված մեկնաբանությունն ու կիրառումն են ապահովում Սահմանադրության, այսպես ասած, իմունիտետը, ապահովում դրա ճկունությունն ու կենսունակությունը:

Միևնույն ժամանակ, բացի զուր ազգային իդեալներն ու պարկերացումներն արտահայտելուց, Սահմանադրությունն արացողում է մարդկության ամենասարդիական իրավական նվաճումները՝ ժողովրդավարության, իրավունքի գերակայության, մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների պաշտպանության ոլորտում», -նշել է Արման Դիլանյանը՝ ընդգծելով, որ Սահմանադրական դատարանը միշտ ունեցել է Սահմանադրությունն այդ գաղափարական ընդհանրության գիտակցմամբ մեկնաբանելու վճռականությունը:

Սահմանադրական դատարանի ձևավորման 28-րդ տարեդարձի առթիվ Սահմանադրական դատարանի նախագահին, դատավորներին և աշխատակազմին շնորհավորել է նաև ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Սահմանադրական դատարանի կազմավորման 28-րդ տարեդարձի և դատական տարվա բացման պաշտոնական միջոցառմանը տեղի ունեցավ նաև ՀՀ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների լրամշակված շտեմարանի շնորհանդեսը, որը հրատարակվել է ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ:

ՍԴ նախագահի խորհրդական Ալինա Փխրիկյանի, ՍԴ նախագահի օգնական Արտակ Ղազարյանի և ՍԴ փորձագիտական-վերլուծական բաժնի վարիչ Աիդա Թադևոսյանի համահեղինակությամբ կազմված և լրամշակված Շտեմարանն ընդգրկում է Սահմանադրական դատարանի գրեթե 4000 որոշում, այդ թվում՝ ըստ էության, աշխատակարգային և դատական կազմերի որոշումներ, առանձնացվել են դրանցում արտահայտված առանցքային կարևորություն ունեցող իրավական դիրքորոշումները:

Շտեմարանում ներառված յուրաքանչյուր որոշում ունի QR կոդ, ինչը հնարավորություն է տալիս անմիջապես անցում կատարելու որոշման պաշտոնական տեքստի ամբողջական տարբերակին:


Շտեմարանը նախատեսված է թե՛ տեսական հետազոտություններով զբաղվող գիտնականների, թե՛ պրակտիկ գործունեության ոլորտում ներգրավված իրավաբանների համար:

◆ 1(113)2024

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱՐՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2023 Թ. ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



Տեղեկացնում ենք, որ Սահմանադրական դատարանի 2023 թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ Հաղորդումը հասանելի է հետևյալ հղումով՝ https://concourt.am/pdf/uploads/65ca07e659eb6_2023.pdf

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ Է ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԲՈՒՆԴԵՍԹԱԳԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴՏՎԱԿԱՆ ԳԵՂԵԿԱԳԻՐ 1(113)2024

2024 թվականի փետրվարի 26-ին Սահմանադրական դատարանում հյուրընկալվել է Գերմանիայի խորհրդարանական պատվիրակությունը՝ Բունդեսթագի իրավական հարցերի հանձնաժողովի նախագահ Էլիզաբեթ Վինկելմայեր-Բեքերի գլխավորությամբ:

ՍԴ նախագահ Արման Դիլանյանը, ողջունելով հյուրերին, կարևորել է հայ-գերմանական արդյունավետ համագործակցությունն իրավական ոլորտում: Արման Դիլանյանն ընդգծել է Գերմանիայի ՍԴ նախագահի հետ գործընկերային հարաբերությունները՝ վերահաստատելով ՀՀ Բարձր դատարանի պատրաստակամությունը՝ մասնագիտական ոլորտում համագործակցությունն առավել ակտիվացնելու և շարունակական դարձնելու ուղղությամբ:

Հյուրերի խնդրանքով ՍԴ նախագահը ներկայացրել է Բարձր դատարանի կառուցվածքը, գործունեության առանձնահատկությունները, սահմանադրական մարմինների հետ փոխհարաբերությունները:

Հանդիպման ավարտին Գերմանիայի Բունդեսթագի ներկայացուցիչները շնորհակալություն են հայտնել ջերմ և բովանդակալից հանդիպման համար:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է
«ՖԻԼԻՊ ԶԵՍԱՓԻ ԱՆՎԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ»
ԴԱՏԱԽԱՂ-ՄՐՑՈՒՅԹԻ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՒԼԸ**



2024 թվականի հունվարի 28-ին Սահմանադրական դատարանում տեղի ունեցավ «Ֆիլիպ Զեսափի անվան միջազգային իրավունքի» ամենամյա դատախաղ-մրցույթի ազգային փուլը: Միցույթի մասնակցության հայտ ներկայացրած երեք համալսարաններից՝ Երևանի պետական համալսարան, Հայ-Ռուսական համալսարան և Հայաստանում ֆրանսիական համալսարան, եզրափակիչ փուլ էին անցել ԵՊՀ-ի և ՀՈՀ-ի թիմերը: Այս տարի դատախաղ-մրցույթի թեման կապված էր մարդու իրավունքների հիմնախնդիրների հետ. քննարկվում էր քաղաքացիության ինստիտուտը:

Դատախաղի շրջանակներում համակողմանի քննարկման առարկա են դառնում միջազգային իրավական բազմաթիվ հարցեր և այդ հարցերի

ուսումնասիրման և դատական ներկայացման աշխատանքներին ներգրավվելով՝ ուսանողներն ավելի խորքային են սկսում ուսումնասիրել միջազգային հանրային իրավունքը և պրակտիկ բնույթի կարողություններ են ձևավորում:

Միջոցառումը կազմակերպել էր «Միջազգային և համեմատական իրավունքի կենտրոնը»: Դատախաղի դատավորներն էին Սիրանուշ Սահակյանը, Արամ Արամյանը, Լևոն Գևորգյանը՝ Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանի նախագահությամբ:

Այս տարի ազգային փուլում հաղթանակ տարավ Երևանի պետական համալսարանի իրավական թիմը, որն էլ կներկայացնի Հայաստանը Վաշինգտոնում կայանալիք միջազգային մրցափուլին:

«Ֆիլիպ Զեսսափի անվան միջազգային իրավունքի» ամենամյա դատախաղ-մրցույթն Արդարադատության միջազգային դատարանի (ICJ) առջև երկրների միջև հորինված վեճի մոդելավորում է: Այն կրում է Ֆիլիպ Զեսսափի անունը, ով ժամանակին ծառայել է ICJ-ում և կազմակերպվել է Իրավաբան ուսանողների միջազգային ասոցիացիայի (ILSA) կողմից: Դատախաղը, Սթիվեն Շվեբելի ղեկավարությամբ (ով նաև գրել է անդրանիկ դատախաղի խնդիրը), սկսվել է որպես շահերի պաշտպանության ընկերական մրցույթ Հարվարդի համալսարանի երկու թիմերի միջև 1960 թվականին: Առաջին չեմպիոնները հռչակվել են 1963 թվականին, իսկ մրցույթն իր դռները ոչ ամերիկյան թիմերի համար բացել է 1968 թվականին:

Հայաստանն այս մրցույթին մասնակցում է 2000 թվականից, 2015-ից Հայաստանում այն անցկացվում է անգլերենով, ինչը պահանջում է մասնակիցների կողմից լեզվի լիարժեք տիրապետում:

Վաշինգտոնում միջազգային մրցափուլը կկայանա մարտի 30-ից մինչև ապրիլի 6-ը, որտեղ կմրցեն ավելի քան 60 երկիր:

1(113)2024

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱՐԴՐԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ

ՀՀ-ՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԿԱՅԱՅԵԼ Է ԲՐԱՈՒՆ ՄՈՍԹԵՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՒԼԸ



2024 թվականի փետրվարի 24-ին և 25-ին Երևանում առաջին անգամ անցկացվել է **Իրավաբանական խորհրդատվության 2023-2024 Բրաուն Մոսթեն միջազգային մրցույթի** ազգային փուլը: Նախաձեռնությունն իրականացվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության Հայաստանի արդարադատության ոլորտի աջակցության ծրագրի շնորհիվ:

Հաղթող թիմի անդամները՝ Հայաստանում ֆրանսիական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ուսանողներ Նարե Նիկողոսյանը և Լուսինե Վարդանյանը, կմեկնեն Լեհաստան՝ ներկայացնելու Հայաստանը մրցույթի միջազգային փուլում, որն անցկացվելու է 2024 թ. ապրիլի 10-13-ին Լեհաստանի Լյուբլին քաղաքում:

Մրցանակաբաշխության արարողությանը մասնակցել են **ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը, ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելության փոխտնօրեն Ռեբեքա Ուայթը և ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը**, որոնք և հաղթող թիմին են հանձնել մրցանակները:

«Հրաշալի և թիրախային ընտրություն է եղել իրավաբանական խորհրդատվության հենց այս մրցույթը ներմուծել Հայաստան: Հայկական կրթական մշակույթը համալրվեց պրակտիկ հմտություններ զարգացնող միջազգային ևս մեկ մրցույթով: Մասնակիցների համար

սա շար պարտավորեցնող է, քանի որ իրենք այս մրցույթի ծիծեռնակներն էին, և, դատելով ժյուրիի անդամների արձագանքից, թե ինչ բարդ ընտրության առաջ էին կանգնել, իմ համոզմամբ, ուսանողները հաջողել են: Իրենց համար սա լուրջ փորձություն էր՝ տեսական գիտելիքները պրակտիկայում դրսևորելու տեսանկյունից: Հաջողություն եմ մաղթում բոլորիդ», - իր ելույթում նշել է ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը:

«Դուք բոլորդ արդեն հաջողել եք՝ լինելով այսպեղ: Բոլորս ընտրել ենք այս մասնագիտությունը հանրության և բարի գործի համար: Ես հարկապես ուրախ եմ տեսնել, որ եզրափակչի բոլոր մասնակիցները կանայք են: Շնորհավորում եմ բոլորիդ: Հաջողություն եմ մաղթում հարկապես հաղթողներին, որոնք առաջիկայում կմասնակցեն միջազգային եզրափակչի փուլին՝ Լեհաստանում»: Ողջունելով ներկաներին և շնորհավորելով մրցույթի մասնակից բոլոր ուսանողներին՝ ասել է ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելության փոխստորեն Ռեբեքա Ուայթը:

Ուսանողներին գնահատել է իրավաբաններից և հոգեբաններից կազմված հանձնաժողովը՝ հաշվի առնելով վստահորդի դեր կատարող անձի հետ արդյունավետ աշխատելու նրանց կարողությունները: Մրցույթի առաջին ազգային փուլին մասնակցել է 4 թիմ՝ Եվրասիա միջազգային համալսարանից և Հայաստանում ֆրանսիական համալսարանից:

Բրաուն Մոսթեն մրցույթի նպատակն է ներգրավել իրավաբանական կրթություն ստացող ուսանողներին փորձարարական ուսուցման մեջ և զարգացնել հարցազրույց վարելու նրանց հմտությունները՝ օգնելով ձևավորել իրավաբան-վստահորդ արդյունավետ հարաբերություններ: Մրցույթը ուսանողներին զինում է գործնական հմտություններով՝ նախապատրաստելու նրանց մուտքն աշխատաշուկա:

Ծանոթագրություն. Իրավաբանական խորհրդարարության Բրաուն Մոսթեն միջազգային մրցույթն առաջին անգամ կազմակերպել է ամերիկացի փաստաբան Լուի Մ. Բրաունը 1969 թ.: Ավելի ուշ՝ 1972 թ., այն պաշտոնապես հաստատվել է նաև Ամերիկյան իրավաբանների ասոցիացիայի կողմից, իսկ արդեն 1985 թ.՝ հռչակվել որպես միջազգային մրցույթ: 1993 թ., ի պատիվ մրցույթի հեղինակի՝ այն անվանակոչվել է Լուի Մ. Բրաունի անունով:

1(113)2024

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱՐԴՐԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

**ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ԷԹԻՎԱՅԻ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ
ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ**



1(113)2024

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

«Աջակցություն Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ բարեփոխումներին» ծրագրի շրջանակերում ս.թ. հունվարի 26-27-ին տեղի է ունեցել «Հանրային ծառայողների էթիկայի և բարեվարքության ներպետական կարգավորումները և միջազգային փորձը» խորագրով աշխատաժողով, որին մասնակցել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի դատավորներ, աշխատակազմի մասնագիտական ստորաբաժանումների աշխատակիցներ:

Աշխատաժողովի օրակարգային թեմաներն էին «Էթիկայի և բարեվարքության ներպետական կարգավորումները» և «Բարեվարքության միջազգային չափանիշներն ու օրենքի գերակայությունը Եվրոպայում»:

Բանախոսներ՝ Ամստերդամի դատարանի փոխնախագահ Էսթեր դը Ռոյը և ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախկին նախագահ Հայկուհի Հարությունյանը ներկայացրել են էթիկայի և բարեվարքության չափանիշների կիրառությունը՝ ուղեցույցներ, վերա-

պատրաստում, պատասխանատվության միջոցներ, քննարկվել է միջազգային փորձը:

Աշխատաժողովը կազմակերպել էր «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպությունը՝ Հայաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանության աջակցությամբ:



Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈՒՆՅԱՆ, Ա.
ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ, Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ, Հ. ՆԱԶԱՐՅԱՆ, Է.
ՇԱԹԻՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ, Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝

Ի.գ.թ., դոցենտ Ա. Փխրիկյան

Ստորագրված է տպագրության՝ 10.04.2024թ.

Դասիչ՝ 77754

Գրաչափը 70X100 1/16

Տպաքանակը՝ 100 օրինակ

Խմբագրության հասցեն՝

Երևան, Բաղրամյան 10

Հեռախոս՝ 011-58-81-81 (189)

E-mail: armlaw@concourt.am

<http://www.concourt.am>

Вестник Конституционного Суда Республики Армения N 1(113)2024

Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 1(113)2024

Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 1(113)2024

1(113)2024

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

◆ ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Խմբագրության հասցե՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81(189)
E-mail: armlaw@concourt.am
www.concourt.am

